



243  
PL-26






Белогорскому Историческому  
музею Таврическому Губернатору С. П.  
Сагареву.

1863 года.

12004

1546-44

359  
5



Т. 1. Ч. 1. Академіческій Університету



Санкт-Петербург

12-и (30)

3702-57



10614-57

## ԱՅԻ ԵԴՈԹԱՐԱԿԻՒՄ :

Այս քեզի նոր աղօթագիրք,  
կամ թէ ըսեմ գործի տծային  
փառաբանութեան, որ աս երկրի  
վրայ զած օրհնես գովես հրեշ-  
տակաց պէս իր անչափ բարու-  
թեան համար : Խնչ մեծ շնորհք  
կըսեպէիր քեզի, թէ որ անանկ  
բարեկամ մը ունենայիր, որ ու-  
ղած ատենդ քեզ թագաւորին  
առջին հաներ, ու անոր հետ խօ-  
րաթել տար : Աս աղօթից գիր-  
քը ըլլայ քեզի ան հաւատարիմ  
ու սիրելի բարեկամը + որ քեզ  
չէ թէ երկրաւոր թագաւորին,  
այլ թագաւորաց թագաւորին  
համարձակ միշտ կըներկայացը-

նէ, ու գթած հօր պէս սիրտդ  
անոր բանալ կուտայ, ու զա-  
նազան շնորհներ կընդունի  
քեզի համար : Լառնու քեզ  
սուրբ Ածածնայ կըտանի, որ-  
դիական ընտանութեամբ իր հե-  
տը խօսել կուտայ . ու քեզ ա-  
նոր մայրական պաշտպանու-  
թեանը կըյանձնէ, որ փոր-  
ձանք մընալ չիհանդիպի քեզի :  
Տես հիմա, որչափ հարկաւո-  
րութիւն ունիս ասանկ բարե-  
կամիմը՝ որ է աղօթքը . ինչպէս  
Քո ալ իր օրինակովը ու խօս-  
քովը քեզ կըխրատէ . Յաղօթս  
կացէք :

Որպէս զի դիւրինըլայ քեզի  
հասկընալը, ու բոլոր ըրած ա-  
ղօթքներդ իմանաս, ու անով  
աւելի ջերմեռանդութեամբ ը-  
նես . աշխարհաբար գրած կը-

գըտնաս աս նոր աղօթագիրքը :  
 Աղօթք ըսելը ուրիշ բան չէ ,  
 բայց եթէ ոյ հետ խօրաթել .  
 Թէ որ ըսածդ դուն չես հաս-  
 կընար , ու ըսածդ չես գիտեր ,  
 ինչպէս աղօթքը ըրած կըլլաս :  
 Ասոր համար շատ անգամ սա-  
 տանան աղօթքի ատեն ձանձրու-  
 թիւն կըբերէ վրադ , աղօթքդ  
 մէկդի ձգել կուտայ . ինչու  
 որ ըսածներդ շիհասկընալուդ  
 միտքդ ուրիշ տեղ կերթայ , ու  
 դուն ուրիշ տեղ կըլլաս , սըր-  
 տիդ մէջ աղօթքի սէրը կըմարի ,  
 ու խեղճ հոգիդ զուրկ կըմնայ  
 այ պարգևներէն , որնոր պիտի  
 ընդունէիր :

Աս ամէն չարեաց դէմ աս մի-  
 այն բաւական ըլլոյ քեզի : Յա-  
 ռաջ քան աղօթքի սկսիլդ խել-  
 քըդ վրադ ժողվէ , ու միտքդ բեր

## Դ

տծային ներկայութիւնը , որ ոյ  
 առջին կեցեր կը խօսիս , որ սրտիդ  
 մէջը եղածներնալ կը տեսնէ ու  
 կը քննէ : Յօւ էպէտած ամէն տեղ  
 միշտ ներկայ է , բայց աղօթք  
 ըրած ատեն բոլորովին հոն է ,  
 ու քեզ մտիկ կը նէ : Աս գըքին  
 մէջ գրած աղօթքները կարդա-  
 ցած ատենդ՝ գրավարժութիւն  
 ընելու պէս չիկարդաս . այլ  
 հանդարտաբար ու մտադրու-  
 թեամբ . թէ որ կարելի էնէ  
 արցունքով իբրև թէ նորէն քու  
 սրտիդ մէջէն բղխեն աղօթքնե-  
 րը : Կւ պարգևատուն ած եր-  
 բոր ասանկ ջերմեռանդ աղօթքդ  
 կը տեսնէ , ուզածէդ աւելի խըն-  
 դիբքդ կը կատարէ , ինչպէս որ  
 կըսէ սուրբ ներսէս շնորհալին :

Ան ատենը քու աղօթքներդ  
 ալ հրեշտակ ամենակալին ոսկի

խնկանոցի մէջ՝ իբրև անուշահոտ  
 խունկ առջին կրչանէ, որ  
 միշտ պատրաստ է մեր հեծու-  
 թիւնները ու աղաչանքները լսե-  
 լու: Յեշէ Յոսին ըսածը. ար-  
 դեօք կրգտնըզի մէջերնիդ կրսէ  
 մէկ հայր մը՝ որ իր տղան հաց  
 խնդրէ իրմէն, ու ան ալ հա-  
 ցի տեղ քար տայ, կամ ձուկ  
 ուզէ, ու օձ տայ: Ուէ որ երկ-  
 րաւոր հարերը իրենց զաւակ-  
 ները կրսիրեն, ու անոնց աղէկ  
 պարգևներ կուտան: որչափ ա-  
 ւելի հայրն երկնաւոր իր սիրելի  
 որդիներուն մեծ մեծ բարեքներ  
 կրպարգելէ, երբոր բոլոր սըր-  
 տանց իր հայրական գթութեա-  
 նը կրդիմեն խոնարհութեամբ:  
 Ո՞իայն ջանանոք՝ աղօթքիդ միշտ  
 փոյթ ըլլաս, չըլլայ թէ կամաց  
 կամաց թուլանաս: այլ յարա-

Ω

անէ միշտ, յոյսդ աստուծմէ մի  
կտրեր, ու դարձեալ աղօթք  
ըրէ: Ծակէտ խնդիրքնիս շառ-  
նունքնէ ալ կըսէ ոսկերերան  
հայրապետը, շարունակենք ա-  
զօթքնիս, որպէս զի առնունք.  
ընդունելէն վերջն ալ շարունա-  
կենք, ինչու որ առինք:

Առըս հարերուն հասարակ  
խօսքն է, թէ աւելի ած կուզէ  
մեզի բարիք տալ, քանի թէ մենք  
իրմէ կրինդրենք. անանկ էնէ  
երբոր շնորհք մը կուզենք աս-  
տուծմէ՝ ու շենք ընդունիր,  
նշան է թէ՝ ինչպէս որ պէտք է  
շենք խնդրած: Կւ թէ ինչ պի-  
տի խնդրենք աստուծմէ, Կ՞ո  
մեզի կըսորվեցընէ, նախ այ ար-  
քայութիւնը խնդրեցէք կըսէ.  
ինչու որ մարմնաւոր բաները ար-  
դէն ած կուտայ ձեզի:

Ա Երջապես աս է իմ մի մի-  
 այն վիավիաքս՝ու աշխատութեանս  
 վախճանը, որ աս գրքովս վայել-  
 չօրէն աղօթքընես, ու քու հոգ-  
 ւոյդ փրկութեան հարկաւոր ե-  
 ղած բարիքները ստանաս : Ի՞ն-  
 դունէ ուրեմն նոյն սիրով, որ  
 բաղձանքով որ քեզի կընծայի:

Ե՞ս զաւանդ մաղթանացս, և տուր  
զողորմութիւն քո շնորհացդ :

Ապրել. Ըս





# ԱՌՈԹՅԲ

Ա Թ Ե Խ Օ Տ Ե Ր Ե

Ա Կ Ա Հ Ա Հ Ա Հ Ա Հ Ա Հ Ա Հ :

Ա ծ ած իմ , ես առ քեզ առաւօտ  
առնեմ . ծարաւեցաւ առ քեզ հոգի  
իմ . քանիպատիկ ես՝ և մարմին իմ :  
Ա հա ով ած իմ , ասանկ կըկանչէ ծար-  
ված հոգիս քեզի դէմ . աս առարվան  
ծագած լուսին հետ լուսաւորէ հոգւոյս  
խաւարը , ու մորիս լոյս տուր՝ որ իմ  
հոգւոյս ալ առաւօտ ըլլայ , որ քու ան-  
համար բարիքներդ տեսնեմ : Ուր որ  
աչքըս վերցընեմ նայիմ , ամեն արա-  
րածք ինձի յորդոր կըլլան զքեզ օրհ-  
նելու ու փառարանելու : Ա հա կըտես-  
նեմ քու սքանչելի ձեռացդ գործած  
արել , որ միշտ իր ատենին իր պայծառ  
լոյսը կըտարածէկոր . որպէսզի ես ալ  
տեսնելով քուկին ինձի համար ստեղ-  
ծած բաներդ՝ յիշեմ բարերարութիւնդ ,

զարմանամ քու մարդասիրութեանդ  
վրայ, ու բորբոքեալ սիրով բոլոր սրբ-  
տանց քեզի շնորհակալութիւն մատու-  
ցանեմ: Եղնապէս թռչունները իրենց  
անուշ երգովը իս կըհրաւիրեն, որ ևս  
ալ իրենց հետ մէկտեղ ամենաբարի  
արարիչդ փառաւորեմ: Ով ած իմ,  
անանկ էնէ դուն շարժէ շրթունքս, ու  
բաց բերանս, որ իմ անարժան լեզուս  
ալ քեզի օրհնութիւն երգէ. ու այդ-  
չափ բարերարութիւններուդ շնորհա-  
կալ ըլլայ. Օզուրմանեւնաս ույ տէր յա-  
ւիտեան օրհնեցից:

Լոյս ճշմարիտ Հյութն, որ աշխարհք  
դալովդ մեղ լուսաւորեցիր, ու ածդի-  
տութեան լոյսը ամէն տեղ տարածե-  
ցիր. լուսաւորէ հիմա իմ կուրութիւնս,  
որ ճանչնամ քու բարիքներդ, ու քեզի  
ապերախտ ըրլամ: Դաւն ածային բեր-  
նովդ բախ. ով որ իմ ետևէս կուզայ,  
խաւարներու մէջ չիպրտըտիր. ով փրո-  
կիւ իմ, ահա սրտանց կըբաղձամ աս  
օրըս քու ետևէդ երթալ, ու քեզի  
հնազանդիլ. որ իմ չար ախտերուս խա-  
ւարներուն մէջը չիմընամ: Ով գլած-

Յա իմ, մեկ բան մը միայն քէնէ կը-  
խնդրեմ այսօր, ու գիտեմ որ՝ պատ-  
րաստ ես տալու . մասնաւոր շնորհք մը  
տուր ինծի, որ աս օրըս քեզ չիվշտա-  
ցընեմ. քու ամենայաղթ զօրութիւնովդ  
ամէն մեղաց առիթներէն իս պահէ, ու  
ամէն փորձանքներէն իս խալըսէ . ինչու  
որ ես խիստ տկար եմ, ու ողորմու-  
թեանդ կարօտ : Ով ած իմ, իմ տկա-  
րութիւնս դուն զօրացուր, որ կարօղ  
ըւամ աս օրըս ինչպէս որ քու պա-  
տուիրաններդ կըհրամայեն՝ այնպէս ան-  
ցընել . ու քու շնորհօքդ աս բարի առա-  
ջադրութեանս վրայ հաստատ կենամ,  
ամէն :

### Աղջուակնալունեան :

**Ա**մենասուրբ Կարրորդութիւն հայր և որ-  
դի և սուրբ Հոգի, Խոնարհութեամբ քու  
ածութեանդ առջեւը երկրպագութիւն  
կընեմ, ու սրտանց կըխոստովանիմ, որ  
դուն մինակ ամէն պատւոյ ու ծառայու-  
թեան արժանի ես: «Քեզի փառք կու-  
տամ . քուկին անվախճան թագառո-

բութեան ու երանութեանդ համար ,  
 քուկին անթիւ բարիքներուդ համար՝  
 որն որ 'ի սկզբանէ աշխարհի հրեշտակ-  
 ներուն ու մարդիկներուն վրայ ցըցուցիր,  
 ու մինչև հիմա ալ միշտ կըցըցնես , դո-  
 հութիւն ու փառաբանութիւն կրմա-  
 տուցանեմ : Արգոհանամ աս հաւատոյ  
 լուսին համար , որն որ ինծի ալ՝ որ քու-  
 կին ստեղծուածներուդ մեջը ամենէն  
 ետքինն եմ՝ ծագեցիր : Ծնորհակալ  
 կըլլամ , ու կրյարգեմ բոլոր սրտանց  
 քու գթութիւնդ , որ ինծի այնչափ  
 շնորհք տվիր , ու բարի աղդեցութիւննե-  
 րովդ սիրտս քեղի քաշեցիր . քեզ սի-  
 րելու , ու քեզ սիրելով յաւիտենա-  
 կան երանութիւնը ըստանալու արժանի  
 ըրիր :

Ե հաւատիկ ած իմ , իմ յոյսս , ու իմ  
 վերջին վախճանս . սրտանց զքեզ կը-  
 սիրեմ քուկին անսահման բարութեանդ  
 ու երանութեանդ համար : Երանի թէ՝  
 ինծի ալ անանկ բորբոքած սէր մը պար-  
 գեեիր , որ ես ալ քեզ այնպէս սիրե-  
 լու կարօղ ըլլայի . ինչպէս որ հրեշտակ-  
 ները երկինքը քեզ կըսիրեն , ու ան-

չափ սուրբեր ալ երկրի վրայ սիրեցին ,  
ու հիմա ալ արքայութեան մէջը կըսի-  
րեն : Իմ ունեցած սէրս անոնց ունե-  
ցածէն շատ վար է . անոր համար իմ  
անկատար ու տկար սիրոյս տեղը կընը-  
վիրեմ չ նշի սրտին ամենակատար սէրը ,  
ու իր սուրբ վարուցը՝ չարչարանացը՝ ու  
մահուան անսահման արդիւնքը , որ-  
պէս զի ասօրվան նուերս քեզի հաճոյ ու  
ընդունելի ըսայ : Եւ որպէս զի քու  
ամենասուրբ տէրութեանդ առջևը բո-  
լորովին պարագ չերենամ , ահա իմ  
կամքս ամէն իր ախորժակներովը ու  
բաղձանքներովը քեզի կընուիրեմ . ու  
հաստատ կառաջաղթեմ , որ ամէն իմ  
կարողութիւններս քու փառացդ համար  
ծառայեցընեմ : Պատրաստ եմ տէր իմ  
ամէն ձախորդութիւնները՝ նեղութիւն-  
ները՝ որ ինձի կրիսրկես ընդունելու ,  
ու ամէն կերպ խաչը սիրով քաշելու .  
ինչպէս որ իմ փրկչիս օրինակը իս կը-  
սորվեցընէ :

¶ Թած աչվըններովդ նայէ տէր իմ  
խեղճ սրտիս բաղձանքին , ու օրշնէ իմ  
առաջաղթութիւններս . որ քու չնոր-

Հօրդ կարօղ լւլամ կատարել, ու քեզ  
սիրել յաւիտեանս յաւիտենից :

Առողջուն :

Լանխեցին աչք իմ առաւօտուց 'ի խօսել ինձ զբանս քո :  
Օչարթոն զաշս իմ, և նայեցայց 'ի պքանշելիս օրինաց քոց :  
Պանդուխտ եմ ես յերկրի . մի թագուցաներ յինէն զպատուիրանս քո :  
Օճանապարհու մեղաց 'ի բաց արա յինէն . և յօրէնս քո ողորմեա ինձ :  
Վռաջնորդեա ինձ 'ի շաւիղս պատուիրանաց քոց, զի ընդ նոսա հաճեցայ :

Խոնարհեցոն զսիրտ իմ 'ի վկայութիւնս քո, և մի յագահութիւն :

Դարձոն զաշս իմ, զի մի տեսից զնանքութիւն, 'ի ճանապարհու քո կեցոն զիս :

Աեցցէ անձն իմ, օրհնեսցէ զքեղ . և իրաւունք քո օգնեսցեն ինձ :

## Ը արտիստներ :

**Լ**ոյս փառաց բանդ ած , որ ծագեցեր ՚ի  
մեղ զլոյս գիտութեան կարդամք առ  
քեզ տէր , առաւօտու աղօթք մեր հա-  
ճոյասցին քեզ :

Հայր մեր որ յերկինս :  
Ողջոյն քեզ մարիամ :

## Եղանակ :

**Խ**վ հայր բարեգութ , հազար գոհու-  
թիւն կուտամ քեզի անթիւ բարերա-  
րութեանդ համար , որ անարժան ծա-  
ռայիդ համարձակութիւն տվիր , որ քեզ  
երկնի և երկրի տէրդ ինծի հայր կան-  
չեմ : **Ե**հա աչքը երկինքը վերցընելու  
արժանի չեի , հիմա հրեշտակներուն  
կարգը անցուցիր : **Ա**նդաւոր անձինս  
առաւօտեան աղաչանքը քու ամենա-  
սուրը ականջիդ անուշ կուգայ . կուզես  
որ ես ալ հրեշտակներուն հետ քեզ  
փառաբանեմ :

**Ե**րդ տէր իմ , և արարիչ իմ , ես որ  
հող ու մոխիր եմ , առտըվանց արթըն-

նալուս պէս քու ածութեանդ առջին  
կիյնամ . ու կըխնդրեմ , որ ինծի երկ-  
նային սիրով վառված նոր սիրտ մը  
տաս , որ ինչպէս պէտք է նէ քեզ սի-  
րեմ : Անանկ մը քու սուրբ կամացդ հետ  
սիրտը կապվի , որ մինակ քու կամքդ  
կատարելու բաղձայ , ու անկէ ամենեին  
չիրաժնըլի : Աւելի կուզեմ ըիւր ան-  
դամ մեռնիլ , քանթէ տեսնել որ սիրտս  
մեղքով քէնէ հեռացեր , ու արարած-  
ներու հետ զբաղեր է :

Անոր համար հիմա ամէն բանէն յա-  
ռաջ խոնարհութեամբ կըխնդրեմ տէր  
իմ . տուր ինծի ան ածային բորբոքեալ  
սէրը , որ կարող ըլլամ բոլոր օրըս 'ի  
փառս քո անցընել : Ան ինծի կըսոր-  
վեցընէ , թէ ինչպէս իմ ընկերիս հետ  
պիտի վարվիմ . ինչպէս իմ մարմինս  
պիտի կառավարեմ : Ան ըերնիս պա-  
հապան կըդնէ , որ անկարգ խօսքեր չի-  
խօսիմ . հայհոյութիւն կամ սուտ եր-  
դում չընեմ : Ան կըսորվեցընէ պար-  
կեշտ նայելուն կերպը , ու կըդգուշացը-  
նէ ականջըս՝ որ բամբասանքի , զբար-  
սութեան , ու անմաքուր խօսքեր լսել

շիսիրէ : Անանկ է նէ շնորհէ ինծի տէր  
իմ աս մեծ պարզես, որով արժանի ըւ-  
լամ քեղի ճշմարիտ որդի ըսալու, ու  
քեզ ալ ինծի հայր կոչելու, ինչպէս որ  
դուն սորվեցուցիր :

### Ա. ՊԵՂԻ ԱՆ-ԷՐԻ Ա. Ճ-Ա-ՀԻՆՆ :

Ո՞վ քաղցրագութ մայր ողորմութեան,  
ահա քու ամենասուրբ ոտքըդ ինկած  
ողորմելի մեղաւոր մը, որ գիտնալով քու  
մայրական սէրըդ՝ բոլորովին քեղի ա-  
պաստան եղերէ . ով գթած տիրամայր,  
նայէ հոգւոյսինեղձութեանը, ու գթու-  
թիւն ըրէ : Ամենուն բերնէն լսեցի, որ  
մեղաւորներու ապաստան, յուսահատ-  
ներու յոյս, ու անօգնականներու օգ-  
նական կըկոչիս . ուրեմն իմ ապաս-  
տանս՝ իմ յոյսս՝ ու իմ օգնականս դուն  
ես : Ո՞վ սուրբ Ա. Ճածին, քու սիրելի  
ածորդւոյդ հետ իս հաշտեցուր, ու քու  
ջերմեռանդ ծառաներուդ համբանիքին  
մշջը իս ընդունէ : Անսնաւոր շնորհք մը  
տուր ինծի այսօր, ու վառէ իմ սիրտը  
քու ճշմարիտ ջերմեռանդութեան սի-

բովոր, որ բոլոր սրտանց քեզ սիրեմ, ու պատվեմ, և քեզի արժանի որդի ըստամ:

Ով մայր այ, աս աղաչանքը՝ որ հիմա կընեմ, չէ թէ մինակ աս օրվան համար է. հապա բոլոր իմ կենացս համար է: Ո՞յր ողորմութեան, գթած աշվըներովոր ինծի նայէ: Քուկին ողորմած ձեռքդ վրայէս մի վերցըներ, ու հզօր բարեխօսութիւնովոր ամէն չար փորձանքներէն իս պահէ պահպանէ: Ով քաղցր Ո՞արիամ, կաղաչեմ միշտ օդնական եղիր ինծի, ու զիս թող մի տար, մանաւանդ մեռնելու ատենըս. ինչու որ իմ պաշտպանս՝ իմ յոյս՝ ու իմ օգնականս դռւն ես, ամէն:

Առջև առ պահպան հրեշտակին:

Ով փառաւորեալ պահապան հրեշտակ իմ երկնային, որ իմ ստեղծված ատենէս այ բարերարութիւնովը դռն իմ հոգւոյս ու մարմնոյս պահապան ու պաշտպան դրվեցար. կաղաչեմ քեզի, որ իմ աղօթքներս ու բարի առաջա-

դրութիւններս դունքու ձեռքովդ այ  
աթոռին առջևը տանիս, ու աստուծմէ-  
ինծի համար մասնաւոր շնորհք ընդու-  
նիս, որ միշտ իր հայրական սիրոյն մէ-  
ջը մնամ : “Դուն իս միշտ սատանային  
փորձութիւններէն խալրսէ . ու ամէն  
բանիս գործքիս մէջը միշտ ինծի օդնու-  
թիւն ըրէ , որ ամէն գործքերս մինակ ՚ի  
փառս այ ըլլայ : Երբոր միտքս խաւար  
մտածմունքներ ունենալու ըլլայ , դուն  
լուսաւորէ . Երբոր տարակուսանքի մէջ  
իյնամ , իմ հոգւոյս փրկութեան օգ-  
տակար եղածը ինծի սորվեցուր . իմ  
խղճմտանքս միշտ դրդէ , որ մեղքէն ու  
մեղքի առիթներէն հետ ըլլամ : Վկ հրեշ-  
տակդ այ , կաղաչեմ քեզի մահուանս  
ատենը իս մի թողուր . չար սատանային  
ձեռքէն իս աղատէ . որպէս զի արքայ-  
ութեան մէջ քեզի հետ արժանի ըւ-  
լամ իմ ամենաքարի արարիչս օրհնելու  
ու փառարանելու , ամէն :

---

ԵՐԵԿԱԾԵՄՆԵՐԻ ԱԴՐԵԲ:

**Ա**մենախնամ տէր իմ և ած, ես քու ստեղծուածդ խոնարհութեամբ գետին ինկած քեզի անլոելի գոհութիւն կըմատուցանեմ, որ զիս ողջ առողջ մինչև աս իրիկունս հասուցիր: **Վ**ելլի իս պարտական կըմանչնամ քեզ օրհնելու ինծի լոյս տալուդ համար, որ իմ մոքիս անփարատելի խաւարը փարատեց. ու իմացուց՝ թէ որ բանը քեզի հաճելի է, ու իմ հոգւոյս փրկութեան օգտակար: **Վ**յսօր քու շնորհօբդ ինչ բարի գործ որ ըրի, ամէնն ալ քեզի կընծայեմ. ինչու որ ես իզմե աղեկ բանմը չունիմ. ու առանց քուկին օգնականութեանդ բան մ'ալ չեմ կրնար գլուխ հանել. իսկ ինչ պակսութիւն որ այսօր ըրի, ամենէն կըդարշիմ. և կառաջադրեմ, որ ամէն ձեռքէս եկածը ընեմ անոնցմէ զգուշանալու համար: **Դ**ու տէր իմ սրտագէտ, զիտես իմ

տկարութիւնս , կը ճանչնաս զմեղ , որ  
պզտիկութենէ պէրի միշտ մեր բաղձան-  
քը դէպ 'ի չարը կերթայ . դուն քու-  
անհուն ողորմութեամբդ իմ սիրտս փո-  
խէ , որ ճշմարիտ բարին սիրէ , ու միշտ  
ջանայ քու սուրբ պատուիրաններդ պա-  
հել , ամեն :

### ԱՅԼ ԱԿՈՒՄ :

Ով բարեգութ տէր իմ և արարիւ ,  
քանի որ քու անուշ յիշատակդ ու բա-  
րերարութիւններդ միտքս կիյնայ , սիրտս  
անանկմը քուկին սիրովդ կըլեցվի , մին-  
չե կըբաղձամ՝ որ քեզ երկնից սուրբե-  
րուն հետ գիշեր ցորեկ փառաբանեմ :  
Ենոր ներհակ մարմինս տկար է , ու չի-  
կրնար արթուն կենալ . անոր համար  
պէտք է որ չափաւոր քնով հանգչի :  
Իսյց կըխնդրեմ քէնէ ով արարիւ  
տունջեան և գիշերոյ , որ աս գիշերս  
սիրտս միշտ քեզ սիրելու ու օրհնելու  
արթուն մնայ : Կարօղ չըլայ տէր իմ  
սատանան իս փորձել իր չար հնարքնե-  
րովը . կարօղ չըլայ մարմինս , որ միշտ

Հոգւոյս դէմ զլուխ վերցընել կուղէ,  
բան մը մտածել որ քուկին ամենաբարի  
կամացդ դէմ ըլլայ: Երկինքին սուր-  
բերը, մանաւանդ պահապան ու պաշտ-  
պան սուրբս իս ամեն փորձանքներէն  
պահեն, որպէս զի առարվանց առողջ  
մարմնով ու արթուն հոգւով արթնցած  
ատենս, դարձեալ կարօղ ըլլամ օրհ-  
նութեամբ բերանս բանալ, ու քեզ  
հրեշտակներուն, ու երկնից սուրբերուն  
հետ փառաբանել, ամեն:

### Առաջնորդ:

**Ա**նձնիմ 'ի ձեռս քո է յամենայն ժամ:

և զօրէնս քո ես ոչ մոռացայ:

**Ե**նկան զծառայ քո 'ի բարի. զի մի ամ-  
բարտաւանք զզուեսցեն զիս:

**Ա**պասեցին աչք իմ փրկութեան քում  
տէր, և բանից արդարութեան քո:

**Օ**գնութիւն ինձ 'ի տեառնէ եկեսցէ:

որ արար զերկինս և զերկիր:

**Ա**րպէս ոչ ննջէ և ոչ 'ի քուն երթայ  
պահապանն իսրայէլի:

**Տ**էր պահեսցէ զքեզ, և տէր ընկալցի  
աջով ձեռամբ իւրով:

Վարեգակն 'ի տուել քեզ մի մեղիցէ , և  
մի լուսին 'ի դիշերի :

**S**էր պահեսցէ զքեզ յամենայն չարէ ,  
պահեսցէ տէր զանձն քո :

**I**շաղաղութեամբ յայս և 'ի սոյն ննջես-  
ցուք և զարթիցուք , զի դու տէր  
միայն առանձին յուսով քո բնա-  
կեցուցեր զմեզ :

### Շ աբական :

**O**ւրեկոյի աղօթս մեր ընկալ տէր բա-  
րեխօսութեամբ ծնողի քո , և առաքեա-  
'ի մեզ տէր զօդնութիւն 'ի լեռնե սրբոյ  
քումիմ :

### Վ աղջու առ Յ ա ք հ ա ն է լ :


**S**էր իմ Յա ք հ ա ն է , Երբոր կը յիշեմ իմ  
անցած կեանքս կըսարսիմ ու կըդողամ :  
Վնչափ տարիներ մեկ աչք բանալու  
գոցելու մը պէս անցան գացին . իսկ թէ  
որչափ աւելի պիտի ապրիմ , ամեննեին  
անստոյդ է : Վս միայն դիտեմ , թէ երր-  
որ է նէ մահը իր յաղթութեան նշանը  
մեր վրայ օր մը պիտի տընկէ : Իմէ որ

գործած բաներս միտքս բերելու ըլլամ,  
 բոլորովին յուսահատութեան մէջ կիյ-  
 նամ. իսկ շրյիշելը՝ նոյն իսկ դատապար-  
 տութիւն է։ Տես տէր իմ, ու ողօրմէ  
 իմ խեղճութեանս . դուն ես իմ արա-  
 րիչս ու փրկիչս, ես քուկին ստեղծ-  
 վածդ եմ, ու քուկին պատկերիդ նմա-  
 նութիւնը, մանաւանդ քու պատուա-  
 կան արեանդ գինը։ Խս այնչափ սիրե-  
 ցիր որ, մինչև ինծի համար երկինքէն  
 ինջար, անարատ սուրբ կուսէն մարմին  
 առիր, անանկ սոսկալի չարչարանքներ  
 քաշեցիր, ու խաչին վրայ բոլոր արիւնդ  
 թափելէն ետև՝ գլուխդ խոնարհեցու-  
 ցիր ու մեռար։ Հիմակվընէ քանի որ  
 շունչս վրաս է, քանի որ լեզուս կա-  
 պած, ու զգայութիւններս կորսրված  
 չեն, կաղաչեմ քեզի բարի չչա, որ քու  
 արեանդ գինը չիդատապարտես. քուկին  
 պատկերդ չանարգես . ու քու ստեղ-  
 ծուածդ երեսէ չիձգես։ Խրաւցընէ մե-  
 ղաւոր եմ, քեզ վշտացուցեր եմ, ու  
 շատ հեղ ահեղ դատաստանդ ու զար-  
 հուրելի դժոխքին տանջանքները բանի  
 տեղ չեմ դրած. անոր համար արժանի

էի մեծամեծ պատիմներ ընդունելու :  
 Բայց ես հիմա իրրե թէ կենացս վեր-  
 ջին բռպէն հասած ըլլալով . ամեն մեկ  
 մեղքերուս վրայ մեղայ գոչելով սրտանց  
 կրզզամ . դուն ալ տէր իմ , անոնք բռ-  
 լորովին ժնջես , ու թողութիւն շնորհես :  
 « Յովլու յէս հշուաւ , և ո՞յ Եղլոյ . լուս ,  
 և առն պէտի սպիտակ Եղլոյ : Կամած չար-  
 քեղի կրյանձնեմ իմ սիրտս՝ հոգիս՝ ու  
 մարմինս , որ դուն ստեղծեցիր , ու ան-  
 դին արիւնովդ գնեցիր . քու ամենայաղթ  
 սուրբ խաչիդ զօրութեամբը իս զօրա-  
 ցուր , ու միշտ պահպանէ . հոգւոյս աչ-  
 վոներուն լոյս տուր , որ մահացու մեղ-  
 քերու մէջ շիննջէ : Կառ Էս ուսշպան  
 իմ տէր , և ՚է յետու յանիյն առանձին պէսդէ  
 իմ , ամեն :

106/41 - 57





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԳՈԹՅԻ

## Կ Ւ Բ Ա Կ Ի

Աասն երախտագիտութեան :

Հայք հեք, ոք յէրինա ես :

Այյր բարեգութ, երբոր մարդուս համար ըրած քուկին բարերարութիւններդ միտքըս կըրերեմ. չեմ գիտեր թէ՛ ինչ պէս քեզի շնորհակալ ըլլամ, ու քեզ օրհնեմ : Տէր՝ որ կողմը որ դառնամ, ինչ բանի վրայ որ նայիմ, քու անսահման բարութիւնդ կըտեսնեմ : Դառն ստեղծեցիր ինձի համար աշխարհքս բոլոր իր զարդերով : Դաշտերը խոտերով ու ծաղիկներով զարդարեցիր. լեռները ծառերով ու կենդանիներով բաղմացուցիր. օդը զարդարելու համար գեղեցիկ թռչուններ ստեղծեցիր. նոյն պէս ծովին ալ զանազան ձուկերով լեցուցիր. որպէս զի ասոնք վայելելով

քեզի անլռելի դոհութիւն մատուցա-  
 նեմ, ու քեզ աւելի սիրեմ: Խնչպէս  
 մեծ են քու գործքերդ տէր ած, որ  
 մարդուս խելքը շիհասնիր: Եւ երբոր  
 իմ մեղքերովս արքայութեան ճամբէն  
 հեռացայ, ողորմութեանդ դուռը ինծի  
 դէմ դոցեցի, ու վերջին երանութենէն  
 զրկվեցայ. դու ովհ հայր գթած, զար-  
 ձեալ վրաս 'ի գութ շարժելով խրկե-  
 ցիր քու միածին որդիտ. որպէս զի խ  
 անէծքէ աղատէ, մոքիս մթութիւնը  
 հաւատքի լուսով պայծառացընէ, տկա-  
 րութիւնս զօրացընէ, ու ինծի երկնից  
 ճամբան առաջնորդէ: Օչնչ դայ որէ-  
 պուր ունան ընդ անենայնէ, ուր և ետ  
 էն: Հայր երկնաւոր, հայր բարեգութ,  
 այդչափ ըրած բարերարութեանցդ դէմ  
 քեզ ինչ փոխարէն հատուցանեմ:  
 Խորսրված էի, գտար. մեռած էի հոգ-  
 ուվ, ողնցուցիր. դժոխիր ու անիծից  
 որդի էի, արքայութեան ու օրհնութեան  
 ժառանգ ըրիր. ու ես քեզ այսպէս շու-  
 տով կրմոռնամ: Արշափ որ մեծ է քու  
 երախտիրդ, այնչափ ալ մեծ է իմ ապե-  
 րախտութիւնս. որ անբան անասնոյ մը

պէս մէյ մը միտքս չեմ բերեր իմ ածս,  
իմ արարիչս ; ու իմ փրկիչս : Ուէ որ  
մէկ զգայարանք մը միայն պակաս ըլլար .  
ու ան մէկը ինձի պարդեէր . մինչեւ մեռ  
նէի նէ , իս անոր պարտական կըճանչ  
նայի . իսկ դուն ինձի ամբողջ կենդա-  
նութիւն տրվիր . ամէն զգայարանքներս  
կատարեալ ստեղծեցիր . անանկ է նէ  
որքան պարտականութիւն ունիմ քեզ  
օրհնելու , ու քեզի անդադար շնորհա-  
կալ ըլլալու այնչափ երախտեաց համար ,  
որ ինձի ամէն օր կընես :

Վհա քու ամենասուրբ ուրբդ ինկած  
կըխնդրեմ քէնէ հայր երկնաւոր , որ  
մինչեւ հիմա ըրած յանցանքներուս թո-  
ղութիւն տաս . ու քեզի դէմ ըրած ա-  
պերախտութիւններուս ներես : Անս-  
նաւոր շնորհք տուր ինձի տէր իմ , որ  
զքեզ ածդ ու երկնի և երկրի արարիչդ  
արժանապէս կարօղ ըլլամ ինձի հայր  
անուանել . ինչպէս որ ինձի սորվեցու-  
ցիր . ու ես ալ արժանի ու հնազանդ  
որդի ըլլամ քեզի դթած հօրդ , որ յեր-  
կինս ես :

Ա. Յ. աղօթք վասն կեւըակեի :

Առաջ էղեցի անուն ու :

Ովտեր իմ և արարիչ, դուն հրամայեցիր ինծի, որ շարթու մէջ օր մը սուրբ պահեմ. դաղրիմ աշխարհական զբաղմունքներէս, ու իմ պարտքս աղեկ մտածեմ։ Առաջ եղեք ըսիր, ինչպէս որ ես ալ սուրբ եմ։ Վայսպիսի վարք պէտք է ունենալ, որ տեսնելով անհաւատները զարմանան. ու քեզ վառառորեն, որ մեզի այսպիսի շնորհքներ կըպարգենս։ Դարձեալ շարքիստոնեայներն ալ ամչնալով զղջումի գան. ու իրենք զիրենք առաքինութեան ճամփան դարձլնեն։ Վնանկ է նէ տուր ինծի, որ այսպիսի սուրբ օրը իմ վերջին վախճանս ճանչնամ, որուն համար որ զիս ստեղծեր ես. ու բոլոր շարաթը անվախճանին համաձայն վարք ունենամ։ Իմ վերջին վախճանս տեր իմ արարիչ, դուն ես. իմ սիրտս պիտի աղաս պահեմ ամէն ժամանակաւոր բաներէն. ու ամէն արարած որ իմ ծառայութեանս

Համար ստեղծեր ես, ինձի պիտի յորդոր ըլլան քեզ սիրելու. որ այնպիսի բաներ ինձի պարգևեցիր աս աշխարհ.քս վայելելու, ու անդիի աշխարհ.քը պատրաստած ես բոլորովին քեզ ինձի տալու արքայութեան մէջ : Դառն լուսաւորէ իմ միտքս, ու շիտկէ, որ միայն քեզի նայի. չըլլայ թէ արարածական դեղեցկութիւնը զիս խարէ ու քեզմէ իս հեռացընէ : Արկլորդ պարտքս է լուսաւոր վարք ունենալ անհաւատներուն ու չար քրիստոնեաներուն առջին, նոյնը գորքծով ալ կատարելու համար ինձի շնորհք տուր. ինչու որ իմ խիղճս ներսէն կրվկայէ, որ շատ անգամ բարի օրինակ տալու տեղ, քու անունդ սուրբ ընելու տեղ, քրիստոնէի անունը նախատվեր է իմ չար վարուքքս : Քրիստոնէին պարծանքը եղբայրսիրութիւննէ . թշնամեաց բարիք ընելը, շիհայհոյնելը, երդում չընելը, ու պարկեշտութիւնը : Տուր ինձի աս առաքինութեանց շնորհքները, ու իս զօրացուր. ես ալ կառաջադրեմ քուկին ողորմութեանդ գործակից ըաալ . իմ եղբայրս ինձի

պէս սիրել . իս հալածողներուն բարիք  
ընել . ամեննեին շիհայհոյել . սուտ եր-  
դում չընել . վերջապէս ինչ որ դուն  
սուրբ աւետարանին մէջ հրամայեցիր .  
որպէս զի ինչպէս որ յառաջ քու սուրբ  
անունդ իմ վրաս ու իմ գէշ վարուցս  
համար նախատվեցաւ նէ , ասկէց ետքը  
տեսնելով իմ դարձս ու քրիստոնէի  
վայել վարքս՝ փառաւորեն , ու սուրբ  
ընեն քու փառաւորեալ անունդ :

## ԵՐԿՈՒԾԱՅԹ

**Վ**ասն ածային գթութեան :

Եկեւայն արայիւնական :

**Վ**ած իմ , արարիչ երկնի և երկրի , թէ  
որ հազարաւոր տարիներ ապրելու ըւ-  
լոյի , և ամեննեին ուրիշ բան չիմտնայի ,  
բայց եթէ քու ստեղծած բարիքներդ .  
իրաւցընէ ամեն բռպէ նոր նոր բաններ  
կրգտնայի զարմանալու քու իմաստու-  
թեանդ վրայ , ու գոհանալու քու բա-  
րերարութեանդ համար : Դու ստեղ-

ծեցիր առաջին մարդը, ու փրքը պատ-  
 ուիրան մը տրվիր . միայն մէկ ծառէ մը  
 չուտելու . բայց անհնազանդ դանրվե-  
 լով պատուիրանիդ, դրախտէն դուրս  
 վրոնտվեցաւ . ամէն ունեցած շնորհք-  
 ները կորսընցուց . ու ողորմելութեան  
 մէջ մնաց : Խեկ որ գթալով չիխրկէիր  
 միածին որդիդ, ու կրնար արքայութիւն  
 մտնել . վասն զի աղամայ մեղքը ար-  
 քայութեան դուռը ամենուս ալ գոցած  
 էր : Ովհ հայր գթութեան, այնչափ մէծ  
 բան մտածեցիր մեղ փրկելու համար,  
 մեղ արքայութիւն մտցընելու համար,  
 որ խելքէ մտքէ դուրս բան է : Եւ ինչ-  
 պէս կրնայի ես հաւտալ, թէ քու մէկ-  
 հատիկ որդիդ մարմին առնու, այնպէս  
 խոնարհ ձեռվ մարդոց հետ ելլէ նստի,  
 մինչև կարծես թէ մոռցած ըլլայ իր ած-  
 ութիւնը . ու ետքը չարագործի մը պէս  
 նախատանօք ու չարչարանօք խաչիի,  
 թէ որ սուրբ եկեղեցին ինծի սորվեցու-  
 ցած չըլլար : Պէտք է զարմանալով դո-  
 չեմ . Որո՞ւս զէ բառաւ է ողորման լին-  
 չառը բառը և անո՞ւ զըս պահեցեր եր-  
 իշուղծաց այս : Չէ՞ր կրնար մի քու իմաս-

տութիւնդ ուրիշ ճամբայ մը դտնել՝ մեզ  
 արքայութեան ժառանդ ընելու համար։  
 Այսին Քնի արեան մէկ կաթիլը, մէկ  
 սրտանց աղաչանքը, մէկ խոնարհու-  
 թեան ներգործութիւնը բաւական չէր  
 մեզ այ հետ հաշտեցընելու։ Իսկ նե-  
 րէ համարձակութեանս ով տէր իմ։  
 ինչու որ ես հող և մոխիր եմ. ինչպէս  
 կրնամ քու դատաստանիդ խելք հա-  
 ցընել։ Աս միայն գիտեմ, որ մեր վրայ  
 ունեցած սէրգ ու դժութիւնդ չափ  
 չունի եղեր, որ այսպիսի կերպ բանե-  
 ցուցիր մեզ փրկելու համար։ Ուղեցիր,  
 որ քու որդիդ երկայն ատեն մեզի հետ  
 ըստ, ու մեզի աս աշխրիս վրայ ար-  
 քայութեան ճամբուն առաջնորդ ըստ։  
 Աս ամէն երախտեաց համար ինչ կը-  
 նամ ես մեղաւորս հատուցանել. բայց  
 եթէ գետինը ինկած քեզի շնորհակալ  
 ըստ. ու շնորհք խնդրել, որ աս ամէն  
 բարերարութիւններուդ յիշատակը պա-  
 հեմ. ու ջանամ քու միածին որդւոյդ  
 օրինակներուն հետեւելով երկնից ար-  
 քայութեան արժանի ըստ. ու սուրբ  
 երրորդութիւնը միշտ փառաւորել։

# ԵՐԵԲԸՆԹԻՒԹԻՒՆ

Համբերութիւն ՚ի վիշտու:

Եղացին իւս, ու որոկէս յերինս և յերէք:

**Տ**էր իմ ամենախնամ, մենք որչափ կարճամիտ ենք ու անխելք. որ երբոր բան մը ուզածներնուս պէս չըլլայ, կամ ձախորդութիւն մը գլուխնիս գալու ըւլայ, քէնէ կըսկսինք տըժգոհալ. իբրև թէ մեզ երեսէ ձգեր ես, ու մեղի չես խըղճեր կոր: Ա ՚իս ած իմ, որչափ կուրութեան մէջ մնացեր ենք, որ մեր փրկութեան օգուտը չենք ճանչնար. բարիքը չարիք կըկարծենք, ու ողորմութիւնը անգթութիւն կըսեպենք: Ո՞ւղ սիրելուդ համար նեղութիւն կըխրկես մեր վրայ, որ աշխրքիս բաներուն հետ սիրտերնիս չիկապենք, քեզ չիմոռնանք, ու առաքինի ըլլանք. բայց մենք վարձք մը չըստանելէն ետե՛ մեղաց տէր կըլլանք: Խնչ բանով հաճոյ եղան քեղի ան բիւրտոր մարտիրոսները,

խոստովանողները, ու այնչափ արդար  
հոգիները. և ինչպէս ան փառաւոր ու  
հրաշալի պսակները կը բցան առնուլ ար-  
քայութեան մէջ, բայց եթէ նեղու-  
թիւնով ու տառապանիքներով: Յժէ որ  
աս աշխարիս մէջ քու սիրոյդ համար  
չարչարանիքներուն ու նեղութիւններուն  
համբերած շրլային, ընտօր կրնային  
արքայութեան փառքին արժանի ըստալ:  
Ենանկ է նէ կաղաչեմ ով ած իմ, փա-  
րատէ աս մթութիւնը վըսյէս. ու  
շնորհք տուր ինձի, որ ասկից ետեւ իս  
բոլորովին քու սուրբ կամքիդ յանձնեմ,  
ու ամեն ատեն՝ մանաւանդ նեղութեան  
ու փորձանիքի մէջ եղած ժամանակս աս  
սուրբ աղօթքս ըերնէս անպակաս ընեմ,  
որնոր դու տէր իմ ՀՅ սորվեցուցիր  
ինձի: Տէր՝ եթէ կուղես, որ նեղու-  
թիւններու ու վշտերու մէջ չարչարիմ.  
Եղիցին կամք քո: Տէր՝ եթէ կուղես,  
որ միշտ աղքատութեան ու կարօտու-  
թեան մէջ մնամ. Եղիցին կամք քո:  
Տէր՝ եթէ կուղես, որ բանս դորձքս չի-  
յաջողի, ու զանազան փորձանիքներու  
մէջ իյնամ. Եղիցին կամք քո: Տէր՝

եթէ կուզես, որ երկար ատեն ցառագարութիւն քաշեմ, հիւանդ մնամ, եղիցին կամք քո: (Կրհնեալ ըլլայ քուսորը կամքդ, ինչպէս երկինքը անանկ ալ երկրի վրայ: Այս նեղութեան հետ համբերութիւն ալ տուր ինծի, որ կարօղ ըլլամ քու սիրոյդ համար ան նեղութիւնները քաշել. ու քեզ օրհնել ըսելով, Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի:

## ՉՈՐՏՅԱՅՐԻՑԹԻ

**Ա**սն ապաւինելոյ յած:

Օհաց մեր հանուղապետ դուք մեզ այսօք:

**Ա**մենակարող բարեգութ ած, որչափ պարտական եմ ես քեզի շնորհակալ ըլլալու քու անսահման բարութեանդ համար, որ իս ալ մինչեւ աս օրս հայրաբար կըկերակըս, ու կըպահպանես. ու կըյուսամ որ ծերութեանս ատենն ալ թող չես իտար, որ իմ մարմնաւոր հացս պակսի, որուն աս աշխարիս անա-

պատին մէջ կարօտ եմ։ Կառ փրկիչ իմ, անսապատին մէջ զոթ շարժելով ժողովրդոց վրայ, միայն հինգ հացով հաղարաւոր մարդիկներ կերակրեցիր. սորմեցընելով ինծի՝ որ մարմնոյս շատ հոդ չխտանիմ. ու հեթանոսներու պէս զիշեր ցորեկ չիմրտմբտամ՝ թէ ինչ ուտեմ, կամ ինչ հագնիմ. ինչու որ իմ երկնաւոր հայրս արգեն իղմէ աւելի աղեկ դիտէ՝ թէ բոլոր ատ բաները ինծի հարկաւոր են. Աչ անհեցուն ՚ի ժեղ յուսոն տէր, և դու առա իերովուն նոյս ՚ի ժամու։ Ահա ամեն օր այնչափ բիւրաւոր կենդանիներու կերակուր կուտաս, ու կրպահպանես, որոնք որ ինծի համար ստեղծեցիր. որչափ աւելի իմ վրաս խնամ կրտանիս, որ միայն քեզի համար ստեղծեցիր։ Ուրեմն բոլոր իմ յոյսս ու ակնկալութիւնս դուն ես. ինչ բարիք որ ինծի կրխրկես մարմնոյս համար, հաղար փառք տալով քու ողօրմած ձեռքէդ կրնդունիմ. ու քուկին բարութեանդ շնորհակալ կրպամ։

Հայյց դիտես տէր իմ, ինչպէս որ մարմինս հացի կարօտ է, ասանկ ալ հո-

դիս հոգեոր կերակուր կռւզէ . ու հոգ-  
 ոյս կերակուրը քու սուրբ մարմինդ ու  
 արիւնդ է , որ բոլոր աշխարքիս կեանք  
 կըպարգեէ : Դուն խոստացար անսուտ  
 բերնովդ , թէ ով որ քու ծշմարիտ մար-  
 մինդ կըճաշակէ , ու սուրբ արիւնդ կը-  
 խրմէ , յաւիտեանս ապրի : Ով գթած  
 Յն , տուր ինծի աս երկնային հացը , որ  
 անով հոգիս կերակրեմ , ու զօրացընեմ ,  
 որ միշտ քու շնորհքիդ մէջ կենդանի ըւ-  
 լայ . տուր ինծի աս հրեշտակային հա-  
 ցը , որ շատ անգամ քեզի հետ միանամ ,  
 ու քու սէրդ շիմոռնամ : Կաղաչեմ տէր  
 իմ , տուր ինծի ան մէծ շնորհքը . այս-  
 ինքն՝ մեռնելու ատենս աս սուրբ հա-  
 ղորդութենէն զիս մի զրկեր . առանց  
 սրբութիւն առնելու թող մի տար՝ որ  
 անմխիթար մեռնիմ : Անոր համար կեն-  
 դանութեանս ատենը խիստ ջերմեռանդ  
 կըլլամ սրբութեան , ու շատ անգամ  
 կռւզեմ հաղորդվիլ . որպէս զի մահ-  
 ուանս ատենը արժանի համարիս ինծի  
 դալու , ու պատուական մարմնովդ ու  
 արիւնովդ իս զօրացընելու սատանային  
 փորձանքներուն դէմ :

# ՀԻՄԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Ա ասն աղաշխարութեան :

Եւ լու մու պատրիս մու :

Ով բաղմագութ արարիչ իմ, սյսօր  
յիշելով իմ խեղճութիւնս ու աղքա-  
տութիւնս, քու առջևեդ կելլեմ ողօր-  
մութիւնդ շարժելու համար : Օմէ որ  
դուն մեզ արդարութեամբ դատելու ըւ-  
լաս, ով կրնայ ապրիլ : Խնչ է իմ բո-  
լոր կեանքս, բայց եթէ մեղք մեղքի  
վրայ դիզել, ու սխալմունք սխալմուն-  
քի վրայ աւելցընել : Խնչպէս որ ջուրը  
ամեն արդելքը կրվանէ, ու անդադար  
դէպ'ի վար կրվաղէ, ասանկ ալ իմ ան-  
կարդ բաղձանքներս իս իրրե թէ զերի  
ըրած կրքաշկրոտեն քու պատուիրան-  
ներուդ դէմ գործելու : Կըխոստովա-  
նիմ քու առջևեդ, որ իմ անկարդ բաղ-  
ձանքներս իմ վրաս աւելի կիշխեն, քան  
թէ քու սուրբ շնորհքդ : Օմէ որ եր-  
բեմն սիրտս զդում ունենալու ըլլայ,

կամ բարի առաջադրութիւն մը միտքս  
 գնելու ըլլամ . այնչափ տկար եմ իմ  
 անկարգ յօժարութիւններս զսպելու ,  
 մինչեւ երբեմն յուսահատութեան խոր-  
 հուրդներ միտքս կիյնայ՝ ամենեին ան-  
 հոգ ըլլալու ինքը զինքս շիտկելէն : Ո՞չի  
 կողմանէ աշխարհք իր շար օրինակաւը  
 իս մեղքի կը յորդորէ . մէկալ կողմանէ  
 մարմինս իմ ընտանի թշնամիս իս կը-  
 դրդէ : Եւ այնպէս կը դրդէ , մինչեւ ան-  
 կարելի է՝ որ մարդ իր ուժով կարող  
 ըլլայ յաղթել : Ահա տէր իմ , աս կեր-  
 պարանքով կուգամ քու առջեղ . իմ  
 պակսութիւններս դլխէս վեր են . մի  
 միայն յոյս ունիմ՝ որ գուն զիտնալով  
 մեր տկարութիւնը , արդարութեամբ մեր  
 պարտքը չես պահանջեր . մանաւանդ  
 թէ շատ անդամ շրտեսնելէն կուգաս ,  
 կըներես , ու կըքաւես : Ես ասկեց ետքը  
 կըջանամ , որ կամաւ չիվշտացընեմ քեզ  
 իմ արարիչս . բաւական են անցած ա-  
 տենվան ըրածներս : Կիտեմ որ պատ-  
 րաստ ես ձեռք տալ ամենուն ալ , որոնք  
 որ այսպիսի մոլութիւններու գերի են  
 եղած , ու աղատիլ կուղեն . կըզդան ,

ըրածներնուն վրայ կըցաւին, ու կառա-  
ջադրեն մէջ մ'ալ չընելու: Վանկ է նէ  
խրկէ իմ վրաս ալ ան սուրբ շնորհքը,  
որն որ կրնայ իմ միտքս շիտկել, որ  
աշխարհային ունայնութեան շիհետեիմ.  
ու սիրտս քու սիրովդ բորբոքեմ, որ  
քու պատուիրաններդ պահեմ. ու մար-  
մինս հոգւոյս իշխանութեան տակը  
ձգեմ: Տուր ինծի ան շնորհքը, որն որ  
առաքեալները ունեցան. տուր ինծի ալ  
այնպիսի զզջում, որն որ պետրոս ա-  
ռաքեալը ունեցաւ, երբոր հաւոն խօ-  
սելը լսեց: Խոցէ իմ սիրտս ալ նոյն  
ածային սիրովդ, որ յիշելով իմ ան-  
թիւ մեղքերս անմխիթար լամ ողբամ,  
որ քեզ արարչիդ այնչափ ապերախտ  
դանըված եմ: Վայնպէս մը բորբոքէ-  
քու սէրդ իմ սրտիս մէջ, որ մէջ մ'ալ  
չիմարի:

---

# ՈՒՅՏԵԱԾ

**Վասն սիրելոյ զթշնամիւ :**

Ուղղէս և հետ լողացած հերոց ուստիտու-  
նոց :

**S**էր իմ օն Կը, որ աշխարհք գա-  
լովդ ամեն առաքինութեան ճամբաները  
օրինակաւ ու խօսքով ինձի սորվեցու-  
ցիր : Դուն հրամայեցիր ինձի, որ թշնա-  
միներս սիրեմ, ու իս հալածողներուն  
բարիք ընեմ . բայց կըխոստովանիմ  
տէր իմ, որ ես շատ անգամ աս պատ-  
ուիրանդ շիպահեցի . թշնամիներս շի-  
սիրելէն ետև՝ ինձի բարիք ընողներուն  
ալ ապերախտութիւն ըրի : Ես որ հող  
ու մոխիր եմ, միշտ մեղանչելով քեզի  
թշնամի եղած եմ . բայց դուն ինձի  
կըներես, ու կապըսպըրես՝ որ ես ալ  
իմ թշնամիներուս ներեմ : Ով ած  
իմ, շիգտնըվիր աշխրքիս մէջ իմ ըրած  
ապերախտութեանս նմանը, որ այնպէս  
մէծ ու սաստիկ ըւայ, ինչպէս որ ես

ըրած եմ քեզի դէմ՝ քու սուրբ պատուիրաններդ շխպահելով : Դուն տրվիր ինձի կենդանութիւն, խելք ու միտք, ու ամեն զգայարանկըներս . որպէս զի անոնցմով միայն քեզ օրհնեմ, քեզի ծառայեմ, սիրեմ . քեզի մինակ հաճոյ ըլլամ : Վ. մէն մէկ սրտիս շարժելը, ու շունչ առնելս դուն կըպահես . ՚ի վերայ այսր ամենայինի ես կըհամարձակիմ քու տրված ուժովդ քեզի դէմ ելլել, քու այսչափ բարիքներուդ ապերախտ ըւլալ, ու թշնամանալ :

Հիմա կըճանչնամ իմ անօրէնութիւններս, ու սրտանց կըզզջամ ըրած ապերախտութիւններուս վրայ : Վ. իս սիրելի փրկիչ, աս ուրբաթ օրս իս փրրկելու համար խաչը ելար, ու արիւն թափեցիր անտանելի ցաւերով . քեզ խաչը հանողներուն համար ալ երկնաւոր հօրէդ թողութիւն խնդրեցիր՝ ըսելով . Հայր, Ասու Դոյտ, ոչ ոչ գիտեն՝ ոչ ոչ գործեն : Ով գթած Յա, իմ մեղքերուս ալ թողութիւն խնդրէ, որ շատ անզամ քեզ խաչ հանեցի . ու անոնցմէ աւելի ապերախտ գտնըրվեցայ :

Վախեմ տէր իմ, որ ներողամբ ես, ու դիւրաւ կըթողուս իմ պարտքերս. բայց կաղաչեմ, ինծի շնորհք տուր, որ ես ալ ինծի պարտական եղողներուն սիրով ներեմ. ու թշնամիներս սրտանց սիրեմ: Յմէ որ գուն իմ մեծամեծ ապերախտութիւններուս թողութիւն տալու պատրաստ ես նէ, որչափ աւելի ինծի ալ կըվայլէ, որ իմ թշնամիներուս սիրով թողութիւն տամ, ու ձեռքէս եկածին չափ բարիք ընեմ:

Ենանկ է նէ կըխնդրեմ տէր իմ, իս մի թողուր. քու օգնութիւնդ վրայէս պակաս մի ըներ. որպէս զի նախատական խօսքերով ուրիշին սիրտը վիրառորելէն զգուշանամ. ու չըլլայ թէ՝ իմ անհօգութեամբս ուրիշին վնաս մը հացընեմ: Տօւր ինծի խոնարհ վարմունք մը, որ հիշ մէկը կոպտութեամբ մը ինծի թշնամի չընեմ: Չօրացուր իս քու շնորհօրդ, ու վառէ բորբոքէ սիրտս քու երկնային սիրովդ, որ սրտանց սիրեմ իմ թշնամիներս. ու կարօղ ըլլամ քեզ զի հետ ըսել. Հոյք, Ասու Գոյք, ու Ճէտէն Կէնչ Գոյծէն: Արջանամ ասկէց

ետքը քու սուրբ շնորհքով, որ ամեն  
թշնամի եղողները մէկզմէկու հետ հաշ-  
տեցրնեմ։ Ալբաղձամ տէր իմ, որ վեր-  
նար ամենեին աշխրքէս թշնամութիւնը,  
ու ամէն մարդ մէկզմէկ սիրէին եղբայ-  
րական սիրով։ ինչպէս որ դուն պատ-  
ուիրեցիր մեղի։

## ԸՆԲԱԹ


**Ա**ան յաղթելոյ փորձութեց։

Եւ Ֆ ասն կանոնի պահ ՚է էռբյուլէն։ այս  
էրիւն ՚է լուն։

♦  
**Ա**յր բարեգութ, որչափ անթիւ են  
երախտիքդ, որ անդադար քեզմէկ կըն-  
դունիմ։ Ո՞ր մայր անանկ խստասիրտ  
կընայ ըսալ, որ իր գրկի զաւակը երեսէ  
ձգէ։ բայց թէ որ մարդկան մէջ գտնը-  
վելու ալ ըսայ, դուն իս չես մոռնար.  
ու այնպէս իս կըխնամես, ինչպէս թէ  
աս աշխրքիս մէջ մինակ իս ըսայի։ Ես  
որ այսչափ բարերարութիւններ քէնէ  
կընդունիմ, որչափ սաստիկ ապերախտ

պէտք էի սեպօլիլ, թէ որ միտքէս միայն  
անցընէի, որ դուն իս փորձութեան մէջը  
կըճգես, ու թող կուտաս՝ որ ես յաւի-  
տենական կորստեան վտանգի մէջ իյ-  
նամ։ Չէ, տէր իմ չէ, ասանկ չեմ  
հաւտար. հեռանան միտքէս ասանկ սա-  
տանայական մտածութիւններ։ Կիտեմ  
որ դուն իս այնպիսի փորձութեան մէջ  
չես ձգեր, որն որ իմ կարողութենէս  
վեր է։ Արհաւտամ առանց տարակու-  
սելու, որ փորձութեան հետ շնորհք  
ալ կրխրկես, որ համբերելու կարօղ ըւ-  
լամ։ Արխրկես իմ վրաս փորձութիւն,  
որ համբերել սորվիմ, անցած մեղքե-  
րուս համար թողութիւն գտնամ, ու  
առաքինի ըլլալու առիթ ունենամ։ Խ-  
րաւցընէ պէտք է, որ շնորհակալ ըւ-  
լամ, որ իմ վրաս երբեմն փորձութիւն  
կրխաւրես. ինչու որ առանց ձախորդու-  
թեան ինչպէս կրնայի համբերութիւն  
սորվիլ. ինչպէս կրնայի ճանշնալ՝ որ իս  
կըսիրես. ինչպէս կրնայի սրտանց իս  
քեղի յանձնել, ու քեզի ապաւինիլ։  
Անանկ է նէ փորձութեան հետ ինծի  
ուժ ալ պարզեւէ տէր իմ, որ չըլլաց թէ

տրտնջամ , ու անհամբեր գտնըվիմ .  
 չոլայ թէ փոքր նեղութիւն մը մոռցը -  
 նէ ինծի քուկին անթիւ բարիքդ , որն  
 որ ամէն օր կըվայլեմ : Դուն տուր ինծի  
 օձին խորագիտութիւնը , որ յառաջա-  
 գոյն իմանալով վտանգը , անկէց փախ-  
 չիմ , չոլամ յանձնապաստան . ինչու  
 որ վտանգը սիրողը , վտանգի մէջ կը-  
 կորսրվի : Խոկ ան փորձութիւնը , որն  
 որ դուն կըխըրկես ով արարիչ իմ  
 բազմագութ , ամենեին չեմ տարակու-  
 սիր , որ պատրաստ ես օգնելու , որ փոր-  
 ձութեան տակը չիմնամ , այլ մանաւանդ  
 շնորհք ալ կուտաս յաղթելու : Արդ՝  
 խրկէ վրաս ինչ որ կուզես , յաջողու-  
 թիւն , կամ ձախորդութիւն , առողջու-  
 թիւն կամ հիւանդութիւն , բարեկամ-  
 ներ կամ թշնամիներ . վերջապէս՝ ինչ  
 որ կուզես , ու իմ հոգւոյս փրկութեան  
 աղէկ կըսեպեսնէ , քու շնորհօքդ պատ-  
 րաստ եմ ընդունելու . թէ որ դուն  
 իմ հետս ըլլաս , ով կրնայ իմ սրտիս  
 մսիթարութիւնը կոտրել : Ծառղ գան  
 ամէն նեղութիւններ . Ասպաւծով իմով  
 անցէց ընդ պարէնող , ամէն :



**Ը ԵՐԵԹԸՆԻ ԵՎ ՕԹԱՔ  
Ի ՊԵՏԵՒ ՄԵՐՅԱՑ ԿՈՒՍԻՆ  
Կ ԵՐԵ Կ Ե**

Ա զ մ լ ւ , ս ո ւ բ ե ն Ա ն դ ա ն ա յ բ ո ր ի ե կ ո ս ո ւ ն ի ւ ն ի ւ  
 ն ո ւ ն է հ ե ղ ա յ ց լ ո ւ ղ ո ւ ն ի ւ ն ը ն ո ւ ղ ո ւ ն ի ւ ն է լ ո ւ  
 հ ա յ ա ր ը :

**Ո**'վ քաղցրագութ սիրուհի խմ , նայէ  
 մէյ մը գթած աշվըներովդ մեղաւոր հոգ-  
 ոյս խեղճութեանը , որն որ տարակու-  
 սեալ հոգւով քեզի կրդիմէ : Խնէպէտ  
 ևս արժանի չեմ , որ դուն վրաս նայիս  
 ու ողորմիս ինձի . բայց գիտեմ , որ քու  
 սիրելի որդւոյդ մահը՝ որն որ մեղաւոր-  
 ներուն փրկութեան համար յանձն ա-  
 ռաւ , քուկին գթած սիրտդ ալ մտս-  
 նաւոր կերպով մը 'ի գութ շարժեց մե-  
 ղաւորներուն օգնելու , ու անոնց պաշտ-  
 պանութիւն ընելու : Ով մայր ողոր-  
 մութեան անանկ է նէ նայէ խեղճ մե-

զաւորիս ալ , ու ողորմէ ինծի : Կրտու որ  
 մեղքերս անթիւ են , ու գործած անօ-  
 րէնութիւններս խիստ մծ են . բայց  
 քու կարողութեանդ ու ողորմութեանդ  
 չափ չիկայ , կաղաչեմ մայր այ , քուկին  
 մէկ հատիկ որդւոյդ սիրոյն համար ինծի  
 օգնութիւն հասիր . երկընցուր քու բա-  
 րերար ձեռքդ ողորմելի մեղաւորիս վրայ ,  
 որ ինքը զինքը բոլոր քեզի յանձներ է :  
 Վիտեմ ովլ մայր ողորմութեան , որ  
 մեղաւորի մը օգնելը քեզի մծ ուրա-  
 խութիւն է . ուրեմն օգնէ ինծի ալ . ին-  
 չու որ մեղանչելովս այ շնորհքը ու մի-  
 անգամայն հոգիս կորսնցուցի , սատա-  
 նային ձեռքը գերի ըրի : Հիմա ես բոլո-  
 րովին քեզի ապաւիներ եմ , միայն ըսէ  
 ինծի , թէ ինչպէս դարձեալ այ հաճոյ  
 ըլլամ . ճամբայ մը ցըցուր ինծի , թէ  
 ինչ բանով իմ բարի հնիս հետ հաշ-  
 տրվիմ : Վկ բարեխօս ու պաշտպան մե-  
 ղաւորաց սուրբ Ածածին , մի միայն խօսք  
 մը ըսէ հնին , թէ ովլ որդի իմ , գուն  
 ողորմէ աս խեղճ մեղաւորին . անտարա-  
 կոյս շուտ մը մեղքերուս թողութիւն  
 կրգտնեմ : Յըցուր ովլ մայր այ , թէ

որչափ պատրաստ ես բարիք ընելու ա-  
նոնց, որոնք որ իրենց ապաւինութիւնը  
ու յոյսը քու վրադ դրած են, ամէն :

## ԵՐԿՈՒԾԱՐԹԻ

Ե.ՊՅՈՒՆ ՀԱՅ-ԲԱԿՈՎ ԱՆԴՐԻԱՋ ՊԵՂԱ-  
ՀԱՅԻԱԿ :

**Ո**վ թագուհի երկնի և երկրի, ես որ  
ատենօք խեղճգերի մը եղած էի մեղաց,  
հիմա զիս քեղի մշտնջենաւոր ծառայ  
կընուիրեմ. ու կառաջադրեմ, որ իմ  
բոլոր կեանքս քեղի պատիւ ըլլայ. կա-  
ղաշեմ դուն իս ընդունէ, ու երեսէ  
մի ձգեր, ինչպէս որ արժանի եմ նէ:  
**Ո**վ սիրելի մայր, Հանէն ետքը դուն ես  
իմ յոյսս ու ապաւինութիւնս: Կօրհնեմ  
ու կրգովեմ իմ փրկիչս, որ իր ողոր-  
մութեամբը ինծի շնորհք տրվաւ իմ  
բոլոր ապաւինութիւնս քու վրադ հաս-  
տատելու համար, որն որ ես իմ յաւի-  
տենական փրկութեանս մեծ նշան մը  
կըսեպեմ: Անտարակոյս կըյուսամ, որ

ած քուկին հզօր բարեխօսութեանդ համար իմ մեղքերուս թաղութիւն կը շնորհէ, ու իր ամենասուրբ շնորհքը ինձի կը բաշխէ: Բայց ով գթած մայր իմ, ես կրնամ շուտ մը գարձեալ իմ առջի գէշ ճամբաս դառնալ. ինչու որ նոյն վտանգները կեցած են միշտ, ու թշնամին երբէք չի բնանար. անոր համար որշափ մեծ մեծ փորձութիւններ առջևս կան յաղթելու: Ով մայր բարեգութ, դուն ինձի պաշտպան կեցիր, ու թող մի տար, որ նորէն մեղաց գերի ըլլամ: Կիտեմ որ դուն ինձի պաշտպան ըլլալէն ետ չես կենար. քեզի ոյսշափ աղաչելէն ետքը՝ քու ողորմութիւնդ ու քու մայրական գթած սիրտդ չի կրնար իմ խեղճութեանս դիմանալ. բայց կրվախնամ, որ շրլայ թէ մեղաց առթի ատեն քեզ մոռնամ, ու այնպէս կորսրիմ: Անոր համար կրխեղիմ քէնէ սուրբ Ածածին աս շնորհքը, որ կարօղ ըլլամ գժոխային թշնամին վրաս վաղած ատենը շուտ մը քեզի դիմել, ու քեզ օգնութիւն կանչել: Ով Անրիամ, ինձ խեղճ մեղառիս օգնութիւն հասիր. ով մայր սիրե-

լի, թող մի տար, որ ես այ անհաւատաբիմ ըլլամ, ամէն:

## ԵՐԵԲԸՆՔԹԻ

Եղօն, սուըն ԱՇածնէն բարէ հահ ինու-  
չելու համար:

**Ո**վ մայր ողորմութեան կոյս Անրիամ,  
արդեօք մահուանս ատենը ինչ վիճակի  
(Հալի) մէջ պիտի գտնըլիմ: Երբոր իմ  
գործած մեղքերս կը մտմրտամ, ու ան  
սոսկալի բռպէն, իմ յաւիտենական փրր-  
կութիւնս՝ կամ դատապարտութիւնս  
պիտի որոշէ, վախէս վրաս դող կուզայ:  
Խմ փրկութեանս ուրիշ յոյս մը չունիմ,  
բայց եթէ քու որդւոյդ անդին արիւնը,  
ու քուկին հզօր բարեխօսութիւնդ:  
Ախիթարիչ վշտացելոց սուրբ ԱՇածին,  
ան ետքի զարհուրելի ատենը քու օդ-  
նութիւնդ իդմէ մի հեռացըներ. ու ան  
նեղութեան բռպէն իս քուկին մխիթա-  
րութենէդ մի զրկեր: Եթէ որ հիմա  
խիղճս գործած մեղքերուս համար, այ  
արդարութեան համար, ու յաւիտենա-

կան փրկութեանս անստուգութեան հա-  
 մար ասչափ ինծի նեղութիւն կուտայ,  
 ան ատեն որչափ աւելի իս պիտի նեղէ:  
 Ով ապաստան մեղաւորաց, քանի որ  
 մահուանս ժամանակը չէ մօտիկցեր, ին-  
 ծի ճշմարիտ ապաշխարութեան ու ա-  
 ռանց մեղաց ապրելու շնորհք տուր, որ-  
 պէս զի գործածներու վրայ զղջամ, ու  
 մինչեւ որ մեռնիմ, ալ չիմեղանչեմ: Կա-  
 ղաչեմ գթած կոյս, մեռնելու ատենս  
 ինծի օգնէ, որ երբոր իմ անթիւ ու մե-  
 ծամեծ մեղքերս միտքս դալու ըլլան,  
 յուսահատութեան մեջ չիյնամ. զօ-  
 րութիւն տուր ինծի, որ կարօղ ըլլամ  
 ան ատենը քու սուրբ անունդ, ու քու-  
 կին բարերար որդւոյդ անունը սրտանց  
 կանչել: Վիտեմ որ չես վշտանար, թէ  
 որ համարձակելու ըլլամ այնպէս բան  
 մը քէնէ խնդրելու, որուն ամենեին  
 արժանի չեմ: Ով գորովագութ մայր,  
 անչափ է քուկին գթութիւնդ ու քաղց-  
 րութիւնդ, որ կըներես իմ համարձա-  
 կութեանս: Վիտես մայր, թէ որչափ  
 դառն է ետքի բոպէն, անոր համար կա-  
 ղաչեմ, թէ որ հնար է նէ, ան սոսկալի

ատենը քուկինքաղցրներկայութեամբդ  
իս մխիթարելու արժանի ընես : Կը-  
խոստովանիմ, որ ողորմելի մեղաւոր մը  
եմ, ու աս մեծ շնորհքին արժանի չեմ.  
բայց մայր այ դուն ալ մեղաւորներուն  
պաշտպան ես . կըխոստանամ քեզի ձեռո-  
քէս եկածին չափ բոլոր սրտանց ջերմե-  
ռանդ ըլլալ : Բայց թէ որ իմ անար-  
ժանութիւնս ու անթիւ տպերախտու-  
թիւններս աս մեծ շնորհքիս արգելք  
ըլլան, ան ատենը կաղաչեմ, որ գոնէ  
քուկին մխիթարութիւնդ վրայէս պա-  
կաս չընես . որպէս զի այ սիրոյն մէջ աս  
աշխրքէս ելլալով անդիի աշխարհք քեզ  
ու ամենասուրբ երբորդութիւնը տես-  
նելու արժանի ըլլամ, ամէն :

## ՉՈՐՏՅԱՅՐԸԹ

Եղանակ սուրբ Եմանուշի բարեկառու-  
թեամբ ու գույնութեամբ համարակա-  
լի առաջարկ է առաջարկ համար :

**Ը**իւր անդամ գոհութիւն կրմատու-  
ցանեմ քեզի ուլ բարեգութ մայր, որ  
իս քուկին միջնորդութեամբդ գժոխքէն

խալբսեցիր, որուն որ շատ անդամ ար-  
 ժանի էի: Խմին դատապարտութեանս  
 վճիռը շատոնց վրաս կատարված էր, թէ  
 որ գուն ով սուրբ Ածածին, աղբիւր  
 դժութեան ու ողորմութեան, այ ար-  
 դարութենէն ինծի համար ապաշխարե-  
 լու ափեն ընդունած չըլայիր: Ասան-  
 կով իմ խստասրբութիւնս յաղթեցիր.  
 ու սիրտս ալ շարժեցիր, որ բօլորովին  
 քեզի դիմեմ, ու քեզի ապաւինիմ: Աս-  
 չափ զանազան վտանգներու մէջ ինկած  
 ըլլալով՝ որչափ մեղաց տէր պիտի ըւ-  
 լայի, թէ որ գուն ով մայր ողորմու-  
 թեան, ինծի համար աստուծմէ շնորհք  
 ինդրած, ու ինծի պաշտպան կեցած  
 չըլայիր: Ով բարեգութ տիրամայր,  
 առկից ետքն ալ մի դադրիր իս դժոխ-  
 քէն խալբսել, ու մեղքերէն ազատ պա-  
 հիլ: Անչ օգուտ կըլլայ ինծի մինչուկ  
 հիմարքած ողորմութիւնդ, թէ որ ես էն  
 ետքը դատապարտվելու ըլլամ: Յժող  
 մի տար, որ ես քէնել, ու քուկին սիրելի  
 որդիկէդ բաժնըլիմ, որ քու բարեխօ-  
 սութեանդ համար մինչև առչափ ողորմե-  
 ցաւ ինծի: Ով մայր դժութեան, չըլլայ

թէ, (որքերանս յառաջ շերթարըսելու) քու սիրելի որդիդ, ու քեզ ալ մէկ տեղ յաւիտեանս յաւիտենից դժոխքին մէջ ատեմ ու հայչոյեմ: Կրնան մի դուն դիմանալ, որ քու ծառաներուդ մէկը, որն որ քեզ սրտանց սիրէ, յաւիտեանս դատապարտվի, ինչ կրսէր ան ատենը քուկին դթած մայրենի սիրտդ: Ո՞վ Անրիամ, յաւիտեանս պիտի կորսըվիմ մի, իրաւցընէ կըկորսըվիմ, թէ որ զքեզ թող տալու ըլլամ. բայց ինչպէս կրնամ քեզ թողուլ. ինչպէս կրնամ քուկին ցրցուցած սէրդ մոռնալ: Ո՞վ դթած մայրիմ, դուն որ ինձի ասչափ բարիք ըրիր. աս շնորհքս ալ ինձի ըրէ, ու օգնութիւնդ վրայէս ամենելին մի պակսեցըներ: Հիմա ես քեզ սրտանց կրսիրեմ, ու իս բոլորովին քեզի կրյանձնեմ. որովհետեւ ինձի այնչափ շնորհքներ ըրիր, մանաւանդ ան ատենն ալ, երբոր ես ամենելին քեզ մոռցեր էի: ՚Քու օրհնեալ ձեռքդ վրաս երկընցուր, ու ինձի պաշտպան եղիր, ու բոնէ՝ որ դժոխքը շիշնամ: Իս պահէ, որ մահացու մեղք շեզործեմ, որն որ իս դժոխք կրտանի:

## ՀԵՄԳՎԱՐԹԻ

Ը պ լ ւ , ս ո ւ ր բ ի լ ո ւ ն ա ն ա յ յ յ յ ա ն ա կ ե ն ա մ ի ս տ ի  
է լ ա ն ա ս ս լ ե ս ա ն ա ն հ ա մ ա ր :

**Ա**յլ հզօր թագուհի երկնի և երկրի ,  
դուն որ ամենասուրբ երրորդութեան  
մօտ սերովը էներէն ու քերովը էներէն  
վեր ածային փառօք կը զմայլիս քու գը-  
թած աշվըներդ մէյ մը խեղճ մեղաւորիս  
վոսյ դարձուր , որ աս ողբալի երկրէս  
քեզի դէմ կը պաղատիմ , ու քու կին օգ-  
նութիւնդ կը թնդրեմ : Տես ով Արքիամ ,  
ինչ վտանգներու մէջ կը պըտըտիմ . յա-  
ւիտեանս կը թնամ հոգիս կորսընցընել ,  
քանի որ աս աշխարիս մէջն եմ : Պատե-  
ևս իմ ապահնութիւնս , քեզի կաղա-  
շեմ ով մայր շնորհաց , որ իս արքայու-  
թիւնը ընդունիս , որ հոն զած ու քեզ  
յաւիտեան սիրեմ ու գովիւմ : Երբ պի-  
տի ծագի ան ցանկալի օրը , որ յաւիտե-  
նական կորստեան վտանգներէն աղատ  
պիտի ըլլամ : ու իմ սիրելի փրկչիս մայ-  
րը՝ որ իմ հոգւոյս փրկութեանը համար

ասչափ աշխատեցաւ, պիտի արժանի ըւլամ տեսնել: Ե՞րբ պիտի գայ ան ատենը, որ կարօղ ըւլամ ան սուրբ ու օրհնեալ ձեռքը պատնել՝ որ իս շատ անդամ դժոխքէն խալքսեց, ու ինծի պէս անարժանի մը այնչափ հարուստ պարզեներ տրվաւ:

Ով մայր իմ, աս աշխարհքս շատ հեղ քեզի ապերախտ գտնըվեցայ. բայց արքայութեան մէջ ալ ապերախտ չեմ ըւլար. Հոն ամէն ուժովս յաւիտեան քեզ կըսիրեմ, ու ըրած ապերախտութեանս տեղ յաւիտենական գոհութիւն ու փառաբանութիւն քեզի կըմատուցանեմ: Ծնորհակալ եմ այ գթութեանը, որ Հնին պատուական արիւնին, ու քեզի յուսալու ու ապաւինելու շնորհք տրվաւ ինծի: Ենտարակոյս գիտեմ, որ դուն իմ մեղքերուս համար թողութիւն կընդունիս, ու մտքիս լոյս ու զօրութիւն ալ կուտաս այ կամքը կատարելու, ու ետքը արքայութիւնը հասնելու: Ես յոյալ ամէն քու ծառաներդ ունեցան, ու անոնցմէ մէկը չիսարքվեցաւ. անոր համար իմ յոյսս ալ իս շամբըցըներ:

Հնորհք տուր ինծի, որ քու վրայ ունեցած ապաւինութիւնս օրէ օր աւելնայ. ու անդիի աշխարհքը քու որդիդ՝ քուկին սուրբ որովայնիդ օրհնեալ պըտուղը ցըցուր ինծի ովլ գթած, ովլ բարեգութ, ովլ քաղցր կոյս Անրիամ. որպէս զի կարօղ ըլլամ քու որդիդ, ու քեզ միշտ և յաւիտեան գովել ու սիրել:

Ովլ մայր բարեգութ, խնդրէ ինծի համար մեղքերուս թողութիւն, 'ի բարին յարատեռութիւն, բարի մահ, ու ետքը արքայութեան փառքը. բայց մասնաւորապէս աս շնորհքը, որ ես միշտ քու դիրկդ վազեմ: Խռէպէտ աս խընդրած շնորհքներս շատ մեծ բաներ են, որ ես ամեննեին արդիւնք մը՝ կամ արժանաւորութիւն չունիմ. բայց ովլ թագուհի ամենազօր, ասոնք ինծի պարզելը քեզի դիւրին բան մի է. ինչու որ ած քեզ շատ կըսիրէ, ու քու խօսքդ ու բարեխօսութիւնդ երբէք գետինը շիյնար: Անանկ է նէ՝ դուն ինծի համար աղաւէ՛ Յնին. միայն ըսէ անոր, որ ես քու որդեգիրդ եմ, ու զիս քուկին պաշտպանութեանդ տակը առած ես.

աս բաւական է ինծի ամեն շնորհքը աստուծմէ ընդունելու համար։ Ով Այս բիամ մայր սիրելի, իմ բոլոր ապաւինութիւնս դուն ես. կուզեմ քեզ միշտ սիրել, ու քեզի ապաւինած ուրախութեամբ ալ կըմեռնիմ, ամեն։

## ՈՒՐՅԱՅԻ

Եղանակ ՀՅ առ առ Ամառաձին սէրէլու համար։

**Ո**վ ամենասուրբ կոյս, աղէկ գիտեմ որ դուն այ արարածներուն մէջ ամենէն աւելի աղնիւր, մաքուրը, գեղեցիկը, սուրբը, ու սիրելին ես։ Երանի թէ ամեն մարդ ալ քու արժանաւորութիւնդ, ու բարերարութիւնդ աղէկ ճանչնար, ու քեզ սիրէր։ Հիմա ասով կըմիսիթարվիմ, որ այնչափ բիւրաւոր արդար հոգիներ թէ արքայութեան մէջ թէ աս աշխօրքիս մէջ որ կըդտնըլին, ամենը քու սքանչելի գեղեցկութիւնդ, ու անպատմելի շնորհքներդ կըդովեն, ու քեզ կըսիրեն։ Ամենէն աւելի անոր կուրա-

խանամ, որ ած քեզ աւելի կըսիրէ, քան թէ բոլոր հրեշտակները ու մարդիկները միատեղ: Ով ամենազօր թագուհի, ես ողորմելիս ալ թէպէտ շատ նուաստ, բայց մասնաւոր սէր մը ունիմ քեզի. ու կըրաղձամ որ աւելի ու վառեալ սէր մը ունենամ, ու աս պարզեք քէնէ առնելու համար աղաչելէն երբէք չեմ դադրիր: Ենդունէ աստուծմէ ինծի համար աս շնորհքը, որ յաւիտենական փրկութեան ստոյգ նշան է. ու անոնց մինակ կըտրվի, որոնք որ աստուծմէ արքայութեան համար ընտրված են:

**Արձանչնամ** նաև իմ մեծ պարտաւորութիւնս, որ ունիմ՝ Հնըը քու սիրելի որդիդ ամէն բանէն աւելի սիրելու: Վիտեմ որ ուրիշ բանի մը աւելի չես բաղձար, բայց եթէ քու սիրելի որդիդ ամէնէն ալ սիրվի. անոր համար կաղաչեմ քեզի մայր այ, որ ինծի համար աս շնորհքը ընդունիս. որպէս զի կարօղը լլամ ինչպէս որ պէտք է նէ՝ Հնըը սիրել: Վու բարեխօսութիւնդ ամէն բանի կարօղ է. ես երկրաւոր բարիք քէնէ չեմ խնդրեր. հապա ան բանը միայն

կըխնդրեմ, որն որ քու սիրտդ ալ կը-  
բաղձայ, որ ևս խնդրեմ, Արնայ մի ըւ-  
լալ, որ դուն աս աղաչանքս, որն որ  
քեզի այնշափ հաճելի է՝ չիկատարես.  
գիտեմ որ, իմ աղաչանքս այ առջին  
կըհանես, ու ինծի համար բարեխօս կըւ-  
լաս: «Քեզի աղաչելէն ու պաղատելէն  
չեմ դադրիր, մինչև որ ապահով չեմ  
ըլլար ամէն վտանգներէն ածս կորսրն-  
ցընելու: Ու երբոր արքայութիւնը քեզ  
տեսնելու արժանի կըլլամ, ան ատեն  
առանց վախնալու, որ պիտի քեզ կոր-  
սրնցընեմ, կըսիրեմ զածս ու զքեզ յա-  
ւիտեանս յաւիտենից, ամէն:

ՀՐԱՄԱ

Եղանակ առաջին վայրի համար՝  
լեռնաց համար :


**Պ**որովագութ ողորմած մայր իմ, մէկ  
կողմանէ քուկին անհամար բարերարու-  
թիւններդ միտքս կուգան . միւս կողմանէ  
իմ խելքէ մտքէ դուրս ըրած ապերախ-  
տութիւններս աչքիս առջին կելլեն : Ես

արժանի չեմ քուկին շնորհքիդ, անանկ  
 ալ գարձեալ քու ողորմութենեդ երբէք  
 չեմ յուսահատիր. ինչու որ քու ողոր-  
 մութիւնդ շատ աւելի է, քան թէ իմ  
 ապերախտութիւնս: Ովհ հզօր բարե-  
 խօս սուրբ Վճածին, գթութիւն ըրէ  
 վրաս. դուն ես շնորհաց գանձապետը,  
 քու ձեռօքդ կրբաժնըլին ամէն մեղա-  
 ւորներուն տրվելու շնորհքները. անոր  
 համար ած քեզի ասանկ մէծ կարողու-  
 թիւն, չիհատնելու գանձ ու գթած  
 սիրտ տրվաւ, որ դուն մեր նեղութեան  
 ատեն մեզի օգնութիւն հասնիս: Ովհ  
 մայր գթութեան, նեղութեանս ատեն  
 իս երեսէ մի ձգեր: Անծ փառք է քեզի  
 մայրենի սիրովդ գրկել այնպիսի ողոր-  
 մելիները, որոնք որ ամէնուն երեսէն  
 ձգված են. քու հզօր պաշտպանութիւնդ  
 բաւական է զանոնք ամէն յուսահատու-  
 թենէն խալըսելու: Խմ յաւիտենական  
 փրկութիւնս քու ձեռօքդ կրյանձնեմ.  
 ու աս խեղճ հոգիս՝ որն որ արդէն կոր-  
 սրված է, քուկին բարեխօսութեամբդ  
 պիտի փրկըլի: Խս մի վրոնտեր, որ կը-  
 բաղձամ ամէն յօժարութիւնով քու

Հաւատարիմ ծառաներուդ կարգը մըտ-  
նալ : Ենդունէ իս քու հզօր պաշտպա-  
նութեանդ տակը, ան ատեն բանէ մըն  
ալ չեմ վախնար, ոչ մեղքերէս, ինչու  
որ՝ աս շարեացս դէմ զօրաւոր ճար մը  
կրգտնաս. ոչ դժոխային թշնամիներէն,  
ինչու որ՝ քուկին զօրութիւնդ աւելի մեծ  
է, քան թէ բոլոր դժոխքին ուժը . ոչ  
հանէն իմ արդար դատաւորէս, ինչու  
որ՝ մի միայն խօսքդ, որ ինձի համար իրեն  
կրխօսիս, անոր բարկութիւնը կանցընէ :  
Ո՞խայն մէկ բանէ կրվախնամ, այսինքն  
չըլայ թէ իմին ծուլութեամբս քու ծա-  
ռայութենէդ պաղիմ, ու ինձի կորստեան  
ճամբայ բանամ : Ո՞վ սուրբ Ածածին,  
քու հզօր բարեխօսութիւնդ վրայէս պա-  
կաս մի ըներ . ու միշտ օգնական եղիր  
ինձի, ամէն :

---





# ԱՊՈՅԻ ՍՐԸԱՅ ՊԵՏԵՐԵԳԻՒՄ:

Եկեղեցին հայոց պատմութեալ:

**Տ**էր իմ և ած իմ, ես անարժան մեղաւորս ահա քու շնորհաց տունդ եկած եմ. որպէս զի իմ հոգեոր աղքատութիւնս քու առջիդ բանամ, ու իմ խեղձութիւնս քեզ ողորմութիւն շարժէ: Կիտեմ որ, որչափ աւելի աղէկ կըմտածեմ քու չարչարանկըներուդ յիշատակը, այնչափ աւելի կըվառի ու կըբորբոքի սիրտս քու սուրբ սիրովդ. ու կըզօրանայ հոգիս ալ առաքինութեան գանձեր ժողվելու: Ենանկ էնէ ուլ փրկիչ իմ, տուրինծի ան սիրտը, ան զգացումը, որն որ ունեցաւ քու ամենասիրելի մայրդ խաչին քովը կեցած ատենը: Ես ալ ստուգիւ կըհաւտամ, որ աս անարիւն պատարագը՝ զողգոված լեռը եղած արիւնաւոր

պատարագին հետ նոյն է . և նոյն շնորհքները հոս ալ կը բաշխի , ինչպէս որ հօն ալ բաշխեցաւ անոնց , որոնք որ դուն արժանի ըրիր այնպիսի ածային պարզեները ընդունելու :

ԵՐԵՒՆԻ ՀԱՀԱՆԱԿ ՊՐՊԱՐԵԴՈՒՅԻ ԽԵԼՔ :

Ո՞րչափ պէտք է որ գոհանամ քէնէ ով ած իմ , որ առաքեալներուն , ու անոնց յաջորդներուն ապսպրեցիր քու չարչարանքներուդ յիշատակը աս սրբազն պատարագը մատուցանելով նորոգել , դարձեալ մտվրնիս բերել , ու լեզվով չըպատմը վելու շնորհքներու արժանի ըլլալ : Վհա աչքիս առջեր կը տեսնեմ քու փրկարար չարչարանքներուդ օրինակը . կը տեսնեմ քեզ , որ քահանային կերպովը ձիթենեաց լեռան վրայ գացեր ցաւալի մտմտոքներու ու անմիսիթար տրտմութեան մէջ մնացած կը հոգաս , ու երկնաւոր հօրդ կաղաչես : ‘Դուն ով փրկիչ իմ զօրութիւն ու շնորհք տուք ինձիոր քու ամենասուրբ օրինակիդ միշտ հետեւիմ . ու միայն քեզի հաճոյ ըլլալու

ջանամ : Ա՞սիթարէ իմ խեղչ հոգիս  
ալ , որ աս ոզորմելի աշխարքիս այսորան-  
քին մէջ միշտ տրտում ու անհանգիստ  
է , ու միշտ քեզ կրպնտուէ . տուր քեզ  
ինծի տէր իմ , ու աս միայն հերիք է  
ինծի :

Եւ վասն սըբուհոյ ածածնին ըստ  
ապենը :

Ով թագուհի երկնաւոր , դռն որ խա-  
չին քովը կենալով քու սիրական որդ-  
ւոյդ քաշած չարչարանիքներուն ցաւովը  
չարչարակից եղար , միջնորդութիւն ըրէ-  
ինծի համար քու որդւոյդ , որ իմ քա-  
րացեալ սիրտս կակղցընէ , որ կարօղ  
ըլլամ մեղքերուս գէշութիւնը ճանչ-  
նալ ու անկից գանիլ : Կարձեալ շնոր-  
հէ ինծի սիրտ ցաւակցութեան , որն որ  
դռն խաչին քովը կեցած ատենդ ունե-  
ցար , որ ես ալ կարօղ ըլլամ մասնա-  
կից ըլլալ Վահ չարչարանիքներուն , որ-  
պէս զի արքայութեան մէջ ալ անոր  
փառքին արժանի ըլլամ :

ԱՅՍԱՊՈՅՆԻՄ ԱԿԱՊԾԵ ԱՅ :

**Ա.** Հա տէր իմ ես ալ քահանային հետ  
կըխոստովանիմ իմ մեղքերս քու առ-  
ջեդ, ու սուրբ ածածնայ և ամէն սուր-  
բերուն, ինչու որ զիտեմ թէ՝ շատ ան-  
գամ մեղանչելովս քեզ վշտացուցած  
եմ: Որչափ մեծ է եղեր իմ անօրէնու-  
թիւնս, մինչև հարկ եղաւ որ զուն մար-  
մին առնուս, ու իմ մեղքերս քաւելու  
համար խաչին վրայ ետքի արեանդ կա-  
թիլը թափես: Անէ որ իս սիրելուդ հա-  
մար ասչափ բաներ քաշեցիր նէ, կըյօւ-  
սամ քու ողորմութեանդ՝ որ իմ խոս-  
տովանութիւնս ալ կընդունիս, ու կա-  
տարեալ զղջման շնորհք ալ կըպար-  
գեես, որ ասկից ետեւ փախչիմ մեղաց  
առիթներէն, որ այնչափ չարչարանք  
քաշելու պատճառ եղաւ քեզի. աս աշ-  
խարքիս մէջ ժամանակ ալ կուտաս ին-  
ծի, որ մեղքերուս վրայ ապաշխարեմ,  
ու քեզի հաճելի բարեգործութիւն ը-  
նեմ: **Ա.** ունեցած առաջադրութեանս  
դուն տէր իմ հաստատութիւն տուր,

ու սրտիս բաղձանքը բորբոքէ, որ միշտ  
օրէ օր սիրտս աւելի վառվի քու սուրբ  
սիրովդ:

'Ե յարին որբութեան:

Արպիսի յարգութեամբ ու խոնարհու-  
թեամբ պէտք է երկրպագութիւնը ընենք  
քեզի մենք հողեղէն արարածքս ով ած  
իմ, որ նոյն ինքն սրբութիւնն ես. մենք  
ամէն կերպ պակսութիւնը ունինք: Աս  
տունս որ հրեշտակներու բնակարան է,  
ինչպէս կրհամարձակէինք մտնալ, թէ  
որ դուն մեղ հրավիրած շրլասիր՝ ըսե-  
լով. թէ եկէք ինծի ամէն ծանր բեռե-  
րու ու աշխատութեան տակ մնացողներ,  
ես ձեզի հանգիստ կուտամ. եկէք իմ  
տունս, որ ձեզի համար շինեցի, որ մեղ-  
քերնիդ քաւելու, ու թողութիւնը ըն-  
դունելու տեղն է: Անանկ է նէ իմ մե-  
ծամեծ մեղքերուս թողութեան ու քա-  
ւութեան ուրիշ տեղ մը չիկայ. անոք  
համար հոս քու ամենատես աչքիդ առ-  
ջին եկած եմ, ու երեսի վրայ ինկած  
կերկրպագանեմ քեզի, ու քու անհուն

ողորմութիւնդ . որուն որ չափ չիկայ՝ յա-  
ւիտեանս յաւիտենից կօրհնեմ :

(Օբհնելու բաժանուընթեան :

Այստ օրհնելու պարտական ենք քու  
թագաւորութիւնդ ով ամենատուրբ Եր-  
րորդութիւն , որ այնչափ կըփառաւորես  
քու սիրելի ծառաներդ արքայութեան  
մէջ , մինչեւ քու անհասանելի փառքիդ  
արժանի կընես , ու կընդունիս անոնց  
բարեխօսութիւնը : Վարդ՝ ես ալ սուրբ  
եկեղեցւոյ հետ աս օրվան սուրբս ինձի  
բարեխօս կըբռնեմ , ու կըխնդրեմ որ  
չես անոր աղաչանքին : Եւախ առաջին  
սուրբ ածածնայ բարեխօսութեամբը  
տուր ինձի անանկ շնորհք մը , որ իմ  
տկարութիւնս զօրացընէ . և ինչպէս որ  
սուրբերը կըցան յաղթել իրենց մար-  
մնոյն , աշխաքին , ու սատանային , նոյն-  
պէս ես ալ քու շնորհքովդ կարօդ ըւ-  
լամ իմ մարմնոյս չար ցանկութիւնները  
զսպել . աշխաքիս անցաւոր մեծութեանը  
հետ սիրտս չիկապել , ու սատանային  
խարեւութիւններուն չիհետեիլ : Օչ-

բութիւն տուր ինծի տէր իմ, որ աս  
բաներս գործքով ալ կատարեմ. որ-  
պէս զի ես ալ քու սիրելի ծառաներուդ  
հետ արքայութեան մէջ օրհնեմ քու-  
թագաւորութիւնդ:

Առաջ առաջ, առաջ և հաջ:

Դու տէր իմ մարդասէր, այնչափ մեր  
հողեղէն բնութիւնը պատուեցիր որ,  
մինչև աս հրեշտակային երեքսրբեան  
փառաբանութիւնը երգելու մեղի հա-  
մարձակութիւն տվիր: Ով ած իմ, որ  
ամեննեին սրբութիւն ես, զօրութիւն  
տուր ինծի, որ սրբութեամբ ապրիմ.  
դուն՝ որ միանգամայն հզօր ես, ու քու  
զօրութեանդ ոչ ոք կրնայ դէմ դնել,  
զօրութիւն տուր ինծի, որ իմ բարի ա-  
ռաջադրութիւնս կատարելու կարօղ ըւ-  
լամ: Դուն՝ որ աղքիւր ես անմահ կեն-  
դանութեան, իմ մեռեալ հոգիս ող-  
ջընցուր: Դու տէր իմ տէր, աւելի  
աղէկ գիտես ինչ որ ինծի պէտք է նէ,  
քան թէ ես. դուն աւելի պատրաստ ես  
տալու, քան թէ ես առնելու, անանեկ

Է ՞ՆՔ դուն ողորմէ ինձի, ու հոգւոյս  
փրկութեան օգտակարը ցըցուր ինձի.  
ու շնորհք ալ աւելցուր, որ կարօղ ըւ-  
լամ քու պատուիրաններդ պահել :

ԽԱՂԱՔԻ ԱՆԴԻ ՀԱՅՐԵՆ ՎՐԱ:

**Տ**ուր ինձի մարդասէր փրկիչ իմ ան  
խաղաղութիւնը, որն որ աշկերտներուդ  
խոստացար, որ իմ տալու խաղաղու-  
թիւնս աշխարքիս խաղաղութեան պէս չէ։  
**Տ**ուր որ՝ նախ առաջ իմ մարմնոյս ու  
հոգւոյս մէջ խաղաղութիւնընեմ. այս-  
ինքն ապստամբ մարմինս հոգւոյս իշխա-

նութեան տակը հետպանդեցընեմ, որ  
ալ չիկրնայ քու պատուիրաններուդ դէ-  
մը գործել: Աս շնորհքը պարզելէն  
ետքը՝ տուր ինծի ան շնորհքն ալ, որ  
ուրիշ խոռվեալները խաղաղեցընեմ:  
Դուն ով խաղաղութիւնդ աշխարհի,  
դուն խոստացար՝ որ կովողներուն մէջ  
խաղաղութիւն ձգողները որդիք այ ըս-  
տին: Խմ բոլոր փափաքս ան է, որ ա-  
մէնքնիս ալ քու սուրբ շնորհօքդ քեզ  
ամէն բանի արարիշ ծանշնանք. ու մէկ  
ծշմարիտ հաւատով ու միաբանութեամբ  
քեզի երկրպագութիւնընենք: Նեռացո  
մեզմէ ամէն չար ախտերը, ինչպէս է  
կոխւը, թշնամութիւնը, նախանձը, հեր-  
ձուածը, որ ամէնն ալ խաղաղութեան  
թշնամի են: Ու այսպէս ծաղկելով մեր  
մէջը սէրը ու խաղաղութիւնը՝ քու ա-  
նուանդ փառք ու պատիւ ըլլայ անհա-  
ւատներուն առջին:

Լուսաց սրբութեամբ:

Լովա, ու մաքրէ հողիս ամէն աղտո-  
տութենէ քուկին սուրբ արիւնովդ. ու

քառէ անթիւ մեղքերս ովլ գթած փրկիչ  
իմ ՀՅ . քու բարերար ողօրմութեանդ  
ցողը մեղուցեալ հոգւոյս վրայ թափէ ,  
որ գարշելի կիրքերուս բոցը մարէ . ու  
սիրտս քու սիրովդ բորբոքէ : Ա, հա աս  
սուրբ պատարագին հետ մէկ տեղ զիս  
բոլորովին քեզի կընծայեմ տէր իմ ,  
քաղցրութեամբ մը նայէ , ու մի անար-  
ժան համարիր : « Դիտեմ » որ իմ ըրած  
ընծաս շնչին բան մը նէ , ու ինքիրէն  
յարգիք մը չունի . անոր համար կա-  
ղաչեմ , որ իմ անարժան ընծաս ըն-  
դունիս , ու աս սուրբ պատարագին հետ  
միատեղ քու երկնաւոր հօրդ մատու-  
ցանես :

### Աղջիկ պատահանց :

**S**էր իմ , երբոր կըյիշեմ քու պատ-  
ւիրաններդ ու նր օրինակներդ , որ մե-  
զի յիշելիք թողուցիք , շատ կամշնամ :  
« Կուն քու աշկերտներուդ ու անոնց հե-  
տեղներուն մէկզմէկ սիրելնին » քրիս-  
տոնեայ ըստուն նշան տրվիր : Ա, ուաջին  
ատենվան քրիստոնէները աս նշանով  
կիմացընէին իրենց քրիստոնէութիւնը

անհաւատներուն առջին . անոր համար  
 աս սուրբ խորհուրդը կատարվելու ատե-  
 նը՝ եկեղեցւոյ մէջ մէկզմէկ կըքարեվենք,  
 ու մէկզմէկ կըհամբուրենք : Իսյց ես  
 ողորմէիս որչափ հեռու եմ քու տրված  
 պատուիրաններեդ . ինչպէս ինձի քրիս-  
 տոնէի անունը կրնայ վայլել , երբոր  
 քրիստոնէինշան այսինքն՝ եղբայրսիրու-  
 թիւն չունիմ : Ա այ ինձի, արևոր իմ բար-  
 կութեանս վրայ պիտի չիմտներ , իսկ  
 ես ամիսներով իմ եղբօրս դէմ ոխ պա-  
 հեցի : Դուն յառաջադոյն զգուշացու-  
 ցիր , որ պէտք է պատարագը թողուլ ,  
 ու նախ երթալ եղբօրը հետ հաշտըվիլ :  
 Խակ ես ոխակալութեան ախտով կուրա-  
 ցեալ , ամենեին հոգ չեմ ըներ քու պա-  
 տուիրանդ բռնելու , ու եղբօրս հետ հաշ-  
 տըվելու : Իրաւ քու ամենապատուելի  
 անունդ՝ որ կանչըված է իմ վրաս , փա-  
 ռաւորվելու տեղ , աւելի նախատված է  
 անհաւատներու առջեւ : Իսյց հիմա 'ի  
 փառս անուան քո կառաջադրեմ , որ  
 ամէն թշնամիներուն , ու ինձի չարիք  
 հասցընողներուն սրտանց ներեմ , ու  
 իրենցմէ ես առաջ թողութիւն խնդրեմ :

իմէ որ տեսնեմ անոնք , որ անօթի են ,  
կամ ծարաւ , կամ նեղեալ , ամէնէն  
առաջ ես անոնց օգնութիւն հասնիմ :  
Դուն ով փրկիչ իմ , քեզ խաչը հա-  
նողներուն համար աղօթք ըրիր . ահա  
ես ալ իմ թշնամիներուս համար կաղա-  
շեմ . որ անոնց ներես , շնորհք տաս ,  
հոգևոր ու մարմնաւոր բարիքներով լե-  
ցընես . ու միատեղ մեղ երկնից արքայ-  
ութեան արժանի ընես քու ողորմու-  
թեամբ :

ԱՅ , աՅ , աՅ , ոեւ պըստեանց :

Ով տէր իմ , ահա կըտեսնեմ հոգիիս  
աչքովը , որ բոլոր հրեշտակներուն բազ-  
մութիւնը , հրեշտակապետները , սերով-  
բէները , ու քերովբէները երկինքէն վար  
կինջնան , որ ներկայ գտնըվին աս փըր-  
կագործ պատարագին նուիրման ատե-  
նը : Կըտեսնեմ քեզ ալ իմ ածս ու  
փրկիչս , որ նոյն ինքն կըմատուցվիս ու  
կընծայվիս այ հօր պատարագ , նորագե-  
լով մեր մոքին մէջ ան չարչարանքները ,  
արեանդ հեղումը , ու դառն մահը , որն

որ մեղի համար քաշեցիր, որ մեղ սատանային գերութենէ փրկես։ Հրեշտակները իսկ երբոր կրմտածեն աս մեր վրայ ունեցած սէրդ, կրզմայլին, ու կրհիանան, ու երեքսրբեան օրհնութեամբ քեզ անդադար կրփառաբանեն։ Վենք ալ անոնցմէ սորվելով աս փառաբանութիւնը, կերգենք ու կրփառաբանենք, թէ դուն՝ որ ամենեին սրբութիւն ես, քու փառքդ ամէն տեղ ըլունած է։ Վեր հողեղէն սիրտը, թէ չիկրնար ինչպէս որ պէտք է քեզ սիրել, և ոչ խօսք ունինք բաւական, որ քեզ փառաւորենք։ Վնոր համար կրխնդրեմ, որ աս հրեշտակային փառաբանութեան պակսութիւնը դուն լեցունես։ ու պատարագ տեսնելու ատենս իմ սիրտս այնպէս վառես, ինչպէս որ հրեշտակներուն սիրտը կրբորբոքի արքայութեան մէջ, ու հոս տեղս քեզ փառաբանելու ատեննին։

Առէ՛ իշրէ՛, ու որբէ՛ ՚է ամառէ՛ :

Արտանց կրհաւտամ, ու կրխոստովանիմ, որ դուն հիմա իմ առջևո ներկայ

ես . Հացը ու գինին քու ամենազօր խօսքով փոխ փոխեցիր , ու ըստիր ճշմարտապէս պատուական մարմինդ և արիւնդ , որ ամէն հաւատացեալք յիշեն քուկին սէրդ , ճաշակեն քու մարմինդ ու արիւնդ , ու քուկին սիրովդ բորբոքեալ ուժ առնուն . իրենց տկարութիւնը զօրանայ քեզի հաճոյ կեանք վարելու , ու իրենց աղքատութիւնը հարստացընելու : Տօւրինծի ալ շնորհք , որ աս ամէն բարեաց արժանի ըլլամ . շըլայ թէ այսպիսի շնորհաց գանձր ձեռքս ունենալով , աղքատ ու ողորմելի մնամ : Դաւն ծագէս սրտիս մէջ ան ածային լոյսը , որ աղէկ ճանշնամ աս սուրբ խորհուրդին յարդք , ու այնպիսի ջերմեռանդութեամբ լսեմ , ինչպէս որ լսեցին քու սիրելի ծառաներդ , որ հիմա քեզի հետ կըթագաւորեն արքայութեան մէջ :

Եւ պայս ՚է տոյոցս :

Ի՞նչ ընծայ կրնայ տանիլ իր թագաւորին աղքատ մը , որն որ և ոչ ուտելիք ունենայ իր կեանքը պահելու համար : Խոկ

ևս քու ածութեան առջելը և ոչ աղքատ  
 բավելու արժանի եմ, „ոչնչ էն, և  
 յոշնչ համարեցան նմա: ’Ե վերայ այսր  
 ամենայնի դուն ով թագաւորդ թագաւ-  
 որաց այնպէս պատուեցիր մեր ընու-  
 թիւնը, որ մեզի մարմնակից եղար. մեզ  
 արքայութեան որդեգիր ըրիր, որուն  
 հրեշտակներն ալ երկինքը կընախանձին:  
 Հիմա մեր ոչնչութիւնը այնպէս փառա-  
 ւորեցիր, որ ունինք մեր ձեռքը այ ար-  
 ժանի ընծայ մը. այսինքն նոյն իսկ որդ-  
 ւոյն այ մարմինը ու արիւնը: Արշակ  
 պարտական ենք քեզ օրհնելու, գովե-  
 լու, գոհանալու, երբոր միտվընիս կը-  
 բերենք, թէ մեր միջնորդը, բարեխօսը  
 քու ամենասուրը մարմինդ, ու արիւնդ  
 է. ու աս պատուական ընծայները դուն  
 մեր ձեռքէն կընդունիս, ու այ հօր կը-  
 նուիրես: Արնայ մի ըւալ, որ այսպիսի  
 պատարագ ու ընծայ ընդունելի չըլայ,  
 երբոր որդւոյն այ մարմինը ու արիւնը  
 կընըլիրվի, ու նոյն որդին ած կընուիրէ:  
 Այսպիսի պարգևի հրեշտակներն ալ ար-  
 ժանի չեղան, և ոչ իսկ հրեշտակային  
 միտք կընայ բաւական օրհնութիւն ու

փառաբանութիւն մատուցանել այ այս-  
շափ մարդասիրութեան : Աս միայն կա-  
ղաչեմ , որ իմ վրայէս քու շնորհքդ  
չիպակսեցընես . որպէս զի այսպիսի սրբ-  
բազան խորհրդոյ ատեն ձեռքէս եկա-  
ծին շափ աղէկ մտադրութիւն ընեմ , ու  
այսպիսի գերազանց պարզեէ մասն ըն-  
դունիմ :

### ՈՐՊԵ՞Ն ԿՇ ԵԿԵցի առ :

Իրաւցընէ տէր իմ մեծ պարգև ու շր-  
նորհք կրնամ ընդունիլ աս սուրբ խոր-  
հուրդներուն միջնորդութեամբը , թէ որ  
ինչպէս պէտք է այնպիսի ջերմեռան-  
դութեամբ մատչելու ըլլամ : Աակայն  
մեծ դատապարտութիւն է , թէ անպատ-  
րաստ գտնըլիմ , ու միտքս ասդին ան-  
դին ցըռուեմ : Աս սեղանիս վրայ ան սի-  
րոյ հուրը կըքորբոքի , որն որ դուն վա-  
ռելու համար աշխարհք եկար , ու ու-  
ղեցիր որ ամենուն սիրտը վառի : Եւ  
այսչափ սաստիկ հրոյ առջեւը կենալով ,  
թէ որ փոյթ ու արթնութիւն չունե-  
նամ , ամենեին մասն չեմ ընդունիր :

Հոս կըտեսնըվին ան ամէն չարչարա-  
 նացդ յիշատակը, որոնց պատճառ եղաւ-  
 իմ մեղքերս. սակայն թէ որ աղօթքս ան-  
 մտադրութեամբ ու ծուլութեամբ ընե-  
 լու ըլլամ այսպիսի ահառոր խորհրդեան  
 ատենը, ամենեին չեմ իմանար, թէ որ  
 չափ գարշելի են եղեր իմ մեղքերս:  
 Հոս կըդտնըվի աղբիւր ամէն շնորհաց,  
 որնոր սովոր ես դուն բաշխել քու ծա-  
 ռայներուդ: Բայց ես, թէ որ հոգ չու-  
 նենամ ճանչնալու իմ աղքատութիւնս,  
 ու իմ կարօտութիւնս, որ ունիմ քու  
 սուրբ շնորհաց օդնականութեանը, առ  
 պատարագս տեսնելով ամենեին օդուտ  
 մը չեմ տեսներ, շնորհք մը չեմ ըն-  
 դունիր, պակսութիւններս չեմ կրնար  
 ճանչնալ, բարի բան մը միտքս չխցար,  
 որ առաջադրեմ. կամ թէ որ գալու ալ-  
 լըլայ ուժ չեմ ունենար կատարելու:  
 Թէ որ իմ ծուլութեանս նայիմ, ար-  
 ժանի եմ, որ աս խորհուրդը ինձի դա-  
 տապարտութիւն ըլլայ, քան թէ քա-  
 ռութիւն ու թռղութիւն գործած մեղ-  
 քերուս: Բայց երբոր քու սէրդ կը-  
 մտածեմ, յօյս ու վատահութիւն մը

կունենամ , որ զիս ամեննեին երեսէ  
չիս ձգեր :

**ՀԵՂԵԿ ԳԵՐ Ն ԱՊՈՒԹԻՒ:**

**Ս**ՈՌՆԱՐՀՈՒԹԵԱՄԸ գետինը ինկած կա-  
ղաշեմ քեզի հայր երկնաւոր , աս սուրբ  
պատարագիս զօրութիւնովը ողորմէ բո-  
լոր աշխրթիս : Տէր իմ , նայէ միանգամ  
խաչին վրայ , ու տես թէ քու միածին  
որդիդ ինչեր քաշեր է մեր փրկութեա-  
նը համար : Հիշէ անոր սոսկալի չարչա-  
րանքները , յիշէ անոր թափած անգին  
արիւնը , յիշէ անոր պատուական մահը ,  
ու գթութիւն ըրէ մեր վրայ , օգնու-  
թիւն հասիր ամենունալ : Արխնդրեմ  
նախ՝ որ բոլոր աշխրթիս խաղաղութիւն ,  
ու սուրբ եկեղեցւոյ հաստատութիւն  
պարզենս : Դադրեցուր հալածանքը ե-  
կեղեցւոյ մէջէն . մեղաւորներուն դարձ  
տուր . բանտի մէջ եղաղներուն աղա-  
տութիւն շնորհէ . հիւանդներուն ա-  
ռաղջութիւն պարզեն . ու ամէն տեսակ  
չար փորձանկքներէն մեզ աղատէ :

**Հ**իշես ու ողորմիս աս սուրբ պատա-  
րագովս ննջեցեալ հոգիներուն , որոնք

որ ուղիղ հաւատով ու զղջումով մեռած են. աս աչեղ պատարագին արդեամբը ան տրտմած հոգիները մխիթարէ, ու քու տեսութեանդ արժանի ըրէ:

Հիշէ մեղ ալ, որ աս սուրբ պատարագիս ներկայ ենք. ու ինչ որ մեղի օդտակար է նէ, ան շնորհէ: Հիշէ նաև իմ ծնողքս, ազգականներս, ու բարեկամներս, ու անոնց սրտին բարի բաղձանքը կատարէ: ու մասնաւորապէս ինծի բարիք ընողներուն հաղարապատիկ վարձք տուր, ինծի թշնամութիւնընողներուն ներէ, ու շնորհք տուր: Դուն շիտկէ մեր ամենուս սրտին բաղձանքը, ան բանի բաղձանք, որնոր մեր յաւիտենական փրկութեանը արդելք մը չըլլար: Դուն մաքրէ մեր միտքը ու խորհուրդները, որ արժանի ըլլանք սրբութեամբ ընդունիլ քու սրբազն մարմինդ ու պատուական արիւնդ:

Եւ Եղիշէ աղբյու-լիւն:

Ահաւասիկ կըլսեմ, որ դուն քահանային բերնով ինծի կըխոստանաս քուկին ողորմութիւնդ: Դրաւցընէ քու

ողորմութիւնդ շափ չունի, ինչու որ ա-  
մենեն անարժան էինք ապրելու, թէ  
որ դռն քու գթութեամբդ մեզի ողոր-  
մելու չըլլայիր: Ինչ մեծ ողորմութիւն  
է, որ դռն քու մարմինդ ու արիւնդ  
աս սուրբ Խորհրդեամբ մեզի պարգևե-  
ցիր. ու խոստացար մեզի ամէն հոգեւոր  
խնդիրքնիս կատարել. յաւիտենական  
կեանք պարգևել. ու քեզի հետ մէկ  
տեղ թագաւորել: Ո՞էկ կողմանէ որ-  
շափ որ մեծ է քու ողորմութիւնդ, մէ-  
կալ կողմանէ ալ այնշափ խելքէ մոքէ  
դուրս է մեր տղայամտութիւնը: Այս-  
պէս մեծամեծ պարգևներդ ու խոստ-  
մունքներդ ամենենին բանի տեղ չենք  
սեպեր: Հատանգամ ինծի քիչմը երկ-  
րաւոր բարիք մը պարգևողի աւելի ե-  
րախտագէտ կրլլամ, քան թէ քեզի,  
որ իս ալ ու ունեցածս ալ դռն ստեղ-  
ծեր ես: Ինոր համար կաղաչեմ ովլ  
ողորմած տէր, որ իմ վրայ քու ողոր-  
մութիւնդ շատցընես. բանաս աչքըս որ  
ճանչնամ թէ ինչ է տարբերութիւնը  
հոգեւորին ու մարմնաւորին, ժամանա-  
կաւորին ու յաւիտենականին մշջ.

Ճանչնամ մեղքին գարշութիւնը՝ ու ա-  
ռաքինութեան սիրելի ըլլալը։ Հիմա  
կը մատչիմ քեզի, երբոր շնորհաց ու  
ողորմութեան ամոռը նստեր ես, ու  
պատրաստ ես ամէն քեզ եկողներուն  
վրայ քու սուրբ վէրքերէն բղխած արիւ-  
նը թափել, ու սիրտերնին վառել։  
Ա առէ իմ սառած սիրտս ալ, որ քու  
սիրովդ բորբոքի, ու քու ողորմութիւնդ  
յաւիտեանս շիմոռնայ։

Հայք Բեր, ո՞վ յերիշնս էս։

Վ հայր յաւիտենական, որ գլխալով  
մեր վրայ քու միածին որդիդ մեզի խըր-  
կեցիր, մեզի հաւատոյ խորհուրդները  
սորվեցընելու, ու մեզի իր վարքովը օրի-  
նակ տալու համար։ Ես ալ կըջանամ  
անոր օրինակներուն հետևելով քու ա-  
նունդ սուրբ ընել աս աշխաքիս մէջ։ ու  
անդիի աշխարհը արքայութեան մէջ  
փառարանել քու ամենաբարի կամքդ,  
որ պատրաստ ես մեզի միշտ բարիք ընե-  
լու։ Ես աշխաքիս մէջ իս ծնած օրէս  
պէրի ողջ պահեցիր, ու կենաց հարկա-

ւոր եղածը առատապէս պարզեցիր .  
թէպէտ ես ապերախտ գտնըլեցայ , չե-  
ճանչցայ իմ բարերարս . սակայն դուն  
այնպիսի զարմանալի կերակուր մը պար-  
գեցիր , որ հրեշտակները իսկ զարմա-  
ցան , այսինքն քու միածնիդ պատուա-  
կան մարմինը ու արիւնը : ‘Կարձեալ ա-  
պերախտ գտնըլեցայ , չիյարդեցի ինչ-  
պէս որ պէտք էր աս սուրբ Խորհուրդը .  
ու իմ ապերախտութեանս համար չու-  
նեցայ ան շնորհքը , որով ամենեին ա-  
զատ ըլլամ մեղքերէ : Ը առ անգամ  
մեղանչեցի Խորհրդով , բանիւ , և գոր-  
ծով . թող ինծի իմ յանցանքներս :  
Վհաւասիկ , թէ որ իմ ձայնիս չես լսեր  
նէ . բարեխօս ունիմ ինծի քու որդիդ ,  
որ իր արեան անսահման դինը կըմա-  
տուցանէ քեզի իմ մեղքերուս համար :  
Ես թէպէտ մեղքը թշնամի եղած եմ  
քեզի , սակայն դուն պատրաստ ես ինծի  
ներելու , որով օրինակ կուտաս ինծի  
ալ , որ ես ալ իմ թշնամիներուս դիւ-  
րաւ թողութիւն տամ : Վանաւանդ թէ  
ես քեզմէ թողութիւն առնելէն յա-  
ռաջ , սրտանց կըներեմ ամէնուն . որոնք

որ ինծի վեաս մը տրվերեն նէ . որպէս  
զի համարձակութիւն ունենամ ըսելու .  
ինչպէս որ ես իմ թշնամիներուս ներեցի , դուն ալ ինծի այնպէս ներէ , բարեխօսութեամք քու միածնիդ , ու սուրբ  
ածածնայ , և ամէն սուրբերուն :

**Ի սբութեան սբուց :**

Ով սրբութիւն սրբոց , ով կենդանի  
մարմին և արիւն չչնի , սրտանց կրհաւ-  
տամ , ու բերնովս կրխօստովանիմ , որ  
ահա իմ առջևս կրկատարվի ան մեծ  
խորհուրդը , որնոր գողգոթա լերին  
վրայ կատարեցաւ : Ալտեսնեմ քեզ  
հաւատոյ աչքովս խաչին վրայ , որ մեզի  
համար միջնորդ կրլաս այ արդարու-  
թեանը : Որչափ պարտական ենք քեզ  
օրհնելու ով գթած փրկիչ , որ մեզ  
այսչափ սիրեցիր : (Օրհնութիւն՝ ու փա-  
ռարանութիւն երգեն ամէն արարածք  
այ անսահման մեծութեանը : (Օրհնեալ  
ըսայ հայր երկնաւոր ան , որ իր մեկ  
հատիկ սիրելի որդին աշխարհք խրկեց  
մեր փրկութեանը համար : (Օրհնեալ

ըլլայ ճշմարիտ որդին ած . որ մեղի համար մարմին առաւ , ու իր սուրբ արիւնովը դմեղ փրկեց : (Օրհնեալ ըլլայ ճշմարիտ հոգին սուրբ ած . որ անրաւ շնորհքներով մեղ լեցուց , ու լուսաւորեց : Ենդունէ իմ աս անարժան օրհնութիւնս ով ամենասուրբ Խրորդութիւն . ու արժանի ըրէ իս երկնից արքայութեան մէջ հրեշտակներուն հետ անդադար քեզ օրհնելու :

՚Ի սսւըն ՚Է սսւըն :

Ով տէր իմ Յն ՚Բ.՛ , ահա խաչին վրայ բաղկատարած դամիլած , ձեռվոներդ բացած պատրաստ ես իս ու ամեն քեղի եկողները ընդունելու : Խո մադդաղենացիին հետ քու խաչելութեանդ ոտքը կիյնամ , ու կըխնդրեմ աչքիս արցունքով , որ մեղքերով մեռած հոգիս ողջըննայ . վասն զի դուն ես իմ կեանքս : ՚Դիտեմ՝ որ իս ալ չես մերժեր , թէպէտ շատ անդամ ապերախտ գտնըված ըլլամ քեղի . ինչու որ դուն ես մեղաւորներուն յղյոր : Ով դառն

այ, որ բոլոր աշխաքիս մեղաց բեռը կը բ-նակդ վերցուցիր, ու անոնք ազատելու համար քու պատուական արիւնդ թափեցիր. Հիմա կաղաչեմ քեզի, որ իմ մեղքերուս ալ քաւութիւն և թողութիւն տաս : Արկնաւոր օրհնութեամբդ օրհնէ իմ հոգիս ու մարմինս . որպէս զի միշտ քեզ սիրէ, ու սուրբ պատուի բաններէդ մէյմ'ալ չիխուարի :

### Ճ'աշակելէն աստծու :

Ով բարի է ան, դուն մեզ հրաւիրեցիր, թէ ով որ ծարված է նէ՝ քեզի դայ : Եհա իմ հոգիս քանի որ ստեղծված է, արարածական բաններու հետ ըլլալով միշտ ծարաւի ու անհանգիստ է : Յժողեր է քու սրբազան կողդ, որ ինծի համար յաւիտենական կենաց ազբիւր վաղցուցիր, գացեր աշխաքիս անցաւոր բաններով ծարաւը անցընել կուզէ : Դու փրկիչ իմ, ողորմէ հոգւոյս խեղճութեանը, ու գութ շարժէ . լուսաւորէ միտքս, ու սիրտս փոխէ, որ ասկից ետև քեզ զտնելու ետևէ ըլլայ. շնորհք

տուր, որ սիրտս քու անուշ անուշ հրա-  
ւերդ ընդունի, ու աս ողորմութեան աղ-  
բիւրը վաղէ եղջերուի մը պէս, որ լեր-  
ներու վրայ ջուր կրպինտուէ: Արչափ ան-  
սահմանելի է քուկին սէրդ, որ ինծի այս-  
պիսի սեղան պատրաստելու համար մեռ-  
նիլը յանձն առիր: Աւրիշ բան չեմ տես-  
ներ աս սեղանիս վրայ, բայց եթէ քու  
ճշմարիտ մարմինդ, ու սուրբ արիւնդ,  
որ մեղի համար զոհ եղեր է: Ով տէր իմ  
չչա, աս ինչ մեծ շնորհք, աս ինչ մեծ  
սէր է ցըցուցածդ վրաս. քեզ իմ հոգ-  
ւոյս կերակուր պատրաստես: Հս արժա-  
նի էի գործած մեղքերուս համար բիւր  
անդամ մեռնելու. բայց իմ անօրէնու-  
թիւններս դուն վրադ առիր, ու ինծի  
համար շարչարվեցար: Ով ողորմած  
փրկիչ իմ, վառէ ըորբոքէ սիրտս քու  
ածային սիրովդ, ու քու ամենասուրբ  
սրտիդ հետ միացուր: Անքրէ հոգիս  
ամէն երկրաւոր բաներէն, որ շատ ան-  
դամ սրբութեամբ աս պատուական խոր-  
հըրդին հաղորդվելու արժանի ըլլամ:  
Ենանկ է նէ կըխնդրեմ հիմա, որ ին-  
ծի շնորհք տաս. որպէս զի չըլլամ ես

ալ անոնցմէ, որոնք որ այսպիսի բարերարութեան գէմ ապերախտութիւն ըրած են : Վասիմ սիրտս հոգևորապէս, պատրաստես հոն քեղի արժանի ընակարան մը, որ երբոր քու սուրբ մարմինդ ճաշակեմ, աս խորհուրդը քեղի փառք ըւլայ, ու ինձի առողջութիւն ու կեանք :

### **Ճ'աշակելն եպու:**

**Կ**ըգոհանամ քեղմէ հայր ամենակալ, որ խրկեցիր քու միածինդ, որ աս սուրբ խորհուրդը հաստատեց սուրբ եկեղեցւոյս մէջ, ուր սուրբ երրորդութիւնը կը փառաբանենք :

**Կ**ըգոհանամ քեղմէ որդիդ միածին, որ քու կենարար մարմնովդ ու արեամբդ մեղի կենդանութիւն տրվիր :

**Կ**ըգոհանամ քեղմէ ով սուրբ հօգի, որ միշտ մեղի հետ ես, ու եկեղեցին անշարժ կը պահես, որ հաւատացեալները միշտ սուրբ երրորդութիւնը փառաւորեն :

**Ի**նդունէ իմ անարժան գոհութիւնս հքեշտակներուն ու սուրբերուն հետ. ու

արժանի ըրէ , որ ես ալ օր մը քեզ տես-  
նեմ , ու սուրբերուն հետ փառաբանեմ  
յաւիտեանս յաւիտենից :

Ո՞՛ օրհնեն պայնոսին :

**Պ**աւ տէր իմ խոստացար , որ ամէն  
աղաւանքնիս կըկատարես , ինչ օր քու  
սուրբ անունովդ կըխնդրենք : « Սեմ խըն-  
դրեր մարմնաւոր բարիք , ինչու որ դուն  
մինչև հիմա ինչ օր պէտք էր նէ մեզի՝  
հոգացիր ու ապսպրեցիր որ՝ վաղվան հա-  
մար շիհոգանք : Կըխնդրեմ միայն , որ  
աս սուրբ պատարագիս ու քու սրբաղան  
շարչարանքներուդ արդիւնքը ամէնուս  
վրայ դայ . մեզ օրհնեէ , սրբէ , ու պահէ :  
**Ա**ներ բանին դործքին յաջողութիւն  
տայ . մեզ հոգւոյ ու մարմնոյ փորձանք-  
ներէն ազատէ : Ենհաւատներուն լոյս  
տայ , որ ճշմարիտ կրօնը ճանշնան . մե-  
ղաւորներուն դարձ ու բարի վարք շնոր-  
հէ : « Ենջեցելոց հոգւոց հանդիսատ պար-  
գևէ . ու անդիի աշխարհքը ամէնուս ալ  
յաւիտենական կեանք , ամէն :

Պատարագնեն Եպու:

Կնորհակալ եմ փրկիչ իմ ՅԱ, ու  
կօրհնեմ քու անբաւ ողորմութիւնդ ու  
սէրդ, որնոր մեր վրայ ցըցուցիր: ՎՀա  
աս սուրբ պատարագը տեսնելովս՝ քու  
չարչարանքներուդ յիշատակը նորէն  
միտքս եկաւ. իբրև թէ աչքիս առջին  
զինւորները քեզ բռնեցին կապեցին,  
դատաւորին առջին տարին. կարմիր  
քղամիթ հաղցընելէն ետքը գլուխդ փր-  
շով պսակեցին, ու անխնայ ծեծեցին.  
անկից ալ խաչը կռնակդ առած դողգո-  
թա լեռը առին տարին, ու քեզ հոն  
խաչեցին. ու անանկ սաստիկ ցաւերու  
մէջ սուրբ հոգիդ այ ձեռքը աւանդե-  
ցիր մեր մեղքերուն քաւութեան ու թո-  
ղութեանը համար: Ով մարդասէր փրր-  
կիչ իմ, քու սուրբ չարչարանաց ու  
մահուանդ արդեամբը շնորհք ու զօ-  
րութիւն տուր ինծի, որ քեզ միշտ սի-  
րեմ, ու մեղանչելով նորէն քու չար-  
չարանքներդ չաւելցընեմ: Պատա-  
րացար տէր իմ անսուտ բերնովդ, որ  
մինչև աշխրբիս կատարածը մեղի հետ

պիտի ըլլաս . ուրեմն թող մի տար իս ,  
որ քեզմէ երբէք բաժնըվիմ :

Եղբայր անձն հաւատացելոց համար :

Ով ամենակարող ած յաւիտենական ,  
հայր Երկնաւոր , քուկին գթած աշվը-  
ներովդ նայէ մեր խեղճութեանը , ու  
կարօտութեանը : Աղօրմէ ամէն քրիս-  
տոնէներուն , որոնց համար քու միածին  
որդիդ չէ ՔՅ , մեր տէրը ու փրկիչը  
մեղաւորաց ձեռքը մատնըվեցաւ , ու իր  
պատուական արիւնը խաչին վրայ վազ-  
ցուց : Ենանկ է նէ ով հայր բարեգութ ,  
քու միածին որդւոյդ անհուն արդեամբը  
վերցուր մեր վրսյէն ան պատիժները ,  
որոնց իրաւցընէ արժանի ենք . ազատէ  
մեզ ամէն փորձանքներէն ու վտանդ-  
ներէն . խափանէ վնասակար ապստամ-  
բութիւնները , պատերազմները , սղու-  
թիւնը , սովը , հիւանդութիւնները ,  
ժանտախտը , ու դառն ժամանակները :  
Լուսաւորէ , ու զօրացուր հոգևոր ու  
մարմնաւոր իշխանները ու առաջնորդ-  
ները բարի զործքերու մէջ . որպէս զի

օրէ օր ծաղկի , ու յառաջ երթայ ան  
 բաները , որնոր քու անուանդ պատիւ-  
 է , ու մեր փրկութեան ու հասարակաց  
 խաղաղութեան օգտակար է : Ո՞վ ած  
 խաղաղութեան , պարզեւէ մեղի այնպիսի  
 միարանութիւն հաւատոյ , որ մէջերնիս  
 հերձուած մը կամ տարածայնութիւն  
 մը շիգտնըլի : Արտերնուս զղջում շնոր-  
 հէ . ու մեր վարուց ուղղութիւն պար-  
 զեւէ : Ա առէ մեր սրտին մէջ քուկին  
 սիրոյ հուրդ : Անդի փափագ ու եռանդ  
 մը տուր ամէն տեսակ առաքինութիւն-  
 ները կատարելու . որպէս զի հնաղանդ  
 ծառաներու պէս թէ ողջութեան , ու  
 թէ մեռած ատեննիս քեզի հաճոյ ու սի-  
 րելի ըլլանք : Ո՞վ հայր բարեգութ ,  
 կուզես որ մենք մէկզմէկու համար ալ  
 աղօթք ընենք . անանկ է նէ կաղաչնք  
 քեզի , որ ողորմիս մեր բարեկամներուն  
 ու թշնամիներուն , առողջներուն ու հի-  
 ւանդներուն , տրտմութեան ու նեղու-  
 թեան մէջ եղօղ քրիստոնէներուն , ող-  
 ջերուն ու մեռածներուն : Քեզի կը-  
 յանձնենք բոլոր մենք զմեղ , ու մեր ա-  
 մէն ընելիքը , մեր կեանքը , ու մեր մահը :

Դառն քու շնորհքդ աս աշխարիս մէջ  
վրաներնէս մի պակսեցըներ . ու անդիի  
աշխարհքը արժանի ըրէ , որ ընտրելոց  
հետ մէկ տեղ յաւիտենական ուրախու-  
թեան ու երջանկութեան մէջ քեզ սի-  
րենք , ու անդադար փառաբանենք : Աս  
շնորհքս մեզի պարգևէ տէր հայր երկ-  
նաւոր , քու սիրելի որդւոյդ ՀՅՒԻ ՔՅՈՒԻ  
ու մեր փրկչին բարեխօսութեամբը՝ որ  
քեզի ու հոգւոյն սրբոյ հետ մէկ տեղ  
կեայ և թագաւորէ յաւիտեանս յաւի-  
տենից , ամէն :

---





Illustration by John Everett Millais

# ՊԵՏՐԱՌԱՄՈՒԹԻՒՆ ԽԱՍՏԱՎԵՐԱԽԹԵՎԵՐ:

ՅԵՐԵՎԱՆ ՚Ե ԿԵԼՈՒ ՎՐԱՆ ՚Ե ԱՀՐՈ ՀԵՂԵ-  
ՉԵՄՅԱ:

Ե՛ս որդեակ, անգամ մը ինձի նայէ,  
որ աս դառն խաչափայտին վրայ բազ-  
կատարած գամիլած եմ: Տես աս ցա-  
ւազին վերքերս, որ քեզ սիրելուս հա-  
մար յանձն առի: Տես արիւնալից դլու-  
խը փշով պսակված . որպէս զի քու մե-  
ղացդ փուշերը մաքրեմ: Տես սրտիս վր-  
այ բացված վերքը, որ քու քարա-  
ցեալ սիրտդ կրիվնտոէ: Տես՝ի վախճանի  
դլուխս խոնարհած ու մեռած քու փրը-  
կութեանդ համար: Ե՛հա քու հոգւոյդ  
օգտին համար այսչափ շարչարանքներ  
քաշելէս ետև, ի՞նչպէս դուն ինձի գէմ  
թշնամի եղար, ու ցաւերս նորոգեցիր:  
Խնչու առ հոգիդ՝ որ ես ինձի համար  
ստեղծեր էի, ու իմ մահուամբս փրկե-

ցի, ատ խեղճութեան մէջ ձգեցիր, ու դարձեալ սատանային գերի ըրիր, քու բարի փրկիչդ թող տալով՝ անոր հետևեցար: Քանի քանի անգամ իմ աղղեցութիւններովս քեզ կանչեցի, ու դուն ականջդ գոցեցիր, ձայնս չիլսեցիր. որչափ երկար քեզ վնտուեցի, ու դուն իզմէ հեռացար: Օչն գործ գործեցեր արդեւուն:

Իսյց մի վախնար որդեակ, մի վախնար. թէպէտ դուն իս մոոցար, բայց ես քեզ չիմոոցայ. դարձեալ առջի ունեցած սիրովս քեզ կընդունիմ: Եթէ յանցաւոր դժնըլեցար, ես թողութիւն տալու պատրաստ եմ. միայն մեղքերուդ վրայ զղջաւ, ու սրտանց մեղայ գոչէ: Ոմէ որ հիւանդ ես հոգւով, ես եմ ան երկնային վարպետ բժիշկը, որ մէկ խօսքով մըն ալ կրնամ հոգիդ ողջընցընել: Ոմէ որ մեղաւոր ես, ես ուղորմած եմ. արդարներուն համար աշխարհը չեկայ, հապա մեղաւորները ապաշխարութիւն կանչելու համար: Ես մեղաւորներէն չեմ քաշվիր, միշտ անոնց հետ ըլլալը կըսիրեմ. մինչև հրէա-

ները իս բամբասեցին, թէ ինչու շարունակ մեղաւորներուն ու մաքսաւորներուն հետ կընստիմ կելլեմ, ու մէկ առջ կուտեմ կըխմեմ:

Վարդէն գիտես որդեակ կորսրված ոչխարին պատմութիւնը աւետարանիս մէջ: Վհա ես եմ ան բարի հովիւր, իսկ դուն կորսրված ոչխար ես. բոլոր ոչխարները թողուցած՝ քեզ գտնելու ետևէն ինկած եմ. լերանց գլուխը, վրտանգաւոր ու գաղանակեր ճամբաներու մէջ կորսրված ոչխարդ կըփնտուեմ, ու անոր գիւտին կըփափագիմ: Ե՞կ կորսրված ոչխար, ահա քու բարի հովիւր. եկ մեղաւոր հոգի, ահա քու փրկիչդ: Գիտեմ որ խիստ հոգնած ես այնպիսի գարշելի մեղաց ճամբաներու մէջ պըտըտելէն, ու վրադ ալ ուժ չէ մնացեր. հոգ չէ. ես քեզ իմ ուսիս վրայ կառնում, քեզ գտնելուս ուրախութիւնը բաւական է ինձի: Պարձիր որդեակ գարձիր ալ անառակ որդւոյն հետ գըթած հօրդ տունը. հերիք այսչափ ատեն իղմէ հեռացար, ու օտարութեան մէջ կըշարչարվիս, ու անօթի կըտանջմիս

կոր : Ես եմ ան դժած հայրը, եկ ին-  
 ձի դիմէ մեղայ դոչելով, քեզ չեմ վր-  
 ութեան, սիրով քեզ կրգրկեմ, ու հաշ-  
 տութեան համբոյր ալ կուտամ քեղի .  
 առ աղտեղած հագուստիդ տեղը՝ պա-  
 տուական լաթեր կրհագցընեմ : Որ-  
 դեակ, ունչ իտիս, ու արարէց ժեկ . ինչ  
 որ կուղեսնէ, սիրով կրկատարեմ, միայն  
 աչքիդ արցունքը տուր ինձի . թէպէտ  
 քիչ ալ ըլլայ, ան բաւական է քու հոգ-  
 ւոյդ աղտեղութիւնը ըվանալու : Պոռ-  
 նիկ կնիկը իր արցունքովը արդարացու-  
 ցի . պետրոս առաքեալին լացին նայե-  
 լով՝ ըրած ուրացութեանը ներեցի . ու  
 ան խեղճ մօր արցունքին սիրտս շիդիմա-  
 նալով, իր մեռած աղջկանը կենդանու-  
 թիւն տըմի : Ես դժած եմ, աղաչանքդ  
 շուտով կրյսեմ . իմ խաչիս ոտքը ին-  
 կիր, ու սրտանց հառաչանք մը ըրէ :  
 Ի՞նչպէս կրնամ աս վիրաւորված ձեռ-  
 վըներովս քեզ պատժել, ու քեղի դէմ  
 վրէժխնդրութիւն ընել, որ քեզ պատ-  
 ժէն աղատելու համար ձեռվըներէս այն-  
 չափ արիւն թափեցի . ի՞նչպէս քեզ  
 ըստիրեմ, ու սրտիս մէջէն դուրս հանեմ

վրաբնատեմ, որ քեզ սրտիս մէջ ընդունելու համար աս վերքս բացի : Ե՛կ որդեակ, քու ապաշխարութեան դարձուվդաւերս թեթևուր . ու երկնաւոր հայրը, հրեշտակները, ու բոլոր արքայութեան մէջ եղած սուրբերը ուրախացուր . որ իմ հայրս ալ իր երկնաւոր օրհնութիւններով քեզ օրհնեէ, ու զանազան շնորհքներով քեզ լեցունէ, և 'ի վախճանի իր արքայութիւնը ընդունի :

Հասանակ սկսէ Բեղուցելու առ ՀՅԱ  
ԴՐԱՆ :

Ո՞վ ողորմած փրկիչ իմ ՀՅԱ ՊՅԱ, ահա մեղաւոր հոգիս քու խաչիդ ոտքը ինկերէ, ու փողձկած սրտով արցունք կըթափիէ, ու անմիսիթար կուլայ կողբայ : Ա այ ինծ տէր իմ, վայ ինծ, աս ինչ խեղճութեան մէջ մտերէ իմ հոգիս . աս ինչ սոսկալի յաւիտենական կորըստեան վտանգներու մէջ իս ձգեր են իմ մեղքերս . ու ես բոլորովին կուրացեալ ասանկ անհոգ կապրիմ : Ե՛կ տէր իմ, կամչնամ աչմբներս վեր վերցընելու ու

քեզի նայելու . ինչու որ ես պատճառ  
 եղայ մեղանչելովս առ դառն չարչա-  
 րանքները նորէն քեզի քաշել տալու :  
 Իմ մեծամեծ մեղքերս էին տէր իմ , որ  
 սուրբ մարմնոյդ վրայ ատշափ ցաւագին  
 վէրքեր բացին . իմ աղտեղի ու չար-  
 խորհուրդներս էին տէր իմ , որ առ ան-  
 գութ փշեղէն պսակը քուկին ածային  
 գլուխդ դրին . իմ գարշելի կիրքերս էին  
 տէր իմ , որ քու գթած սիրտդ վիրա-  
 ւորեցին : Եայց գու ով բարեգութ հայ,  
 իմին ասչափ անօրէնութիւններս չեյի-  
 շելէն ետքը՝ իմ ետեկս ինկեր ես , կոր-  
 սրիած ոչխարս կըմինտռես . քու անուշ  
 հրաւերովդ իմ քարացեալ սիրտս շար-  
 ժել կուղես , որ աս կորստեան ճամբա-  
 ներէն ետ կենամ . ու ապաշխարութիւ-  
 նով քեզի դառնամ , ու քու հետըդ  
 հաշտրվիմ : Վհա տէր , հիմա սրտանց  
 քեզի դարձեր եմ . ուրբդ ինկած մեղայ  
 կըդոչեմ : Վթէ մայն մշոյ տէր . և ըս-  
 չոր ստորդէ ու սրտորէ : Վս է սրտիս մեծ  
 ցաւը , որ իմ արարիչս ու փրկիչս անչափ  
 վշտացուցի . ու երկար ատեն իրմէ հե-  
 ռացայ . ու ան ծայրագոյն բարութիւնը

շիճանչցայ : Կուլամ կողբամ տէր իմ ,  
ու չեմ դիտեր թէ՝ ուսկի՞ց առ ցաւա-  
զին սրտիս միսիթարութիւն մը պիտի  
դտնեմ : Ով ողորմած ած , մեղաւորիս  
ձայնը լսէ , ու գթութիւնը ըրէ իմ վրաս .  
աչքիս արցունքները թռղ վկայեն . աչ-  
քիս արցունքները աղաղակեն , թէ հի-  
մա որչափ քեզ կըսիրէ հոգիս , ու ինչ-  
պէս քեզ գտնելու ետևէն է : Ուրեմն  
տէր իմ , զուն քու ածային սիրովդ բոր-  
բորէ սիրտս . մորիս լոյս տուր . ու կամքս  
զօրացուր , որ մէյ մ'ալ մեղք չիդոր-  
ծեմ , ու քեզ չիվշտացընեմ :

Հայց կըխնդրեմ հիմա փրկիչ իմ ,  
որ հոգւոյս բժշկութիւն տաս , ու ողոր-  
միս ինծի . ինչու որ հոգիս հիւանդ է ,  
ու բարեգործութիւն ընելու ուժ չէ մը-  
նացեր վրան : Կըպաղատիմ քեզի դէմ ,  
ու կաղաչեմ սրտանց : Տէր՝ ահասահի  
պէ պահ սիրելի՝ հիւանդացեալ է : Տէր  
իմ , ահա ան հոգին՝ որ զուն կըսիրէիր ,  
հիւլընդցեր է . ան հոգին՝ որ զուն քու  
անդին արիւնովդ գնեցիր , ցաւագար մնա-  
ցեր է . ով երկնային բժիշկ հոգւոց ,  
զուն խնամ տար վրաս , բժշկէ հոգւոց

ցաւերը, որ աս խեղճութենէս խալք-սիմ, քու շնորհքիդ մեջ կենդանանամ։ Լսէ սրտիս աս հառաչանքը ով ած իմ, ու երկնային օդնութիւնդ խրկէ ինձի, որ կարօղ ըստամ մեղքերուս վրայ զըղ-ջալ, ու դարձեալ սուրբ աւաղանին շնորհքը ընդունիլ, ամէն։

Առջև մշղերը յէշէւու համար։

**Ա**րեգակն արդարութեան ՀՅ ԿՊ, որ աշխարհք դալովդ իրեւ առաւօտ լուսաւորեցիր ամէն մարդը, որոնք որ քեզի հաւատացին։ «Օ»ագէ իմ սիրտս ալ քու ճառագայթ որ լուսաւորիմ, ու տեսնեմ ամէն ծածուկ մեղքերս։ Ուէ դուն չես լուսաւորեր, կարծեմ թէ ամեննեին մեղք չունիմ։ բայց թէ որ դուն լուսաւորելու ըլլաս, շամանդաղներու պէս, (որոնք կրտեսնը արենին պատուհանէն ներս դարկած ատենը.) իմ անթիւ մեղքերս օրթան կելլեն։ «Դիտեմ որ մարմնաւոր աչքով կուրերուն դուն ողորմեցար, ու լոյս տրիմիր, երբոր աղաղակեցին, ՀՅ որդի դաւթի ողորմեաց մեղ։ Հիմա ես

ալ իմ հոգւոյս աշվըներուն լոյս կը-  
խընդրեմ, կաղաչեմ որ աշվըներս բա-  
նաս: Հատ մօլութիւններ ունիմ, որ  
շատ արդելք կըլլան ինչպէս որ պէտք է  
նէ, տեսնելու իմ մեղքերս, որոնց գրւ-  
խաւորն է անձնասիրութիւնս: Անձ  
մեղքերս ինծի պզտիկ կըցըցնէ, ու պըղ-  
տիկը ամենեին կըծածկէ: Վառտու-  
րի մէջ խարեւութիւնը վարպետութիւն  
կըցըցնէ. բամբասանքը ու ուրիշին ա-  
նունը ավուելը՝ ճշմարտութիւն ու ան-  
տարբեր պատմութիւն մը կերեցընէ,  
հայհոյել ու անառակ խօսքեր խօսիլը  
զուարձախօսութիւն կարծել կուտայ,  
ոխ պահել ու թշնամի ըլլալը՝ ոչինչ  
բան մը սեպել կուտայ: Իսյց դու տէր  
իմ բաղմագութ, թող մի տար որ ես  
նոյն խաւարին մէջ մնամ, հապաշնորհք  
տուր, որ խոստովանութիւնս ինչպէս որ  
պէտք է, այնպէս ամբողջ ըլլայ:

Ես կըջանամ ձեռքէս եկածին չափ  
քու սուրբ շնորհօքդ ամեն բան միաքս  
բերել, ու խոստովանիլ. բայց թէ որ  
բան մը ակամայ մոռնալու ըլլամ, դուն  
մնացած պակսութիւնը լեցուր. ու ան-

շնորհքը տուր, ինչպէս որ կատարեալ  
խոստովանած ըլլայի: Առէ որ ետքէն  
միտքս գալու ըլլայ, պատրաստ եմ միշտ  
ամէն մեղքս, ինչ տեսակ որ ըլլայ, խոս-  
տովաննելու: Փարատէ վրայէս ամօթն  
ալ, որ համարձակ խոստովանիմ:

Դարձեալ շնորհէ, որ խիղճս իս չի-  
չարչարէ, ինչպէս որ խղճահարները կր-  
չարչարվին, երկբայելով թէ արդեօք  
մեղք մը մոռցեր եմ՝. թէ չէ. թէ ար-  
դեօք խոստովանութիւնս ամրող եղաւ՝  
թէ չէ. արդեօք աստուծմէ շնորհք առի՝  
թէ չէ: Աս ամէն խորհուրդներս դուն  
տէր իմ փարատէ իմ միտքէս. ու զօ-  
րութիւն տուր, որ իմ ձեռքէս եկածը  
ընեմ. ու խոստովանք ըլլալով, որր-  
տիս հանգստութիւն գտնեմ:

Եղջեւ առ Յա էրին եղջէ հրայ ժննա-  
լենեն ետք:

Խաչելեալ տէր իմ Յա Քա, ահա աս  
խիղճմտանքի քննութեան մէջը քու-  
տրտմագին պատկերդ աչքիս առջին  
եկաւ. ու տեսայ, որ չարչարանքներուդ

սկսած ատենը՝ երբոր գէթսեմանի պարտէզին մէջը երեսին վրայ գետինը ինկած քու երկնաւոր հօրդ կաղօթէիր, բոլոր աս իմ մեղքերս ու անօրէնութիւններս մէկիկ մէկիկ միտքդ բերելով, ան սոսկալի տագնապը քաշեցիր, ինչվան արիւն քրտինք քրտընեցար. եսքը իմ սիրոյս համար ամէնը մէկէն վրադ առիր. ու անանկով քու երկնաւոր հօրդ առջեր գուն քեզ ինծի համար ու իմ անօրէն մեղքերուս տեղը՝ քաւութեան զոհընծայեցիր. ու յօժար սրտով վազեցիր խաչին վրայ գամվեցար, սուրբ արիւնդ թափեցիր, ու երկնաւոր հայրդ ինծի հետ հաշտեցուցիր : Աիրելի չչն իմ, կրտեսնեմկոր, թէ խաչված ատենդ իմ ամէն մէկ մեղքերս ու անօրէնութիւնս քեղի ինչ ցաւ ու կսկիծ տրվաւ : Խայց վայ ինծի, որ աս ասանկ զիտնալէս ետքը, ես այսշափ անթիւ անհամար անգամ դարձեալ մեղք գործելու համարձակերեմ . ու քու սաստիկ ցաւերդ ու կսկիծներդնորոգերեմ : Վ՛չ չչն, աս ինչ կուրութիւն, ինչ ապերախտութիւն, ինչ քարսրտութիւն է,

որ ես ըրերեմ : Ո՞վ սիրելի Յօն իմ ,  
իմ միջնորդս ու իմ փրկիչս գուն ես .  
քուկին պատուական մահդ սուրբ ա-  
րեանդ հեղումը իմ մեղքերուս թողու-  
թեան համար է : Ահա ասոնց վրայ  
իմ յոյսս դնելով՝ քու կենարար խաչիդ  
ոտքը կիյնամ , ու սրտանց զղջում կը-  
նեմ . ու մէյ մ'ալ մեղք շիդործելու սրր-  
տանց աղէկ առաջադրութիւն կընեմ :  
Դառն լուսաւորէ միտքս , ու սրտիս  
զեղջ տուր , որ գործած մեղքերուս վրայ  
կատարեալ ապաշխարութիւն ընեմ :

### Աղօլս պղջան :

Որչափ մեծ անխելքութիւն ըրերեմ  
տէր իմ մեղանչելով . քանի թշուառու-  
թեան մէջ ինքը զինքս ձգերեմ պա-  
տուիրաններուդ դէմը գործելով : Ապար-  
տանալովս ու իմ վրաս մեծ խօսելովս՝  
քուկին աչքէդ ելած եմ , ու ամէն իս  
տեսնողները խենդի տեղ դրած ու ծաղը  
ըրած են : Տարկանալովս՝ անբան դա-  
զաններու նմանած եմ : Որկրամոլու-  
թեամբս՝ իմ առողջութեանս վեաս տը-

ված եմ : « Եախանձելովս՝ ես ինձի ան-  
դութ դաշիճ եղած եմ : Ա երջապէս  
ամէն մէկ մեղքով քեզ վշտացուցած  
ու ինձի մեծամեծ վեասներ տրված եմ :  
Դուն ինձի զօրութիւն տվիր ամէն մո-  
լութիւններու յաղթելու . իսկ ես անոնց  
գերի եղայ : Իմ մեղքերս են, որ իմ  
խղճիս հանգստութիւնը ու խաղաղու-  
թիւնը կավոեն, ու իս կըչարչարեն : Իմ  
մեղքերս են, որ մլրտութեան շնորհքը  
իզմէ կըկողոպտեն, ու բոլորովին հոգիս  
խեղճութեան մէշ կըթողուն : Ա երջա-  
պէս իմ մեղքերս են, որ զիս արքայու-  
թենէ, ու քուկին երանելի տեսութե-  
նէդ կըզրկեն :

Խնչ մեծ անխելքութիւն է իմ ը-  
րածս, որ փոքր մարմնաւոր վեաս մը շի-  
քաշելու համար դիշեր ցորեկ հոգ կընեմ,  
զլուխ կըհոգնեցընեմ . իսկ այսպիսի  
վեաս մը շիքաշելու, որուն նմանը շի-  
կըրնար ըլւալ՝ ամենեին հոգ չունիմ :

Վ ժիսոս ինձի, ինչու ձեռքէս եկա-  
ծին չափ մեղք չգործելու չաշխատեցայ .  
ինչպէս եղաւ, որ ես սուրբ մլրտութեան  
շնորհքը կորսնցուցի : Որչափ անսահ-

ման արդիւնք ու առաքինութիւններ  
կրնայի մինչև աս օրս վաստրկիլ, որ ա-  
մենսին փոյթ չունեցայ, մանաւանդ թէ  
բարեգործութիւնով արդիւնք ու երկ-  
նից արքայութիւնը վաստրկելու տեղ,  
մեղք գործելովս յաւիտենական պատ-  
ժոյ արժանի եղայ : Տուր, ինծի տէր իմ  
քու անզեղջ շնորհքդ, ու իս լուսաւո-  
րէ, որ աղէկ մը ճանշնամ մեղքերուս  
զարշութիւնը, ու այնպէս մը գանիմ,  
որ մէյ մ'ալ շիգործեմ : Արտանց կր-  
բաղձամ տէր իմ, որ աս խոստովանու-  
թենէս ետքը ամէն մեղքերէս աղասրւ-  
լամ . ու առաքինութեան գանձեր վաս-  
տրկելով, թէ աս աշխարհքս մաքուր  
խղճմտանքով բարի ապրիմ, և թէ ան-  
դիի աշխարհք քեզ տեսնելու արժանի  
ըլլամ . ամէն :

### ԱՅԼ ԱՊՈՒՆ :

ՈՎ Հովիւ բարի ՀՅ Վ. մոլորեցայ  
կորսրված ոչխարի մը պէս, դոն եր-  
կինքէն ինջար իս վնտոելու համար:  
Վիտեմ որ՝ երկինքը աւելի ուրախու-

թիւն կըլլայ իմ վրաս , երբոր դարձի  
գալու ըլլամ , քան թէ արդարներուն  
վրայ , որոնց ապաշխարութիւն պէտքը<sup>չէ</sup> : Ես մեղաւորս կորսնցուցի իմ խիղճ՝  
մըտանքիս հանդիսար , մանաւանդ թէ  
կորսնցուցի իմ ամենաբարի ածս , ու իմ  
սրտիս մխիթարութիւնը : Քուկին ունե-  
ցած սէրդ վրաս բանի տեղ չիսեպեցի , որ  
իս շահելու համար մինչև ետքի արեան  
կաթիլը թափեցիր . ու աշխարհային ու-  
նայնութեան ետևէ եղայ : Ը առ ան-  
դամ ետևէս ինկար քու բարի աղդե-  
ցութիւններովդ , որ զիս դարձի բերես .  
իսկ ես քեզի խուլ եղայ . իմ մոլութիւն-  
ներս աւելի սիրեցի , քան թէ զքեզ  
իմ ածս , արարիս ու փրկիս : Խրա-  
ցընէ արժանի էի , որ իս բոլորովին ե-  
րեսէ ձգեիր , ամենեին միտքս չիրերե-  
լով ոչ դարձ , կամ ապաշխարութիւն .  
ոչ դժոխքի վախ , և ոչ արքայութեան  
սէրը : Արժանի էի , որ երբէք քեզի  
հետ կարօղ շըլլայի հաշտրվիլ . բայց  
քուկին մարդասիրութիւնդ այնչափ է ,  
որ իմ սաստիկ ապերախտութեանս կը-  
յաղթէ : Այնչափ մեծ է իմ անխելքու-

թիւնս, որ մեղանչելով ամէն օր ինծի  
 կորստեան հոր կրտորեմ. թէ որ դուն  
 իս պահելու շըլլայիր, շատոնց կորսրված  
 էի յաւիտենական կորուստը: Այսօր  
 քու շնորհօքդ կառաջադրեմ դառնալ  
 իմ կորստեան ճամբաներէս. կիյնամ  
 քու դժութեանդ առջել, ու անառակ  
 որդւոյն հետ կաղաղակեմ. հայր մեղայ  
 յերկինս. արժանի շեմ ասկէց ետքը  
 արքայութեան որդի ըսվելու: Ինդունէ  
 իմ սրտիս զզջումը. ու առաջադրու-  
 թեանս դուն օգնէ, որ կարօղ ըլլամ  
 կատարել: «Ես ուղեր որ ես մեղաւորս  
 կորսրվիմ, հապա կրբաղձաս որ դարձի  
 դամ, ու փրկրվիմ: Անանկ է նէ ես  
 ալ քու սուրբ շնորհքիդ հետ մէկտեղ  
 դործելով կրշանամ ասկէց ետքը հաս-  
 տատուն առաջադրութեամբ առջի ը-  
 րածներս շիտկել. միայն քեզ սիրել.  
 քեզի ծառայել. քեզի հաճոյ ըլլալ:  
 Որպէս զի արժանապէս քեզ սիրտսըն-  
 դունելով, աս աշխրքիս վրայ դուն ին-  
 ծի հետ ըլլաս. ու արժանի ընես, որ ես  
 ալ քեզի հետ ըլլամ անդիի աշխարհք  
 քու արքայութեանդ մէջը, ամէն:

Եղանակ պարհան , և առաջարկութեան :

**Տ**էր իմ և ած իմ , դուն ծայրագոյն ու անսահման բարութիւն ըլլալովդ՝ ամէն բանեն վեր սիրելի ես . ու բոլոր ստեղծած բաներուդ անսահման տէրը ըլլալով , իրաւունք ալ ունիս , որ բոլոր ստեղծած բաներդ քեզ սիրեն , ու քեզ ամենեին չիվշտացընեն ինչ կերպով որ ըլլայ : Խոկ ես թշուառական , ու ապերախտ մեղաւորս՝ մանկութենէս մինչուկ հիմա բիւրակերպ անօրէն մեղքերովս քու ածային սէրդ ոտքի տակ առի . քենէ երես դարձուցի , ու շատ անգամ քեզ անսահման բարիդ ինծի դէմ բարկութիւն շարժեցի : Խակայն ողորմած ու գթած տէր իմ և ած իմ , մեղք գործելու սկսած ատենէս մինչև հիմա որչափ որ մեղանչերեմ նէ , բոլոր մեղքերուս վրայ կատարեալ սրտանց կրցաւիմ ու կրզդամ : Իրաւ է տէր իմ , որ իմ մեղքերովս արքայութենէն զրկրվեցայ , ու գժոխքին արժանի եղայ : Խայց ես ասոր համար չեմ զղջար տէր իմ և ած իմ ,

այլ պարզապես քու սիրոյդ համար կը-  
 զղամ ու կըցաւիմ. որ դուն ամէն բա-  
 նէն վեր սիրելի ես: Կառաջադրեմ ով  
 ողորմած ած իմ, որ ասկից ետքը մէջ  
 մ'ալ մեղք չփորձեմ, ու քեզ ալ չի-  
 վրշտացընեմ: Ասկից ետքը հազար ան-  
 գամ կուզեմ մեռնիլ, քան թէ մէկ  
 անգամ մը միայն մեղք դործել, ու քեզ  
 բարկացընել: Աս ալ կառաջադրեմ  
 տէր իմ, որ ասկից ետքը մեղքէն ալ  
 մեղքի առիթներէն ալ փախչիմ: Դայց  
 գիտեմ, որ առանց քու շնորհքիդ բան  
 մը չեմ կրնար ընել. անոր համար խո-  
 նարհութեամբ կըխնդրեմ տէր, քու  
 սուրբ շնորհքդ ու օգնութիւնդ տուր ին-  
 ձի, որ անով առաջադրութեանս վրայ  
 հաստատ կենալու կարօղ ըլլամ: Կա-  
 զաչեմ տէր իմ, որ աս աշխրքիս մէջ ին-  
 ձի ամեննեին չիխնայես, իմ գլուխս զար-  
 նես, իմ կամքս ճզմես, ու դուն քու  
 զօրաւոր ձեռքովդ իմ սիրտս 'ի բարին  
 դարձընես, որ ասկից ետքը մեղքէն հե-  
 ռու կենալով՝ միշտ քեզ սիրեմ, քեզի  
 ծառայեմ, պատուիրաններդ պահեմ.  
 ու սուրբ կամքդ կատարեմ, ամէն:

ԱՅԼ ԱՊՈՒՏ :

Հայր ողորմութեան, ահա քու ածային  
աթոռիդ առջևը իյնալով ներումն կը-  
խընդրեմ մեղքերուս։ Արձանչնամ իմ  
սխալմունքս, ու կըխոստովանիմ, որ  
անառակ որդիին պէս քեզ իմ երկնա-  
ւոր հայրս թողուցի. ու զանազան մեղ-  
քերով հոգիս աս խեղճութեան մեջ  
ձգեցի։ Վակայն ով բարեգութ հայր՝  
ահա ամէն մեղքերուս վրայ զղջալով ու  
խիստ ցաւելով կըդոչեմ կաղաղակեմ։

Հայր մշույցերին և աստաղէ ու։ Հայր,  
քու միածին որդւոյդ չարչարանքները՝  
սուրբ արիւնը՝ ու մահը յիշէ, որ իմ  
հոգւոյս զինն է. ու անոր արդիւքնե-  
րով իմ մեղաւոր հոգւոյս ողորմէ, որ  
դուն քու անարատ ձեռքովդ ստեղծե-  
ցիր։ Եհա հայր իմ ողորմած, անառակ  
որդիին պէս նորէն քեզի կըդառնամ,  
խոնարհութեամբ քեզի երկրագու-  
թիւն կընեմ. քեզ կըպատվեմ կըյար-  
գեմ. ու բոլոր սրտովս՝ մոքովս՝ ու զօ-  
րութիւններովս քեզ կըսիրեմ, ու սի-

ըԵլու կրբաղձամ : Ահա հայր բարեգութ, ինչ մեղք որ գործերեմ մըտքով՝ խօսքով՝ գործքով՝ ու զանցառութեամբ, կամաւ և ակամայ, ամէնուն վրայ քու սիրոյդ համար սրտանց կրցաւիմ, ու ձեռքէս եկածին չափ անոնցմէ կրղգուշանամ . ու քու ամենատես աչքիդ առջեր իմ սրտիս ամէն ծածուկ վերքերը ու չարութիւնները կրբանամ : Վէնէ գաղտուկ բան մը չի կրթնար ըլլալ . դուն ինծի օդնութիւն ըրէ, որ խոստովանած ատենս չրլայ թէ սատանային որոգայթին մէջ իյնալով պակսութիւն մը ընեմ, ու խոստովանանքին սուրբ խորհուրդը ավօնմ : Վըթած հայր իմ, քու սուրբ չնորհքդ տուր ինծի, որ աղէկ պատրաստութիւնով ու աղէկ առաջադրութիւնով սկրսիմ ու կատարեմ : Ահա չնի Վնի տեառն մերոյ արդիւնքները, փառաւորեալ միշտ կոյս ածածինը, իմ պաշտպան սուրբերս, բոլոր հրեշտակները, ու մասնաւորապէս պահապան հրեշտակս ինծի բարեխօս կրբոնեմ : Կաղաչնմ տէր իմ, որ անոնց բարեխօսու-

թեամբը քու ամենակարող ձեռքդ վրաս  
դնես, որ աս սուրբ խոստովանակըս ար-  
ժանապէս կատարելով՝ քու սուրբ շր-  
նօրհքիդ մէջ նօրէն հաստատվիմ։ Այ-  
սուն պէս պահպանուի ։ ՀՅ ուրէ դաւ-  
ուընթաց ինչ, ամեն։

## ԵՕԹՆ ԱՌԴՄՈՍՔ

### ԵՊԵԾԽԱԲՈՒԹԵԱՆ

Թակուա բարձր առաջայլ առաստացին  
հաճախ գրիլծակ, ու մէի պարագանելք առա-  
րեցաւ լինեաւ իւ առաջ առ եօլն առա-  
յլու առաջնորդութեան անոնի ունար շար-  
ծաղ պարագան առաջաւ իւնեաւ, ու նմանը չէ-  
լու։ Որովհետեւ նորուանի գրիլծա ըստը ըստ  
ամեն հարդար հաստիլուաւ բան չէ։ անոն  
համար հաս ամենը գրիլծանի գիմուը աշ-  
խարհանքաւ պահանջն եսուհրդաւթեան-  
ներով բայցարիլծա իւնգանաս։ ու լին  
մէիւ հարաբեկութեամբ նուան ուրէշ առենու-  
պահանջն ըստը, անդարսիւյս մէծ շահ  
իւնանիսոյ։

## Առաջնա . Կ :

**Տէր** մի սրտմտութեամբ քով յանդի-  
մաներ զիս . և մի բարկութեամբ քով  
խրատեր զիս :

**Ողորմեա** ինձ տէր , զի հիւանդ եմ ես .  
բժշկեա զանձն իմ , զի խռովեցան ու-  
կերք իմ .

**Ենձն** իմ յոյժ խռովեցաւ , և դու տէր  
մինչեւ յերբ :

**Դարձ** տէր և փրկեա զանձն իմ . կեցո  
զիս տէր ըստ ողորմութեան քում :

**Օի** ոչ ոք է որ 'ի մահու յիշէ զքեզ ,  
կամ 'ի գժոխս խռատովան առնիցի առ  
քեզ :

**Վ** աստակեցայ ես 'ի հեծութեան իմում .  
լուացի զամենայն գիշեր զմահիճն իմ ,  
և արտասուօք իմովք զանկողինս իմ  
թացի :

**Խռովեցաւ** 'ի սրտմտութենէ ակն իմ .  
և մաշեցայ ես 'ի վերայ ամենայն  
թշնամեաց իմոց :

**Դ** բաց կացէք յինէն ամենեքեան , ոյք  
գործէք զանօրէնութիւն :

## Ապահով. պ:

Տէր, մեղքերուս համար սրդողելով իս  
 մի պատժեր . ու քուկին արդար բար-  
 կութեամբդ իս մի խրատեր : Ողորմէ ին-  
 ծի տէր իմ , ինչու որ հոգիս հիւանդէ .  
 իս ողջնցուր , ինչու որ հոգւոյս կարո-  
 ղութիւնները իմ մեղքերուս համար ի-  
 րար անցերեն : Ես ալ մեծ խղճմտանքի  
 անհանդստութեան մէջ եմ . ե՞րբ պիտի  
 տէր իմ դուն ինծի ողորմիս : Դարձիր  
 մէյմը ինծի նայէ . ազատէ իս աս խեղ-  
 ճութենէ . ինչու որ քուկին ողորմու-  
 թիւնդ շատ մեծ է , քան թէ իմ մեղ-  
 քերուս բազմութիւնը : Թէ որ աս խեղ-  
 ճութեան մէջ մեռնելու ըլլամ , ինչպէս  
 բերանս պիտի բացվի քեզ օրհնելու .  
 գերեզմանի մէջ ուլ կրնայ քեզ գովել :  
 Դիշեր ու ցորեկ ողբալէն ուժս կտրե-  
 ցաւ . արցունքներս աղբիւրի պէս կը-  
 վաղէին , ու բոլոր գետինը կըթրէէին :  
 Դարկութենէս աչվըներս դարձան . ու  
 սիրտս թշնամիներուս վրայ մաշնցաւ :  
 Հեռացէք գացէք իզմէ չար խորհուրդ-

Եռաւ տէր ձայնի լալոյ իմոյ, լուաւ  
տէր աղօթից իմոց, և տէր զխնդըր-  
ուածս իմ ընկալաւ:

Եմաշեսցեն, և խռովեսցին յոյժ ամե-  
նայն թշնամիք իմ, դարձցին յետս, և  
ամաշեսցեն յոյժ վաղվաղակի և խռո-  
վեսցին:

### Ապղմոս. լու:

Երանի, որում թողութիւն եղեւ մե-  
ղաց, և ծածկեցան ամենայն յանցանք  
նորա:

Երանի առն, որում ոչ համարի տէր  
զմեղս նորա, և ոչ դոյ նենդութիւն  
'ի բերան նորա:

Եռեցի ես, և մաշեցան ամենայն ոս-  
կերք իմ, առ աղաղակել ինձ տո-  
տէր զօրհանապազ 'ի տուէ և 'ի գի-  
շերի:

Օանրացաւ ձեռն քոյ 'ի վերայ իմ,  
դարձայ 'ի թշուառութիւն իմ, զի հա-  
րան յիս փուշք:

Օմեղս իմ ցուցի քեզ, և զանօրէնու-  
թիւնս իմ ոչ ծածկեցի 'ի քէն:

ներ, որ իս մեղք խօթելու համար վրաս  
եկած էք: Աստուած լալու ձայնիս լսեց,  
ու ինծի ողորմեցաւ, ու իմ սրտիս բաղ-  
ձանքը կատարեց: Խռող իմ հոգւոյս  
ամէն թշնամիները ամշնան, շուտ մը ետ  
դառնան, իզմէ հեռանան. որպէս զի իմ  
հոդիս իր արարչին հետ միանայ:

### Սաղմոս. ըս:

Երանի ան մարդուն, որուն մեղքերուն  
թողութիւն եղաւ. ու ամէն մեղքերը ած-  
բանի տեղ չիդներ սրտանց խոստովա-  
նելուն համար: Երկան ատեն մեղքի մէջ  
լուռ կեցայ, բայց ետքը այ հետ հաշտը-  
վիլ ուզեցի. գիշեր ու ցորեկ այ դէմ ա-  
ղաղակելէն չէի դադրիր, մինչև ոսկրներս  
մաշեցան: Ա ասն զի մեծամեծ հոգեւոր ու  
մարմնաւոր պատուհասներ վրաս խրկե-  
ցիր, ու սրտիս հանգստութիւնը բռլո-  
րովին կորսնցուցի. ու խիղճմտանքս ալ  
փուշի մը պէս իս կրխայթէր: Ա ինչև որ  
սիրտս զդջում ունեցաւ. ու առաջադրու-  
թիւն դրի մեղքերս քու առջիդ խոստո-  
վանելու, ու անօրէնութիւններս քեզմէ

Ասացի՞ թէ պատմեցից ինձէն զմեղս իմ .  
և դու թողցես զամենայն ամբարշ-  
տութիւնս մեղաց իմոց :

Ա ասն այսորիկ յաղօթս կացցեն առ  
քեզ ամենայն սուրբք 'ի ժամ ըն-  
դունելի :

Տայց միայն 'ի ջուրցն հեղեղաց բազմաց .  
որք առ նոսա ինչ ոչ մերձենան :

Դու ես ապառէն իմ 'ի նեղութենէ  
յայսմանէ , որ շուրջ եղեւ զինեւ :  
Յնծութիւն իմ փրկեա զիս յայնցանէ ,  
ոյք պաշարեցին զիս :

Խմաստուն արարից զքեզ , և խելամուտ  
'ի ճանապարհի յոր գնասցես , և հաս-  
տատեցից 'ի վերայ քոյ զաչս իմ :

Ո՞ի լինիք որպէս զձիս՝ և զօսրիս , զի ոչ  
գոյ 'ի նոսա խմաստութիւն , 'ի սանձա՝  
և 'ի դանդանաւանդս ճմլեսցես զկր-  
զակս նոցա , որք առ քեզ ինչ ոչ մեր-  
ձեսցին :

Տաղում տանջանք են մեղաւորաց . բայց  
ոյք յուսան 'ի տէր՝ ողորմութիւն  
տեառն շուրջ եղիցի զնոքօք :

շիծածկելու : Պահտեմ որ իմ ամէն մեղ-  
 քերս կը ներես , երբոր ես իզմէ ցաւով  
 ու զդջումով պատմելու ըլլամնէ : Անոր  
 համար ամէն բարեպաշտները այսպիսի  
 ընդունելի ատեն քեզի աղաւելէն չեն  
 դադրիր . որ ասանկ սաստիկ փորձանք-  
 ներու հեղեղը (սէլերը) իրենց վեաս մը  
 կարօղ չրլան հասցընել : Դուն ես տէր  
 իմ օգնականս , դուն իս աս նեղութենէ  
 խալըսէ , որ իմ չորս դիս առեր է :  
 Դուն ես իմ սրտիս մխիթարութիւնը ,  
 իս չար կիրքերուս ձեռքէն փրկէ : Ես  
 քուկին միտքդ կը լուսաւորեմ (կըսէ ած) ,  
 ու թէ ինչ ճամբայ պիտի բռնես , ես  
 քեզի կըսորվեցընեմ . իմ աչքս ու  
 խնամքս քու վրայէդ չիպակսիր : Զի-  
 երու կամ ջորիներու պէս անբան մի  
 ըլլաք , ինչպէս հեթանոսներն են , որ  
 առաքինութեան ճամբան քալելու հա-  
 մար սանձ (կէմ) պէտք է . անսանկով  
 ալ իրենց արարչին չեն մերձենար , ու  
 իրենց բարերարը մէյմը մտվրնին չեն  
 բերեր : Անզաւորներուն համար շատ  
 պատրաստած տանջանքներ կան . բայց  
 որոնք որ այ կապահինին , անոր ողոր-

Աւրաիս լեռուք՝ և ցնծացէք արդարք .  
 'ի տէր պարծեցարուք ամենեքեան ,  
 ոք ուղիղ էք սրտիւք :

### Սաղմոս . վւ :

**Տ**էր մի սրտմտութեամբ քով յանդի-  
 մաներ զիս , և մի բարկութեամբ քով  
 խրատեր զիս :

**Օ**ի նետք քո հարան յիս . և յիս հաս-  
 տատեցաւ ձեռն քո :

**Ա**չ դոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յե-  
 րեսաց բարկութեան քո :

**Ա**չ է խաղաղութիւն ուկերաց իմոց՝ յե-  
 րեսաց մեղաց իմոց :

**Վ**նօրէնութիւնք իմ բարձրացան քան  
 զգլուխ իմ , որպէս զբեռն ծանր ծան-  
 բացան 'ի վերայ իմ :

**Կ**եխեցան , և փառեցան վէրք իմ յերե-  
 սաց անզգամութեան իմոյ :

**Տ**առապեցայ և խոնարհ եղէ , մինչեւ  
 յոյժ . զօրհանապաղ տրտում դը-  
 նայի . զի անձն իմ լի եղե չարշա-

մութիւնը ամէն բանէն կրխալըսէ : Ու-  
րախացէք ու խնդացէք ովյ արդարներ ,  
որ ձեր սիրտը այ հետ շիտակ է , ու այ  
անունը ձեզի պարծանք եղած է :

### Առաջնա . վե :

**Տէր** , թէպէտ ես պատժըվելու արժա-  
նի եմ , բայց սրդողած ատենդ իս մի  
պատժեր . ու քուկին արդար բարկու-  
թեամբդ մի խրատեր : Խնչու որ նեղու-  
թեան նետերը իս խորունկ խոցեցին . ու  
քու արդար բարկութիւնդ վրաս տի-  
րերէ : «Քուկին արդար բարկութիւնդ  
տեսնելով մարմինս ահու դողու մէջ ին-  
կաւ . ու մեղքերուս համար խիղճմր-  
տանքս ամենենին հանգստութիւն չունի :

Խմ անօրէնութիւններս դլխէս վեր դիղ-  
վեցան , ու ծանր բեռի պէս իս կրծքղ-  
մեն : Վյնչափէ իմ անդգամութիւնս , որ  
իմ մեղքերուս վէրքերը փտտիլ ու շա-  
րաւով լեցւիլ սկսան : Վյնպիսի ողոր-  
մելութեան մէջ ինկայ , որ աչքս գետ-  
նէն չէի կրնար վերցընել . այնպիսի ցա-  
ւերու մէջ մնացի , որ երբէք ողջըննա-

բանօք, և ոչ դոյ բժշկութիւն մար-  
մնոյ իմոյ :

**Չ**արչարեցայ, և խոնարհ եղէ մինչեւ  
յորժ մոնչեի առ հեծութեան սրտի  
իմոյ :

**Տ**էր առաջի քոյ է ամենայն ցանկութիւն  
իմ, և հեծութիւն իմ 'ի քէն ոչ  
ծածկեցաւ :

**Ա**լլոտ իմ խոռվեցաւ յիս . և եթող զիս  
զօրութիւն իմ. լոյս աշաց իմոց, և այս  
ոչ եղև ընդ իս :

**Բ**արեկամք իմ, և մերձաւորք իմ առաջի  
իմ մերձեցան, և կացին, և մերձա-  
ւորք իմ հեռի եղեն յինէն :

**Բ**առնադատեին զիս, և խնդրէին զանձն  
իմ, ոյք խորհեին չար 'ի վերայ իմ.  
Խորհեցան զանօրէնութիւն . և ըդ  
նենգութիւն զօրհանապաղ խորհե-  
ցան :

**Ե**ւյլ ես որպէս խուլ՝ որ ոչ լսէ . և  
որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան  
իւր :

**Ե**ղէ ես որպէս մարդ, որ ոչ լսէ, և ոչ  
գոն խօսք 'ի բերան նորաւ :

լու ճար չիկայ : Անանկ խեղձութեան  
մէջ ինկայ , մինչեւ սրտիս հեալէն չէի  
կրնար բան մը զուրցել : Տէր իմ , դուն  
որ ամէն բանս կըտեսնես ու կըլսես , իմ  
քաշածս քենէ գաղտուկ չէ . իմ փափաքս  
ու սրտիս ախը դուն գիտես : Աիրտոս ա-  
նանկ խորվութեան ու յուսահատու-  
թեան մէջ է , որ վրաս ուժ չիմրնաց , իմ  
մտքիս լոյսն ալ մթնցաւ : Իմ բարեկամ-  
ներս ու դրացիներս , որոնք որ նեղու-  
թեան ատենը ինծի կօգնելին , մէյ մը ե-  
րեցան , ու իս աս վիճակը տեսնելով թող  
տրվին գացին : Իմ թշնամիներս ինծի  
դէմ ելան , ու բոլոր օրը ուրիշ բան չէին  
ըներ , եթէ ոչ անօրէնութիւն ու չա-  
րութիւն կըմտածէին , ու միտքս կըձգէ-  
ին . ու կուղէին՝ որ զործով ալ կատա-  
րեմ : Բայց ես խուլ մը դարձայ , անոնց  
ամենելին ականջ չիդրի . կամ համր մարդ  
մը եղայ , որ բերանը չիբանար . արձանի  
մը պէս , որ չիլսէր , ու բերանը խօսք  
չիկայ : Խմէպէտ շատ յուսահատելու-  
բաներ կան , բայց ես քեզմէ տէր իմ  
յոյսս չեմ կըտրեր . ով տէր ած իմ ,  
դուն լսէ աղանչանքիս ձայնը : Վիտքս

Ես 'ի քեզ տէր յուսացայ, և դու լուիշես ինձ տէր ած իմ:

Եսացի, թէ մի ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. 'ի սասանել ոտից իմոց, 'ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

Ես 'ի տանջանս պատրաստ եմ, և ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Օանօրէնութիւնս իմ պատմեցից, և հոգացայց վասն մեղաց իմոց:

Խակ արդ՝ թշնամիք իմ կենդանի են, և զօրացեալք են քան զիս. և բաղումք են, ոյք ատեն զիս 'ի տարապարտուց:

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ բարւոյ, չարախսուէին զինէն, զի ես երթայի զչետ արդարութեան:

Մի թողուր զիս տէր ած իմ, և մի 'ի բացեայ առնիր յինէն. հայեաց յօդնել ինձ տէր փրկութեան իմոյ:

### Սահման. Ճ:

Աղորմեաց ինձ ած ըստ մեծի ողորմութեան քում, և ըստ բաղում զթու-

զրի որ, ձեռքէս եկածին շափ ջանամ,  
որպէս զի թշնամիներս վրաս չուրախա-  
նան . որոնք իս մեղքի վտանգներու մեջ  
տեսնելով սկսան մեծ խնտում ընել :  
Պատրաստ եմ իմ մեղքերուս համար  
ամեն կերպ տանջանք ու նեղութիւն քա-  
շելու, երբոր դուն կըխրկես . Եմ անօ-  
րէնութիւններս սրտանց կըխռստովա-  
նիմ . ու ձեռքէս եկածին շափ կըջանամ  
ապաշխարել : Իսյց ինչ ընեմ տէր իմ,  
որ թշնամիներս դեռ կենդանի են, ու  
իզմէ աւելի զօրացած են . ու շատեր ալ  
կան, որ իս անիրաւ տեղ կատեն : Ես  
իրենց բարիք ըրի, ու անոնք ինծի չարիք  
հասուցին . իմ վրաս գէշ խօսեցան, ինչու  
որ ես ուզեցի արդար ճամբայ բռնել :  
Տէր ած իմ, իս թող մի տար, ու իզմէ մի  
հեռանար . քուկին օգնութիւնդ մի ու  
շացըներ, ինչու որ դուն ես իմ փրկիչ :

### Առաջնա . ծ :

Աղօրմէ ինծի ած իմ, ինչու որ քուկին  
ողօրմութիւնդ մեծ է . քաւէ իմին անօ-

թեան քում քաւեա զանօրէնու<sup>ւ</sup>  
թիւնս իմ :

Եռաւել լուա զիս յանօրէնութենէ իմ  
մէ , և 'ի մեղաց իմոց սուրբ արա  
զիս :

Օանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ,  
և մեղք իմ առաջի իմ են յամենայն  
ժամ :

• Վեզ միայն մեղայ տէր , և զւար առաջի  
քո արարի :

Որպէս արդար եղիցիս 'ի բանս քո , և  
յաղթեսցես 'ի դատիլն քո :

Ենօրէնութեամբ յղացայ , և 'ի մեղս  
ծնաւ զիս մայր իմ :

Դու տէր զճշմարտութիւն սիրեցեր ,  
զանյայտս , և զծածկեալս իմաստու  
թեամբ քով յայտնեցեր ինձ :

Յօղեա յիս մշտկաւ , և սուրբ եղէց .  
լուա , և քան զձիւն սպիտակ եղէց :

Լսելի արա ինձ տէր զցնծութիւն և զու-  
րախութիւն . և յնծասցեն ոսկերք իմ  
տառապեալք :

Դարձո՞ զերեսս քո 'ի մեղաց իմոց , և  
զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա  
յինէն :

բէնութիւնս, ինչու որ քուկին դժու-  
 թիւնդ շատ է։ Անդաց աղտերու մէջ  
 թաթխըլվեցայ, իս լրվա։ ու իմ մեղ-  
 քերս ու անօրէնութիւններս մաքրէ։  
 Ես ալ գիտեմ իմ ըրած անօրէնու-  
 թիւններս . ու մեղքերս մոքէս ամեննեին  
 չեն ելլեր։ «Քուկին աչքիդ առջին» ու  
 քեզի գէմ, որ իս ստեղծեցիր ու կը-  
 պահպանես, յանդդնեցայ մեղք գոր-  
 ծել։ Իսոյց դուն ինչպէս որ խոստա-  
 ցար մեղաւորներուն թողութիւն տալ,  
 քուկին խօսքիդ իրաւ ըլլալը իմ վրաս  
 ալ ցըցուր, ու իս դատելու ատենդ ո-  
 ղորմութիւնդ յաղթէ քուկին արդա-  
 րութեանդ։ Ա ասն զի մեղքի մէջ ծր-  
 նած ըլլալով միշտ դիւրաւ մեղքի մէջ  
 կլյնանք։ Խէպէտ ասով չենք կրնար  
 բոլորովին արդարանալ, ինչու որ դուն  
 ճշմարտութիւնը կրսիրես, ու ինչ որ  
 գաղտուկ է, ու մեր սրտին ծածուկներն  
 ալ քուկին իմաստութեամբդ մեզի կը-  
 յայտնես։ Յօղէ իմ վրաս բարերար  
 ողորմութիւնդ, որպէս զի մաքրըլվիմ։  
 լրվա իմ հոգիս քուկին շնորհաց անձ-  
 րեռվը, որ ձիւնէն ճերմակ ըլլայ։ «Քու-

Օսիրտ սուրբ Հաստատեաւ յիս աստուած, և զհոգի ուղիղ նորոգեաւ 'ի փորի իմում :

Ա՞ն ընկենուր զիս տէր յերեսաց քոց, և զհոգի քո սուրբ մի հաներ յիւնէն :

Տուր ինձ զցնծութիւն փրկութեան, և հոգւով պետութեան քո հաստատեաւ զիս :

Ուսուցից անօրինաց զճանապարհո, և ամպարիշոք առ քեզ դարձցին :

Փրկեաւ զիս յարենէ աստուած, աստուած փրկութեան իմոյ, և ցընծասցէ լեզու իմ յարդարութեան քում :

Տէր եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո :

Ծաւ կամեցեալ էիր զպատարազմ՝ մատուցանէաք • լայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար :

Պատարագ աստուծոյ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ աստուած ոչ արհամարհէ :

Հարի արա տէր կամօք քովք սիով-

կին անուշ միսիթարութեան ձայնդ լսեցաւ իմ սրտիս մէջ, որ հոգւոյս զօրութիւնը ուրախութիւնով լեցվի : Իմ մեղքերուս տէր իմ բարկացած աչօք մի նայիր . ու իմ ամէն անօրէնութիւնս քաւէ : Ուսիսէ իմ սիրտս, ու այնպէս սիրտ մը տուր, որ առաքինութեան ու սրբութեան ետևէն ըլլայ : Չըլլայ թէ իմ դարձեալ մեղանչելուս համար իս երեսէ ձգես . ու սուրբ հոգւոյն շնորհքը վրայէս հանելով առաջվան պէս խեղճ մնամ : Հապա նորէն շնորհքներ խրկելով պահէ իմ խղճմբտանկիս փրկաւէտ ուրախութիւնը . ու հոգւոյս ուժ տուր, որ մարմնոյն վրայ իշխան ըլլայ : Ես ալ կը ջանամ քու սուրբ պատուիրաններդ անօրէններուն սորվեցընել . որպէս զի անոնք ալ քեղի դառնան ապաշխարեն : Իմ չար վարքս շատերուն դայթակղութեան պատճառ եղաւ, ու շատերուն արիւնը մտայ . բայց դու տէր ած իմ, իս պահէ, որ ուրիշը չիգոյթակղեցընեմ . ու իմ լեզուս քուկին արդարութեանդ քարոզ ըլլայ : Կառն տէր իմ բաց բերանս որ քեզ օրհնէ ու փառարա-

Նի . և շինեսցին պարիսպքն երու-  
սաղէմի :

**Յ**այնժամ հաճեսցիս ընդ պատարագս  
արդարութեան , յորժամ ուխտից  
պատարագս հանցեն 'ի սեղան քո  
զուարակս :

### Առաջնորդութեան մաս :

**Տ**եր լուր աղօթից իմոց , և աղաղակ իմ  
առ քեզ եկեսցէ . մի դարձուցաներ  
զերեսս քո յինէն :

**Յ**աւուր նեղութեան իմոյ խոնարհեցու  
առ իս զունկն քո . յորում աւուր  
կարդամ առ քեզ , վաղվաղակի լուր  
ինձ :

**Ս**պառեցան որպէս ծուխ աւուրբ իմ , և  
ուկերք իմ որպէս խոխւ չորացան :

**Հ**արայ ես որպէս խոտ , և ցամաքեցան  
սիրտ իմ , մոռացայ ուտել զհաց իմ  
'ի ձայնէ հեծութեան իմոյ :

նէ : Գիտեմ որ խոնարհ սիրութ աւելի  
հաճոյ է քեզի . քան զոհ մատուցանելը :  
Տէր , քուկին բարերար կամօքդ բարիք  
ըսէ իմ հոգւոյս , ու քու ողորմութիւնդ  
պարսպի պէս մարմնոյս պաշտպան ըլլայ :  
Երրոր քու ողորմութիւնդ վրայէս ան-  
պակաս կրլայ , ան ատենը կրնամ զանա-  
զան բարի գործքեր քեզի մատուցանել ,  
ու իս բոլորովին քեզի սիրոյ սեղանի  
վրայ զոհ ընել :

### Առաջնոր , ճառ :

Տէր , լսէ իմ աղօթքը , ձայնս քեզի  
հասնի . երեսդ իզմէ մի դարձըներ : Եւ-  
ղութեանս ատենը ականջդ ինծի խո-  
նարհեցուր . ու քեզ կանչած ատենս  
շուտ մը ինծի օգնութիւն հասիր : Եյն-  
չափ նեղութիւն քաշեցի , որ կեանքս  
ծուխի մը պէս անցաւ . ու ես խոտի մը  
պէս չորցայ . սրտիս ցաւէն հաց ուտելն  
ալ մոռցայ . սրտիս նեղութենէն կաշի  
ու ուկր դարձայ . անապատի մէջ եղած  
թռչուններու պէս խեղճ մնացի . կամ  
աւերակներու մէջ պայիսուշներու դար-

Ացեցաւ ոսկը իմ 'ի մարմին իմ , նմա-  
նեցայ ես հաւալասան անապատի :

Եղէ ես որպէս բու աւերակի , տքնե-  
ցայ , և եղէ ես որպէս ձնձղուկ միայն  
'ի տանիս :

\*Եախատեցին զիս թշնամիք իմ զօր-  
հանապազ , և գովիչք իմ ինեւ երդ-  
նուին :

Օմոխիր որպէս զհաց կերի , և զըմպե-  
լին իմ արտասուզք խառնեցի :

Ծերեսաց բարկութեան սրտմտութեան  
քո . զի դու բարձրացուցեր , և խո-  
նարհեցուցեր զիս :

Վուրք իմ որպէս հովանի անցին , և  
ես որպէս խոտ ցամաքեցայ :

\*Դու տէր յաւիտեան կաս , և յիշատակ  
քոյ յաղգէ մինչեւ յաղգ ,

Դու յարուցեալ դթասցիս 'ի վերայ  
սիովիսի . ժամանակ դթալոյնորա հա-  
սեալ է ժամ :

Հաճեցան ծառայք քո ընդ քարինս նո-  
րա , և 'ի հողս նորա դթասցին :

Երկիցեն հեթանոսք յանուանէ քում-  
մէ . և ամենայն թագաւորք երկրի 'ի  
փառաց քոց :

ձայ . Ճնճղուկիներու պէս միս մինակ մնացի : Իռլոր օրը թշնամիներս իս նախատեցին . երեսպաշտները ծածուկ մէջերնին երդում կընեին իս կորսնցընելու : Անխիրը հացի տեղ կերայ . ու չուրին մէջ արցունքս խառնեցի : Խնչու որ տեսայ՝ թէ դուն ալ արարիչս ինծի բարկացեր ես . դուն որչափ որ իս բարձրացուցիր դանաղան շնորհքով , ես այնչափ ցածութեան մէջ ինկայ մեղանչելովս : Խմ օրերս շուքի պէս անցան գացին . ես ալ խոտի մը պէս չօրցայ : Դուն յատիւ տեանս նոյն կրմնաս . ու ամենուն կողորմիս . ու քուկին բարերարութեանդ յիշատակը ամէն աղքաց մէջ կըպատմրի : Վանկէնէ իմ հոգւոյս ալ ողորմիս , որ իր մեղացը համար ետքի խեղձութեան մէջ ինկերէ . հիմա է անոր ողորմելու ատենը : Առւրբերնալ տեսնելով իմ ողորմելի վիճակս , բարեխօս կրւան . որ ինծի ողորմիս : Խռաղ տեսնեն հեթանոսները քուկին ըրած բարիքներդ , ու անհաւատ թագաւորները վախնան քուկին անունէդ : Կըրոր հոգւոյս կորսնցուցած շնորհքները ետ դար

Շինէ տէր զսիովն, և երևեսցի փառօք  
իւրովք՝ի նմա:

Հայեցաւնա յաղօթս խոնարհաց, և ոչ  
արհամարհեաց զիսնդրուածս նոցա:

Վրեսցի այս յաղգ յայլ, ժողովուրդ որ  
ստացեալ է, օրհնեսցէ զտէր:

Հայեցաւնա՝ի բարձանց՝ի սրբութենէ  
իւրմէ. տէր յերկնից յերկիր հայե-  
ցաւ:

Լսել զհեծութիւն կապելոց. և արձա-  
կել զորդիս մահապարտաց:

Պատմել՝ի սիովն զանուն տեառն, և  
զօրհնութիւնս նորա յերուսաղեմ:

Ժողովիլ ժողովրդոց՝ի միասին, և թա-  
գաւորաց ծառայել տեառն:

Պատասխանի ետ նմա՝ի ճանապարհի  
զօրութեան իւրոյ, զնուազութիւն  
աւուրց իմոց ասա ինձ, և մի հաներ  
զիս՝ի կէս աւուրց իմոց, զի յաղգէ  
յաղգ են ամք քո:

Դ սկզբանէ տէր զիսմունս երկրի հաս-  
տատեցեր, և զործք ձեռաց քոց եր-  
կինք են:

Երքա անցանեն, և դու կաս և մնաս  
յաւիտեսն:

ձրենելու զարդարելու ըլլաս, ան ատեն  
 քու փառքը ամէնուն յայտնի կերե-  
 նայ, որ ինծի պէս մեղաւորի ալ կողոր-  
 միս : Դու տէր իմ միշտ խոնարհնե-  
 րուն աղօթքը կըլսես, ու անոնց աղա-  
 շանքը չես արհամարհեր : Այ բարերա-  
 րութեան ու ողորմութեան յիշատակը  
 թող գրվի, որ ուրիշ աղգերն ալ կար-  
 դան, ու ճանշան իրենց բարերարը . ու  
 հաւատացեալ ժողովուրդը զած օրհնէ :  
 Այշտ ած երկինքէն երկիր կընայի, որ  
 մեղքերով կապվածներուն հառաջան-  
 քին լսէ, ու դժոխքի արժանի եղօղ մե-  
 ղաւորները աղատէ . որ պատմըվի մեր  
 այ անունը հաւատացելոց մէջ . լսեն ու-  
 րիշ հեթանոսներնալ, ու թագաւոր-  
 ները դառնան, ու այ ծառայեն : Խմէպէտ  
 մեր կեանքը կարճ է, անոր համար այ  
 ընելու բարիքներուն շատը չեն կընար  
 տեսնել . բայց կաղաչեմ, առանց ապաշ-  
 խարութեան աս աշխրքէս իս մի հաներ,  
 որ առ ճամբուս վրայ տեսնեմ քու բա-  
 րերարութիւններդ, ու պատմեմ իզմէ-  
 ետեէն եկողներուն : Ըստ առաջուց  
 երկրիս հիմերը գուն դրիր . ու երկինքը

**Ա**մենեքեան որպէս զձորձս մաշեսցին .

և որպէս զվերարկուս փոխեսցես զնուսա , և փոխեսցին :

**Բ**այց դու նոյն ես , և ամբ քո ոչ անցանեն . որդիք ծառայից քոց բնակեսցին 'ի նմա , և զաւակի նոցա յաւիտեան յաջողեսցի :

### Առաջնա . Ֆիլ :

**Դ**իսորոց կարդացի առ քեզ տէր , տէր լուր ձայնի իմում :

**Ե**ղիցին ականջք քո , 'ի լսել զձայն աղօթից իմոց :

**Ո**ւե զանօրէնութիւնս քննես տէր , տէր ո կարէ կալ առաջի քո , զի 'ի քէն է քաւութիւն :

**Վ**ասն անուան քո համբերի տէր . համբեր անձն իմ բանի քում . յուսացաւ անձն իմ 'ի տէր :

**Դ**պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ , 'ի

քու ձեռքիդ գործածն է : Ամեն բան  
կանցնի կերթայ , բայց դուն մինակ նոյն  
կրմնաս : Ամեն բան լաթի մը պէս կր-  
մաշի . ու ինչպէս որ կուղես նէ կրփոխ-  
վին : Բայց դուն հիւ չես փոխվիր . քու  
տարիներդ մերինին պէս չեն անցնիր :  
Որոնք որ աշխրքիս մէջ քեզի հաճելի  
ծառայ են , անոնք երկինքը բնակելու  
արժանի կրլան . ու անոնց զաւակներուն  
միշտ ամեն բան կրյաջողի :

### Առաջնու . ճշկն :

Խեղճութեան փոսին մէջէն , ուր որ  
մեղօքս ինկայ , քեզի կաղաղակեմ տէր  
իմ , լսէ իմ ձայնս : « Քու ականջդ պատ-  
րաստ ըլլայ իմ աղօթքիս ձայնը լսելու :  
Ինէ որ դուն իմ անօրէնութիւններս  
քննել ուղելու ըլլաս , ով կրնայ ար-  
դար երևնալ . ինչու որ դուն միայն կրը-  
նաս մեր մեղքերուն թողութիւն տալ :  
« Քանի որ համբերեցի նէ , յոյսս դուն  
էիր . քու անուշ խօսքդ էր՝ որ խոստա-  
ցար զղջում ունեցողներուն ներել : Առ-  
տրվընէ մինչեւ իրիկուն հաւատացելոց

պահէ առաւօտու յուսացաւ իսրայէլ  
'ի տէր :

Ե տեառնէ է ողորմութիւն բազում . և  
'ի նմանէ է փրկութիւն , և նա փըռ-  
կեաց զիսրայէլ յամենայն նեղու-  
թեանց նորա :

### Առաջնորդ . ճիշդ :

**S**էր լուր աղօթից խոց , ունկն զիր  
խնդրուածաց իմոց ճշմարտութեամբ  
քով :

Լուր ինձ արդարութեամբ քով , և մի  
մտաներ 'ի դատաստան ընդ ծառայի  
քում , զի ոչ արդարանայ առաջի քո  
ամենայն կենդանի :

Հալածեաց թշնամին զանձն իմ , խո-  
նարհ արար յերկիր զկեանս իմ , և  
նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ  
յաւիտենից :

Զանձրացաւ յիս հոգի իմ , և սիրու իմ  
խռովեցաւ յիս :

Հիշեցի զաւուրսն զառաջինս , խորհե-  
ցայ յամենայն դործս քո , յարա-  
րածս ձեռաց քոց խորհեցայ , և համ-

աչքը քու ողորմութեանդ վրան է , յոյս  
ունին՝ որ դուն պիտի ողորմիս , ու ար-  
դարութեամբդ պիտի շիդատես : Ողոր-  
մութիւնը քէնէ է . մեր փրկութիւնը  
քեզմէ կըցուսանք . ու դուն խոստացար  
մեղ ամէն նեղութենէ ազատելու :

### Առաջնու . ճիշճ :

**Տ**էր իմ լսէ աղօթքիս ձայնը , ու քու  
ճշմարտութեամբդ աղաշանքիս ականջ  
դիր : «Քանի որ աս մարմինը վրանիս է ,  
ով կրնայ քու առջեղ արդար երևնալ  
երրոր արդարութեամբ դատես : Խնչնա-  
միս ետևէս ինկաւ , կուզէր իս մեղք խօ-  
թել . միտքս գէշ խորհուրդներ ձգեց ,  
որպէս զի իս յաւիտեանս կորսնցընէ :

**Վ**իտքս բոլորովին շփոթեցաւ , ու հո-  
գիիս ճարը հատաւ : «Պուկին ըրած ըա-  
րիքներդ միտքս ինկան . յիշեցի որ շատ  
անդամ իս մեծամեծ վտանգներէն խա-  
լսեցիր , ձեռվըներս վերցուցած քեզի  
ազատեցի , ինչու որ դուն ես մինակ իմ  
յոյսս : Հոգիս ցամքած երկրի մը պէս  
քուկին օգնութեանդ ծարսլած է . ու

բարձի առ քեզ զձեռս իմ :

Վնձն իմ որպէս երկիր ծարաւի է առ  
քեզ . վաղվաղակի լուր ինձ տէր . զի  
նուաղեցաւ յինէն հոդի իմ :

Ո՞ի դարձուցաներ զերեսս քո յինէն,  
նմանիցիմ այնոցիկ, ոյք իջանեն 'ի  
գուը :

Լսելի արա ինձ յառաւօտու զոզօրմու-  
թիւնս քո, զի ես 'ի քեզ տէր յու-  
սացայ :

Հայոց ինձ ճանապարհ, յոր գնացից, զի  
առ քեզ տէր համբարձի զանձն իմ :  
Փրկեա զիս 'ի թշնամեաց իմոց տէր, զի  
զքեզ ապաւէն ինձ արարի :

Ուսո՞ ինձ առնել զկամն քո . զի դու ես  
ած իմ :

Հոգի քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի  
յերկիր ուղիղ :

Ա ան անուան քո տէր կեցուսցես զիս .  
արդարութեամբ քով հանցես 'ի նե-  
ղութենէ զան ձն իմ :

Ողորմութեամբ քով սատակեսցես ըդ  
թշնամիս իմ . և կորուսցես զամենայն  
նեղիչս անձին իմոյ, զի ես ծառայ քո  
իմ :

վրաս ուժ չէ մնացեր : Երեսդ իզմէ մի  
 դարձրներ , շրլայ որ անոնց նմանիմ ,  
 որոնք յուսահատութեան մէջ ինկածեն :  
 'Դուն ես իմ ամէն յոյսս , փարատէ յու-  
 սահատութեան մութը , ու շնորհքիդ  
 լոյսը իմ սիրտս ծաղէ : 'Դուն ես իմ  
 հոգւոյս առաջնորդը , ցըցուր ինծի , թէ  
 քեղի հաճոյ ըլլալու համար ինչ ճամ-  
 բայ պիտի բռնեմ , ինչու որ իս բոլորո-  
 վին քեղի յանձնեցի : 'Դուն ես իմ օդ-  
 նութիւնս , իմ թշնամիներուս ձեռքէն  
 իս խալըսէ . ինչու որ բոլորովին քեղի  
 ապաւինեցայ : 'Դուն ես իմ ածս , քու  
 կամքդ ինծի սորվեցուր , որ առանց մեղք  
 գործելու ապրիմ : 'Քու սուրբ հոգիդ  
 արքայութեան ճամբուն մէջ ինծի ա-  
 ռաջնորդ ըլլայ : 'Քու անուանդ փառացը  
 համար իս արքայութիւնը հասցընելուի յա-  
 ւիտենական կեանքը պարզեւս : 'Քու  
 ոզորմութիւնդ իմ ամէն թշնամիներուս  
 յաղթէ , ու ամէն ինծի նեղութիւն ար-  
 վազները հալածէ վերցընէ . ինչու որ ես  
 քու ծառադ եմ , ու պատրաստ եմ քու  
 սուրբ կամքդ կատարելու :

Եպիսկոպոս :

**Օ**ղջման իմոց զարտասուս արկանեմ  
առաջի քո Քն, թող ինձ ղմեղս իմ  
որպէս երբեմն զպունկին. որ միայնդ  
ես բազմագութ : **Վ**նկանիմ առաջի քո  
Քն որ հովիւդ ես բանաւոր հօտի .  
խնդրեա՞ և զիս զմոլորեալս որ միայնդ  
ես բազմագութ : **Օ**մեղս իմ ցուցից քեզ  
Քն, որ բժիշկդ ես հոգւոց և տէր կե-  
նաց . բժշկեա՞ և զիմ զհիւանդութիւնս  
որ միայնդ ես բազմագութ :

Վաղը, իսապուլուսնենէ եղաւ :

**Վ**հաւասիկ տէր իմ, կըլսէ հոդիս ան  
մխիթարական խօսքը, հիմա ողջեցար,  
զգոյշ կեցիր որ ալ չիմեղանչես : **Վ**ն-  
բաւ չնորհակալութիւն պիտի մատուցա-  
նեմ քեզի, ու քու ողորմութիւնդ յա-  
ւիտեան պիտի յիշեմ, որ այսչափ իմ

դարձիս սպասեցիր . ինծի բարի աղուե-  
 ցութիւններ միտքս ձգեցիր , մինչև որ  
 իս դարձի բերիր , ու դարձեալ ընդու-  
 նեցար իրրե անառակ որդին : Հիմա  
 այնչափ գարշելի է ինծի մեղքը , մինչև  
 աւելի կըբաղձամ մեռնիլ , քան թէ ա-  
 ռաջադրութեանս դէմ ընել . և դար-  
 ձեալ քեզի հետ թշնամի ըլլալ : Իրաւ-  
 ցընէ ամօթէս գետինը կանցնիմ , որ այն-  
 չափ քեզի խօսք տրված եմ , ու քիչ մը  
 ատենէն ետքը այնպէս գործեր եմ ,  
 իրը թէ ամեննեին խօսք տրված չըլլայի :  
 Բայց ասկէց ետքը կըջանամ ամէն մե-  
 ղաց առիթներէն զգուշանալ . մանա-  
 ւանդ ան մեղքէն , որնոր հասարակօ-  
 րէն շատ կըդործեմ : Կուն որ իմ վրաս  
 ասչափ ողորմութիւն ցըցուցիր , կըյու-  
 սամ որ ինծի յարատեռութեան շնորհք  
 ալ կուտաս , որ մէջ մ'ալ քեզ չիվշտա-  
 ցընեմ : Կուսաւորէ իմ միտքս , որ ճանչ-  
 նամ՝ թէ որչափ գարշելի բան է մե-  
 ղանչելը : Կուն իմացուր ինծի , թէ ինչ-  
 պէս կամաց կամաց կըսկսիմ նորէն սէր  
 ձգել իմ անցած մեղքերուս , ինչպէս  
 անզգալարար նորէն ճիւղեր կուտան ,

ու կըմեծնան, մինչև որ իս նորէն մեղաց  
մէջ ձգեն: «Դուն ինծի զգաստութիւն  
ու արթնութիւն տուր, որ ախտերս բու-  
սածին պէս իմանամ, չիթողում որ մենծ-  
նան, հապա անմիջապէս արմատէն փրր-  
ցընեմ: Ան պզտի ու ներելի մեղքերն  
են, որոնք մեծամեծ մեղքերու ճամբայ  
կըբանան, անոր համար կըջանամ ասկէց  
ետքը, որ ան պզտիկներէն աւելի զգու-  
շանամ, որ մեծերուն մէջ չիյնամ: Դուն  
ինչպէս որ ինծի մեղքէ հեռանալու ճամ-  
բաները իմացուցիր, նոյնպէս ալ կա-  
տարումը դուն յաջողէ. ինչու որ քեզի  
կըվայլէ միառք ու իշխանութիւն, հիմա  
ու յաւիտեանս յաւիտենից ամէն:

### Առաջնորդ:

**Բարձր առնեմ զքեզ տէր, զի ընկալար**  
**զիս, և ոչ ուրախ արարեր զթշնա-**  
**միս իմ յիս:**

**Տէր ած իմ կարդացի առ քեզ և բժշկե-**  
**ցեր զիս. տէր հաներ՝ ի զժոխոց զանձն**  
**իմ. փրկեցեր զիս յայնցանէ, որ իջա-**  
**նեն՝ ի գուք:**

Լուս. ինձ տէր և ողօրմեցաւ . և տէր  
եղև ինձ օգնական :

Դարձոյց զբուդ իմ յուրախութիւն ,  
զերծ յինէն զքուրձ . և ինձ զգեցոյց  
զուրախութիւն :

Արպէս սաղմօս ասասցեն քեզ փառք  
իմ . և այլ մի ևս զղջացայց , տէր ած  
իմ յաւիտեան խոստովան եղէց քեզ :

### Հ արդարութեան :

Ար զպատմուճանն առաջին զոր զգեց  
ցուցեր օժմամբ հոգւոյն , մերկացաք մե-  
զօք ըստ նախահօրն պատրանաց . զգեց  
ու զնոյն վերստին ողօրմութեամբդ քո  
· թագ :

### Եաւ աղօլուք :

Վարդասէր տէր իմ չշաքն , դուն չէ  
թէ մեղաւորին դատապարտվիլը , հապա  
անոր դարձը ու փրկրվիլը կուզես . անոր  
համար կաղաչեմ , որ գթած աչքովդ  
եղած խոստովանանքիս նայիս , ու իմ  
ճշմարիտ զղջումն ընդունիս : Բայց տէր

իմ ողորմած, թէ որ մարդկային տկարութիւնովս կամքիս դէմ աս սուրբ խորհուրդիս մէջ պակսութիւն մը ըրած եմ նէ, զուն ինձի համար թափած արիւնէդ կաթիլ մը առ, ու անով իմ ակամայ պակսութիւններս լեցուր: Դաւն տէր, որ քեզ խաչ հանողներուն համար քու երկնաւոր հօրէդ ներում խնդրեցիր, ահա ես ալ անոնցմէ մէկնեմ. որ անթիւ անհամար անգամ քեզ խաչը հանեցի. ու սուրբ արիւնդ ուտքի տակ առի կոխեցի. կաղաչեմ՝ որ նոյն դժած աչքովդ ինձի ալ նայիս, ու ողորմիս ներես: Ահա տէր, թէ որ ուրիշը ինձի դէմ բան մը ըրած կամ ըսած է նէ, սրտանց թողութիւն կընեմ. ու թէ որ ես ալ ուրիշին բան մը ըրած կամ ըսած, կամ թէ որ գայթակղութիւն տալով ուրիշին մեղաց պատճառ եղած եմ նէ, սրտանց թողութիւն կըխնդրեմ: Ահա տէր, ասկից ետքը ես քուկդ եմ. ասոր համար կաղաչեմ դուն միշտ հետո եղիր, որ ես ալ հետդ ըլլամ: Տէր, ասկէց ետքը իմ յոյսս քու սուրբ խաչիդ ու մահուանդ վրայ կըդնեմ. ես իս

ու ինչ որ ունիմ նէ՝ բոլորովին քեզի  
կընըլիրեմ . դու իս հոգա ինչուկ որ  
մռանիմ , ու հոգիս քու ձեռքդ աւան-  
գեմ : Դաւն մարդասէր բժիշկ ըլլալովդ՝  
հիւանդները կանչելու եկար . ես ալ  
շատ կերպ սովորութիւններով հիւանդ  
եմ . դուն իմ հոգիս բժշկէ , ու ամեն  
չար սովորութիւնները վրայէս վերցուր :  
Դու ածային երկիւղդ իմ սրտիս մէջը  
հաստատէ , որ ճշմարիտ քեզի հետ միշտ  
հաշտ ըլլամ : Ո՞վ բարի չչա , ըսէ իմ  
հոգւոյս ալ ան ուրախական խօսքը :  
Այսօք եղև էրին-լէկան դանս այսմէն , ամեն :

---

**ՊԵՏՐՈՍՈՒԹԻՒՆ**  
**ԵՌ ՍՈՒԲԲԱՀԵԴ ՅՐԴՈՒԹԻՒՆ**  
**ԵՒ**  
**ԾԱՅՐՀԵՎՈՎՈՒԹԻՒՆ**

‘ԵՇԻԴ’ ՔՃԱ-ԼՀԵ-Ն ՀԱ-Ա-Ա-Գ-Ի-Ո-:

**Ո**վ բարեգութ փրկիչ իմ , որչափ  
 քեղի ծանր նստաւ աս սրբազան խոր-  
 հուրդը սահմանելը , դուն երկինքէն ի-  
 ջար , ու ծառայի մը կերպարանք մտար .  
 Թողուցիր հայրենի գիրկը , ու եկար  
 մսուրի մեջ տղու պէս խանձարուրը պա-  
 տեցար : ‘Խուն որ սերովքէից ու քերով-  
 քէից ահաւոր էիր , ինձի համար խաչին  
 վրայ մեռնիլ ուղեցիր : Հիմա այսօր ալ  
 պատրաստ ես քեզ ինձի տալու , ու իմ  
 սրտիս մեջ բնակելու : Խաչին վրայ ծած-  
 կեցիր միայն քու ածութիւնդ . իսկ հոս  
 ոչ ածութիւնդ՝ և ոչ մարդկութիւնդ  
 կերենայ մեր աչքին : Աակային ես հաս-

տատուն կըհաւտամ . ինչու որ գուն քու  
անսխալ բերնովդ ըսիր : Ես եմ երկին-  
քէն ինջած կենդանի հացը , ով որ աս  
հացէն կուտէ , յաւիտեան չիմեռնիր .  
իմ մարմինս ճշմարիտ կերակուր է . և  
իմ արիւնս ճշմարիտ ըմպելի է : Վյն-  
պէս ճշմարիտ կուդան ինծի աս քուկին  
խօսքերդ , որ կըբաղձամ արիւնս ալ աս  
հաւատքիս վրա թափել : Բայց կըխընդ-  
րեմ որ ինծի հաւատքիս կէօրէ գործք  
ալ յաջողես : Ինչու որ գործքիս նայե-  
լու ըլլամ անհաւատներէն քիչ վար  
կըմնամ : Վմենեին առանց երկրայելու  
կըհաւտամ , որ քեզ իմ սրտիս մէջ պի-  
տի ընդունիմ իմ ածս արարիչս ու փըր-  
կիչս . ու սիրտս զղջում չունի , ան վա-  
ռեալ բաղձանքը չունի , որնոր պէտք  
էր ունենալ . միտքս ամենեին անհոգ է ,  
ինքը զինքը չիժողվէր չիպատրաստըվիր  
այսպիսի հիւր մը արժանապէս ընդու-  
նելու : Իմ բարեկամս տունս հրաւի-  
րելու ըլլամ , կըջանամ ամէն իր չիսի-  
րած բաները աչքէն հեռացընել . իսկ  
քեզ պիտի ընդունիմ , ու չեմ ջանար  
ինչպէս որ պէտք է մեղքէ սոսկում մը

ունենալ, ուսկից որ դուն մեծապէս կը-  
գանիս : Ենոր համար հիմա յառաջ քան  
քեզ ընդունելու եկած ինկած եմ քու-  
առջեղ, դուն ինձի շնորհք տուր, զօ-  
րացուր իմ հաւատքս, ինչու որ իմ ան-  
պատրաստութիւնս այսպիսի սրբազն  
խորհուրդ ընդունելու, հաւատոյ պակ-  
սութենէ յառաջ կուզայ : Այս տուր  
մարիս, որ ճանչնայ թէ ով պիտի ըն-  
դունի, ինչպէս պիտի ընդունի, ու ին-  
չու համար պիտի ընդունի : Աիրաս մաք-  
րէ ամէն մեղաց աղտեղութենէն, որ քե-  
զի արժանի բնակարան ըլլայ : Կաղա-  
շեմ տէր, որ լեզուս արձակես քուհրա-  
շալի մարդասիրութիւնդ պատմելու . ու  
բարի վարքով օրինակ տալու նախ՝ ան-  
զեղը մեղաւորներուն, երկրորդ՝ անհա-  
ւատներուն, որ անոնք ալ սուրբ հա-  
ւատքը, ու աս հրաշալի խորհուրդը ինչ-  
պէս պէտք է նէ յարդեն . որպէս զի  
ամէն աշխարհք քեզ փառաւորէ, ու  
քու սրբազն արեանդ գինը քաւու-  
թիւն ըլլայ թէ ինձի, ու թէ ամէն մե-  
զաւորներուն :

\* Ե, ԵՐԳԻՑԴԱՆ-ԵԼԵՎԱ յանայ :

Ժագաւոր թագաւորաց տէր իմ ՀՅ,  
ես ով եմ, որ դուն ասչափ վրաս սէր  
կըցըցնես, կըհոգաս, կընսամես, ու բո-  
լոր ածութիւնդ ու մարդկութիւնդ ինծի  
կըպարդենս, որ քեզ ընդունիմ աս աղ-  
քատիկ սրտիս բնակարանը, ու քեզի հետ  
միանամ : Դուն ամեն բանի տէր ես,  
իսկ ես հող ու մոխիր ու ոչինչ եմ :  
Դուն տէր ես, և ես քու ծառադ ալ ըս-  
վելու արժանին չեմ : Դուն արարիչս ես,  
և ես ապերախտ արարած : Դուն սըր-  
բութիւն ես ու ամենենին մաքրութիւն,  
և ես զանազան մեղօք վիրաւոր, ու գար-  
շութեամբ լցված : Երկինք ու հրեշտակ-  
ները, սերովբեք, և քերովբեք քու  
առջիդ չեն դիմանար, ու ես մեղաւորս  
քեզ ինչպէս պիտի ընդունիմ : Պիտ-  
րոս առաքեալը կաղաղակէր քեզի, հե-  
ռու գնա իղմէ տէր, ինչու որ մեղաւոր  
մարդ մը եմ ես. ու ես ինչպէս թող  
տամ, որ իմ մեղուցեալ հոգիս գաս, ու  
հոն բնակիս : Հովհաննէս մկրտիչը սոս-

կացաւ՝ երբոր մկրտելու եկար նէ յոր-  
 դանան դետին մէջ . ու ես մեղաւորս  
 ինչպէս կընամ ինքիրմէս համարձակիլ  
 քեզի մօտենալու՝ ու չիսոսկամ իմ ա-  
 նարժանութեանս համար : Խրաւցընէ  
 պէտք է որ ես ալ հարիւրապետին հետ  
 ըսեմ սրտանց : Տէ՛ չէ՞ բաւական՝ ելէ  
 ընդ յարիւս կնոջ բացէս : Պանի անգամ  
 որ քեզի մերձեցայ , ու քեզ իմ քաղցր  
 փրկիչս ընդունեցայ , կըհամարձակէի  
 քու հրաւէրդ լսելով . որ սիրտ կուտաս  
 մեղաւորներուն քեզի մօտենալու , ու  
 քեզ ընդունելով մեղաց թողութիւն  
 դտնալու : Իսյց հիմա ի՞նչ երեսով քու  
 առջեղ երևնամ . ինչու որ շատ անգամ  
 հաղիւ թէ քեզ ընդունած էի , դար-  
 ձեալ նորէն մեղանչելով՝ քեզ սրտիս  
 մէջէն վոնտեցի . աւելի սիրեցի իմ մո-  
 լութիւններս քան թէ քեզ իմ ածս  
 ու իմ բարերարս : Այէ որ իմ ապերախ-  
 տութիւններս մտածելու ըլլամ , ամե-  
 նեին յուսահատութիւն կուգայ միտքս ,  
 ու կըկարծեմ որ , ալ ճար չիկայ քեզի  
 հետ հաշտըմելու : Իսյց գիտեմ որ քու  
 ողորմութիւնդ շափչունի , թէ որ ճանչ-

նալու ըլլամ իմ սխալանքս , դիւրաւ  
կըներես իմ մեղքերուս : Ասկէց ետքը  
հաստատուն յոյս ունիմ , որ քուկին օդ-  
նութեամբդ ալ քեզ չեմ վշտացըներ :  
Դուն պատրաստ ես ինծի օգնելու . եր-  
բոր իմ զօրութիւնս , ուժս , ու ապա-  
վնութիւնս դուն ես նէ՝ ով կրնայ ինծի  
դէմ դնել : Խճէ և երկան ատեն սովորած  
ըլլամ մեղանչելու , ամենեին չեմ յու-  
սահատիր . աստուծով կրնամ չար սո-  
վորութեանս ալ յաղթել : Երբոր քեզ  
բոլորովին ինծի տրվիր նէ , ինչ բան  
կրնայ գտնըվիլ , որ ինծի չիպարգեես :  
Անանկ է նէ առանց երկրայելու հաս-  
տատապէս կառաջաղբեմ ամէն չար սո-  
վորութենէս դադրիլ . և այնպէս աղէկ  
ապրիլ , որ միշտ դուն ինծի հետ ըլլաս ,  
և ես քեզի հետ , ամէն :

ԱԵՐԴՆԵՑՆԵԼԻՆ ԱՀՐՈՅ :

Տէր իմ , ներէ համարձակութեանս ,  
որ կըյանդգնիմ քու առջիդ երենալ ,  
ու ամենասուրբ հաղորդութեան առջին  
քեզի հետ խօսիլ : Հանկարծ մէկէն 'ի

մէկ կրդգամ սրտիս մէջ նոր աղղեցու-  
թիւն մը . սիրտս կրւեցվի անպատմելի  
ուրախութեամբ , մինչև ուրախութենէս  
շեմ կրնար արցունքս բռնել : Հիմա ա-  
ռաջվընէտ աւելի կրվիրաւորեն իմ սիրտս  
քու սիրոյ յիշատակներդ . քանի անդամ  
որ աչքս կրդարձնեմ ու կրտեսնեմ քեզ  
խաչին վրայ կախված , բոլոր մարմինդ  
վիրաւորած , ու արիւնով լեցված , կար-  
ծեմ որ՝ ամէն մէկ վերքերէդ սուր սլաք-  
ներու պէս կրթուչին կուգան , ու սիրտս  
քու անչափ սիրովդ կրվիրաւորեն : Դառն  
ով տէր իմ , իս փրկելու համար՝ մանա-  
ւանդ թէ քեզ ինծի պարզելու համար  
ինչ չես քաշեր . որ բարեկամ աւելի  
սէր կրնար ցըցընել իր բարեկամին վրայ ,  
ինչպէս որ դուն ցըցուցիր իմ վրաս , որ  
ես քեզի թշնամի ալ էի : Աս ամէն բանը  
ինչու համար քաշեցիր տէր իմ . բայց  
եթէ անոր համար , որ ես ալ քեզ սի-  
րեմ : Դաց տէր իմ աչքս , որ իս ճանչ-  
նամ , թէ ես ինչ բան եմ , կամ ով  
եմ . և ճանչնամ , թէ դուն ով ես ,  
որ այնպէս կրփափագիս իզմէ սիրվելու :  
Վհա պատրաստ եմ , ահա սիրտս յօ-

ժար է քու սուրբ ազգեցութիւններդ  
 ընդունելու . քու սիրովդ խորունկ մը  
 խոցէ սիրտս , որ մինակ քեզ սիրէ : Դուն  
 ինչպէս որ իս սիրելուդ համար բոլորու-  
 վին քեզ ինծի պարգևելու պատրաստ  
 ես , նոյնպէս ես ալ քեզ սիրելում՝ իս  
 բոլոր քեզի կընըլիրեմ : Չեմ կընար  
 լալէն դադրիւ , երբոր կը յիշեմ որ քեզ  
 իմ ածս ու փրկիչս վշտացուցի . դուն  
 ի՞նչ կըմտածէիր իմ վրաս , և ես քեզմէ-  
 որչափ հեռու կըպլատրտէի : Դուն դի-  
 շեր ու ցորեկ կըսպասէիր ինծի խորանին  
 վրայ ամենասուրբ հաղորդութեան մէջ .  
 յուսալով որ գուցէ ատենօք զղջացեալ  
 սրտիւ քեզի կըդառնամ կընայիմ , որ-  
 պէս զի սիրտս սիրովդ վառէիր : Եհա-  
 ւասիկ քու սէրդ սյնպէս մը իս վիրա-  
 ւորեց , որ կըհրաժարիմ ամէն աշխար-  
 հային ունայնութենէն , ու կըջանամ  
 որ ուրիշներուն սիրտն ալ աս հրաշալի  
 հաղորդութեան սիրովը բորբոքեմ : Ե-  
 րանի թէ կարող ըլլայի արժանի ըլլալ  
 ան շնորհքին , որ գործքով ցուցունէի  
 իմ սէրս , աս խորհուրդին ճշմարտու-  
 թեան վրայ արիւնս թափելով : Դու

տէր իմ աւելցուը իմ հաւատս , յոյս ,  
ու սէրս , ու անանկ մը վառէ սիրտս քու  
սիրովդ , որ քեզ միայն սիրէ , ամէն :

### Ապահովա :

**Տէր** հովուեսցէ զիս . և ինձ ինչ ոչ  
պակասեսցի :

**Դ** վայրի դալարւո՞ անդ բնակեցոյց զիս .  
և առ ջուրս հանգստեան ոնոյց զիս :

**Պ**ատրաստ արարեր առաջի իմ զսեղան՝  
ակն յանդիման նեղչաց իմոց :

**Օ**ծեր իւղով զգլուխ իմ . բաժակ քո  
որպէս անապակ արրեցոյց զիս :

**Վ**եծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն  
քո . մինչեւ յամպս ճշմարտութիւն քո :

**Շ**արձրեալ ես դու յերկինս ած . և յա-  
մենայն երկրի են փառք քո :

### Հարավանա :

**Յ**ածային կայծակունսն ՚ի սրօրէիցն  
անհպելին անմաքրապէս մերձեցաք գոլ  
պարտական քում խորհրդոյ . շնորհեաւ  
զնոյն մաքրութեամբ ՚ի թողութիւն մե-  
ղաց մերոց :

ԵՐԱ  
ՊԱՅՈՒԹՅ :

Ովքաղցր փրկիչ իմ հայ, կաղաքեմ քեզի, քու վիրաւորած սրտիդ սիրոյն համար իմ սիրտս քու ածային սիրովդ բորբոքէ, որ աշխարհային բաներէն սիրտս հեռացընելով քեզ իմ արարիչս ու տէրս միայն արժանապէս սիրեմ :

Եկուր ովքաղցր հանգիստ սրտիս ու հոգւոյս . հոս իմ սիրտս բնակէ, որ քու սիրովդ ու կարօտովդ զմայլիմ, քու ածային մսիթարութեան անուշութիւնը իս քեզի հետ կապէ, անանկ որ գիշեր ցորեկ քեզ մտմտամ . մինչև որ երանական տեսութեան արժանի ըլլալով յաւիտեանս յաւիտենից քեզի հետ մնամ :

Դուկին ներկայութեանդ ատենը ովքաղցր փրկիչ իմ, թող երկինք և երկիր լուռ կենան . դուն մինակ խօսէ սրտիս մէջը ովք ած իմ, ու իս լուսաւորէ, որ քեզ ճանչնամ . ինչու որ դուն միայն ամէն բանեն վեր սիրելի ու արժանի ես, որ ամէն սիրտ մինակ քեզ սիրէ :

Ովկենդանի աղբիւր ածային սիրոյ,  
իմ սիրտս քեղի կուտամ . դուն ստացիր  
անիկայ, ու ուզածիդ պէս կառավարէ .  
որպէս զի կարող չըլլան արարածք իս  
քեղմէ հեռացընել, ու քուկին ածային  
մխիթարութենէդ ու հոգևոր տեսու-  
թենէդ զըկել :

Ովկենաւոր սիրելի փեսայ հոգւոյս,  
դուն իս քու ետևէդ քաշէ ու առաջ-  
նորդէ . քուկին սքանչելի գինետունդ  
տար, ու խմցուր ինծի քուկին ածային  
բաժակէդ, որնոր խ սչին վրայ պատրաս-  
տեցիր, որ ամէն հաւատացեալներուն  
սիրտը կուրախացընէ :

Եկուր փրկիչ իմ, եկուր, իմ մինակ  
սէրս ու բովանդակ յօյսս . եկուր իմ մէ-  
կիկ մխիթարութիւնս, ու խօսէ սրտիս  
մէջ : Փրկութիւն ու ես էմ : Ես խօսքով  
իմ ամէն զգայութիւններս ուժ ու նո-  
րէն հոգի կառնեն, ու աս աշխրքիս մէջ  
քուկին սիրոյդ ճաշակը կըվայլեն, որն-  
որ դուն արքայութեան մէջ քուկին սի-  
րելի ծառաներուդ համար պահերես :

Աիրելի չչն իմ, եկուր եկուր, ես իմ  
սիրտս քեղի պատրաստելու ջանացի .

կը յուսամ, որ սրտիս Ա-ջը դրսէն ուրիշ  
բան մը չիկայ: Ի՞այլ թէ որ սրտիս վեր-  
նատունը ուղածիդ պէս զարդարված  
ընակարան չէ նէ, դուն յառաջ քու  
շնորհքովդ զարդարէ, ու անկից ետքը  
եկուր սիրելի համ, եկուր սիրտս մտիր.  
սիրտս քու սուրբ սրտիդ հետ միացնէր.  
ասկից ետքը մինչեւ յաւիտեանս յաւի-  
տենից ես քեզի հետ ըլլամ, դուն ալ  
իմ հետս ըլլաս, ամէն:

የኢትዮጵያ ስነመሬኑን በተመለከተው ከመጣዎች ይታረሙ

**Տէր**, աս ինչ մեծ շնորհք է ինձի, որ  
դուն երկնի և երկրի արարիւ ըլլալով  
մշղաւոր հոգւոյս անվայելուչ ու աղքատ  
բնակարանը գալու խոնարհեցար։ Խնչ-  
պէս կըլլայ զորովագութ փրկիւ իմ, որ  
անմեղ սերովբէներուն ու քերովբէնե-  
րուն չըրած բարերարութիւնդ՝ ինձի  
պէս ողորմելի մարդումը ըթիր, որ քու  
ճշմարիտ ու կենդանի սուրբ մարմինդ

Ճաշակեմ : Ես հողէ ստեղծած ու ոչնչէ  
դոյացած մահկանացու մարդ մի եմ՝ ան-  
թիւ անհամագր խեղճութեամբ լի . իսկ  
դուն ամէնակարող անսահման մեծու-  
թիւն ես :

Վարդ՝ իմ վրաս ինչ արժանաւոր բան  
դտար , որ քու անձառելի սիրովդ խո-  
նարհեցար ու ինծի եկար : Վհա տէր իմ ,  
ոչ նահապետներուն պէս կատարեալ  
հաւատդ ունիմ . ոչ յովհաննէս մլըրտ-  
շին պէս մաքրութիւն ունիմ . ոչ առա-  
քեայներուն պէս սէր ունիմ . ոչ ալ  
ուրիշ սուրբերուն պէս մեծ ջերմեռան-  
դութիւն ունիմ : Ուրիշ բան չէ տէր իմ ,  
մինակ քու անսահման դժութիւնդ ու  
ողօրմած ըլլալդ է . որ իմ անօրէն մեղքե-  
րուս յաւիտեան չիրարկանալովդ՝ քու  
անպատմելի ներողութեանդ շնորհքը  
ցըցուցիր , ու մարդասիրութիւնովդ մեղ-  
քերս ջնջեցիր , ու իս յաւիտենական դա-  
տապարտութենէ ազատելով երկնից  
արքայութեան ճամբան դրիր : Վսանկ  
խելքէ մոլքէ վեր ու մեծ շնորհքիդ հա-  
մար՝ ես քեզ ինչ կերպով օրհնեմ ու  
փառաբանեմ : Օրհնեալ ըլլաս տէր

յաւիտեանս յաւիտենից : Ծոլոր հրեշտակները ու ամէն ստեղծած բաներդինծի հետ մէկ ըստան, ու քեզ յաւիտեանս օրհնեն, գովեն, ու փառաւորեն : Տէր իմ, ուրիշ բան մը չունիմ, որ քու ըրած բարերարութիւններուդ տեղը քեզի փոխարէն հատուցանեմ. անոր համար սիրելի փրկիչ իմ, ես իս բոլորովին քեզի կուտամ կընծայեմ. ասկից ետքը յաւիտեան քուկդ եմ . ինչ որ կուզես՝ ինչպէս որ կուզես՝ ինծի անանկ ըրէ . ես ալ քեզ յաւիտեանս յաւիտենից կօրհնեմ, ամէն :

### ԱՅԼ առօլէք :

Ա հաւասիկ տէր իմ, չիգանեցար իմ անարժան սիրտս մանելու ու հոն բնակելու : Խնչ մեծ ու չիյուսալու շնորհքի արժանի եղայ . սիրտս քերովքէից աթոռ եղաւ, հոն բազմերէ իմ արարիչս ու փրկիչս, որ երկինքը հրեշտակները երկրուպագութիւն կընեն : Ալլսեմ որ կրզուրցես իմ հոգիիս, հոս քեզի եկած եմ քու ամէն խնդիրքդ կատարելու . խնդրէ իղմէ ինչ որ կուզես նէ :

Տեր իմ, ինչ բան կընամ խնդրել  
 քեզմէ, բայց եթէ այնպէս իս քու շնոր-  
 հացդ մեջը պահես, որ քեզ մեյ մ'ալ  
 չիկորսնցընեմ: Արխնդրեմ քեզմէ ինչ-  
 պէս որ կուրերը խնդրեցին, որ իմ հոգ-  
 ւոյս աշվըները բանաս. ու լոյս տաս ինծի,  
 որ աղեկ ճանչնամ, թէ որչափ չար է  
 քեզ վշտացընելը: Խմէ որ քեզի հետ  
 ավօրվելու ըլլամ, սիրտս ինչ հանդիսատ  
 կընայ ունենալ. ու կընայ իմ խիզճս  
 հանդարտեցընել: Որչափ անմտութիւն  
 գործերեմ քեզմէ հեռանալովս, քեզ  
 թող տալովս, ու սիրտս արարածական  
 բաներու հետ չափէ դուրս զբաղեցընե-  
 լովս: Վհա խոնարհութեամբ քու շնոր-  
 հաց աթոռիդ առջևը ինկած կընդրեմ  
 քեզմէ, որ ինծի աս շնորհքը ընես:  
 Դուն որ այնչափ իմ ետեկս պտրտե-  
 ցար, իմ խղճմտանքս այնչափ բարի աղ-  
 դեցութիւններով դրգեցիր, ու բախա-  
 ցար որ ես ալ զղջումի եկայ, ճանչցայ  
 իմ սխալանքս ու իմ վրաս քուկին ու-  
 նեցած անհուն գթութիւնդ. հիմա ալ  
 արժանի սեպեցիր ինծի հետ միանալը.

ու ուղեցիք, որ քեզմէ մասնաւոր շնորհք  
ալ խնդրեմ :

Այս տէր, քեզմէ՝ ի զատ ինչ խնդրեմ.  
քեզմէ աւելի սիրելի ուր գտնեմ. եր-  
բոր դուն քեզ բոլորովին ինձի տալէն  
ետքը՝ ինչ բանի կարօտութիւն կրնամ  
ունենալ : Այնչափ հիւանդներ՝ ցաւա-  
գարներ քու հանդերձիդ միայն դպչե-  
լով կըբժշկվէին . հիմա ևս նոյն իսկ  
բժշկութեան աղբիւրը սրտիս մէջը ու-  
նիմ . ամէն շնորհաց տէրը ինձի եկեր-  
է, ու երկնից արքայութիւնը իմ ներսս  
փոխադրվերէ : Ով անհասանելի ած-  
ային բարութիւն, ով անճառելի ողոր-  
մութիւն : Կաղաչնմ տէր իմ, կաղաչնմ,  
աս անպատմելի սէրս վրայէս մի պակ-  
սեցըներ . ու յաւիտեան իզմէ մի զատ-  
վիր, ու քեզ տեսնելու ալ իս արժանի  
ըրէ, ամէն :

Այս առաջնորդութիւն :

Ով մարդասէր Յա փրկիչ իմ, թող  
երկինք և երկիր քուկին անսահման  
դժութիւնդ ու ողորմութիւնդ դովեն .

ամէն մէկ սրտիս շարժումը քեզ անդադար օրհնեն . ամէն հոգւոյս կարողութիւնները քէնէ գոհանան : || Վլեմէս , որ դուն իմ աղքատ սրտիս բնակարանը այցելութեան եկար :

Վեղի հետ տէր իմ , չիքակվելու սիրոյ կապով իս կապէ . դուն ով բարեգութ փրկիչ իմ , քու սուրբ շնորհքիդ օծութիւնը հեղ իմ սրտիս վրայ . որ քու սուրբ սէրդ վառէ բորբոքէ իմ բոլոր հոգւոյս կարողութիւնները :

Ովանմեղ գառն այ , որ ինծի համար մեռար . քուկին արդիւնքդ իմ հոգւոյս աղտերը լըվայ , հին մարդը մեռցընէ , սիրտս նորոգէ , որ դուն մինակ յաւիտեան բնակիս :

Ով ուրախութիւն սրտիս , այսօր քուկին անարժան ծառայիդ հոգին ուրախացուր երկնային միսիթարութիւնովդ : Աիրտս քու սուրբ շնորհքիդ ցողովը ցողէ , ու պաղտըկէ . պարգևէ ինծի անշնորհքը , որ սուրբ ուրախութեամբ ու ներքին սիրով բորբոքած՝ արցունք թափելով միսիթարվիմ :

Ով սէր իմ յաւիտենական , որ իս

երբէք չես մօռնար . դուն իմ ետևէս  
ինկար , իս մնառեցիր , որպէս զի յաւի-  
տեան չիկորսըվլիմ . տուր ինծի սերով-  
քէներուն ու քերովքէներուն վառած  
սէրը , որ քուկին ողօրմութեանդ մար-  
դասիրութեանդ համար կարող ըլլամ  
արժանապէս գոհանալ :

Ո՞վ գթած չէն , իմ կուրութիւնս  
լուսաւորէ , որ քեղ ու քու սքանչելի  
սէրդ ճանչնամ . ու ամէն աշխարհային  
բաները քու սիրոյդ համար արհամար-  
հեմ : Իս քու սուրբ վերօքդ զօրացուր ,  
որ ոչ ոք իս քեղմէ բաժնելու կարող  
ըլլայ :

Ոիրելի փրկիչ իմ , տես հոգւոյս աղ-  
քատութիւնը , ու քուկին պարգևներովդ  
հարստցուր : Տուր ինծի քուկին խոնար-  
հութիւնդ , համբերութիւնդ , հնազան-  
դութիւնդ , հեղութիւնդ , ու սէրդ : Ես  
ամէն առաքինութիւնները սրտիս մէջը  
տպաւորէ տէր իմ , ու քուկին երկնային  
օրհնութիւնովդ իս լեցուր , որ բոլորո-  
վին քեղի արժանի ըլլամ :

## ԱՅԼ աղջկա :

Ով բարեգութ տէր իմ չչն պա , ի-  
րաւցընէ մեր մարդկասյին բնութենէն վեր  
է մեղի ըրած բարերարութիւնդ . ով  
կրնայ համարձակիլ որ աս ահեղ սուրբ  
խորհուրդիս մօտենայ . որովհետեւ աս  
խորհուրդը ընդունելու համար մեծ ար-  
ժանաւորութիւն պէտք է . իսկ ես ամէն  
կերպ արժանաւորութենէն զրկրված եմ :  
Ասկայն գիտեմ տէր ու կրխոստովանիմ ,  
որ մինակ քու ողորմութեանդ շնորհքն  
է : Իսյց գիտես ողորմած տէր իմ , որ  
ամէն կողմանէ տկար ըլլալովս՝ ես ին-  
քիրմէս կարող չեմ քեզի արժանաւոր  
պատիւ ու մեծարանք ընելու , անոր հա-  
մար կրինդրեմ տէր իմ չչն . իմ սրտիս  
քու ածային սուրբ սիրոյդ շնորհքը  
տուր , որ անով վառվիմ , բորբոքիմ ,  
հոգւովս ու մարմնովս իս քեզի հաճոյա-  
կան պատարագ մատուցանեմ :

Վհա տէր , քու ամենատես աչքիդ  
առջեր կեցերեմ , սրտիս ամէն մէկ կող-  
մը կըտեսնես . ու ինչ բանի կարօտ ըւ-

լալս դուն ինեւ աղէկ գիտես, որ աս  
աշխրքիս ճամբորդութեանը մէջը անոնց-  
մով արքայութիւն հասնելու կարող  
ըլլամ: Տէր, ոտվըներուս ուժ տուր,  
որ մեղքի ու դժոխքին ճամբէն փախչիմ,  
ու արդարութեան ճամբէն երթամ:  
‘Ձեռվըներուս զէնք տուր, որ չար սա-  
տանային փորձանքներուն յաղթեմ. ու  
բարի գործքերու ետևէ ըլլալով՝ հաճո-  
յական արդիւնքներ ժողվեմ: Ոիրտս  
ալ սատանային ցանած որոմներէն մաք-  
րէ, ու սուրբ պատուիրաններդ տնկէ  
սրտիս մէջը, որ միշտ քու կամքդ կա-  
տարելով՝ քեզի հաճոյ ըլլամ: Եկանձ-  
ներս ալ գոցէ, որ աս աշխրքիս խարե-  
րայ ձայները շիլսեն, ու սիրտս անոր  
խրատներուն ու սիրոյն շիդարձնեն:  
Ով տէր իմ ՀՅ, աշվըներուս ալ քու  
սուրբ երկիւղդ պահապան դիր, որ աս-  
կից ետքը ըրլայ թէ անվայել նայուած-  
ներու հետ ըլլան. ու անանկով ըրլայ  
թէ իմ սիրտս կամ ուրիշին սիրտը շա-  
րութիւնով մը վիրաւորեմ: Ա երջա-  
պէս տէր իմ, ինծի պէտք եղած բանե-  
րը դուն աւելի աղէկ գիտես. ահա ես

քուկդ եմ . դուն իմ յաւիտենական փրկութիւնս կուզես , ուստի դուն քու ուզածիդ պէս իս ճամբայ գիր , իս առաքինութիւնով ղարդարէ , որ քեզիհամելի ու սիրելի ըլլամ , ամէն :

### ԱՅԼ ԱՊՈՒՆ :

Անբաւ գոհութիւն կը մատուցանեմ ովտէր իմ ողորմած , որ քուկին անսահման բարութիւնդ ու ողորմութիւնդ իս շարժեցին , որ համարձակեցայ քեզի այցելութիւն ընելու , ու քեզ իմ սրտիս ընակարանը ընդունելու : Ով մարդասէր փրկիչ իմ , իմ սրտիս միսիթարութիւնը դուն ես , ու հոգւոյս կատարեալ խաղաղութիւնը : Խրաւցընէ թէ որ իմ անարժանութեանս նայելու ըլլամ , պէտք է որ՝ պէտրոս առաքեալին պէս ես ալ կանչեմ : Հեռու դնա իզմէ տէր իմ , ինչու որ ես մէկ մեղաւոր մարդ մը եմ : Ծայց ով փրկիչ իմ , թէ որ դուն իզմէ հեռանալու ըլլաս , ինչ կը լւայ իմ վիճակս (հալս) . ես որուն դիմեմ , ուսկից շնորհք խնդրեմ . ով կը լսայ իմ

սիրտս կատարեալ մխիթարել, ով իմ  
 աղքատութեանս օգնել: «Քեզմէ հրա-  
 ժարիլը դժոխքէն ծանր է . իսկ քեզի  
 հետ ըլլալը՝ արքայութիւն է . անոր հա-  
 մար ահիւ և դողութեամբ քեզի մերձե-  
 ցայ, ու խոնարհութեամբ սուրբ սեղանդ  
 զիմեցի: Վիտեմ որ շատ սիրելի է քեզի  
 սրտի մաքրութիւնը . դուն որ հաճեցար  
 այսօր իմ սիրտս ընակիլ, ու սուրբ մար-  
 մինդ և արիւնդ հիմա ինծի պարզեցիր.  
 դուն մաքրէ իմ սիրտս, ու քեզի ար-  
 ժանի ընակարան պատրաստէ: Խռող մի  
 տար՝ որ սիրտս անմաքուր ու երկրաւոր  
 սիրով վառվի. միայն քու սէրդ բորբոքի  
 իմ սրտիս մէջը: Խաւական ըլլայ անցած  
 ատենվան գործածներս, ինչ որ քեզի  
 դէմ ըրի նէ, դուն ներէ, քառէ, ու ալ  
 մի յիշեր. և ինծի ալ ուժ տուր, որ ես  
 ալ դանիս: Հիմա կիմանամ, որ որչափ  
 քաղցը է քեզ սիրելը, ու որչափ դառն  
 է քեզմէ բաժնըվիլը: Խէ՞ որ իմ աչ-  
 քիս կաթիլ մը արցունք պարզեցիր ըլ-  
 լայիր. որ սրտանց լայի քեզ վշտացընե-  
 լուս համար, ինծի մէծ մխիթարութիւն  
 կըսեպէի. թէ՞ որ լալը մինակ ատչափ մխի-

թարական է . անանկ է նե ինչ անպատ-  
 մելի ուրախութիւն կրլայ ինծի , երբոր  
 կարող ըլլայ սիրտս ուրախանալ քեզի  
 հաճոյ ըլլալուս համար : Դուն արժանի  
 բրիր իս աս երջանիկ բոպէին . մեծապէս  
 շնորհակալ եմ տէր , որ ինծի լոյս տը-  
 վիր ճանչնալու իմ անցեալ թշուառու-  
 թիւնս , ու քեզ կորսնցընելուս համար  
 զդջալու : Եակ դուն իսկ եկար իմ սիրտս  
 բնակեցար , որպէս զի դուն իս սիրես ,  
 ու ես ալ քեզ : Ա հաւասիկ իմ բոլոր  
 ուրախութիւնս՝ի յիս է . արքայութիւնը  
 ու յաւիտենական կեանքը իմ սրտիս մե-  
 ջը կըկրեմ , ածսու իմ ամէն բանս : Դուն  
 շնորհէ , որ քեզ սրտիս միիթարու-  
 թիւնը միշտ ինծի հետ ունենամ . ար-  
 թընցուր իմ թմրած սիրտս , ու քու երկ-  
 նային սիրովդ բորբոքէ . աչքս ալ լուսա-  
 ւորէ , որ աս ահաւոր խորհուրդիս կարող  
 ըլլամ նայիլ . ու ինծի զօրութիւն տուր ,  
 որ աներկրայ հաւատով հաւտամ , որ  
 աս հրաշալի հաղորդութեան խորհուր-  
 դիս մեջը՝ դու նոյն ինքն չչ ՞ որդի  
 այ բոլոր ածութիւնովդ ու մարդկու-  
 թիւնովդ ճշմարտապէս ու կատարելա-

պէս կըդտնըլիս : Տօւր ինծի փրկիչ իմ  
ան եռանդը, որնոր քու սիրելի ծառա-  
ներդ ունեցան, մանաւանդ քու ամենա-  
սուրբ մայրդ, ու մեր ամենեցուն միջնորդը  
ու բարեխօսը, երբոր իրեն հրեշտակը  
տեսեց, որ դուն պիտի մարմին առնէիր :  
Ալբաղձամ ես ալ այնպիսի եռանդեամբ  
քեզ ընդունել, ու աս աշխարիս մէջ միշտ  
քեզի հաճոյ ըլլալով անդիի աշխարիս  
դէմ առ դէմ տեսնըլիլ . ու յաւիտեանս  
յաւիտենից զմայլելով քեզ փառաբա-  
նել, ամեն :

### ՎԱԼ աղօթե :

Թէ որ թագաւոր մը ուզելու ըլլայ աղ-  
քատի մը տուն սյցելութիւն ընել, ան  
աղքատը ուր կրնար նստեցընել թագա-  
ւորը . ինչ կրնար առջեր հանել, կամ  
ինչպէս կրնար թագաւորի արժանի պա-  
տիւ մը ընել : Հիմա իմ աղքատ հո-  
գիս ալ ընդունեցաւ՝ չէ թէ երկրաւոր  
թագաւոր մը, հապա թագաւորաց թա-  
գաւորը, ամեն բանի տէրը ու արարիչը .  
ու չեմ գիտեր՝ թէ քուկին առջիդ ինչ

պիտի հանեմ . կամ ինչպէս պիտի կարող ըլլամ արժանապէս քեզ պատռել : Դու տէր իմ դիտես իմ աղքատութիւնս , քեզի ընծայ տալու ուրիշ բան չունիմ , բայց եթէ իմ աղքատութիւնս իմ կամքս : Դուն քեզ բոլորովին ինծի տրվիր . ու կուղես որ ես ալ իս բոլորովին քեզի տամ : Ենոր համար իմ զգայութիւններս քեզի կընըվիրեմ , ու ուրիշ բանի համար չեմ բանեցըներ , բայց եթէ քու հաճոյքդ աս աշխրքիս մշջ կատարելու : Ո՞ր աշխրքիս ուրախութիւնը կամ զբօսանքը անանկ կընայ մարդուն սիրտը բանալ , ինչպէս ան հոգեոր զբվարձութիւնը , որնոր դուն կըպարդեես սիրելի ծառաներուդ քուկին ամենասուրբ հաճոյքդ կատարելնուն համար :

Կըմատուցանեմ քեզի նաև բոլոր հոգւոյս ու մարմնոյս կարողութիւնները , ու գլխաւորաբար կամքը , որ ամենեին քեզի հպատակը ըլլայ . իմ յիշողութիւնս ուրիշ բանի ինծի շիծառայէ , բայց եթէ քուկին ինծի ըրած երախտիքդ՝ ու ցըցուցած սէրդ յիշեցընելու : Ո՞իտքս ուրիշ բան չիմտածէ , բայց եթէ քուկին

անսահմանելի կատարելութիւնըդ , որ  
անդադար ինծի բարիքներ կըշնորհես :  
Կամքս ուրիշ բանի համար ինծի չիծա-  
ռայէ , բայց եթէ քեզ մինակ ածս ու  
փրկիչըս ամէն բանէն աւելի սիրէ , ու  
քուկին ածային արդար կամացդ միշտ  
համաձայնի : Այսպիսի հաստատուն ա-  
ռաջադրութեամբ իս ու բոլոր ունեցածս  
քեզի կրմատուցանեմ ով փրկիչ իմ , ըն-  
դունէ իմին դրսի ու ներսի զգայարանք-  
ներս , իմ խորհուրդս , բաղձանքս , յօ-  
ժարութիւնս , աղատութիւնս , ու ամէն  
մարմնոյս անդամները , ու հոգւոյս կա-  
րողութիւնները , իբրև մէկ ընծայ մը ,  
որնոր ինքիրէն բան մը չէ , բայց զօրու-  
թեամբ քուկին արդիւնքներուդ , քեզի  
հաճոյ ու ընդունելի է :

Ինդունէ տէր իմ աս մեղաւորին ող-  
ջակէզը . խրկէ երկինքէն իմ վրաս սուրբ  
հոգւոյն անշիջաննելի սիրոյ կրակը , որ  
վառէ , սրբէ , ու քառէ աս ընծայովս ինչ  
որ անհաճոյ է քուկին ամենասուրբ աչ-  
վըներուդ . որպէս զի աս օրվընէ ետքը  
ևս բոլորովին քուկդ ըլլամ , ու միշտ  
քու կամքդ կատարեմ :

Ով ամէնօրհնեալ սրբուհի կոյս Անա-  
րիամ, կաղաչեմ, որ աս իմ անարժան  
ընծաս քուկին արժանաւոր ձեռքովդ  
ամենասուրբ երրորդութեան առջեր հա-  
նես: Դուն բարեխօս եղիր, որ աս ըն-  
ծաս ընդունելի ըւպայ. ու ինծի համար  
շնորհք ալ խնդրէ, որպէս զի տկարու-  
թիւնս զօրանայ, որ կարող ըւպամ մինչև  
ետքի շունչս պայ հաւատարիմ գըտնըվիլ,  
ամէն:

### Առաջնա:

**Գ**ոհացայց զքէն տէր՝ բոլորով սրտիւ  
իմով պատմեցից զամենայն պանչե-  
լիս քո:

**Ուրախ եղէց և ցնծացայց** 'ի քեզ. սաղ-  
մոս ասացից անուան տեառն բարձ-  
րելոյ:

**Խոստովան եղէց քեզ տէր**, զի լուար  
ինձ, և եղեր ինձ 'ի փրկութիւն:

**Ես յօր է զոր արար տէր**, եկայք ցնծաս-  
ցուք և ուրախ եղիցուք 'ի սմա:

**Եծ իմ ես դու**, և խոստովան եղէց  
քեզ. ած իմ ես դու՝ և բարձր ա-  
րարից զքեզ:

Յաւիտեան ոչ մոռացայց զարդարութիւնս քո զի նորօք կեցուցեր զիս :

### ԵՐԿԻ :

Ձագաւորն արարածոց՝ զհացն կենաց ետ քաղցելոց . և զբաժակն ուրախարար՝ որք յադամնյ տրտմեցելոց . այս նոր ուխտ է իմոյ արեան՝ փոխան հնոյ ուխտին արեանց . զոր յիշատակ իմ առնիցէք մինչև եկից ես միւսանգամ : Ճառ զովեալքս 'ի քէն հայցեմք՝ ընդ ժողովեալ մետասանին . յոր զկենարարոդ քո մարմին՝ բաշխեալ ետուր ընդ բաժակին . շնորհեսի և մեղ տէր ընդ նոսին՝ հաղորդ լինիլ քում սեղանին . կենաց հացիդ՝ յոր փափագիմք՝ և ըմպելուսդ ում ծարաւիմք :

### ԵՎԼ առջելու :

ԱՌ տէր , ինչպէս կրւար , որ քեզ մինակուկ գտնայի , բոլոր սիրտս քեզի բանայի , ու քեզմով զմայլէի , ինչպէս որ սիրտս կը փափագի , անանկ որ անկից ետ-

քը մարդ մը իս շանարգէր, ու ամենենին ստեղծուած մ'ալ իս շիշարժէր, կամ բնաւին ինծի շինայէր. այլ մինակ դուն հետս խօսէիր, ես ալ քեզի հետ խօսէի. ինչպէս որ սիրելին սիրելիի հետ կըխօսի՝ ու բարեկամը բարեկամի հետ կապրի։ Աս կաղաչեմ, ու ասոր կըբաղձամ, որ բոլորովին քեզի հետ միաւորվիմ, սիրտս ամէն արարածական բաներէն ետ դարձընեմ, ու սուրբ հաղորդութիւնը առնելով քանի կերթամ նէ՛ երկնաւոր մտածութիւններուն անուշ համը սրտիս մէջ զգամ։

**Տէր,** երբ պիտի ըստայ, որ բոլորովին քեզի հետ մէկ ըստամ, ու ես իս բոլորովին մոռնամ։ **Տէր** շնորհք ըրէ, որ դուն քովըս ըլլաս, ես ալ քովըդ ըլլամ. ու անանկով միատեղ մնանք։

**Տէր,** բիւր հաղար սիրելիններուն մէջէն ընտրոված սիրելի դուն ես. կուզեմ որ՝ բոլոր կեանքիս մէջը քու քովըդ բնակիմ։ Խմ խաղաղարարս դուն ես. ամենակատար խաղաղութիւնը, ու ճշմարիտ հանգիստը քու քովըդ է. քէնէ դուրս աշխատանք՝ ցաւ՝ ու խիստ մէծ

ողորմելութիւն է : Դաւն ծածկրված ած  
ես . ու ամբարիշտներուն հետ բան  
գործ չունիս , խոնարհներուն ու պար-  
զամիտներուն հետ կը խօսակցիս : Այս  
տէր , քու հոգիդ ինչ անուշ հոգի է .  
որ քու անուշութիւնդ զաւկըներուդ  
ցըցունելու համար՝ երկինքէն ինջած  
հրեշտակային հացով զիրենք կը կերակ-  
րես : Աս ինչ անպատմելի շնորհք է ,  
առ ինչ զարմանալի խոնարհութիւն է ,  
առ ինչ անհուն սէր է . որ մարդոց  
եղաւ : Իսայց առ մեծ շնորհքիս ու սի-  
րոյս համար իմ տիրոջս ինչ հատուցում  
ընեմ : Ուրիշ հաճոյական բան մը չու-  
նիմ տիրոջս ընծայելու , մինակ բոլոր իմ  
սիրտս կատարեալ իրեն հետ կը միաւո-  
րեմ : Ահա միայն բաղձանքս աս է ,  
որ սիրտս քեզի հետ միաւորի , ամէն :

Եղանակ այս համար բարեկ բահուածու հա-  
պարտութեանին էաւը:

Աղօրմած փրկիչ իմ Յա, աս աշխարքիւ  
վրայ մեր կեանքը ինչ է. բայց եթէ  
խոտ մը կամ ծաղիկ մը, որ այսօր կը-

բուսնի կըքացվի. մէյմ'ալ վաղը կըթոռ-  
 մի ու կըշորնայ. Արդ ասանկ կեանք մը  
 ունենալէս ետքը, ես իմ յոյսս իմ կեան-  
 քիս վրայ ինչպէս դնեմ. ահա մարդ  
 մը չիկայ, որ մինակ օր մը ապրելուս հա-  
 մար ինծի խօսք տայ: Ով կընայ տէր  
 իմ քու յաւիտենական վճոիդ խելք  
 հասցընել ու գիտնալ՝ թէ որ մարդուն  
 վախճանը երբ պիտի ըլլայ: Ասոր հա-  
 մար տէր իմ, կարելի է՝ որ աս ետքի  
 անգամը ըլլայ, որ իմ արժանաւորու-  
 թենէս դուրս քեզ իմ աղքատ սրտիս  
 ընակարանը հրամցուցի. ու քու սուրբ  
 անմահ մարմինդ ճաշակեցի: Կըպաղա-  
 տիմ քեզի, ու կաղաչեմ բարի չչա, որ  
 աս սուրբ հաղորդութիւնը որ առի, վեր-  
 ջին թոշակի տեղ առած ըլլամ: Դուն  
 ով ողորմած տէր, քու անչափ ողոր-  
 մութեամբդ ինծի ճամբու պաշար (նա-  
 վալէ) եղիր. մինչև կեանքիս ետքը շուն-  
 չը իս պահէ, ինէ մի ղատվիր, ու ձեռքդ  
 վրայէս մի վերցըներ: Յիշէ տէր իմ,  
 որ դուն ըսիր, թէ ով որ իմ մարմինս  
 կըճաշակէ՝ յաւիտեան կեանք կունենայ:  
 Աստանային ալ սաստէ, որ ասկից ետքը

ինչուկ որ մեռնիմ նէ՝ իմ քովոս չիմօ-  
տենայ . ինչու որ ես իս քեզի տրմի , ու  
յոյսս բոլորովին քու վրադ դրի . ու գուն  
ալ քու ձեռքովդ իմ վրաս խաչակնքէ ,  
թէ որ նենդութիւնովը վրաս վաղե-  
լու համարձակի նէ , քու ողորմած ձեռ-  
քիդ դաղտնի ածային դօրութեամբը ա-  
մրչնալով քովէս հալածվի : Ասկից ետ-  
քը՝ քիչ ապրիմ շատ ապրիմ , դուն  
փրկիչ իմ Քա միշտ իմ հետս եղիք .  
որ մեռնելու ատենս ալ հոգիս քովկին  
ձեռքդ աւանդելու կարող ըլլամ . ու  
դուն ալ տէր իմ , քու դժած ու անուշ  
նայուածքովդ իս մսիթարես . ու երկ-  
նային արքայութեան մէջ արդարներուն  
հետ իս դասես , որ անոնց հետ միատեղ  
քեզ յաւիտեանս յաւիտենից օրհնեմ  
ու փառաւորեմ , ամէն :

Աղօնք յէշտական չարչականաց՝ Պատէ :

Ով պատուական արիւն Պատէ , որ սաս-  
տիկ նեղութենէն ու տրտմութենէ հոգ-  
ւոյն քրտինքով թափվեցար բովանդակ  
մարմնոյն . ուրախ եմ որ աս անմահա-

բար բաժակին մէջ կատարելապէս ամ-  
փոփլած ես, ու ամէն հաւատացելոց  
երկրագութիւն կընդունիս: Ի՞հա երե-  
սի վրայ գետինը ինկած խռնարհու-  
թեամբ քեղի կերկրագանեմ ու կօրհ-  
նեմ: կաղաչեմ քեղի ով արիւն չ'սի,  
որ իս յաւիտենական նեղութենէն ու  
տրտմութենէն աղատես, որ մեղքերուս  
համար բիւր անգամ արժանի եղայ:

Ով հրաշալի մարմին չ'սի, որ ան-  
գութ զինվորներուն ձեռքը անչափ նա-  
խատինք ու չարչարանք քաշեցիր: դրւ-  
խէն մինչեւ ոտքդ ողջ տեղ մը չէր մնա-  
ցեր, բոլոր ցաւերու մէջ ինկած էիր:  
հիմա աս սուրբ սեղանիս վրայ քեզ  
կրպաշտենք, ու կըյարգենք, որ աշխրր-  
քիս մեղաց քաւութեան ու թողութեան  
համար կըբաշխըլիս:

Ով աղնիւ բաժակ տեառն իմոյ չ'սի  
ան պատուական արիւնով լցված, որ-  
նոր իմ փրկիս խիստ ծեծին տակը վի-  
րաւորեալ մարմնէն թափեց: նաև ան  
անդին արիւնով՝ որնոր ածային դլուխը  
փուշերով խոցված ատենը թափվեցաւ:  
կաղաչեմ տէր իմ: լովա ու սրբէ իս

աս ածային արեան հեղեղովը, որ բոլորովին քուկին սիրովդ բորբոքիմ, որ իմ սիրոյս համար այնչափ սաստիկ ցաւերով թափվեցար :

Ո՞վ երկնային հաց հրեշտակաց, որ դուն խաչիւ հնձվեցար, ու քուկին մահուամբդ բոլոր աշխարհնք լիացուցիր շընորհօք, արժանի ըրէիս այսօր քու չարչարանքիդ արդիւնքը վայելելու 'ի կեցութիւն հոգւոյ իմոյ :

Ո՞վ ամենասիրելի Է՞ս, որ աս սրբազն բաժակին մէջը քուկին սուրբ արիւնդ դըրիր, որնոր խաչին վրայ գամված ատենդ ածային ձեռքերէդ ու ոտվըներէդ աղբիւրի պէս վաղցուցիր : Աս պատուական արիւնովդ կըխնդրեմ տէր իմ հոգւոյս աղտոտութիւնը մաքրես, որ հինգ զգայարանօքս քու սուրբ պատուիրաններուդ դէմ գործերեմ, ու շնորհք ալ տաս ինծի, որ աս փրկաւէտ բաժակիը սրբութեամբ ու արժանապէս ընդունիմ, ու սուրբ չարչարանքներուդ յիշատակը յաւիտեան շիմոնամ :

Ո՞վ անմեղ խոցված կողին Է՞սի, ով խորք ածային ողորմութեան, իս մէջըդ

պահէ, ու վիրաւորեալ սրտիդ մէջ տեղի  
տուր ինծի՝ որ յաւիտեանս քեզմէ չի-  
բաժնըիմ:

Ա և ՀՅ, ընդունէ աս ետքի աղա-  
շանքս ալ, որ սուրբ գերեզմանիդ վրայ  
ինկած լալով կըպաղատիմ: Ով խա-  
չեցեալ տէր իմ և ած իմ, սրբէ աս իմ  
հոգւոյս գերեզմանը, ուր որ քուկին ան-  
ճառելի խոնարհութեամբ մտար. որ-  
պէս զի որչափ որ հոն կըկենասնէ՝ քե-  
զի արժանաւոր բնակարան ըլլայ: Եւ  
ինչպէս որ արիմաթեան վիմափոր գե-  
րեզմանին մէջը ուրիշ հիշ մէկը չիմը-  
տաւ՝ ոչ առաջ և ոչ ետքը, ասանկ ալ  
կաղաչեմ ով ողորմած ՀՅ, որ իմ սրբ-  
տիս գերեզմանը ասկից ետքը հիշ մէ-  
կը չիմտնայ, ու չապականէ. այլ սուրբ  
ունոր պահէ տէր իմ միայն քեզի հա-  
մար՚ի փառս անուան քո՚ի յաւիտեան,  
ամէն:





ԱՊՈՔ  
ՏԵՐԱՎԵՐԱԿԱՆ ՏԾՈՒԻՑ  
ԵՒ ՍՈՒՐԲԱ :

Դ առնի ձննուեան բան :

Ով ածային սիրուն մանուկ, ահա հաւատոյ աչքովս կըտեսնամ զքեզ այսօր անշուք այրի մէջ ծնած, խանձարուրով անբաններուն մսուրը դրված։ Կըմերձենամ ես ալ անմեղ հովիւներու հետքեղի երկրպագութիւն ընելու։ Ով անհասաննելի բանդ ած, աս ինչ խեղճ կերպարանք մտերես։ Երկինքը սերովթէները ու քերովթէները դողալով համարձակ երեսդ նայելու չէին իշխեր, մարդիկ քեզ թողուցերեն, հիշ մէկը քեզ չէ ընդունած։ անոր համար դացեր անբանկենդանիներու ախոռի մը մէջ անանկ աղքատօրէն ծներես։ ու մսուրը պառ

կեր ան ցուրտ ատենը՝ մարդոց կուրութեան ու ապերախտութեան վրայ կուլս։ Յէ-բնի էին, և է-բնի պնտ ու ընկուլս։

Ով ցանկալի մանուկ չէ, ահա ամէն բանէն աւելի սիրտս քեզի կըբաղձայ, ու քեզ կուզէ։ Եկուր տէր իմ չէ, քու շնորհօքդ իմ սրտիս մէջը ծնիր։ Խեղէտ խիստ անզարդ ու անվայելուչ է սրտիս բնակարանը, ու քեզ ընդունելու արժանաւոր տեղ մը չունիմ։ բայց տէր իմ, աշխարհային բաներէն բոլորովին պարագ է, մէջը ուրիշ բան չես գտնար, միայն քեզի համար պատրաստած այր (մաղարա) մը։ Կուն քու երկնային շնորհքներովդ մէջը զարդարէ, ու սուրբ սիրովդ վառէ բորբոքէ սիրտս, որ ամէն սիրոյ պաղութիւնները վերնան, որ շըլլայ թէ քուկին դալստեանդ արգել մը դնեն։ Ծնդարձակէ լեզուս, որ այսօր հրեշտակներուն հետ քեզ փառաբանեմ։ Քեզի փառք տամ։ Փառք ՚ի բարձունս այ։ Հաղար փառք ու գոհութիւն քեզի փրկիշ իմ չէ, որ իմ փրկութեանս համար երկինքէն ինջար,

մարմին առիր,ու աղքատ ախոռի մը մէջ  
ծնար :

Վհա երջանիկ սյրին մէջ սուրբ մը  
սուրիդ առջին գետնի վրայ ինկած՝ կա-  
ղաչեմ քեզի ամենասիրելի մանուկ է յա,  
անուշ աւմբներովդ մէյմը ինծի նայէ,  
ու միսիթարէ սիրտս : Տուր ինծի ան ե-  
ռանդը, որնոր ունէր ամենասուրբ մայրդ  
ու սուրբ յովսէփը երբոր քեզ կրտես-  
նէին մասուրի մէջ իրենց առջին : Տուր  
ինծի ան սուրբ միամտութիւնը երջանիկ  
հովիւներուն, որ ես ալ քեզ զտնելու,  
քեզ տեսնելու արքայութեան մէջ ար-  
ժանի ըլլամ, ամեն :

Հ պահան :

՚Ի հօրէ ծագեցար լուսաւորել զարա-  
րածս . արդարութեան արեգակն տէր  
փառք քեզ : ՚Օ՞նար ՚ի յայրին ընծայ-  
եցար բեթլէհէմ . արդարութեան արե-  
գակն տէր փառք քեզ :

՚Ե՞՞ պահէ :

Վհա գետինը ինկած խոնարհութեամբ  
կերկրապաղանեմ քեզի ով ամենակալող

ած իմ, ու անրառ գոհութիւն ու օրհնութիւն կը մատուցանեմ քուկին անթիւ անհամար ըրած բարերարութիւններուդ համար, որ իս իմ արժանաւորութենէս դուրս ամէն կերպ հոգւոյ լումարմնոյ փորձանքներէն անվնաս պահելով՝ ողջ առողջ հասցուցիր ասնոր տարեգլխուս։ Հաղար փառք քեզի ողօրմած ած իմ, որ գթած հօր պէս քու ողօրմութիւնդ վրայէս պակաս չըրիր. թէ պէտ ես շատ անգամ ապերախտ գտնը վեցայ քեզի, բայց դուն իմ անդգամութեանս ներեցիր։ (Օր մը չիտեսայ՝ որ քեզմէ մասնաւոր դանաղան բարիքներ չընդունիմ. բայց ես օր մը գոնէ քեզի արժանապէս չիծառայեցի։ Դուն իս տնկեցիր սուրբ եկեղեցւոյ մէջ, ու ամէն հարկաւոր հոգը տարիր։ Ի՞ուկին սուրբ աղդեցութիւններդ անպակաս դրդեցին իմ խղճմտանքս. հոգւոյն սրբաց շնորհքներովը մոքիս խաւարը լուսաւորեցիր, ու իմ հոգևոր հօրերուն խրատներովը շատ անգամ իս քեզի կանչեցիր. որ չըլայ թէ յաւիտեանս կորսըմիմ։

Արխոստովանիմ տէր իմ, որ բաւական պտուղ չունիմ քու ածութեանդ առջին հանելու, ու քեզի ընծայ մատուցանելու: Տժէ որ իզմէ խիստ համար պահանջելու ըլլաս, ինչ կըլլայ իմ բանս: Խրաւցընէ արժանի եմ, որ ան սոսկալի վճիռը ինծի համար ալ զրուցես: Թէ կտրեցէք առ ծառը, ինչու համար պարագ տեղ երկիրը կըլսափանէ իմ հողմոր պարտեզիս մէջ:

Իայց գիտեմ տէր, որ դուն երկայնամիտ ես ու բազումողորմ, ըրածներուս կըհամբերես ու թողութիւն ալ կընես. ինչու որ աւելի կուղես՝ որ ես գառնամ, քան թէ կորսըվիմ: Ահա սուրբ կոյս Ածածնայ բարեխօսութեամբը հաստատ կառաջադրեմ ու կըլսոստանամ, որ բոլոր աս նոր տարին ջանամ մեղքէ զգուշանալ, ու բարի ապրիլ: Դուն ողորմած տէր, թափէ երկինքէն իմ վրաս ամէն երկնային օրհնութիւնները. Հոգւոյն սրբոյ շնորհքովը իս լեցուր, ու օրհնաբանեալ սուրբ կոյս տիրամօր պաշտպանութիւնը շնորհէ ինծի, որ բոլը տարին 'ի փառս քո անցընեմ:

Ը արտիան :

'Ի քեզ եմք ապաւինեալ 'Բահի մայր  
այ մերոյ : Որ քան զարեգակն պայծա-  
ռագոյն Անրիամ , մի դաղարիր բարե-  
խօսել վասն մեր , 'Բահի մայր այ մերոյ :

'Ե առնէ անսանեադըստ լեռն չընէ :

Ով երկրապագելի քաղցր անուն չընի ,  
ով ամենասիրելի չըն , ահա խոնարհու-  
թեամբ սրտի երեսի վրայ ինկած եր-  
կըրապագութիւն կընեմ քեզի , ու սրտանց  
կընոստովանիմ , թէ դուն ես տէր իմ  
Չըն՝ մեր ճշմարիտ փրկիչը : Ով ահաւոր  
անուն , ով բաղձալի չըն , աս սուրբ  
փրկիչ անունովդ մեզ ամեն փորձանիք-  
ներէն խալըսէ . դուն յուսահատած հո-  
գիներու քաջալերութիւն , դուն ցաւա-  
զին սրտերու մխիթարութիւն , դուն մե-  
զաւորներու փրկութիւն : Կըրաղատիմ  
քեզի դէմ ով բարի չըն , որ այսօրվան  
թափած պատուական արիւնովդ մեղքե-  
րուս աղտեղութիւնը մաքրես , ու քու

սուրբ անուանդղօրութիւնը վրայէս անպակաս ընեն :

‘Խուն խոստացար տէր իմ ՀՅ, թէ  
ինչ որ քու սուրբ անունովդ խնդրելու<sup>1</sup>  
ըլլանք անտարակոյս ընդունինք : Կա-  
զաշեմ քեզի միջնորդութեամբ ամենա-  
սուրբ մօրդ, ամեն մեղքի առիթներէն  
իս պահէ, ու ամեն փորձանքներէն իս  
ազատէ . ու մասնաւոր շնորհք ալ տուր,  
որ չար կիրքերս մեկդի ձգելով առա-  
քինութիւններու ետևէ ըլլամ, բարի  
ապրիմ : Բայց ամեն բանէն աւելի աս  
շնորհքը կըխնդրեմ քեզմէ ով փրկիչ  
իմ ՀՅ, որ մեռնելու ատենս աս սուրբ  
անունդ մխիթարութիւն ըլլայ ինծի, ու  
ան ետքի նեղութեանս ատենը իս դժո-  
խային թշնամիններուս ձեռքէն փրկէ, ու  
օգնութիւն հասիր ինծի, որ ըլլայ թէ  
զերի ըլլամ անսնց : Ավ քաղցր ՀՅ,  
աս սուրբ անունդ միշտ բերնէս անպա-  
կաս ըլլայ . ու մեռած ատենս ալ աս  
ըլլայ ետքի խօսքը . ՀՅ, ՀՅ, ՀՅ, իմ  
հոգիս քեզի կըյանձնեմ, ամեն :

## ԵՐԻ :

Այս անուն է իսուս . սիրով քով ճըմ-  
լեա . սիրտիմ քարեղեն : Ա ասն գթու-  
թեան . վասն ողօրմութեան . վերստին  
կեցու :

Դ առնել յայտնութեան :

Վարդասէր փրկիչ իմ հայ ԿԸ , թէ-  
պէտ աղքատութեամբ ծնանելով շատ  
խոնարհ կերպարանք մտար . բայց քու  
ածութեանդ լոյսը մինչև հեթանոսները  
լուսաւորեց : Այսօր յայտնեցիր զքեզ  
ած ամենահայ ան երեք թագաւորինե-  
րուն , որ քու ծննդեանդ լուսաւոր աստ-  
ղը տեսնելով հեռու տեղերէ , եկան քե-  
զի երկրպագութիւն ըրին : Ով տէր ,  
ես որ քրիստոնեայ ծնած եմ , ու սուրբ  
եկեղեցւոյ մէջ մէծցած , աս թագաւոր-  
ներէն շատ վար մնացի : Անոնք իրենց  
կեանքերնին վտանգի մէջ դրին . իրենց  
աշխարհքը թողուցին , ու ան հեռու  
ճամբորդութեամբ քեզ ճշմարիտ թա-  
գաւորդ կըմինտուէին , ու քու տեսոյդ  
կարօտ էին . իսկ ես այսչափ տարի զա-

նազան երեելի տօներու օրեր, որ միշտ  
ամէն տեղ քու փրկագործ խորհօւրդ-  
ներդ կըքարողվին՝ ամենեին քեղ միտքս  
չիբերի, քեղի չիդիմեցի, ու քեղմէ լոյս  
չիխնդրեցի: Հիմա ինչ երեսով քու  
առջիդ ելլեմ ով սիրուն մանուկ է Յա,   
ու քեղի ինչ արժանաւոր ընծայ մա-  
տուցանեմ: Առնիմ տէր, ան երեք  
թագաւորներուն պէս ոսկի. այսինքն՝ ա-  
ռաքինական գործքեր քեղի ընծայելու.  
չունիմ կնդրուկ. այսինքն՝ անուշահոտ  
աղօթքներ քու առջիդ հանելու. չունիմ  
զմուռս. այսինքն՝ զանազան մահացուց-  
մունքներ քեղի պարզեցնու. անոր հա-  
մար մինչև հիմա ինձի չիյայտնրվեցար.  
իղմէ պատկառելի երեսգ ծածկեցիր, որ  
եսալ ասխեղճութեան մէջ մնացի: Իսյց  
հիմա կըճանչնամ իմ ողորմելութիւնս,  
քեղի կըդիմեմ, քու փափաքելի տե-  
սոյդ կըկարօտիմ:

Տէր իմ Յա, չեմ խնդրեր լուսաւոր  
աստղին առաջնօրգութիւնը քեղ գըտ-  
նելու համար. հազար կըխնդրեմ քու  
գթած մօրդ բարեխօսութիւնը: Ով  
քաղցրագութ սուրբ Վածարին, քեղի

կաղաչեմ, դուն ինծի միջնորդ եղիք քու  
սիրելի որդւոյդ առջին, ու դուն մայ-  
րենի գթովդ առաջնորդէ ինծի, որ եւ  
ալ արքայութեան մէջ Հնը տեսնելու  
արժանի ըլլամ, ամէն:

Ը պահեան:

'Ի բեթլէհէմ հրեաստանի երեխ ար-  
դարութեան արեգակն, այսօր երկրը-  
պագի անեղն յարեելից եկեալ մոգուցն.  
և փառարանի յերջանիկ 'ի բացօթեայ  
հովուացն:

'Ի առնէ Արքայութեան:

Բաւական չեղաւ տէր իմ, որ ինծի հա-  
մար մարմին առիր, ողորմելի այրի մը  
մէջ ծնար. ահա այսօր անձառելի խո-  
նարհութեամբ մեղաւորի մը պէս դացիր  
յորդանան գետը, ու քու ծառայէդ  
մլլրտվիլ ուղեցիր. որպէս զի բոլոր ար-  
դարութեան պարտքը լեցունես: Այ-  
կրտեցար ով փրոկիչ իմ Հն, չէ թէ  
մաքրութեան կարօտ էիր, հապա իմ  
մէղքերուս աղտոտութիւնը մաքրես, ու  
դարձեալ շնորհօքդ իս սրբես:

Անր առջի հօր աղամայ մեղօքը՝ ըս-  
կըզբնական արդարութիւնը կորսնցու-  
ցինք, ու քու երկնաւոր հօրդ թշնամի  
եղած էինք . իսկ դու տէր իմ աս մկրր-  
տութեան սուրբ խորհրդովը մեղ նորէն  
երկնաւոր հօրդ հետ հաշտեցուցիր, ու  
որդիք այ կոչվելու մեղ արժանի ըրիր :  
Ով տէր, այսչափ ըրած բարերարու-  
թիւններուդ համար ես միշտ պարտըկան  
եմ քեզ օրհնելու ու փառաւորելու :  
Հաւատով կերկրապատանեմ քեզի ով  
ած իմ չի, ու կըխոստովանիմ քեզ միա-  
ծին որդի այ . ինչպէս որ այսօր մկրրտ-  
վելու ատենը հոգին սուրբ աղաւնակերպ  
տեսլեամբ երկինքէն վկայեց :

Կաղաչեմ քեզի ով ողորմած փըր-  
կիչ իմ, աս հրաշափառ օրըս դուն խրկէ  
իմ վրաս հոգւոյն սրբոյ շնորհքը, ու  
լովա, մաքրէ հոգւոյս աղտոտութիւն-  
ները, որ սուրբ մկրտութենէ ետև մե-  
ղանչելով բիւրանգամ աղտեղեցի : Գի-  
տեմ տէր, որ իս մաքրելու համար ջուր  
չես մինտոեր, աչքիս արցունքը կուղես-  
րայց տէր իմ, ատ շնորհքը տալն ալ-  
քու ձեռքդ է . տուր աչքըներուս աղ-

բիւրի պէս արցունք, որ անով հոգիս  
լըվամ ու սրբեմ : Խէ որ շնորհօք ար-  
դարանալու արժանի չեմ, արցունքովս  
կըբաղձամ մաքրրվիլ : Թէ ոչ շնորհօք,  
այլ արտասուօք : Խէ տէր իմ աղա-  
շանքիս ձայնը, ու տուր ինծի այսօր սուրբ  
մկրտութեան շնորհքը :

Ը պատկան :

Վկրտի մքն և սրբին ամենայն արա-  
բածք, և տայ մեղ թողութիւն մեղաց  
ջրով և հոգւով վերասրբելով զմեղ :

Ե առնի ու տառ ընդառաջէ :

Վվ մարդացեալ ած իմ հայ, քու-  
կին մեր վրայ ունեցած սէրդ այնչափ  
մէծ է, որ մարդկային լեզու չիկրնար  
պատմել : Կուն ամենեին և ոչ մեղաց  
արատ մը ունէիր, մեղաւորի մը պէս  
տաճարը եկար, դուն բոլորովին սրբու-  
թիւն ըլլալով անմաքրութենէ մաքրր-  
վիլ կուղէիր : Օարմացան երկինք. պան-  
չացան հրեշտակք . գերագոյն մաքրու-

թեամբ ծնար ուլ սուրբդ սրբոց . ու այսօր ընծայելով զքեզ երկնաւոր հօրդ , այ հետ իս հաշտեցուցիր , ու այ որդի ըրիր : Խակ ես տէր իմ , քու շնորհքիդ ապերախտ գտնըլելուս համար ամէն տեսակ աղտոտութիւնը ունիմ , որ մաքրըլիլ չեմ ուզեր . դուն բոլորովին արդար էիր , ու մեղաւորի ձեւ մտար . իսկ ես մեղաւոր եմ , ու իս արդար կըկարծեմ : Դուն ողորմած տէր , լոյս տուր ինծի , ու օգնէ իմին տկարութեանս :

Աիմէոն ծերունիին հետ քեզի կաղաշեմ սուրբ կոյս Ածածին , ու կըխնդրեմ արտասուօք , երբ պիտի ինծի ալ ցըցունես քու սիրելի ածորդիդ , երբ անպատմելի սիրովդ պիտի զմայլիմ . երբ հոգիս պիտի մխիթարես : Ճաէ որ աս մեծ շնորհքիս արժանի չեմ , գոնէ աս շնորհքը ըթէ ինծի մայր ողորմութեան , որ հաղորդութիւն առած ատենս արժանապէս իմ փրկիչս սրտիս մէջը ընդունիմ . ու սիմէոն ծերունիին պէս սրբտանց ես ալ աղաղակեմ , Արդ՝ ուշակիւն պշտայայս ու ՚է նոողաղութիւն : Ահա հաւատով աս խորհրդեան մէջը տեսայ

իմ փրկիս, իմ ճշմարիտ ածս . մասիսաքս  
լեցվեցաւ, հերիք այսչափ ատեն աշխըր-  
քիս մէջ կըտառապիմ : Վայսօր իմ խըն-  
դրուածքս ալ կատարէ սուրբ կոյս Վա-  
ծին, քուկին հզօր միջնորդութեամբ  
մեղքերուս թողութիւն շնորհէ, չար  
կիլքերէս ու փորձանկքներէն իս ազատէ.  
որ մահուանս ատեննը խաղաղութեամբ  
հանգչիմ, ու երթամ իմ սիրելի փրկ-  
չիս հետ միանամ :

Ասէ այսօր աղաչանքիս ձայնը տիրա-  
մայր, ու ինծի խոնարհութեան ու մաք-  
րութեան շնորհչք տուր, որ ես ալ կա-  
րող ըլլամ իս բոլորովին հնին ու քե-  
զի ընծայ ընել : Ես զիմած աչքովդ  
սրտիս բաղձանքին, ու ընդունէս աս ա-  
նարժան ընծաս :

### Հ աբովիան :

Որ արձակիչդ ես կապելոց պարդեա-  
տու ամենեցուն . այսօր հայցմամբ ծե-  
րունոյն արձակեա և զիս զբաղմամեղս  
՚ի կապանաց մահու ՚ի կեանսդ յաւի-  
տենից :

Ա.Ա.ՕԹԱՔ

Ի ՄԵՇՈՎ ՊԵՂԱ:

ԵԱԽԵՑԵԿ ԿԵԽՐԵԿԱ:

ԱՐԵԿԸՆ-ՀԱ ԱԿՐԱԲԱՅ:

Պուն տէր իմ, առջին մարդը ստեղծած  
ատենը անսանկ անպատճելի երջանկութիւնով զինքը զարդարեցիր, որ  
դրախտին մէջ ամէն կերպ ուրախութիւնը ունէր : Իսյց անհնազանդ գըտնըլով քու հրամանիդ, զըրկըլվեցաւ  
ան ցանկալի վիճակէն : Աըխոստովանիմ,  
թէ որ գուն անոր ողորմելու շըլլայիր,  
ամենեին արժանի էինք կորստեան : Ուղորմեցար մեղի տէր իմ, դարձեալ նորոգեցիր մեր կործանեալ բնութիւնը .  
այնչափ սրբազան խորհուրդներ դրիր,  
որ մեղի շնորհք կուտան, մեղ կըզօրացընեն, որ մարմինը հոգւոյն հնազանդեցընենք : Կառն ինծի համար քառսուն

որ պահեցիր, բան մը չիկերար . որ ես  
ալ քու սուրբ օրինակիդ հետևելով իմ  
մարմինս մահացընեմ, ու հոգիս զօրա-  
ցընեմ, որ չըլլայ թէ սատանային փոր-  
ձութիւններէն յաղթըլի աղտմայ պէս,  
ու անոնց դէմ դնելու կարող չըլլայ :

Ով ած իմ, դուն լոյս տուր մտքիս.  
ու արթնցուր հոգիս աս մահաբեր թըլ-  
ըռութենէ, որ գոնէ աս մեծ պաքի սուրբ  
օրերը աղէկ անցընեմ . քուկին չարչա-  
բանքներդ միշտ յիշեմ, ու ամէն մէկ  
մեղքիս վրայ զղջամ ու ցաւիմ, մանա-  
ւանդ իմ որկրամոլութեանս վրայ, որ  
թէ հոգւզյս և թէ մարմնոյս վեասակար  
է : Արմինս ամեհի գաղան մը դարձեր  
է, ամենեին հոգւզյս չիհնաղանդիր . և  
ոչ քու ահաւոր հրամանդ, որ լեռները  
կրդողացընէ, ու աշխարհքս հաստատուն  
կրպահէ, իմ մարմինս կրցաւ զսպել,  
ու քու սուրբ պատուիրաններուդ խո-  
նարհեցընել : Տես ողորմած տէր ան հո-  
գին, որ դուն քու ամենակատար պատ-  
կերիդ նման ստեղծեցիր, ինչ ողորմէլի  
խեղճութեան մէջ է ինկեր . առջի ան-  
մեղութիւնները կորսնցուցերէ, ու մար-

մինը հոգւոյն դէմ ապստամբերէ , հոգիս կըքաղձայ , որ քու սուրբ պատուիւրաններուդ հետևի , ու մարմինս անոր դէմը կուզէ : Ա հա դետինը ինկած կաղաչնմ կըքաղատիմ քեզի գորովագութ արարիչ իմ , լսէ հառաշանքիս ձայնը , դուն ողորմէ յուսահատելոյս , ու նորոգէ հոգիս՝ սուրբ հոգւոյն շնորհքովը : Տօւթ ինծի անմեղութեան շնորհք , ինչպէս որ ադամայ տրվիր . բաց ինծի ալ երկնային դրախտին դուռը , ինչպէս որ քեզի հետ խաչված աւաղակին բացիր . իմ հոգւոյս ալ ըսէ ան միսիթարական խօսքը . Այսօք ընդ իս էցնս ՚է ուրախուն , ամեն :

### Ը աղաքան :

Ա ասն որոյ աղաչեա մայր այց Անրիամ զմիածին քո զորդին զի շնորհեսցէ ըստ աւաղակին ժառանգել վերստին մեղ զդրախտին վայելութիւն :

### Ը աղաքան Բէջ ընելու աղաքան :

Հայր դթութեանց և ողորմութեանց մարդասէր աչքովդ նայէ քու ստեղծուածիդ վրայ , որ խոնարհութեամբ առ

ջիդ ինկած աս սուրբ օրերս ապաշխա-  
րութեամբ անցընել կուղէ : Խաց տէր  
իմ հոգւոյս աշվըները, որ աշխարհային  
ունայնութիւնները ճանչնամ, ու սիրտս  
անանկ բաներու հետ շիկապեմ, որոնք  
որ երբոր էնէ օր մը պիտի թողտամ,  
ինչու որ ես աշխրքիս վրայ օտարական  
եմ ճամբորդի մը պէս + ու օր մը պիտի  
դայ, որ ամէն մէկ անցուցած օրերում՝  
համար պիտի տամ : Խնչ օգուտ եղաւ  
ինձի աշխրքիս մեղանչական ուրախու-  
թենէն, շուքի մը պէս անցան դացին,  
ու ձեռքսուրիշ բան շիմնաց, բայց եթէ  
խղճմտանքի անհանդատութիւն, ու քու  
առջեղ յանցաւոր երենալ : Ա այ իմ  
կուրութեանս, ուրախութիւնը որ մե-  
ղանչելու ատենս ունէի՛ շատ քիշ է ե-  
ղեր . իսկ տրտմութիւնը ու պատիժը,  
թէ որ քեզի հետ հաշտրվելու շաշխա-  
տիմ, յաւիտեանս պիտի ըլլայ :

Խրաւցընէ տէր իմ, արժանի շէի,  
որ ես այսպիսի սրբազան օրեր տեսնէի,  
ու ապաշխարութեան միջոց ունենայի .  
բայց դուն ողորմած տէր, որ իս աս օրե-  
րուս հասցուցիր, մադդաղենացւոյն ա-

պաշխարութեան հոգին ալ պարդեէ ,  
 որ քու ոտքդ ինկած գիշեր ցորենկ լալէն  
 չիդաղրիմ : Աղօրմէ ինծի տէր իմ , որ  
 հոգիս պէսպէս մեղքերով հիւանդ մնա-  
 ցերէ անդամալուծին պէս , բարեգոր-  
 ծութիւն ընելու ուժ չունի . քեզի կա-  
 ղաղակէ ուլ բժիշկ հոգւոց բարի ՀՅ ,  
 գթութիւն ըրէ իմ հոգւոց ալ : Ե՛րբ  
 տէր իմ ինծի ալ պիտի ըսես ան միսի-  
 թարական խօսքը , Առողջութէն մէկը ու-  
 երբ զքեզ մէյ մ' ալ պիտի չիվշտացը-  
 նեմ , քեզ միայն պիտի սիրեմ ; ու սուրբ  
 պատուիրաններդ չիմունամ : Աղօրմած  
 ՀՅ ՞ Պ արկիս իմ , կաղաքէմ քեզի ,  
 շնորհք տուր ինծի , որ ես ալ քու օրի-  
 նակիդ հետևելով աղօթքով ու պաք  
 պահելով չար սատանային փորձութիւն-  
 ներուն յաղթեմ , ու իմ գէշ կիրքերս  
 մահացընեմ : Առորբ և պատուական խա-  
 չիդ զօրութեամբը պահէ ու զօրացուր  
 իս տէր իմ , թող մի տար որ թշնա-  
 մին վրաս պարծի : 'Ի ժէկ դէռ յուսու-  
 զայ . Ֆէ ամաշէցից յա-կդէսն :

## ԵՐԿՐՈՐԴԻ ԿԻՒՐՑԱԿ:

Վակուն արտահայ :

Վա գեղա բաբելոնց անդ նստեաւ  
և լսյաւ, յործամ յէշէաւ պէտ սիսն : Ա լո  
տէր, երբոր միտքս կուգան ան ան  
պատմելի դրախտին զուարձութիւնները,  
ան ամենակատար երջանկութիւնը, ան  
սուրբ անմեղութեան վիճակը, ու քուկին  
անհամար ստեղծած բարիքներդ մար-  
դուս համար, չեմ կրնար հիւ մէկ կեր-  
պով մը իս միտմարել : Վա ողորմելի  
աշխրքիս աքսորանքին մէջ մնացերեմ .  
բոլոր կեանքիս մէջ ցաւագին անէծքնե-  
րու տակ ինկերեմ . ցաւերէն և թշուա-  
ռութենէն 'ի զատ բան մը չեմ ունե-  
ցեր : Խաշնամիք չորս դիս առերեն, ու  
յաղթելու ուժ չիկայ վրաս : Վապստամիք  
մարմինս գլուխ վերցուցերէ, ու հակա-  
ռակ հոգւոյս կըբաղձայ . կամքս զօրու-  
թիւն չունի . մտքիս լոյսը խաւարած իր  
վեասը չիտեսներ . ու խիղճմտանքս ալ  
բոլորովին թմրեր մնացերէ : Ով ողոր-

մած ած, աս ինչ թշուառութեան մէջ  
իս թողուցերես, աս ինչ խեղճ վիճակի  
մէջ իս ձգերես. դուն ամենակարող ա-  
րարիչ ըլլալով ասանկ ողորմելի արարած  
ստեղծերես :

Ո՞չ տէր, ներէ անզգամութեանս .  
ինչ հայհութիւն է աս բերնէս ե-  
լածը : Չէ ամենարարի արարիչ իմ, չէ,  
դուն իս ասանկ թշուառ չըստեղծեցիր,  
դուն աս վէրքերը վրաս չիդրիր . բոլոր  
ես եղայ պատճառ այսչափ չարեաց . ես  
քու պատուիրանքներուդ անհնաղանդ  
գտնրվելով, աղամոյ պէս իմ առջի  
երջանկութիւնս կորանցուցի : Երկնից  
արքայութիւնը ինծի բնակարան պատ-  
րաստեցիր, ես անկից հեռացայ . անմա-  
հարար կերակուր տըմիր ինծի, ու ես  
յարդը չիճանչցայ . իս անձնիշխան պատ-  
րիր, ու ես ախտերուս գերի եղայ :  
Ենոր համար պէտք եղաւ, որ դու տէր  
իմ չչա քա աշխարհք դաս, ու իմ  
հոգւոյս ցաւերը ու հիւանդութիւնները  
բժշկես, ու իս նորէն կենդանացրնես  
քուկին մահուամբդ : Որչափ ցաւերու  
շարչարանքներ քաշեցիր փրկիչ իմ մե-

ղացս համար . դլիսէդ մինչև ոտքդ առողջ տեղ մը շիմնաց վրադ . ու ան ետքի նեղութեան ծարված ատենդ՝ լեղվուլ խառնած քացախ խմեցիր , որ որկրամոլութեանս յանցանքը քաւես , ու ինձի ժուժկալութիւն սորվեցընես : Ո՞չտ պարտքան եմ փրկիչ իմ քեզի շնորհակալ բլալու , ու անդադար քեզ օրհնելու : Դուն քեզ բոլորովին ինձի ու իմ մեղացս համար տրվիր , ես ալ իս բոլորովին քեզի կրնծայեմ . ու մասնաւորապէս աս սուրբ պատիս մեջ կրծանամ իս մահացուցանել , որ քեզի հետ մեղքերէս յարութիւն առնեմ : Աղորմած չչն , որ ոչ կամիս զմահ մեղաւորին , քուկին անգին արդեանցդ համար ընդունէ իս երկնային դրախտը , ամէն :

Ը ուրախո՞ւն :

**Պ**նդ նախահօրն տրտմութեան որ վասն ելիցն 'ի դրախտէն կենաց , ընկալցուք ըզտրտմութիւն ապաշխարութեան . զի յարութեամբն Վահի արժանացուք մըտից դրախտին եկեղեցւոյ :

Հ Ա Յ Ե Լ Ո Ւ Տ Ե Վ Ա Պ Ո Ւ Ր :

Յ ա ս մարդասէր փրկիչ իմ, դուն իս  
վինտուելու համար աշխարհք եկար, մար-  
մին առիր. ու իս գտնելու համար որ  
կորսրված էի՝ ամեն աշխատանքը յանձն  
առիր. ու պատուիրեցիր ինծի որ քու  
սուրբ օրինակներուդ հետեւիմ ու քեզի  
նմանող ըլլամ: Դառն ինծի սորվեցու-  
ցիր, որ ինչպէս իմ թշնամիներուս մար-  
մոյ ու աշխարհի յաղթեմ. իսկ ես իմ  
զգայարանքներս շիղսպելուս համար ա-  
նոնց գերի եղած եմ: Անք նախահայրը  
աղամ կերակրոյ ցանկութեամբ խարսխե-  
ցաւ. նախ առաջին եւա դարձաւ նայե-  
ցաւ աչքին գեղեցիկ երևնալում՝ ետքը  
սկսաւ աղամայ հրամցընել, ու ան ալ  
զգուշութիւն շրնելուլ ընկերոջը խաթրը  
ընելու համար քու հրամանդ գժրաղ-  
զութեամբ ոտքի տակ առաւ: Անանկ  
ալ ես տէր իմ խիստ անզգոյշ եմ աչքս  
զսպելու. շատ անդամ համարձակ կը-  
նայիմ ան բաներուն, որնոր դուն քու  
սուրբ հրամանաւդ արգելած ես, ու նայ-  
ելու անանկ ախորժակ եկած է որ՝

թշուառարար մեղքի մէջ ինկած եմ :  
 Ըստ անդամ ալ հերիք չէ՝ որ մինակ  
 ես իյնամ , հապա եւսցին պէս ուրիշին  
 ալ արդելած պտուղը կըհրամցընեմ ,  
 բերնովս, չարխօպերովս ընկերիս պատ-  
 ճառ ըլլալով որ ան ալ ինծի հետ իյնայ :  
 Ա այ ինծ , բերանս աւելի մարդասպան  
 է , քան թէ կայենին ձեռքը , ան մար-  
 մինը միայն սպաննեց , հոգին պսակեցաւ .  
 Ես եղբօրս մարմինը ողջ իբէն հոգին  
 սպաննեցի : Իմէ որ կայենէն անանկ խիստ  
 վրէժ պահանջեցիր . հապա ես ասանկ  
 մնալու ըլլամ , քանի դժոխքի արժանի  
 չեմ :

Ո՞հ տէր, զիտեմ որ բռնած ճամբաս  
 չար է , ալ չեմ ուզեր աս ճամբուս մէջ  
 մնալ . կառաջաղթեմ քու օրինակներուդ  
 հետեիլ , որ մարմնոյ ու աշխարհի կա-  
 րող ըլլամ յաղթել : Դուն ինծի շը-  
 նորհք տուր , որ աչքովս համարձակ չի-  
 նայիմ ան բաններուն , որնոր դուն արդե-  
 լած ես . մանաւանդաչքէս առաջ միտ-  
 քըս գարձնեմ : Դարձեալ կարողու-  
 թիւն տուր , որ բերնիս աղէկ պահապան  
 մը դնեմ , որ չիրացվի ուրիշները բամ-

բասելու, հայհոյելու, սուտ զուրցելու, ու չար խրատ տալու, հապա միտքս ու բաղձանքս ըլլայ քու օրէնքդ, ու խօսքըս ալ օգտակար, որ լսողներուն շինութիւն ըլլայ:

## ԵՐԻԱՐԴԻ ԿԻՒԹՎԱՆ

Ե՞նաստավին:

**Տ**էր իմ զարք, որչափ անթիւ են քուկին ինծի ըրած բարերարութիւններդ: Դռւն իս շնորհաց մկրտութեան արժանի ըրիր, ու երկնից արքայութեան ալ որդեգիր զրեցիր, և ուղեցիր՝ որ մեզի մարմնակից ըլլաս, որ մենք ալ քեզի հետ արքայութեան մէջ ժառանգակից ըլլանք: Խնչ աւելի մեծ բան մը կրնար մեր միտքը մտածել. մանաւանդ թէ ինչպէս կրնայիր քեզմէ աւելի վեր բան մը մեզի համար սահմանել, բայց եթէ զքեզ ու քուկին արքայութիւնդ: Կը խոստովանիմ տէր, որ շատ մեծ բարիք է որ ինծի ըրած ես. սուրբ մկրտութեան աւազանին զառակ ընելով արքայ-

ութեան ալ ժառանգ ըրերես։ Այս  
ովք փրկիչ իմ, ես աս ամէն ըրած բա-  
րերարութիւններդ հիւ չկյիշեցի։ ա-  
նառակ որդւոյն պէս հեռացայ իմ գթած  
հօրէս, բաժնըլիցայ քեզմէ, ու բոլոր  
հոգւոր ժառանգութիւնս, որ իրաւունք  
ունէի արքայութեան որդի ըլւալու՝ մե-  
ղանչելով կորսնցուցի։ Իմ բոլոր կեան-  
քըս բերկրութիւն մը եղաւ իմին գար-  
շելի կիրքերուս։ ու քանի որ գնացնէ  
սովորութիւնը իմ վրաս զօրանալով ետ-  
քի թշուառութեան մէջ ինկայ։

Հայր գթութեան, նայէ մէյ մը իմ  
խեղճութեանս։ լոյս մը ծաղէ մոտքիս  
մէջը, որ ճանչնամ, թէ ինչ վիճակէ  
ինկայ, ու ինչ ողորմելութեան հասայ։  
Ընորհք ու զօրութիւն տուր, որ կա-  
տարեալ ապաշխարութեամբ, ու սրտանց  
խոստովանութեամբ քեզի դառնամ, ու  
անառակ որդւոյն հետ գթած հօրդ գո-  
շեմ։ Հայր մշղայ յԵրինու և առաջէ ոյ։  
ալ արժանի շեմ արքայութեան ժա-  
ռանգ ու որդի ըսվելու։ ես իմ ըրած  
անօրէնութիւններս գիտեմ, ու կըխոս-  
տովանիմ որ թողութեան արժանաւոր

շեմ, բայց միայն աս շնորհքը կրիսնդրեմ, որ իս բոլորովին երեսէ շիձգես, որ շրլայթէ անտերունչ յաւիտեանս կորսրվիմ: Հայր ողորմութեան լսէ անառակ որդւոյդ ողորմուկ ձայնը. Հայր մեղայ. բաւական է աս միայն քուկին գիմած սիրտդ վրաս 'ի գութ շարժելու, ու ինծի դարձեալ ողորմելու: Տօւր ինծի ան հաշտութեան համբոյրը. իմ առջի անմեղութեանս հոգեօր հագուստները ինծի նորէն հազցուր, որնոր սուրբ մկրտութեան ատենը շնորհեցիր, ու արժանի ըրէ իս, որ աս ուրախութեան մէջ քուսուրբ միածնիդ մարմինը ու արիւնը արժանապէս ու ջերմեռանդութեամբ ընդունիմ:

Ով հայր երկնաւոր, երեսի վրայ ինկած կաղաչեմ քեզի, թող մի տար իս, որ մէջ մ'ալ մեղօք քեզմէ բաժնըվիմ հեռանամ. տուր այսօր երկնաւորաց ան մեծ ուրախութիւնը՝ ապաշխարութեան հոգի ու կատարեալ դարձի շնորհք տալով ինծի, որ ես ալ արժանի ըւլամ 'ի հանդերձեալն երկնից սուրբ արքայութեան մէջը կըկին ուրախա-

Նալ հրեշտակներուն հետ, ու միշտ քեզ  
օրհնել 'ի յաւիտեան, ամէն :

Ը պատիսն :

Ո՞նդ անառակին որդւց գոչեմք առ  
հայրդ գթած, մեղակը յերկինս և առաջի  
քո քաւիչ յանցանաց, ել ընդ առաջ  
սիրով գրկեա համբուրիւ, մաքրեա զմեղ  
'ի մեղաց մերոց :

Ը սբիւն Բոջ ընելու աղօնւս :

Ո՞վ ողորմած տէր իմ և ած իմ, ցա-  
ւաղնեալ սրտիւ ես ինքիրմէս կրխոս-  
տովանիմ իմ անհամար մեղքերս, ու  
բոլոր սրտանց կրցաւիմ քեզ վշտացր-  
նելուս : Ո՞վ հայր ողորմութեան, դուն  
սրտիս զեղջ տուր, ու աչփռներուս աղ-  
բիւրի պէս արցունք շնորհէ, որ գոնէ  
առ սուրբ ապաշխարութեան օրերս մե-  
ղաց թմրութենէն արթննամ, աչքըս  
բանամ տեսնամ իմ խեղճութիւնս, ու  
քեզի գթած հօրդ դառնամ, ոտքդ կյ-  
նամ, լամ ողբամ, ու մինչեւ հիմա ը-

բած ապերախտութիւններուս թողութիւն խնդրեմ. Քառակացեալ գնացէց առհայր էմ, և ասացէց ցիս, հայր՝ ԲԵԿԱՅ. Աս է մի միայն սրտիս մխիթարութիւնը, ու բովանդակյոյս :

Հայր երեխնաւոր, անառակ որդւոյդ խեղճութեանը նայէ մէջ մը, որ մերկ խայտառակ ետքի ողորմելութեան մէջ ինկերէ, ու ոտքդ բաթթրված լարով մեղայ կըրկանչէ կոր : Հայր՝ ԲԵԿԱՅ յէր ինձնո՞ւ և առաջն ու . ոչ ես էմ արժանի ինչը որդէ՞ւ . արտ զէս է՛տ ու պէ՞ է հայդինաց ու : Հայր սուրբ, գիտեմ որ քու հայրական սիրտդ կօտքեցի, ու որդիական ժառանգութեանս շնորհքները՝ որնոր սուրբ մկրտութեամբ ինծի պարզեցիր՝ արդէն կորսնցուցի, անոր համար ասկից ետքը արժանի չեմ քեզի որդի ըսվելու . բայց աս շնորհքը միայն կըրևնդրեմ, որ ըրածներուս ներես, ալ չոյիշես, ու իս քուկին ապաշխարօղ ծառաներուդ կարգը անցընես : Քանի որ կենդանի մնամ, միշտ արցունք թափելէն չիդադրիմ, քուկին հայրական սէրդ ոտքի տակ առնելուս՝ ու քեզմէ

բաժնը վելուս համար . որպէս զի՞ի հանդերձեալն քուկին մխիթարութեանդ արժանի ըլլամ , ամէն :

## ԶՈՐՅՈՒԴԻ ԿԻՒՐԵԱԼ :

Տնտեսին :

**Ա.** մենախնամ տէր և ած իմ , ես ողորմելի ստեղծուածս քու ածութեանդ առջին յանդզնեցայ խորհրդով՝ բանիւ և գործքով մեղանչել : Դուն ապսպրեցիր ինծի , որ դոնապանի մը պէս արթուն կենամ , ու սուրբ սրտիւ գալստեանդ սպասեմ , որ երբոր դու տէր իմ դուռը զարնես . այսինքն՝ երբոր հոգիս մարմինէս բաժնը վելու ըլլայ՝ պատրաստ գրտնը վիմ : Տնտեսին առակը ինծի պատմելով ցըցուցիր , թէ մեր խիղճը միշտ մեղքէ մաքուր պիտի պահենք , որ քուկին դատաստանիդ առջին քննութիւնը ըրած ատենդ պարտական չիդանը վիմ : Դայց իմ մեղացս պարտքերը անթիւ են տէր իմ , ինչ պիտի ընեմ , թէ որ դատաստանի օրը ինծի աւ ըսելու ըլլաս :

Տար պշտամք տնօբէսսւլիւնն ու : Խրանցընել թէ որ աս սահամս արդարութեամբդ իս դատելու ըլլաս, արժանի եմ, որ դատապարտութեան վճիռը լսեմ . արժանի եմ, որ քուկին քաղցր տեսութենէդ զըկըպիմ :

Այս տէր իմ, երբոր աս միտքս կուդայ, կըդողամ ու կըսոսկամ, թէ այնչափ կորանցուցած շնորհքներուս համար ինչ պատասխան պիտի տամ քեզի : Հիմա տէր իմ ոտքդ ինկած տնտեսին պէս կաղաչեմ կըպաղատիմ : Խրիոյնամբ լը տո իս, և պահեայն հապուշէց ժեղ : Ով ողորմած ած իմ, դուն սրտիս զեղը տուր, մոտքիս մէջը լոյս ծագէ, որ քուկին օգնականութեամբդ քանի որ հիմա ինծի կեանք տըվերես . իմ մեղքերուս պարտքերը ապաշխարութեամբ վըճարեմ : Կիտեմ փրկիչ իմ հան, թէ որ ես մեղքերուս վրայ զղջամ, ու քու առջեւդ խոստովանելու ըլլամ . պատրաստ ես դուն իմ պարտքերս ջընջելու, անոր համար բոլոր սրտանց մեղայ կըդոչեմ քեզի անիրաւ գտնըվելուս համար, ու ասկէց ետքը աւելի

կուղեմ մեռնիլ, քան թէ քեզ նորէն  
վշտացընել :

Վհա բարեխօս ունիմ ինծի քու ա-  
մենասիրելի մայրդ սուրբ Ածածինը .  
Եսէ անոր աղաչանքին Հն իմ , ու ինծի  
շնորհք ու կարողութիւն տուր , որ  
ճշմարիտ ապաշխարութեամբ աս աշ-  
խարհքս պարտքերս վճարելով մեռնե-  
լէս ետքը քու ցանկալի տեսոյդ արժանի  
ըստամ . ու ան ուրախալի լուրը լսեմ  
քու ածային բերնեդ : Ահե- ծոսոյ  
բարի և հաստատընէմ, հո-դունակուն-լիւն  
դեռառն ո՞ւ , ամէն :

### Ը բանիան :

Որ զտիրականս առ ՚ի քէն կարդեալ  
տնտես բնութեան մերոյ . իմաստու-  
թեամբ զպարտիս եթող քոյոց պար-  
տապանաց . թող և զմեր զյանցանս ո-  
զորմութեամբդ քո ՚Ի՞ն :

### Ը բանիան Բաղ ընելու աղջիկ :

Երբոր տէր ըրածներս կըյիշեմ , ու

քուկին արդար դատաստանդ կըմտմբ-  
 տամ, քեզի գէմ ըրած ապերախտու-  
 թիւններս միտքս գալով՝ բոլոր մարմինս  
 դող կելլայ, ու կըյուսահատիմ: Առէ  
 որ գործած մեղքերուս համար հարցու-  
 փորձ ընելու ըլլաս, ինչ պատասխան  
 պիտոր տամ քեզի, ու քու արդար դա-  
 տաստանիդ ձեռքէն ինչպէս պիտի խա-  
 լսիմ: Ա և տէր իմ, իմ մեղքերս ծո-  
 վու աւաղէն ալ շատ են, որ մէկը պատ-  
 մեմ. որ մէկուն վրայ լամ: Ա հա հպար-  
 տութեամբս քուկին աչքէդ ելերեմ,  
 ու իս արդար սեպելով՝ շատ անգամ  
 չարաչար մեղաց մեջ ինկերեմ. ուրիշ-  
 ները քամահրերեմ, միշտ ամէնէն վեր  
 ըլլալու բաղձացերեմ, ու մէյմը չեմ  
 յիշած, թէ գուն խոնարհներուն միայն  
 կողորմիս: Ա, ախանձութեամբ ընկերուն  
 բարեացը վրայ տրտմերեմ, իրեն մե-  
 ծութեան աչք եմ տնկեր, անոր յա-  
 ջողութեանը չիկրնալով տանիլ՝ անունը  
 ալրերեմ, ու զինքը վար ձգելու ջա-  
 նացերեմ: Տարկութեամբ ինքիրմէս  
 ելած՝ ըրածս ըսածս չեմ դիտցեր. բեր-  
 նէս շատ հայհոյութիւններ հաներեմ,

Խոռվութեան պատճառ եղերեմ, ու քը-  
 րիստոնէի անուան անվայել խօսքերով  
 դործքերով ուրիշները նախատերեմ:  
 Եգահութեամբ բոլոր սիրտս ու յոյսս  
 ըստըկի վրայ անանկ դրերեմ որ, յու-  
 դային պէս քեզ բոլորովին մոռցեր՝  
 քէնէ աւելի ըստակը սիրերեմ. աղքատ-  
 ներուն չեմ ողորմած, ու հոգւոյս հա-  
 մար ըստակ մը չեմ խարճած: «Օ» ուլու-  
 թեամբ հոգիս ամէն հոգեորէն, աղօթ-  
 քէս ու ջերմեռանդութիւններէն պա-  
 ղերեմ, խոստովանանքս այսօրվան վաղ-  
 վան ձգելով՝ երկար ատեն չեմ խոստո-  
 վանած, ու կարօտներուն ձեռքէս եկած  
 բարիքը չեմ ըրած: Արկրամոլութեամբ  
 չափէն աւելի ինքս զինքս ուտելու խմե-  
 լու տրվերեմ, որ անկէց մեղք եմ մաեր,  
 ու ողջութեանս վնաս հասցուցերեմ:  
 Խակ անպարկեշտ խօսքերովս ու գործ-  
 քերովս՝ կրխոստովանիմ որ շատ հեղ-  
 քու սուրբ պատուիրանիդ դէմ դործե-  
 րեմ: «Խուն իմ սիրտս այ տաճար, ու  
 հոգւոյն սրբոյ բնակարան շինեցիր. ու  
 ես իմ գարշելի կիրքերովս պղծեցի, ու  
 սատանային գերի ըրի: »

Ա յս գլուխ փրկիչ իմ , այսչափ հիւ-  
անդութիւններով պաշարված անդա-  
մալոյժ հոգիս քու առջիդ ինկեր բժշկու-  
թիւն կը իսնդրէ : Ով բժիշկ հոգւոց ,  
քու կին ամենակարող զօրութիւնովդ ին-  
ծի ալ հրամայէ , որ հոգւոյս հիւանդու-  
թիւններէն ողջըննամ , ու վեր ելամ .  
ու փառք տալով քեզ յաւիտեանս յա-  
ւիտենից օրհնեմ :

## ՀԵԿԳԵՐՈՒԴԻ ԿԻԴՐԱԿԵ :

Պատրաստութիւն :

Տէր իմ և ած իմ , դուն ստեղծեցիր  
իմ հոգիս ու մարմինս , որոնց վրայ դա-  
տաւոր դրիր միտքս , որ արդար դա-  
տաստան ընէ հոգիիս ու մարմինիս մէջը :  
Իսյց իմին անհոգութեամքս մարմինս  
այնչափ դլուիկ վերցուց որ , միտքս ալ  
իրեն հետ մոլորեցաւ , ու ամենեին ար-  
դար դատաստան չընէրկոր , նման ան  
դատաւորին , որ աստուծմէ չէր վախնար ,  
ու մարդոցմէ չէր ամչնար : Խսկ խեղձ  
հոգիս ամէն չնորչքէն զըկըված՝ ողոր-

մելի կերպարանքով այրի կնկան պէս  
քեզ երկնաւոր դատաւորիդ ՀՅՆԻ կա-  
ղաչէ կըպաղատի, ու քեզմէ օգնութիւն  
կըխնդրէ : Դատ առ ինչ անը յստունէ  
էմնէ : Ծմէ որ անարժան աղօթքիս ձայնը  
քեզի լսելի չըլլարնէ, գոնէ աչքէս թա-  
փած արցունքներս քեզ 'ի գութ շար-  
ժեն, որ հոգիիս ու մարմինիս մէջ խա-  
ղաղութիւն ընես . ինչու որ հոգիս ամէն  
կողմանէ մարմնոյս գերի եղած է, ու  
ձեռքէն խալքսելու ամենեին ճար մը  
չիկայ :

Ո՞հտքս թէպէտ կիմանայ, թէ իր  
հրամանը անիրաւ է, քեզի իր արարչին  
հաճոյ չէ . բայց զօրութիւն չունի, որ  
մարմնոյն կամացը յաղթէ : Ո՞հտքս կի-  
մանայ, որ աս սրբազան օրերը պէտք  
է մարմինը աւելի մահացուցանել, դպայ-  
արանքները զսպել, ապաշխարութեան  
ետևէ ըլլալ, երբեմն նաև անմեղ զրօ-  
սանքներէն ետ կենալ . բայց չէ թէ մի-  
այն կըխոնարհի մարմնոյն անմեղ ու-  
զածները կատարելու, հապա թէ որ մե-  
զանչական բան մ' ալ ուղէ, ուժ չունի  
հրաման չիտալու, դէմ կենալու :

Ա յս տէր , ուսքդ ինկած կուլամ կողը  
բամ . Պատ ալս ինչ տէր յստեխե իմե .  
որ է իմ մարմինս : Չկյտեմ տէր ինչ  
ընելիքս աս ընտանի թշնամոյս հետ .  
միշտ հետս մէկտեղ ունիմ . չեմ կրնար  
իրմ բաժնըվիլ , հետը գլուխ ելլելու զօ-  
րութիւն չունիմ . բայց տէր իմ չչո ,  
դուն այսօրվան աւետարանին մէջ ինծի  
սորվեցուցիր , որ խոնարհութեամբ ան-  
դադար աղօթք ընեմ , քեզի աղաչելէն  
շիձանձրանամ , որ հեծութիւնս տես-  
նելով՝ ողօրմիս ինծի : Անանկ էնէ տէր  
իմ ողօրմած , օգնէ ինծի քուկին սուրբ  
շնորհքովդ , լուսաւորէ ու ուժովցուր  
միտքս , որ նախ ուղիղ դատաստան ընէ ,  
ու ըրածը գործով կատարել տայ . որ-  
պէս զի մարմինս բարեկիրթ՝ ու հոգիս  
առաքինասէր , ու երկուքին վրայ ալ  
միտքս ուղիղ դատաւոր ըւայ :

Ծ ալակիան :

Պ ատաւոր արդար որ հաստատեցեր 'ի  
մեզ դատօղ ընութեան զմիտս մեր . շնոր-  
հեաւ սմա դատել զանձինս իրաւամբք և

արդարութեամբ . ինսոյեա ՚ի մեղ տէր  
ողորմութեամբ :

Ը բնաւու մէջ ընէւու ապօնէ :

**Տ**էր իմ Յա ՚Փա , դռւ ինծի պատվիւ-  
բեցիր , որ աղօթք ընելէն չիդադրիմ :  
որպէս զի փորձութեան մէջ չիյնամ :  
Իսյց ես շատ անդամ սատանային փոր-  
ձանքներէն յաղթըվերեմ , ինչու որ ար-  
ժանաւոր աղօթքով քեզի դիմելու , ու-  
քուկին օդնութիւնդ խնդրելու անփոյթ  
եմ եղեր : Եղօթք ըրած ատենս բեր-  
նէս ելածը ես իսկ չեմ հասկըցեր :  
իսելքս միտքս ուրիշ տեղ . սիրտս ուրիշ  
բաներու ետևէ եղերէ . անոր համար  
քեզմէ շնորհք ընդունելու տեղ՝ քու-  
աչքէդ ելերեմ . ու աւելի դատապար-  
տութեան արժանի եղերեմ :

**Ո**վ մարդասէր փրկիւ իմ , քու սուրբ  
աղօթիցդ ու հառաջանացդ արդիւնքովը ,  
որնոր գեթսեմանի պարտէզին մէջ ա-  
րիւն քրտինք թափելով՝ իմ փրկու-  
թեանս համար հօր այ ընծայեցիր , ինծի  
ալ աղօթքի ու ջերմեռանդութեան հո-

գի տուր, որ աղօթքիս ատենը ամէն  
բան մտքիս մէջէն մէկդի ձգեմ, ու բու-  
լոր միաքս քեզի վերցընելով՝ մտադրու-  
թեամբ ու սիրով աղօթք ընեմ :

Դուն սրտագէտ ած, գիտես իմ  
սիրտս, ու ըրած աղաչանքներս կըլսես,  
քու բարերար ողորմութեամբդ վրաս  
դթաւ. սուրբ հոգւոյն շնորհքովը փա-  
րատէ մտքիս մէջը եղած խաւարացին  
խորհուրդները : Այստէ տէր չար սա-  
տանային ալ, որ աղօթքիս ատենը քո-  
վըս չիմօտենայ, քուկին ամենազօր խա-  
չիդ զօրութեամբը հալածվի երթայ :  
Երկինքէն սուրբ հրեշտակները խրկէ  
ինծի, որ քեզ անռնց հետ միատեղ ան-  
լոելի ձայնիւ փառարանեմ յաւիտեանս,  
ամէն :

## Ա ԵՅՅԵՐՈՐԴԻ ԿԻՒՐԵԿԻ :

Գալուստէան :

Առնարհեալ անձամբ ահիւ և դողու-  
թեամբ քու առջիդ կիյնամ ով ած իմ .  
որ մը պիտի գայ որ, քուկին արդար

դատաստանիդ առջին բովանդակ կենացս  
մէջ ըրածներուս համար՝ մէկիկ մէկիկ  
քեզի համար պիտի տամ։ Ա'ահը դու-  
ռըս հասեր մօտեցերէ. երբոր դուն ար-  
դարութեամբդ իս դատելու ըլլաս, պրզ-  
տիկութենէս պէրի ըրած շար դործքերս  
առջիս դնես, ինչ կըլլայ իմ բանս տէր  
իմ։ Ա'ձ որ արդար հոգիները քուկին  
դատաստանէդ կըդողան կըսարսին, ես  
մեղաւոր անձամբ ինչպէս պիտի աչքիդ  
երևամ։

Վուկին ահաւոր գալստեանդ ատե-  
նը երկինք և երկիր բոլոր իրար պիտի  
անցնին. իսկ դու տէր իմ դաս դատա-  
ւորական աթոռ պիտի նստիս ամէն մար-  
դիկը դատելու համար։ Տէրունական  
սուրբ խաչդ կանգնես պիտոր մէջ տեղս,  
որոնք որ քեզի հաւտացին, ու քեզի  
հետ խաչակից եղան աս աշխարհքս,  
քեզի հետ ալ յաւիտեանս թագաւո-  
րեն, ես ան ատենը արդեօք ինչպէս  
ահու դողու մէջ պիտի գտնըլլիմ։ Ա'հ  
տէր, քանի որ ներողութեան ու շնոր-  
հաց աթոռն նստերես, քեզի կըդիմեմ.  
դուն ես իմ արարիչս ու փրկիչս, թող-

մի տար իս ան ետքի նեղութեանս ա-  
տենը: Հիշէ տէր իմ ան քաշած դառն  
չարչարանքներդ, սուրբ մարմնոյդցաւա-  
գին վէրքերը, փուշէ պսակը, լեզի քա-  
ցախը, ու փրկարործ խաչը, որուն վըայ  
մեռար: Կին եմ քու արեանդ, գին են  
ասոնք իմ փրկութեանս, ասոնց ան-  
հուն արդեամբը կըխնդրեմ, որ հոգիս  
յաւիտենական պատժէն փրկես, ու սի-  
րելեացդ կարգը դասես՝ օրհնեալ զա-  
ւակներուդ հետ քեզի կանչելով: Ե-  
նայ, օղհնեալով հօր իմոյ:

Ա. Խ սուրբ Ածածին մայր փրկու-  
թեան և ողորմութեան, կաղաչեմ քեզի,  
որ դատաստանին օրը ինձի համար դա-  
տաւոր շինստիս. Հապա քու ածորդ-  
ոյդ բարեխօս ու միջնորդ ըլլաս, ու իս  
այ արդարութեան ձեռքը շիմատնես:  
Կմած տիրամայր, քուկին քաշած ան-  
տանելի ցաւերդ միտքդ բեր, Համին հինգ  
վէրքերուն նայելով վրաս մասնաւոր  
գութ մը ունեցիր, որ քուկին մայրա-  
կան մէծ իշխանութեամբդ պաշտպան  
կենաս ինձի ու փրկես, ամէն:

Ը արտիւն:

Օ կենդանագիր անարատ ծնողի քո  
արկանեմք առաջի անոխակալ տէրու-  
թեանդ քո . յորժամ դաս փառօք հօր  
դատել զթշնամին խաչի քո . ներեա  
յանցանաց մերոց բարեխօսութեամբ մօր  
քո և կուսի . աղաչեմք դքեզ տէր պահ-  
պանեա զմեզ ընդ հովանեաւ խաչի քո  
սուբբ:

Ը աբենա մէջ ընէլու աղօթք:

Ով փրկիչ աշխարհի , ճանապարհ ,  
ճշմարտութիւն , և կեանք յաւիտենա-  
կան տէր իմ ՀՅ . աս ողորմելի կենացս  
ետքի բոպէն որ հասնիմ , թող մի տար  
իս անօդնական , ու քու ողորմութիւնդ  
իղմէ մի հեռացըներ : Դուն ես իմ ա-  
պաւէնս ու փրկիչս ան սարսափելի օրը .  
քեզի կաղաղակեմ ողորմութեան ած , ու  
քուկին առջիդ կըդնեմ իմ աղաչանքս :  
Կենացս իրիկունը մօտեցերէ , ու աչվր-  
ներուս լոյսը շատ չերթաք կըմթնայ

կանցնի . դուն ուլ լոյս Ճշմարիտ Ք. ս ,  
ծաղէ ինծի ան ատենը քու երեսաց լոյ-  
սրդ , ու իմ մեղացս խաւարը փարատէ :

‘Չանձրացած եմտէր իմաս տաղտկա-  
լի կենացս , ինչու որ քեզ վշտացընելէն  
ու յանցանքներս աւելցընելէն ’ի զատ  
ուրիշ բան մը չունիմ : Այսօր կառա-  
ջաղթեմ , վաղը դարձեալ կիյնամ . մար-  
մինս հոգւոյս դէմ կըբաղձայ , աշխարհք  
ու սատանան անդադար իս կընեղեն . ոչ  
տէր , կըկանչեմ կըպաղատիմ սրտանց :  
Լու եր ինյ Աւանիլ , առն պայս իւտնս իմ :  
Ո՞խայն քուկին արդար դատաստանդ  
իս կըդողացուցանէ տէր , ու չիյտեմ  
ինչպէս քեզի հետ հաշտրվիմ : Ահա  
բոլոր երկնից սուրբերը , մանաւանդ քու  
դժած մայրդ ինծի բարեխօս կըբռնեմ ,  
որ իրենց արժանաւոր խնդրուածքովը  
քու արդար դատաստանիդ ձեռքէն ա-  
զատելով՝ իս երկնից արքայութիւնը ըն-  
դունին , ուր քեզ յաւիտեանս օրհնեմ ,  
ամէն ;

---

## ՅԱՊԻԿՈՎՐԴԻ

ԱՀԵ-ՔՊԻՒՆ :

**Ա.**յսօր տէր իմ մեծ հանդէսով երուսաղէմ մտած ատենդ՝ տեսնելով երուսաղէմացւոց կուրութիւնը, որ այնչափ հրաշքներ տեսան, ու բարի խրատներ լսեցին քու ածային բերնէդ, ու շիհաւացին. սիրտդ շարժեցաւ, լացիր անոր վրայ ըսելով. Ե՛՛Ն ԳԵՄԵ՛՛ ԴԱ-  
ԳԵՆԵ՛ ՅԱ-Ա-ՐԱ ՅԱ-ՅԻ՛ ՎԵ-Ա-ԼԱ-ԼԻ-Ն Ա-  
Այսինքն՝ անկից ետքը երեսդ իրենցմէ պիտի ծածկեիր, ինչու որ շիճանչցան իրենց եղած այցելութեան օրերը:

Ով տէր իմ, որչափ ալ իմ հոգւոյս վրայ լացած ես, որչափ բարի աղդեցութիւններով իմ սրտիս այցելութիւնը ըրածես. ու քանի անդամ սուրբ հաղորդութիւնով սիրտս եկեր մտերես. բայց ես ապերախտ գտնըմելովս՝ ու քեզի արժանաւորական յարգութիւն շիտալովս՝ քեզ վռնտած եմ, չեմ ընդունած.

անոր համար հրեայներէն ալ աւելի յանցաւոր գտնըված եմ :

Բայց փրկիչ իմ դորովագութ, ես հաստատուն կառաջաղթեմ, որ ասկից ետքը ասանկ անշնորհակալ ու ապերախտ չըլլամ քեզի . ամեն կերպ սիրով կընդունիմ քու սյցելութիւններդ . իմ չար սովորութիւններս կըմերկանամ վրայէս, ու քուկին ոտքիդ տակը կըբռեմ, որ դուն տէր իմ յաղթանակաւ վրայէն անցնիս : Կառնում ձեռքս ձիթենիի ճիւղեր, ու այսպիսի փառաւոր հանդիսի օքս տղայոց հետ քեզ կօրհնեմ ու կըփառաւորեմ քու այնչափ մարդասիրութեանդ համար : Ունանան բայց իւլին, օրհնեալ ո՞յ գոստ յանան գիւղան, իսպան-լեն յերինս, և դաստի բայց անս : Կաղաչեմ տէր, տուր ինձի յարատեռութեան շնորհք ալ, որ կարող ըլլամ մոլութիւններուս կատարեալ յաղթել, որ չըլլայ թէ քեզ օրհնելու տեղ՝ քիչ մը ետքը հրեից պէս կանչեմ : Ես իւշ հան պու : Անոր համար կըխնդրեմ, որ միշտ քեզի հաւատարիմ մնամ :

Ը արտիստն :

Աւտի և մեք զյաղթական օրհնութեանցն զձայն . մատուցանեմք քեզ թագաւոր փառաց ընդ տղայսն օրհնաբանելով . բարեբանեալոր եկիրդ 'ի կեցուցանել :

Աւագ երկուշաբթի :

Ա. Պատարաց ՀՅ, ո՞՛է Աւագ պարունակն :

Յս Վաղձալի փրկիչ հոգւոյս , անինչ ցաւագին գիշեր եղաւ քեզի համար , երբոր յառաջ քան անդութ թշնամեացըդ ձեռքը մատնըվիլդ , գեթսեմանի պարտէղին մէջ մոտար աղօթելու . ու հոն բոլոր քաշելու չարչարանկներդ մէկիկ մէկիկ աչքիդ առջին բերիր , ու դառն մահը խաչին յիշելով՝ անանկ սոսկալի մահաբեր տրտմութեան մէջ ընկըդմած մնացիր , որ երեսի վրայ գետինը ինկած՝ ինչվան արիւն քրտինք քրտնեցար . ու մահվան դուռը հասածի պէս մէծ տաղնապ քաշեցիր :

Ա լու անմիտիթար փրկված իմ, հիմա  
կիմանամկոր, որ իմ մեղքերուս ծան-  
րութիւնը քեզ վար ձգերեն. իմ ապե-  
րախտութիւններս պատճառ եղերեն ան-  
մեծ տրտմութիւնը քեզի քաշել տա-  
լու: Ով ցաւագին տէր իմ, քեզ ան-  
օգնական երկրի վրայ ինկած տեսնալուս  
սիրտս շատ կըցաւի. առաքեալները քեզ  
միսիթարելու տեղ՝ մինակ թողուցեր մէկ-  
դի քաշված քնացերեն, թէպէտ եկար  
զիրինք արթնցուցիր, որ քեզի հետ ա-  
զօթք ընեն, բայց միշտ քունի մէջ գտար:

Ա հա առաքեալներուն պէս ես ալ  
խիստ անհօգ եմ աղօթքիս, ամենեին  
աղօթքէն համ մը չեմ առնուր. անոր  
համար աղօթից շնորհք տուր ինծի, որ  
միշտ քու սուրբ օրինակիդ. հետեիմ:

Խնչպէս դու տէր իմ չչա, ատ մեծ  
տրտմութեանդ ատենը ուրիշ բան չը-  
րիր, բայց եթէ աւելի մտադրութեամբ  
աղօթքի կեցար, ու վշտագին սրտով  
քու երկնաւոր հօրդ դիմեցիր: Հայր  
անցու յինէն պայտ բաժակ. բայց ու որպէս  
էս իսմիյ, այւ որպէս դու:

Լաղաշեմ տէր իմ, տուր ինծի առ

շնորհքը, որ մանաւանդ նեղութեանս  
ատեն աղօթքով քեղի դիմեմ, ու ա-  
մէն բանը քուկին սուրբ կամացդ յանձ-  
նեմ, ըսելով։ Ոչ որոշէ ես խնդի,  
այլ որոշէ դու։ Ու Հոգեոր փորձանք  
ըլլայ, ու թէ մարմնաւոր վիշտ ու ձա-  
խորդութիւն ըլլայ, երբոր դուն անանկ  
կամեցերեսնէ, կուղեմ ամէնն ալ սիրով  
տանիլ։ Ճայց գիտես սիրելի փրկիչ  
իմ, որ քու նեղութեանդ ատենը հրեշ-  
տակ քեզ զօրացուց ու մխիթարեց ա-  
սանկ ալ դուն զօրացուցիչդ հրեշտա-  
կաց, նեղութեանս ատենը իս թող մի  
տար, ու մխիթարիչ սուրբ հոգին խրկէ  
ինծի, ամէն։

### ԽՐՆ ԳԵՐԱԿԻ ԽԵՐԱՅԻՆ :

**Ա**յսօր անձառ լուսոյն ծագումն՝ ի փրո-  
կութեան մեր կատարումըն։ խոնարհի  
՚ի վերնատունն՝ ՚ի ստուերական տօնից  
լրրումն։ Նախ քան զընթրիսըն խորհր-  
դոյ՝ սփածաւ զենջակ արկօղն լուայ։  
և ջուր առեալ ծառայարար՝ զոտքս լուա-  
նայր զաշակերտացն։

Աանին հօր փառաց լուսոյ՝ պետքոս  
մերձիլ յոտս ոչ ներեր. այնըմ ձեռաց  
որոյ են գործք՝ երկնից երկնիք և երկ-  
րաւորք. որով կուրաց աշոք բացան՝  
խուլք և համերք արձակեցան. որ վե-  
րածեաց զինքն ՚ի ծովէն՝ սաստեաց ա-  
լեացն և լոեցին:

Վրիխոյն ընտրեալ հօտին փոքու՝  
սաստեր զխորհուրդն ոչ դիտելոյ. որով  
դառնայյր և հնաղանդէր՝ զոտսն և զգլու-  
խըս մաքրել մաղթէր. դլխոյս ասէ չէ ինչ  
պիտոյ՝ լուացումըն ջրոյ զի լուացեալ  
է. ոտիցըդ պէտք են մաքրութեան՝ յօ-  
դիլ ՚ի գլուխըս սրբութեամբ:

Դասուց իւրոց աշակերտաց՝ զօր նախ  
բանիւ վարդապետեաց. այսօր գործով  
զծայրագոյն՝ եցոյց յինքեան զխոնար-  
հութիւն. սպասաւորեալ հողեղինաց՝  
այն որ անհան է հրեղինաց. տարեալ  
պաշտօն իւր ծառայիցն՝ այն որ պաշտին  
՚ի սրովըէից :

Եթէ տէրս ասէ էից՝ և վարդապե-  
տըս բոլորից. զաշակերտացդ և զծա-  
ռայից՝ զոտըս լուացի ՚ի հնոյ աղտից.  
միմեանց և դուք համարնութեամբ՝ ցու-

ցէք զեռյն խոնարհութիւն . բարձրացել-  
լոյն 'ի կործանումն՝ և անկելոյ ընու-  
թեանդ կանգնումն :

Օքր մաքրեցեր յաւաղանին՝ մաքուր  
ձեռօք զոտրս նոցին . և ուսուցեր խո-  
նարհութեամբ՝ յաղթօղ լինել չար հը-  
պարտին . և զիմ լուս զտիղմըն մեղաց՝  
աղաշանօք սրբոյ գնդին . և ըզգնաց  
ուղղեաւ զոտին՝ խոնարհութեամբ ելիւք  
յերկինս :

## Աւագ երեքշաբթի :

Եւզե՞ւ առ չորսութիւն կը մի :

Ելուեսնեմ զքեզ ով տէր չն, իբրև  
չարագործ մը անօրէններուն ձեռքը  
մատնըլած, աւաղակի մը պէս քեղը ըրու-  
ներեն, սուրերով ու թուրերով չորս  
դիր առերեն . որոնց գլուխը ու առաջ-  
նորդը եղերէ յուդա քուկին առաքեալ-  
ներուդ մէկը, որ քիչ մը յառաջ պա-  
տուական մարմինէդ իրեն հաղորդած է-  
իր : Անծ ցաւ եղաւ սրտիդ յուդային ա-  
պերախտութիւնը . անոր համար վշտս ~

դին սրտով իրեն ըսիր : ՀՅԱ-ԴԱ համբա-  
ռելով հապահես պլութե հարդոյ : Ե՞լու տէր,  
շատ անգամ աս խօսքը իմ հոգւոյս ալ  
կըսես, որ քու մեղանեղ հաղորդվելէս  
ետքը, կելլեմ յուղայի պէս մեղքերովս  
քեզի մատնիչ կըւլամ :

Ետքը կապեցին քու բարերար ձեռ-  
վըներդ, իրըև թէ իրենց բարիք շընես.  
ու անխնայ քաշկոտելով տարին քեզ  
դատաւորին առջին հանեցին, ու առանց  
յանցանքի մը քեզ ճշմարիտ դատա-  
ւորդ անմեղաբար դատապարտեցին, ու  
սկսան սիրտ չիդիմանալու չարչարանք-  
ներ տալ քեզի : Ես եմ տէր ան մա-  
հապարտը, ինծի կըվայլէին ան քաշած  
չաշարանքներդ . ու դուն ինծի գթալով  
բոլորն ալ վրադ առիր, ու իմ մեղացս  
համար ղոհ եղար :

Վրդէն սաստիկ ծեծէն կուսածին  
մարմնոյդ վրայ ողջ տեղ չէր մնացեր,  
արիւնալից վէրքերդնաև քարերն ալ 'ի  
դութ կըշարժէին. բայց վայ ինծ տէր իմ,  
բաւական չեղաւ քարասիրտ դահիճնե-  
րուն սիրտը 'ի ցաւակցութիւն շարժելու :  
• Քեզ ճշմարիտ թագաւորդ թաղաւո-

բաց սուտ թագաւորի պէս քարի մը  
նստեցուցին . ծիրանիի տեղ մերկ ու  
վէրքերով լցված մարմնոյդ վրայ կար-  
միր քղամիթ նախատանաց ձգեցին .  
թագի տեղ՝ փշերով շինած պսակ մը  
անդթարար սուրբ գլուխդ դրին . ար-  
քունական գաւաղանի տեղ՝ անարգ ե-  
ղէդ մը ձեռքդ տրվին , ու ամէն զինվոր-  
ները քեզ ծաղը ընելով կուգային առ-  
ջիդ կիյնային , եղէդով գլուխդ կըծե-  
ծէին , ապտակ կըզարնէին , երեսդ կը-  
թքնէին , ու անանկ բաներ կընէին , որ  
խեղճութեանը մարդուն սիրտը չէր դի-  
մանար :

Ով համբերօդ ՀՅ , ով երկայնամիտ  
տէր , սիրտս կտօր կտօր կըլայ քեզ ա-  
սանկ տեսնելուս : Իմ հոգւոյս վէրքերը  
բժշկելու համար բոլոր մարմնովդ վի-  
րաւորեցար . իմ մեղացս փուշերը սրր-  
բելու համար փշով պսակվեցար . ու  
այնչափ նախատանաց ու նեղութիւննե-  
րուն համբերեցիր , որպէս զի իմ անձնա-  
սիրութիւնս ու հպարտութիւնս կոխես :

Երկըպաղանեմ քեզի ով փշով պը  
սակված դլուխ տեառն իմը ՀՅի , որ

Երկնից աստղները չեին արժանի քեզ  
պսակելու : Երկրպագանեմ քեզի ով  
լուսապայծառ աչք Յնի, որ բոլորովին  
խաւարերէ ու արիւններ վրայէն կրվա-  
զեն : Երկրպագանեմ քեզի ով հրա-  
շալի դէմք Յնի, որ հրեշտակները տես-  
նելով չեին յագենար, իմ սիրոյս համար  
ապտակվեցար, Թքով լցված անշքա-  
ցար : Ով գեղեցիկ յորդիս մարդկան,  
ինչպէս ողորմելի կերպարանք մտերես :

Կաղաչեմ ով ցաւագին փրկիչ իմ,  
քու սուրբ շարչարանացդ արգեամբը  
շնորհք տուր ինծի . փշով պսակվելուդ  
համար՝ մորքէս ամէն շար խորհուրդները  
մաքրես, ու զօրութիւն տաս ինծի, որ  
առ աշխրբիս դառն ձախօրդութիւննե-  
րուն համբերեմ : Թքով ու քէշ խօս-  
քերով նախատվելուդ համար՝ իս պահէ,  
որ ուրիշներուն վրայ գէշ շիխոսիմ, շի-  
բամբասեմ, ու նախատական խօսքերուն  
սիրով տանիմ : Ասստիկ ձաղանացդ ու  
կարմիր ծիրանւոյդ համար ածային շր-  
նորհքովդ հօգւոյս մերկութիւնը ծածկէ,  
որով քեզի հաճոյ ըւլամ, ամէն :

ԵՐԵՒ ԳՈՅՆԱԿԱՆ ՀԵՂԱԵՍԻ :

**Ե**լից զօրէնսըն մովսեսի՝ զոր խօսեցան  
՚ի սինայի . Եկեր ըզգառն օրինակի՝ և  
զբաղարջն ընդ Եղեգին . զհինն ՚ինորը  
փոխելով զըստուերն ՚ի լոյս ճշշմարտե-  
լով . փոխան դառին ինքըն դոլով՝ դառն  
այ նըւիրելով :

**Ե**նդ բաղարջին հաց անխըմոր՝ ետ ըզ-  
մարմինն իւր զերկնաւոր . ըզկուսածին  
անսերմնաւոր՝ զանապական և զհոգե-  
ւոր . ընդ ոչխարին արեան ուխտին՝ ետ  
մեզ զարիւն իւր ուխտ կրկին . և Եղե-  
գան դառնագունին՝ փոխան ըզվարս աս-  
տուածային :

**Խ**ագաւորն արարածոց՝ զհացըն կե-  
նաց ետ քաղցելոց . և ըզբաժակն ուրա-  
խարար՝ որք յաղամայ տրտմեցելոց . այս  
նոր ուխտ է իմոյ արեան՝ փոխան հընոյ  
ուխտին արեան . զոր յիշատակ իմ առ-  
նիցէք՝ մինչեւ Եկից ես միւսանդամ :

**Ճ**առղովեալքս ՚ի քէն հայցեմք՝ ընդ  
ժողովեալ մետասանին . որ զկենարա-  
բըդ քո մարմին՝ բաշխեալ ետուք ընդ  
բաժակին . շնորհեալ և մեզ տէր ընդ

նոսին՝ հաղորդ լինել քում սեղանին .  
կենաց հացիդ յոր փափաղիմք՝ և ըմ-  
պելոյդ ում ծարաւիմք :

'Ի յընտրելոց աշակերտաց՝ յուդաս  
մեկնեալ 'ի սուրբ գառանցն . զբարձօղ  
մղաց զգառն այ՝ մատնէր 'ի մահ ընդ  
արծաթոյ . 'ի յընթրիսըն հոգեւոր՝ մերձի  
ժըպիրհն և նենգաւոր . ուտելով ընդ  
վարդապետըն յաճախէ զիսարէութիւն :

Եցսըն խօսէր աղերսալի՝ խաւարելոյն  
վասըն դարձի . մի ոմն 'ի ձէնջ ասէ եղ-  
բարք՝ զիս մատնելոց է առ 'ի մահ . պետ-  
րոս լրւեալ զայն զարհուրէր՝ և ակ-  
նարկէր առ յովհաննէս . հարցանել թէ  
ով իցէ՝ դաւաճանող վարդապետին :

## Աւագ շորեքշաբթի:

Ա, զըլ, առ Յա, որ բարյետւառնի  
պնուան :

Որչափ մեծ եղաւ տէր իմ Յա հրեից  
ըրած անդթութիւնը, որ քեզ անանկ  
խեղճ կերպարանքը խօթելէն ետքը, ա-  
մինը միատեղ սկսան աղաղակել . Խո-

չէսցի . իսունոցի : Ո՞վ ածային արդա-  
 բութիւն , մեկն ալ չիդտնըլեցաւ փրկիւ-  
 իմ , որ վրադ՝ ի գութ շարժէր : Ո՞վ  
 անմեղ գառն այ , ձեռվըներդ կապած ,  
 զլուխդ փշով պսակված , բովանդակ  
 մարմինդ վէրքերով լեցված , վրադ ուժ  
 չէր մնացեր , ահա ծանր խաչ մըն ալ  
 ըերին ուսիդ վրայ դրին : Կարկեցիր աս  
 ալ սիրով տէր իմ ողորմած , ու մեր  
 մեղաց ծանրութիւնը անով վերցուցիր .  
 ու ինչպէս որ կենաց փայտովը ամենքս  
 ալ մեռանք մեղօք . անանկ ալ խաչին  
 փայտովը մեղ մահուանէ փրկես : Բայց  
 ամէն բանեէն աւելի խաչ եղան քեզի իմ  
 մեղքերս , որ քրիստոնեայ ըստալով՝ շատ  
 անգամ չարաչար կիրքերս կատարելու  
 համար՝ հրեաներէն ալ ապերախտ գտնը-  
 վեցայ . թող տրվի , որ դուն չարչարվիս ,  
 անսնց պէս պոռացի . երթայ խաչվի չնըր .  
 ես իմ կամքս կուզեմ ընել : Վա ցա-  
 ւագին տէր , ան ծանր խաչիդ տակէն  
 մոյմը ինծի նայէ , ու քարացեալ սիրտս  
 քուկին բորբոքեալ սիրովդ շարժէ , ու  
 սոսկալի քաշած ցաւերուդ իս ալ մաս-  
 նակից ըրէ :

կաւով գետինը ինկեր մնացերես, ու  
 քեզ վեր վերցընող մը չիկայ . անգութ  
 զինվորները շուաններով ասդին ան-  
 դին կը բաշկուտեն , օգնելու տեղ կը-  
 զարնեն , ու չըսած խօսքերնին չիմնար-  
 կոր : Բայց դու ովհ համբերօղ ՀՅԱ , յի-  
 շելով իմ փրկութիւնս, մեծ սէրդ քեզ  
 գետնէն վերցուց . բայց ինչ օգուտ որ  
 նորէն մեծագոյն ցաւ մը առջիդ ելաւ :  
 Տեսար ան բաղմութեան մէջը քուկին  
 ամենասիրելի մայրդ . անոր արտասուա-  
 լից աշվըներուն նայելով լսեցիր սրտիդ  
 մէջը անոր ցաւագին ձայնը : Ա ախ սի-  
 րելի որդեակիմ ՀՅԱ կըսէր սուրբ Ածա-  
 ծինը . ովհ քաղցրիկդ որդեակ , առ ինչ  
 խեղճ կերպարանիք մտերես , ինչ գէշու-  
 թիւն ըրիր դու որդեակ , որ քեզի մէկ  
 խղճացող մը չէ գտնըվեր , քեզ բռներ  
 մեռցընելու կըտանին . ողորմէ որդեակ  
 խեղճ մօրդ ողորմէ , խառնէ իմ կեանքս  
 ալ քու կենացդ հետ : Աս ցաւդ տէր  
 իմ ամէն քաշածներէդ մեծ եղաւ . բայց  
 աս ալ ինձի համար յանձն առիր , որ-  
 պէս զի իմ յաւիտենական դատապար-  
 տութեան վճիռը ֆնջես վերցընես , ու

Երկնաւոր հայրոդ ինծի հետ հաշտեցը-  
նես :

Ով մայր ցաւագին սուրբ Ածածին,  
կաղաչեմ քեղի, այսօր գունսրտիս զեղջ  
ու ճշմարիտ ցաւ մը տուր, որ մեղքե-  
րուս վրայ լամ ողբամ, որոնցմով պատ-  
ճառ եղայ ան դառն խաչը քու անմեղ  
որդւոյդ Հնի վրան դնելու . շնորհք ու  
համբերութիւն պարզեցէ ինծի, որ իմ  
թեթև խաչերս անտրտունջ ու սիրով  
տանիմ :

Երդ ականան նէլսէնէ :

Խնամող սիրոյն յիւր սիրելեաց՝ ըգ-  
տրտմութիւնըն փարատեաց . թացեալ  
պատառ տայ յուղայի՝ նրշանակեալ  
զգողըն մատնիչ . զոր առեալ և մերկա-  
ցաւ՝ յածային հոգւոյն շնորհաց . մատ-  
նեցաւ նախաշարին՝ ընդ մատնութեան  
վարդապետին :

«Օայրագոյն լուսոյն զըրկեալ՝ խաւա-  
րասէրն արտաքս ելեալ . տէրըն յոյտ-  
նէր լոյս եղելոցն՝ ըղգայթակղելն՝ ի գի-  
շերի . պետրոս խօսէր խրախուսելի՝ և

կրշտամբիւր հաւախօսի . զիւքն յաշ-  
խարհէ զփոխիլն ասէր՝ և բդգալուստ  
հոգւոյն պատմեր :

Ավեգրոնեան յայնկոյս ձորոյն՝ ՚ի վեր-  
նատունն ել խորհրդոյն . Եմուտ պար-  
տէղ ընդ պարտիզի՝ եմոյծ զադամ յա-  
դին դրախտին . մուծցես և զմեղ տէր  
ընդնըմին՝ ուստի հաներնախ զառաջինն .  
զի ժառանդել ըդհայրենին՝ արժանաս-  
ցուք մեք վերըստին :

Հոգայր ըգկրիցըն տրբտմաբար՝ ե-  
րիւքն եղեալ առանձնաբար . փրկել  
զաշխարհս հոգիս յօժար՝ բայց է բնու-  
թիւն մարմնոյս տրկար . ոչ ոմն ուժեղ  
և զօրաւոր՝ և ոմն անզօր վըտանգաւոր .  
այլ մի և նոյն գոլ միաւոր՝ կըրէր ըդ-  
կիրսըն կամաւոր :

‘Չայնիւ մաղթէր աղօթական՝ վասն  
իմ առ հայր իւր էական . ծունըր դը-  
նէր խոնարհական՝ որում կըրկնի ծունը  
ամենայն . եթէ փրկիլ մարդկան հնար  
է՝ առանց մահու իմ որ զրեալ է . բա-  
ժակ մահուս յինէն անցցէ՝ ոչ իմ կա-  
մաւ այլ քոյդ եսցէ :

Պօղեալ յերկիւղ քըրտանցն հու-

ման՝ ոլոռնաձև կայլակ վիժման։ 'ի զօ-  
րանալ հրեշտակ մերձեալ՝ զօրինական  
գիրըն լքցեալ։ զի կատարեալ էառ զբր-  
նութիւն՝ ածըն բան զմարդկութեան։  
պարտ էր զերկիւղ և զտրբտմութիւն՝  
յիւրումըն կրել տնօրէնութեան։

## Աւագ հենգաբթի :

'Ի յէշտառի սովորայի, և սընոյ հաղը-  
պութեան։

Այնչափ մեծ եղաւ քու սէրդ տէր իմ  
և փրկիչ իմ Յա, որ ետքի իրիկու-  
նը առաքեալներէն բաժնըվելու ատենը՝  
սիրտդ լեցուած սկսար զիրենք մխիթա-  
րել։ ու անճառելի խոնարհութեամբդ  
ուղեցիր անոնց ոտվընին լրվանալ, որ  
դրսի մաքրութեամբը հոգւոյն աղտո-  
տութիւնը մաքրես, ու իրենց խոնար-  
հութեան օրինակ տաս։ Ո՛վ անհասա-  
նելի խոնարհութիւն Յահիդ. Երկինքը  
սերովըէները ու քերովըէները քեզի  
կըսպասառորէին։ այսօր վերնատունը  
խոնարհեալ առաքելոց ոտքը լրվացիր։

Ա. իս, կաղաւեմ քեզի գթած տէր, որ  
առաքելոց բարեխօսութիւնովը այսօր իմ  
մեղքերուս ազտոտութիւնը լրվաս, ու  
խօնարհութեան շնորհք ալ տաս, որ  
հպարտութեանս յաղթեմ, ու քեզի  
նմանիմ :

Դայց էն մեծ ու անհուն սէրդ ան  
եղաւ տէր իմ և ած չչս, ու անպատ-  
մեղի շնորհք ու սրանչելիք, որ բոլոր  
երկնայինք զարմացան մնացին : Ով  
մարդասէր չչս, չիմոռցը վելու յիշա-  
տակ մը թողուցիր մեղի, որպէս զի միշտ  
մեղի հետ ըլլաս ու յաւիտեան մեղմէ  
շիրաժնը վիս . քու անմահարար մարմինդ  
մէր հոգւոյն կերակուր ըրիր . ու աս ա-  
մենասուրը հաղորդութեան խորհուրդը  
հաստատեցիր . ու այսօր քու ածային  
ձեռքովդ առաքեալներուն բաշխեցիր :  
Վ. սկից մեծ ինչ բան կրնայիր ընել մեղի  
ովքաղցը չչս . քեզմէ աւելիինչ կրնա-  
յիր մեղի պարդեել :

Վ. իտեմ փրկիչ իմ, որ շատ անգամ  
իմ սիրտս եկած ես, բայց արժանաւորա-  
պէս քեզ չեմ ընդունած . հիմա կըպա-  
ղատիմ քեզի տէր իմ որ այսօր իմ սըր-

տիս վերնատունը քու շնորհքներովդ  
մաքրես ու ղարդարես, ու իս անարժանս  
ալ սուրբ առաքելոց հետ քու սեղանիդ  
հաղըրդ ընես : Տուր ինծի ան հրեշտա-  
կային կենաց հացը, որուն սրտանց կր-  
փափագիմ . Խմցուր ծարված հոգւոյս  
անմահարար փրկութեան բաժակը, որ  
քուկին սիրովդ զմայլիմ : Տպաւորէ սըր-  
տիս մէջը քուկին վշտագին չարչարա-  
նացդ յիշատակը, որ աս սուրբ Խոր-  
հըրդեան մէջը մեղի յիշելիք թողուցիր :  
Խող մի տար տէր, որ քեզ սրտիս մէջ  
ընդունելէն ետքը՝ սատանան իր չար  
հնարքներովը իս մեղք խօթէ, ու յու-  
դային պէս քեզ իմ փրկիչս մեղօք վա-  
ճառել տայ : Ով սրբութիւն սրբոց,  
քեզ բոլոր երկինք չեն կրնար տանիլ,  
հրեշտակները կըսարսափին, արժանի  
ըրիր իս ասանկ մեծագոյն պարգևի . Խո-  
նարհութեամբ եկուր տէր իմ, իմ սըր-  
տիս վերնատունը բազմէ, ու երկնաւոր  
հայրդ ալ հետդ բեր . որ միշտ սրտիս  
մէջը բնակիլը, ու ես ալ 'ի ձեզ բնակե-  
լով շնորհօք՝ յաւիտեանս յաւիտենից  
ձեղի հետ միանամ, ամէն :

Երճ ուստան ներսեսէ :

**Ճ**առագայթ փառաց էին՝ որ ըստ ընութեանըս մարդկային . տագնապեցար՝ ի զիշերին՝ աղօթելով առ հայր յերկինս . ծագեաւ՝ ի մեղ զլոյսդ երկնային՝ և փարատեաւ զերկիւղ չարին . մասունք հոգւոց մեր և մարմին՝ յերկիւղ քո սուրբ բեկոնսցին :

**Ա**նրձեալ յուղաս որ մատնելոց՝ չանդերձ դասուն փարիսեցւոց . անկան նրման ստորանեկելոցն՝ որք յաւիտեան չեն կանգնելոց . յուղաս նենդաւ համբուրելով՝ առիթ մահու նշան տալով . փոխան սիրոյ զնա մատնելով՝ չար ընդ բարւոյ վըճարելով :

**Հ**այյնժամ առ գութ սիրոյն պետրոս՝ զծառային անուն մաղքոս . եհատ սուսերը զականջն աջոյ՝ որ ոչ լըւաւ տեառն իւրոյ . իսկ տէրըն մեր արագապէս՝ յունկըն մերձեալ բըժբշկապէս , առողջացոյց ածապէս՝ զոր ոչ տեսին կուրացն հանդէս :

**Ա**յոր հօտին փոքու ցրուեալ՝ քանզի զհովիւրն քաջ հարեալ . պետրոս մի-

այն ըգչետ երթեալ՝ ի յաղջկանէ վիմին  
շարժեալ. նըսանակեալ հաւըն խօսէր՝  
առ ՚ի պետրոս տէրն ակնարկէր. զբա-  
նըն յիշէր դառն արտասուէր՝ ՚ի դլոր-  
մաննէն դարձեալ կանգնէր:

Ըստրհեալ վիմին եկեղեցւոյ՝ զօր  
պահեցեր 'ի հոսելոյ, և կադնեցեր 'ի  
գլորելոյ՝ վասրն սրտիւն արտասուելոյ,  
կանգնեաւ և զիս տէր ընդ նրմին՝ 'ի գլոր-  
մանէ սայթ աքողին. տալով աչացս յորդ  
արտասուս՝ և ջուր նրման ծովու գլխոյս:

Ով կամաւ զանկապելին՝ կապեալ  
ըղձեռան արձակողին . 'ի յապարանսըն  
տանէին՝ կայիափայ և աննային . ծա-  
ռայն զերեսն այն ապտակէր՝ յորմէ-  
սրովթէն թևասքօղէր . թուք արձակեալ  
պիղծ բերանով յայն որ կուրին լոյս  
ծագեաց թքովն :

## Ляпурбаш:

ပုဂ္ဂန်များ မြန်မာနိုင်ငံတော်းမြို့။

Հայր Երկնաւոր, Նայէ Երկինքէն հաշտ  
ակամք աս սուրբ պատարագիս վրայ, որ

քու միածին որդիդ դառն խաչին վրայ  
կը բատուցանէ քեզի իմ մեղացսհամար :  
Ենցու վրայէս արդար բարկութիւնդ ա-  
նոր խեղճութեանը վրայ դժալով : Տես  
զորովագութ հայր , սիրելի որդւոյդ  
պատմուձանը արիւններու մէջ թաթ-  
խրված . տես քուկին մէկհատիկ որդիդ  
խաչին վրայ բարձրացեր , ձեռվըներէն  
ու ոտմըներէն գամվերէ . ու անոր սուրբ  
արեան ձայնը քեզի դէմ կաղաղակէ ,  
ու մեղքերուս թողութիւն կըխնդրէ .  
Հայր , Է՞՞կ Դ՞ոյս : Ո՞վ հայր իմ , թօղ  
աս մեղաւոր հոգւոյս յանցանքները . Ես  
անոր տեղը այնչափ չարշարանք քաշեցի ,  
խաչին վրայ գամվեցայ , ու բոլոր արիւնս  
թափեցի անոր փրկութեանը համար .

Հայր , Է՞՞կ Դ՞ոյս :

Աս ինչ գթած սիրտ է խաչելեալ  
տէր իմ ՔՅՈ , որ ան սաստիկ ցաւերուդ  
մէջ իս կըհոգաս : Ո՞վ քաղցր փրկիչ  
իմ , խաչին վրայ մերկ ողորմելի կախվե-  
րես , թշնամիներդ չորս դիդ առերեն ,  
ու սիրելի մօրմէդ ուրիշ միսիթարանք մը  
չունիս . բայց ինչ օգուտ որ , ան ալ  
խաչիդ տակը կեցեր կուլայկոր . Օ՞ս-

բաւի եմ կրկանչես խաչեն . լեղվոյլ  
խառնած քացախ կուտան բերանդ :  
Երկնաւոր հօրդ կաղաղակես . Վ. Տ ի, ոճ  
ի, ընդէր լոռի պէս . ան ալ ձայնդ  
շիլսեր : Ա ախ ցաւագին փրկիչ իմ չն,  
երկնի և երկրի մէջ շորս զամէն կախվէր  
կեցերես . ու մէկ գթացող սիրտ մը  
շիդտնըլիիր : « Քարերը կըպատռտրվին,  
արեգակը իր լոյսը կըդոցէ , լուսինը կը-  
խաւարի , ու երկիրը 'ի հիմանց կըշար-  
ժի . միայն իմ քարացեալ սիրտս ասանկ  
անդեղջ մնացերէ . ես եմ ան ապառած  
սիրտը , որ կրտեսնեմ քեզ իմ մեղացս  
համար արեան մէջ թաթիրված , ու  
գոնէ քեզի ցտւակից չեմ ըլլար :

Վ. Հա հիմա խաչիդ պլլոված կուլամ  
կրկանչեմ . ով վասն իմ խաչելեալ փրր-  
կիչ , առ աս թափած արցունքը աչվը-  
ներուս , որուն քու սիրտդ ծարտի է ,  
ու այսօր սրտիս ճշմարիտ զեղջը տեսնա-  
լովդ՝ անտանելի ցաւերուդ մխիթարանք  
ըլլայ : Ով ցաւագին տէր , տուր ինծի  
ետքի օրհնութիւնդ . հինգ սուրբ վէր-  
քերէդ վազցուր վրաս երկնային շնորհ. ք-  
ներ ու ողորմութիւն . բայց վոյ ինծ

ՀՅԱ իմ, դուն զլուխտվար ծռեր մեռեցիս :

Ով մեռեալ ած իմ ՀՅԱ, ահա օր թողութեան, ահա ողորմութեան աթոռ. քուկին բաղկատարած բաղուկդ կրդիմեմ, ու վիրաւորեալ սրտիդ մէջը կապաւինիմ : Ո՞ի բաժներ իս սրտիդ մէջէն տէր, որ քու անգին արիւնովդ փրկեցիր, ու խաչին վրայ մեռար :

Ով խաչափայտ փրկութեան, ինչպէս սիրտս կը ճամշես, քուկին անբարբառ ձայնդ սրտիս ներսիդին երթափանցէ : Քեզմէ կը բաշխի ու կը տարած վի ամէն քրիստոնէից շնորհք, համբերութիւն, քաջալերութիւն, մխիթարութիւն, սէր, ու սրբութիւն . անոր համար սրտանց քեզի կը բաթթը վիմ, քու վրադ քաշած չարչանքները ՀՅԻՆ թող սիրտս տապաւորվին, որ ՀՅԻՆ հետ խաչին վրայ ապրիմ ու մեռնիմ, ամէն :

ԵՐՃ ԿԵՍԱՆ ՆԵՐԱԵՒԻ :

Չար կապանաց մարդկան լուծիչ որ կապեցար ընդ կապելոյն . զիս արձա-

կես յինքնակապէս՝ մեղաց կապից դը-  
ժոխայնոյն . որ ընդ մեղօք պարտաւո-  
րին՝ կացեր անմեղդ ՚ի յատենին . յոր-  
ժամ փառօք դաս հայրենին՝ մի դատեն-  
ցես զիս ընդ նըմին :

**Պ**ատկառանօք հինն աղամայ՝ որ ձա-  
ղեցար վասրն նորա . ջնջեա զամօթ մե-  
ղաց լըբին՝ որով զերեսս իմ ծածկեցին .  
որ ներեցեր չար ծառային՝ ածեալ ձե-  
ռօք քեզ ապտակին . հայր ուժգնակի  
զգէմըս չարին՝ որպէս և զիս եհար ուժ-  
ին :

**Գ**ահըն լուսոյ յառաւօտին՝ ՚ի յուր-  
բաթու հընոյ զատկին . կայր առաջի  
դատաւորին՝ ծառայն նստէր ՚ի յատե-  
նին . ՚ի հարցանել պիղատոսի՝ տէրն  
ոչ առնէր պատասխանի . զի կանխասաց  
դիրըն լցցի՝ եղէ ես մարդ որ ոչ խօսի :

**Ա**ռամկական դասք զինուորաց՝ արկին  
հանդերձ նախատանաց . այնմ որս  
զգեստն է լըյսն փառաց՝ իրրե զօթոց  
զինքեամբ արկած . ՚ի ծունը իջեալ  
կատակէին՝ զգլուխն եղեգամբ հարկա-  
նէին, պըսակ ՚ի փշոց բոլորէին՝ ըղիու  
մեղացըն բարձողին :

Առակալին սերովթեից՝ բառնայր ինքեամբ ըզփայտ խաչին . մինչ 'ի տեղի գողգոթային՝ յորում եգեալ մարդն առաջին . ետունըմպել գինի զմըռսեալ՝ և կերակուր լեղեաւ խառնեալ . որով զպտղոյն դառըն ճաշակ՝ փոխեաց մեզ քաղցր և ախորժակ :

Ա երնականքն զարհուրեալ՝ տեսին ըղտէրըն մերկացեալ . և ըղչանդերձսըն բաժանեալ՝ պատմուճանին վիճակ արկեալ . ըղձեռուն և զոտսըն ծակեցին՝ ըստ յայտնապէս դաւթեան ձայնին . ընդ փայտ խաչին բնեռուցին՝ զմատունսն որ դրեաց 'ի տախտակին :

## Աւագ շաբաթ :

'Ե պատիւ լուսվան պետան :

Առողք Ա ծածին, ինչ տրտմագին օրեղաւ այսօր քեղի համար որ քուկին մէկ հատիկ սիրելի որդիդ աչքիդ առջին խիստ տանջանքներով մեռած աեսնելէդ ետքը՝ խաչէն ինջեցուցին, գերկդ տըմին : Ու մայր ցաւագին, ինչ սոս-

կալի ցաւ զգաց քու զթած սիրադ, երբոր տեսար միակ որդւոյդ գլուխը փուշերով ծածկըլված, աշվըները մթնցած, բերանը դոց, ձեռվըները ոտվըները պատրուտած, ու բովանդակ մարմնոյն վրայ ողջ տեղ մը չէ մնացեր: Աղքալով ասանկ կրկանչէիր. վայ ինծ խեղճ մօրս քաղցրիկ որդեակ իմ, վայ ինծ. ով անմեղ որդեակ, քու մարդասիրութիւնդ քեզ ինչ սահման հասցուց. մարդոց այնչափ բարիք ընելուդ համար՝ քեզ անողորմաբար խաչին վրայ մեռցուցին: Ով որդեակ, ուսկից գտնեմ մէյմ'ալ քեզի նման. առանց քեզի ինչպէս ապրիմ, ու ինչով սիրտս մխիթարեմ:

Իսյց ես ով մայր վշտագին, քուկին ոտքդ ինկած կաղաչեմ. թող տուր տիրամայր, թող տուր որ ես լամ ողբամ իմ մեռեալ փրկչիս վրայ. ես պատճառ եղայ անոր մահուանը, իմ մեղքերս զինքը աս խեղճութիւնը խօթեցին: Քուկին սյսօրվան ցաւերուդ, ու սիրելի որդւոյդ քաշած չարշարանացը համար ողորմէ ինծի. զին եմ Հանին պատուական արեանը, անոր համար իրրե քու որդւոյդ

դթա՛ իմ վրաս . ու մասնակից ըրէ իս  
ցաւերուդ : Անաւանդ ան ետքի քա-  
շած ցաւիդ . երբոր մեռեալ սիրելի որ-  
դիդ գրկէդ առին , ու գերեզմանը դրին :

Վ. և մեռեալ փրկիչ իմ , սուրբ գե-  
րեզմանիդ վրայ ինկած քու ցաւազին  
մօրդ հետ կուզեմ ողբալ : Ով անմա-  
հութեան պարդեատու տէր , ով արե-  
գակդ արդարութեան , այսօր մեռեալ  
գերեզմանի մէջ թաղվերես . ու ճառա-  
գայթդ փառաց հօր՝ երկրի մէջ ծածկը-  
վերես . ով ճշմարիտ ցնծութիւնդ երկ-  
նից , այսօր արարածք տրտմութեամբ  
վրադ արցունիք կը թափեն :

Ով մեռեալ ած իմ ՀՅ ՚ Բ. աս  
օրս է օր թողութեան և գթութեան ,  
մի զրկեր իս քու շնորհքէդ : Վ. և ՀՅ  
իմ , բոլոր մարմնոյդ վերքերէն ողոր-  
մութեան աղբիւրներ կը վաղեն . մանա-  
ւանդ վիրաւորված սիրտդ գթութիւն  
գթութիւն կաղաղակէկօր . դուն քու  
փրկագործութեան անհուն արդիւնք-  
ներդ հոգւոյս պարդեէ , որոնցմով քեզի  
յաւիտեան հաճոյ ըլլամ :

ԵՐԻ ԳԵՂԱԿԱՆ ԽԵՐԱՎԵՆՔ :

**Տ**արածեալ ձեռք ընդ ձեռաց՝ ոտք ընդ  
ոտից ընթանալեաց . փայտ ընդ փայտի  
դառն պտղոյ՝ կեանք ընդ մահու փո-  
խարկելոյ . 'ի մէջ երկուց անօրինաց՝  
կայր մերկացեալ տուօղն օրինաց . զոր  
ոչ տեսին աղգըն կուրաց՝ բաց 'ի միոյն  
առաջակաց :

**Պ**ոպէից արեգականն՝ ըզտիւն արար  
գիշերանման . զըստուերըն քօղ արկ  
մերկութեանն՝ զի մի տեսցէ ակն անար-  
ժան . 'ի մէջօրեայն նըսեմացաւ՝ յոր-  
ժամադամ մեղօք մեռաւ . 'ի յիններորդն  
'ի լոյս դարձաւ՝ յորժամ մահուամբ  
մահըն լուծաւ :

**Յ**օղէր արտօսը ցաւադին՝ մայր տեա-  
ռըն որ կայր մերձ առ խաչին . յորժամ  
լըսէր ըղծարաւին՝ բարբառելոյ իւր մի-  
ածնին . ետուն քացախ խառնեալ լեղի՝  
այնմ որ բղխեաց գետ յաղենի . և 'ի  
վիմէն վլոտակ բարի՝ արբոյց տոհմին դառ-  
նացողի :

**Խ**իւծեալ յերրորդ ժամու օձին՝ զմի-  
տըս նախները մօրն եւային . 'ի վեցն ան-

կեալ մարդն առաջին՝ հաւանական բա-  
նիւնորին . 'ի սոյն ժամու տէրն 'ի խա-  
շին՝ զի քաւեսցէ զմեղըս նոցին . և յոր-  
ժամ ել աղամըն հին՝ եղ զաւաղակն 'ի  
մէջ դրախտին :

Փարելի բարբառ ընդ իմ՝ էլի էլի  
առ հայր գոչէր . զհոգին կամաւ հօր ա-  
ւանդէր՝ զհոգիս մարդկան նոյն ընծայ-  
էր . երկիր հիմամբք սասանեցաւ՝ և վա-  
րագոյրն ընդ մէջ հերձաւ . վէմք 'ի  
յինքեանց պատառեցան՝ և գերեղմանք  
մահու բացան :

• Բարողի 'ի սքանչելեաց՝ ած մար-  
մնով վասն իմ խաչեալ . մերով ընու-  
թեամբըս մեռանի՝ ած անմահ խոստո-  
վանի . կըկնավըտակ կողին աղբերբք՝ ե-  
կեղեցի խոր հաստատի . ջրովըն մաքրի  
զարիւնն ըմողէ՝ զորդի ընդ հօր փառա-  
ւորէ :

՚Ի ՏՕՒԻ ԶԵՏԱԿԻՒ

Վաղարշեան օթ :

**Փառք** հրաշալի յարութեան քո տէր  
իմ ՀՅ ՚ԲՅ, որ քու ամենակարող զօ-  
րութեամբդ գերեզմանին արգելքը մէկ-  
դի ընելով՝ ածային ձրիւք զարդարված  
ու փառաւորեալ մարմնով յարութիւն  
առիր, ու քու յաղթական մահուամբդ  
մեղ յաւիտենական մահուանէ ազատե-  
ցիր: Ով մարդասէր փրկիչ իմ, ծագէ  
մոլիս մէջը սուրբ յարութեանդ լցյսը.  
ու իմ մէղօք մեռած հոգւոյս՝ որ իր չար  
սովորութիւններուն տակը թաղված է,  
դուն այսօր յարութիւն պարգևէ, ու  
գիշերվան մեղաց մթութիւնը՝ որ չորս  
դիս պաշարերէ, դուն փարատէ ու լու-  
սաւորէ:

Խւղարեր սուրբ կանանց հետ քու  
կենսատու գերեզմանդ կըդիմեմ, ու ա-  
նուշահոտ խունկի տեղ՝ իմ անարժան  
աղօթքս քեզի կըմատուցանեմ: Ուագ-

դաղենացւոյն պէս քեզ բաղձալի փրր-  
կից իմ լալով կը մինտուեմ : Ըստը ին  
պէտք է ու գուշականի աստիք՝ և ու  
հիւրեմ ու ը եռին պնտ : Ա լս տէր, քանի  
որ չէի մեղանչեր, քեզ սրտիս գերեղ-  
մանին մէջը ունէի . երբոր ապերախտու-  
թեամբ քեզի դէմ մեղանչեցի, դուն  
ալ իս սրբարար շնորհքներէդ զբկելով  
իմ սրտիս մէջէն հեռացար գացիր :

Աս սուրբ զատկին օրը կը բաղձամ սրբ-  
բաղան հաղորդութեամբ քեզ նորէն իմ  
սիրտս բերել, ու սուրբ յարութեանդ  
պտուղը վայելել . բայց կաղաչեմ տէր,  
իմ անարժանութեանս համար իս չիզըր-  
կես ըսելով . Ա ՞ Եղինակը յէս : ‘ Եայէ  
գթութեամբդ սրտիս փափաքին, եռանդ  
ու շնորհք տուր ինծի . հալածէ հոգւոյս  
թշնամիները : Իմէ որ սրտիս դուռերը  
գոց ալ ըլլայ, դուն քու ածային զօրու-  
թեամբդ վանէ ամէն արգելքը . ինչպէս  
որ դուռերը գոց վերնատունը մտար,  
ուր որ առաքեալները ժողված էին, ու  
ըսէ հոգւոյս . Խաղաղութիւն ընդ յիւ :

Ը արտիստն :

Այսօր յարեաւ 'ի մեռելոց փեսայն  
անմահ և երկնաւոր. քեզ աւետիք խըն-  
դութեան հարսն 'ի յերկրէ եկեղեցի .  
օրհնեա 'ի ձայն ցնծութեան զած քո  
սիով : Այսօր զատիկ մեր զենմամբ . Պահ.  
արասցուք տօն ցնծութեամբ , նորոգեալք  
'ի հնութենէ մեղաց ասելով . Պահ յա-  
րեաւ 'ի մեռելոց :

ԵՐԻՇՄԱՆ օն :

Հարեգութ փրկիչ իմ , երբոր թաղվե-  
ցար նոր գերեզմանին մէջը , հոգիդ ին-  
չաւ լիմպոսը՝ արդար հոգիները ան մութ-  
բանտէն ազատելու համար : Ու ետքը  
այնչափ անթիւ սուրբ նահապետները  
քեզի հետ մէկ տեղ բերելով՝ եկար  
դարձեալ գերեզմանը , ու անոր կնիքը  
ու քարերը խորտակելով ածապէս յա-  
րութիւն առիր : Կուրախանամ ես ալ  
քանի որ աս փառաւոր յարութեան յի-  
շատակը միտքս կըքերեմ . ինչպէս որ  
կըսորվեցընէ ինծի սուրբ կաթուղիկէ ե-

կեղեցին : Որսափ մեծ հանգես էր տեսնալը այնչափ երանելինահապետներուն ու մարդարէներուն հոգիները , որոնց մէջը դռւն ալ քուկին փառաւորեալ մարմնովդ արեգակի պէս կըփայլէիր , որուն մարմնաւոր աշվըներ չեն դիմանար :

Ե՛րբ պիտի ըլլայ տէր , որ քեզ փառաւորեալ տեսնամ , ու քեզ հրեշտակներուն հետ փառարանեմ : Ե՛րբ պիտի կարող ըլլամ ես ալ ան երջանիկ դասին մէջ դժնըվիլ , ուր որ են նահապետները ու մարդարէները՝ ու ամէն երկնից սուրբերը՝ ու բոլոր հրեշտակաց ու հրեշտակապետաց գունդերը , ու անոնց ձայնակից ըլլալ : Ե՛րբ պիտի գայ անատենը , որ քեզ մեր մարմնովը փառաւորեալ պայծառացեալ տեսնելու պիտի արժանի ըլլամ : Բայց քանի որ զրկըված եմ տէր երջանիկ քուկին արքայութենէդ , գոնէ ինձի շնորհք տուր , որ քաղցրանայ հոգւոյս քեզ փառարանելը , յիշելով քուկին փառաւոր տնօրէնութիւններդ , մանաւանդ սուրբ յառութեանդ յիշատակը : Երանի թէ ա-

մէն աշխարհք, ու ամէն աղջեր անդադար քեզ փառաբանէին . ինչու որ քեզի կը վայլէ փառք և պատիւ յաւիտեանս յաւիտենից, ամէն :

### Այս աղջեր վասն մշտելոց :

**Տէր իմ Քառական, այնչափ անսահման է քուկին արեանդ գինը, որ չէ թէ միայն կենդանի եղողներուն մեղքերը կը ջընջէ, հապանակ մեռնողներուն մեղաց պատիժներնալ կրքաւէ : Դուն մեզի խրատ տրվիր, որ մեր ոսոխին հետ հաշտրվելու նայինք, ու մեր պարտքը վճարենք, քանի որ ճամբան ենք նէ . շըլսոյ թէ դատաւորին ձեռքը մատնըվինք, ու բանտը դրվինք, ուսկից դժուար է խալսիլու : Իսպաց շատերը ածային արդարութեան ունեցած պարտքը չիվճարելով մեռած են . հիմա մենք կենդանիքս կաղաչենք, որ ան հոգիներուն պատիժը թեթեցընես : Կաթեցու անոնց վրայ քու պատուական արեանդ մէկ կաթիլը՝ որ բաւական է իրենց մեղքերը ու պատիժը քաւելու :**

Անսաւանդ սուրբ պատարագիս նու-  
էրը, որնոր քահանան կը մատուցանէ-  
անոնց հոգւոյն համար՝ մասնաւորապէս  
յիշեցընէ ան հոգիները, որոնք երկայն  
տաեն մեծ տանջանաց մէջ էին, իրենց  
մէղացը թողտվթիւն ու աղատութիւն  
չնորհէ: Տէր իմ բազմագութ, քու ա-  
րեանդ գինն է մեր ննջեցելոց հոգինե-  
րը, քուկին արեանդ գինը մի դատա-  
պարտեր. քուկին ձեռաց ստեղծուած-  
ներն են, քու ստեղծուածդ երեսէ մի  
ձգեր: Ողորմէ ինծի ալ, ու թողու-  
թիւն տուր իմ մէղացս. որպէս զի դա-  
տաստանին օրը աղատիմ ան սոսկալի  
տանջանկըներէն:

### Ը պըտիան :

Խանդ ած երևեալ մարմնով յերկրի  
քահանայապետ ճշմարիտ. որ 'ի վերայ  
խաչին պատարագեալ բարձօղ մէղաց  
դառն անարատ. աղաչեմք ըզքեղ յի-  
շեաւ զհոգիս նընջեցելոց մերոց. և հան-  
գո 'ի քում արքայութեան:

## ԵՐԵՎԱՆ օր:

Ովք բարեգութ տէր և փրկիչ, հաղար շնորհակալութիւն կրմատուցանեմ քու անսահման գթութեանդ, որ իս դառն չարչարանքներովդ ու մահուամբդ փրկեցիր չար թշնամնոյն ձեռքէն : Երբոր տէր իմ խաչին վրայ մեռար, ամէն արարածք տրտմութեամբ քեզ կողբացին, իսկ սուրբ յարութեանդ աւետիսը լսելով՝ նոր ուրախութեամբ միսիթարովեցան :

Լուսապայծառ հրեշտակները սուրբ դերեզմանին չորս գին բոլորած ցնծութեամբ կրկանչեն . Չէ ասո, այլ յարեն: Երջանիկ կոյս ածամայրը անպատմելի խնդութիւնով սիրտը լեցված՝ քեզ յարուցեալ միածին որդիդ կրբարեէ գոչելով : Օքրինէր հաստին . պարինէր ստուխուս և օքհնութեամբ: Սուրբ առաքեալները ու իւղարեր կանայք բուլը աշխրիս աւետիս կուտան . Յժէ արդարն յարեն տէր: Ե՞մ տէր, իմ հոգիս ալ սուրբ յարութեանդ կրիփափաքի, ու ցանկալի տեսոյդ մեծ կարօտ ունի .

ասանկ շնորհաց օր մը, լսէ իմ աղաւանքիս :

Եցյս ճշմարիտ ՚Բ.՝ ծագէ այսօր սրտիս մէջը հրաշափիառ յարութեանդ լցար, ու մի զրկեր սիրող հոգիս քուկին մեծամեծ պարզեներէդ, որ շատերուն յարութենէդ ետքը բաշխեցիր: Վեցուր իմ հաւատքս, հաստատէ իմ յոյսս, ու բորբոքէ սրտիս մէջը ճշմարիտ սէրդ, որ քուկին տրված երանութեանդ արժանի ըլլամ: Հեցուր հոգւոյս ան սուրբ վէրքերդ, որ ամէն մէկը արքայութեան մէջ արեգակի պէս կրփայլին՝ որ մէծ փափազով առանց կըշտանալու պազնեմ, ու անոնցմով զմայլիմ: Իաց տէր հոգւոյս աչվրները, որ քեզ բարերար փրկիչս ճանչնամ, ու արժանապէս օրհնեմ ու գովեմ, ամէն:

Ը արտիսն:

Պ. յսօր հրեշտակք ՚ի բարձունս ուրախանան ընդ մարդկան. որք իջեալ ՚ի յերկնից տան զաւետիս աշխարհի ցընծացէք այսօր ՚Բ.՝ յարեառ ՚ի մեռելոց:

՚Եւ գօնի աւելումն :

Ո՞վ ամենասուրբ Արքամ, ո՞վ ամենախոնարհ կոյս, քուկին մեծադոյն սըրբութեանդ ու մաքրութեանդ համար այնչափ հաճոյ եղար այ առջելը, որ մինչև քեզ իրեն մայր ընտրեց, ու բոլոր երկնի և երկրի թագուհի ըրաւ: Ահծապէս կուրախանամ սուրբ Ածածին՝ տեսնալով քեզ այսօր ածամայրութեան գերագոյն շնորհքին արժանի եղած. որ միածին որդին այ երկինքը թողուցեր, ու անապական արգանդիդ մէջ քու արիւնէդ իրեն մարմին առեր, մարդ եղերէ ինծի համար: Հոգին սուրբ բոլորովին վրագինջաւ, ու անոր շնորհքը քեզի հովանի եղաւ: Հայրն երկնաւոր քեզ իրեն սիրելի դուստր ընտրեց: իսկ որդին այ բովանդակ՚ի քեզ ու քուկդ եղաւ:

Խոնարհութեամբ առջիդ ինկած կողջունեմ քեզ գարրիէլ հրեշտակապետին հետ: Ողջոյն ընդ քեզ կոյս Արքամ, լի՛շնորհք: Ո՞վ մայր այ, որշափոր անարժան ըլլամ շնորհքիդ, ա-

սանկ ուրախալի օր մը իս մի մերժեր ու-  
ղորմութենէզ : Կոյս գթած, մարմնաւոր  
իշխանները իրենց իշխանութեան հասած  
օրերնին՝ բանտի մէջ եղողները կար-  
ձրկեն, մահապարտներուն կըներեն .  
իսկ դուն հզօր թագուհի երկնից և հրեշ-  
տակաց, ածամայրութեան շնորհաց ա-  
թոռը ննտած՝ պիտի չողորմի՞ս ինծի :  
Չարաչար մեղքերովս սատանային գերի  
ինկայ, ու այ արդար վճռովը 'ի մահ  
դատապարտվածեմ . դուն այսօր ածա-  
մայրութեան իշխանութիւնովդ երկըն-  
ցուր վրաս ողորմած ձեռքդ . ու աղա-  
տելով իս գերութենէ՝ ընդունէ քեզի  
մշտնջենաւոր ու հաւատարիմ ծառայ :  
Ի՞վ կոյս լի շնորհօք, լոցուր սիրաս պէս-  
պէս շնորհքներով . ինչու որ չէ թէ  
միայն իմ կորսնցուցած շնորհքս դուն  
դտար, հապա նոյն իսկ բովանդակ շնոր-  
հաց տէրը ու գանձը քու քովդ է :

Աւրաիս լեր կոյս անարաատ, որ բոլոր  
ստեղծուածներու մէջ դուն միայն մայր  
այ ընտրեցար : Աւրաիս լեր սօւրը Ածա-  
ծին, որ այսօր որդին այ երկինքէն վար  
ինջաւ, ու քու մաքուր արդանդիդ մէջ

բնակեցաւ : Ուրախ լեր Երջանիկ Վարի-  
ամ , որ ամենասուրբ Արքորդութիւնը  
քեզ անանկ գերազանց շնորհ քներով  
զարդարեց , որ սերովբէները ու քերով-  
բէները իսկ Երանի կուտան քեզի : Ու-  
րախ լեր բերկրեալ կոյս Վարիամ , որ  
իբրև առաւօտ պայծառ ծագեցար նրկ-  
րիս , ու դիշերային տրտմութեան խա-  
ւարը փարատելով՝ ամենուն սիրար ու-  
րախութեամբ լեցուցիր . անոր համար  
օրհնեալ ես դու յաւիտեանս , ամեն :

### Ը պատիսն :

Սորհուրդն անձառ ծածկեալն յաղգաց  
և յաւիտեանց . յայտնեցաւ իջմամբ հը-  
րեշտակապետին այսօր առ կոյսն Վա-  
րիամ . զոր առ տէր ունիմք բարեխօս  
վասն անձանց մերոց :

### Դ ածնի համբաւյն :

Տէր իմ , դուն խոստացար որ մեզմէ ա-  
մենեին չես բաժնըլիր . և թէ մինչեւ որ  
Երկինք չերթամնէ , միսիթարիչ հողին

չիգար : Անոր համար թէպէտ մարմնաւոր տեսլեամբ մեղմէ հեռացար , բայց կաթուղիկէ և կեղեցին ուրախութեան տօն կըկատարէ , հոգւոյն սրբոյ միսիթարական շնորհքը վայելելով : Կաղաշեմ բարերար փրկիչ , որ իղմէ ալ չհիշեռանաս . չըլլայ թէ իմ մեղքերսու չար ախտերս իմին ու քուկին մէջըդ ամպիպէս իյնալով՝ քեզ իղմէ զատեն : Ո՞սիթարիչ հոգիդ միշտ ինծի հետ ըլլայ . քուկին սուրբ աղդեցութիւններդ իս միշտ միսիթարեն , ու լուսաւորեն : Ամէն բարի տուրքերը , ու ամէն կատարեալ պարզեներդ վերէն քեղմէ կուդան : Դուն անոր համար վեր ելար բարձրացար , որ մեղի աւելի օգնես , մանաւանդ ինծի որ ամէն երկնաւոր օգնութեան կարօտ եմ :

Այսօր աշկերտներդ առիր ձիթենեաց լեռը ելար . միսիթարական խօսքերով անոնց սիրտ տալէն ետքը՝ ամենասուրբ ձեռքովդ զիրենք օրհնեցիր : Ի՞նչ ուրախութիւն ունեցան առաքեալները , երբոր քեզ տեսան , որ ածային փառօք երկինքը կըվերանայիր . ինչ խնդու-

թիւն էր քեզ տեսնալը, որ այնչափ  
նահապետներու ու մարգարէներու հո-  
գիներով, ու բիւրաւոր հրեշտակներու  
գունդերով երկինքը կըհամբառայիր:

Վ. Խ տէր իմ Յն, հոգիս տրտում  
տխուր մնացերէ միշտ աս երկրիս վրայ,  
ու քեզ բաղձալի փրկիչդ կուղէ. գոնէ  
տէր ասանկ շնորհաց օր մը խաչակնքէ  
վրաս երկինքն քուկին օրհնեալ ձե-  
ռօքդ. տուր ինծի ալ առաքեալներուդ  
տրված օրհնութիւնը: Կիտեմ տէր,  
որ մեզ որբ չես թողուր, կերթաս քու  
հայրենիքդ, որպէս զի հոն մեզի համար  
տեղ պատրաստես, ուանկէց ետքը իր  
ատենին մեզ հոն կըկանչես, որպէս զի  
ուր որ դուն ես, մենք ալ քուկին ծա-  
ռաներդ հոն ըլլանք: Աւտի ես ալ աս  
աշխարհքս մեծ փափաքով կըսպասեմ,  
որ իս արժանի ընես քուկին անվախ-  
ճան արքայութեանդ, ամէն:

Հ արտիան:

Հ ամբարձաւ տէրն մեր Յն օրհնու-  
թեամբ ընդ ամպս երկնից. և առաքե-

լոյն երկրապագեալ դարձան յերուսաւ-  
ղէմ . միարանութեամբ վեր առաքէին  
զաղօթս :

՚Ի տօնի հոգեգալստեան :

Վ. առաջն օր :

Կենդանարար սուրբ Հոգի , ինչպէս որ  
լուսաւոր լեզուի ձևով առաքելոց վրայ  
ինջար , անոնց միտքը լուսաւորեցիր ,  
ու սիրտերնին այ սիրով վառեցիր . ա-  
նանկ ալ վառէ հիմա իմ սիրտս . զօ-  
րացուր իմ տկարութիւնս , ու լուսա-  
ւորէ միտքս : Վ. ու աքեալները յառաջ  
քան քուկին գալուստդ , անանկ թանձ-  
րամիտ էին , մինչև շատ անդամ ՚Ք. ս  
զիրենք յանդիմանեց . բայց երբոր դուն  
շնորհօք լուսաւորեցիր , ան ատեն իմա-  
ցան՝ թէ ինչ է ժամանակաւոր բարին  
ու յաւիտենականը : Վ. յաօր լուսաւո-  
րէ իմ մոքիս թանձը խաւարնալ , որ  
ճանչնայ աշխարհային ունայնութիւնը .  
մարդկան նկատումը՝ որնոր մեծ բանի  
տեղ կըդնէ , արհամարհէ , ու միայն

Երկնաւոր բարիքը ու առաքինութիւնը  
մեծ սեպէ :

Երբոր ՚Քս պիտի մատնըվէր, ամէն  
առաքեալները թողուցին ու փախան,  
ու պետրոս գլուխ առաքելոց իր Երկնա-  
ւոր վարդապետը ուրացաւ. բայց Եր-  
բոր քեզմով զօրացան, ան ատեն ա-  
մենեին մեռնելու ալ պատրաստ էին,  
նեղութիւնները ու հալածանքը ուրա-  
խութեան արժանի կրսեպէին : ՚Կուն  
նմանապէս զիս ալ շնորհքովդ փոխէ,  
որ գոնէ կարող ըլլամ համբերել, ինչ  
հիւանդութիւն, նեղութիւն, կամ փոր-  
ձանք որ վրաս գալու ըլլայ : Ա Երջապէս  
ինծի հոգեւոր կեանք շնորհէ, ինչու որ  
դուն ես մեր հոգին կենդանացընողը .  
ինչպէս որ մարմինս առանց հոգւոյ մե-  
ռած է, անանկ ալ հոգիս թէ որ զուրի  
ըլլայ քուկին շնորհքէդ հոգեւորապէս  
կրմեռնի . անոր համար բոլոր սրտանց  
կրբաղձամ քեզ ընդունիլ, ինչպէս որ  
առաքեալները ընդունեցան : Ե՞կ սուրբ  
հոգի, իմ մեղքերուս թողութիւն տուր,  
զանազան շնորհքներով իս լեցուր . ո-  
արժանի ըրէ, որ քեզ հօր այ, ու միտ-

ծին որդւոյն հետ փառաւորեմ յաւ-  
փառանս յաւիտենից, ամեն :

Ը պըտիան :

Աղքիւր կենաց բաշխող շնորհաց հոգիդ  
իջեալ 'ի բարձանց, զանապական պար-  
գևս քո բաժանեցեր յառաքեալսն :

Երիբորտ օք :

Ով շնորհաբաշխ սուրբ հոգի, դուն  
քաղցր միսիթարիչ տըրտում հոգինե-  
րուն . դուն գթած բժիշկ վիրաւորված  
սրտերուն . դուն անվտանգ նաւահան-  
դիստ ալեկոծելոց աս աշխրքիս ծովուն  
մէջ : Եկով խաղաղարար սրտիս, քու-  
կին անհասանելի շնորհքներովդ ներսս  
խաղաղութիւն ըրէ . եկով սէրդ ածայ-  
ին, ու բորբոքէ սրտիս մէջը անշիջա-  
նելի հուրը, որ մեղքերէս սրբըվիմ . լու-  
սաւորէ իմ խաւարս, ու փորձութեանց  
հովերը դուն վրայէս ցրուէ . բարի խոր-  
հուրդներ աղդէ մորիս մէջը, ու հոգւոյս  
զօրութիւնները միայն քուկին փառացդ

Համար ուղղել, որով քեզի արժանի ըւ-  
լամ :

Արպաղատիմ քեզի ով ած իմ սուրբ  
հոգի, մէյմը այցելութիւն ըրէ սրտիս,  
որնոր մկրտութեամբ աւազանին շնոր-  
հաց իս քեզի տաճար պատրաստեցիր :  
Ով տէր, թէպէտ չունիմ սրտիս մէջը  
քու ածութեանդ վայելուչ պատրաս-  
տած բնակարան, որ առաքելոց պէս  
իմ վրաս ալ իջնաս, ու միշտ ինծի հետ  
բնակիս . բայց կը ջանամ ասկից ետքը  
քուկին շնորհօքդ ամէն երկրաւոր ու ու-  
նայն բաներէն սիրտս հեռացընել, ու  
քու սուրբ գալստեանդ սպասել : Օքէրո  
սուրբ հասպէս յէս ած, և պէս ուղիւ-  
նորդէս 'է հորէ ինու : Որչափ որ մե-  
ղաւոր ըլլամ, որչափ որ անարժան ըւ-  
լամ, բաւական է մի միայն շնորհօքդ իս  
բոլորովին արդարացընելու : Ով բա-  
րերար տէր, այսօր հազարաւոր մարդ-  
կանց մէկէն բաշխեցիր շնորհօքդ . ասանկ  
բարերադդ օր մը ե՞ս միայն պիտի ան-  
բաղդ ու անարժան գտնըլիմ . ամէն  
շնորհաց աղբիւրին մօտ ըլլալով՝ ծարա-  
ւի՞ ետ դառնամ :

Վասուրը հոգիոդ ած , սուր քեզ  
բալորովին ինծի , ու խմցուր ծարված  
հոգւոյս անմահարար բաժակէդ . միշտ  
քուկին ցանկալի ներկայութիւնդ իզմէ  
անպակաս բրէ , ու դուն առաջնորդէ  
արքայութեան ճամբան , ամէն :

Ը արտիսն :

Անմահարար բաժակ հեղեալ յերկնից  
սուրը հօգի . զոր արրին ՚ի վերնատա-  
նըն դասք սուրը առաքելոցն . օրհնեալ  
ես սուրը հոգիդ ճշմարիս :

՚Ն առնէ այսեւս-լեան :

Ով գանձապետ ածային շնորհաց կոյս  
Պարիամ , որչափ անհասանելի շնորհքի  
արժանի եղար մայր այյ ըլլալով , որ ած  
իր ողորմութիւնը քեզի յանձնեց բո-  
լորովին , որ ամէնուն ալ առատութեամբ  
բաշխես : Ոչկ անգամ միայն այցելու-  
թեան երթալով քու աղքականիդ՝ ան-  
բաւ շնորհքներ պարզեցիր . սրբուհի  
եղեսարեթը հոգւով սրբով լեցուցիր ,

սռւրբ յովիչաննէսը արդանդին մէջը սըր-  
բեցիր . ու բոլոր տունը երկնային օրհ-  
նութիւններով զարդարեցիր :

Ով մայր ողորմութեան , երբ պիտի  
իմ մեղաւոր հոգւոյս ալ այցելութիւն  
մը ընես . գաս տեսնաս անոր խեղճու-  
թիւնը , ու շառհքներով զինքը լեցը-  
նես : Ատուգիւ գիտեմ տիրուհի , որ  
դժած սիրտդ չիդիմանար , շուտմը կո-  
ղորմիս ինծի . ուրեմն մի ուշացըներ քու-  
կին այցելութիւնդ , ու իմ անարժանու-  
թեանս ու ապերախտութիւններուս մի  
նայիր : Ամսնաւոր շնորհք տուր երախ-  
տագիտութեան , որ ճանչնամ քուկին  
ըրած բարիքներդ , ու սրբուհի եղիսա-  
բէթին պէս աղաղակեմ քեզի : Ուստի  
է ինծի աս շնորհքները . ինչ մէծա-  
գոյն բարից ՚ ինծի եղածը , որ մայրն  
այ ու թագուհին երկնից իմ աղքատ  
սրտիս այցելութիւն կընէ , ու հոգւով  
սրբով իս կըլեցընէ : (Օրհնեալ ես ա-  
մէն արարածոց մէջ քաղցրադութ Ան-  
րիամ , ու օրհնեալ ըւայ քուկին սի-  
րելի ածորդիդ . որ քեզ գերագոյն իշ-  
խանութեան ու փառքի հասցուց , ու

ասանկ ողորմած սիրտ մը տրվաւ քեզի :

Ի այց աւելի մեծագոյն շնորհ,ք մը կը խընդրեմ քեզմէ սուրբ Ածածին, մահուանս ատենը այցելութիւն մը ըրէ ինծի . ինչու որ շատ կարօտ եմ անետքինեղութեան ատենս քուկին ներկայութեանդ : Այցը ես իմ փրկութեանս, մայր ես երկնային գանձուց . քուկին խնդրուածքդ պարապ չերթար, դուն բարեխօս եղիր ինծի, ու փրկէ իսգթած տիրամայր, ամէն :

### Ը պատիսն :

Այցը և կոյս աղախին Քնի . որ բարեխօսդ . ես միշտ աշխարհի . քեզ երանեն ամենայն աղինք :

**'Կ տօնի վարդավառին :**

### Ա պատիսն օր :

Ի՞նչ անպատմելի երջանկութեան արժանի եղան տէր իմ ան երեք առաքեալները, որ թափօր լեռան վրայ քու

ածութեանդ լոյսը իրենց յայտնեցիր.  
մինչև առաքեալները խելվանին կորսըն-  
ցուցին, ու չեին գիտեր ինչ կրխօսէին :  
Խմէ որ մարմնաւոր լոյս մը՝ որ փառա-  
ւորեալ մարմինէդ ծագեցաւ, անանկ  
սքանչելի ու զմայլելի եղաւ անոնց, որ  
ամէն բան մոռցան, ու կրխնդրէին  
քեղմէ, որ միշտ հռն մնան . արդեօք  
ինչ պիտոր ըլլաս ով ած իմ դուն բո-  
լորովին արքայութեան մէջ, ու ինչ  
մէծ երանութիւնէ քեզ հռն տեսնալը :

Կաղաչեմ տէր իմ չչ՛ս, լուսաւորէ  
պյսօր անձառելի լուսովդ միտքս, որ  
սուրբ մտածութիւններով երկինք վե-  
րանայ, ու հոգեւոր բաները սիրէ : Կի-  
տեմ տէր, որ միտքս քանի որ երկրա-  
ւոր բաներու հետ է, չիկրնար հոգեւո-  
րին համը առնուլ . արքայութեան փա-  
փաքը ունենալ . անոր համար վառէ  
սիրտս երկնային սիրով, որ աս աշխարիս  
փառքը, պատիւը, ու ունայնութիւնը  
միտքս կուրացընելով իրեն չիքաշէ :  
Արդեօք պիտոր ըլլայ տէր, որ սիրտս  
ամեննեին կարող չըլլայ քեղմէ բաժնը-  
վիլ . կարող չըլլայ քեղմէ 'ի զատ բան

մը սիրել .ու քեզ արքայութեան փառքին մէջ տեսնալով՝ միշտ զմայլիլ յափտեանս յաւիտենից , ամէն :

### Ը Հ Ա Ր Ա Խ Ա Յ Ի Ա Յ Ի :

Քրիստոս աստուած մեր՝ շնորհեաւ մեզ  
ընդ պետրոսի և ընդ որդւոցն զերեթ-  
եայ. արժանաւորիլ քում ածային տես-  
լեանդ :

### Ե Ր Ա Ր Ա Տ Ո Ւ :

Ա յ ս ս ո ւ ր բ ա ր ք ա յ ո ւ թ ի ւ ն , ո վ ե ր կ ն ա յ -  
ին հայրենիք , երրոր քեզ կը յիշեմ ,  
քուկին անպատմելի գեղեցկութիւններդ  
կը մտածեմ , սիրտս վեր կելլէ , ու ար-  
ցունքս չեմ կրնար բռնել : Ո՞չ տէր ,  
աս անցաւոր երկրիս վրայ սիրտս մխի-  
թարութիւն մը չունի . քեզմէ 'ի զատ  
ինչ բանի որ կը բաղձամ , ինչ որ կու-  
նենամ , ամեննեին սիրտս չիհանդչիր ,  
միշտ իր արարիչը կը փնտուէ , ու քեզ  
կուղէ : Ա ս ա ն կ ո ր բ մնացերեմ տէր աշ-  
խըրքիս մէջ . ու զիշեր ցորեկ քուցան-

կալի գալստեանդ կըսպասեմ : Ա այ ինձ,  
զի ընդ երկար եղեւ պանդխտութիւն իմ :

Ուր է տէր քու անսուտ խոստմունքդ,  
թէ երկար ատեն իս որբ պիտի չիձգէիր,  
դայիր պիտոր իս քու քովդ առնուիր :  
Տէր, երբ պիտի ծագի ան երջանիկ օրը,  
որ քեզ իմ փրկիչս աչօք բացօք տես-  
նամ, ու քուկին ածային տեսովդ զմայ-  
լիմ : Տէր, երբ պիտոր ըլլայ, որ քե-  
զի հետ անլուծանելի սիրով միանամ,  
ու յաւիտեանս քեզմէ չիրաժնըվիմ :  
Տէր, երբ պիտի երկինքը քեզ անդա-  
դար օրհնեմ ու փառարանեմ ամէն  
հրեշտակներուն ու սուրբերուն հետ,  
ու ճշմարտապէս ըսեմ ես ալ : Տէր  
բոլոր է եղա աստ լնիլ :

Վաս տէր, ասչափ ըրած հառաչանք-  
ներս ու հեծութիւններս պարապ չանց-  
նին . քուկին զթած սրտիդ մէջ գութ  
մը ձգեն, որ վրաս խրզճալով բարի մա-  
հուամբ մը աս արտասուալի աքսորան-  
քէն ազատես, ու սուրբ արքայութիւնդ  
ընդունիս : Հանկամ ելանել 'ի մարմ-  
նոյս, և լինել ընդ քեզ տէր իմ հայ,  
ամէն :

Հ Ա Ր Ա Խ Ա Ն :

Հառաշեցի զանլոելի զհեծութիւնն առ  
բարեգութն ած , և ըսւաւ ինձ 'ի լեռնէ  
սրբոյ իւրմէ . և եհան զկեանս իմ յա-  
պականութենէ :

Դ Ա Ծ Ո Ւ Խ Ա Մ Ա Ն :

Ե Ր Ա Վ Ե Խ Ա Ն :

Ով հրաշափառագոյն թագուհի երկ-  
նից բարեգութ կոյս Ա'արիամ , խոնար-  
հութեամբ աթոռիդ ոտքը ինկած՝ կեր-  
կրպագանեմ քեզի , որ սերովբէներէն  
ու քերովբէներէն վեր բարձրագոյն իշ-  
խանութեան ու շնորհաց հասերես : Լու-  
սյօր հառաշանքիս ձայնը , որ աս թշու-  
տո աշխորքիս աքսորանաց մէջ՝ անմիսի-  
թար սրտով արցունք թափելէն ուրիշ  
բան մը չունիմ : Ա'այր ողորմութեան ,  
դթած աչվրներդ խեղճ մեղաւորիս վրայ  
դարձուր երկինքէն , ու մի անարժան հա-  
մարիր իս շնորհքիդ : Ով կոյս ողոր-  
մած երկինքը վերացար , որպէս զի տես-

նալով անկից իմ կարօտութիւնս՝ աւելի օգնես ինձի:

Խնչ անպատմելի ցնծութիւն եղաւ արդեօք երկինքը, երբոր բոլոր հրեշտակները, սուրբերը, ու նոյն ինքն միածին որդիդ քեզ մեծ փառօք առին երկինքը տարին։ Խնչ անուշ մեսեղիքներու ձայն կըլսվէր հրեշտակներուն ու սուրբերուն բերնէն, որ միաբերան կըկանչէին. Դու բարձրութիւն վերին երուսաղեմի. դու ցնծութիւն արքայութեան, դու տիրուհի մեր և թագուհի։ (Օրհնեալ ըլլայ ամենասուրբ երբորդութիւնը Հայր Որդի և Հոգին սուրբ, որ քեզ աս աստիճան փառաց հասցուց, ու մեզի թագուհի ըրաւ։ Ես հա ասկից վերջը երանի տան քեզի ամեն ազգերը ով երջանիկ կոյս. ինչու որ արքայութեան մէջ քու ածորդւոյդ աջ դին նստերես, ու երկնից դանձերը քեզի յանձնըվերէ։

Ես ալ դթած տիրամայր, իմ անարժան ձայնս կըխառնեմ հրեշտակաց օրհնութեանցը հետ, ու մեծապէս կուրախանամ քեզ տսանկ փառաւորեալ

տեսնալուս : Յիշէ իս բարեգութ Այա-  
րիամ, ու ասանկ շնորհաց օր մը թող  
մի տար, որ քու ողորմութենէդ զրկը-  
վիմ : Կիտեմ, որ ամէն բանի կարող  
ես, ու քու խօսքդ այ առջին պարապ  
չանցնիր . անանկ էնէ տուր ինծի ճշմա-  
րիտ զղջում, այ սէրը, ու բարի մահ .  
ու արժանի ըրէ իս, որ երկինք քեզ  
օրհնեմ ու բարեբանեմ սուրբերուն  
հետ, ամէն :

### Ըստիան :

Որ անմարմին բնութեամբ ածութեան  
քո տէր . միացար մարմնով յարդանդի  
կուսին անյեղապէս գոլով . այսօր փո-  
խեցեր զուրախութիւնդ երկնի և երկրի  
յանտրտում 'ի կեանսդ . աղաչանօք մօր  
քո ողորմեա մեզ որդի այ :

### Երիբորտ օր :

Ով կոյս տիրածին, քանի որ քու ած-  
որդիդ երկինքը համբարձերէր, սիրտդ  
անհանդիստ էր, հոն կըբաղձայիր ըւլալ,

ուր որ քու սիրելի որդիդ էր: Յժէպէտ  
ամէն օր հրեշտակները քեզ կըմխիթա-  
րէին, և նոյն ինքն Վահ քեզի այցելու-  
թիւն կընէր, անանկ ալ ծանր էր քեզի  
աս աշխարհքս մնալ, ու աս մարմնոյս  
հետ կապված կենալը: Անոր համար  
մեծ ուրախութիւն ու անպատմելի սրտի  
ցնծութիւն ունեցար, երբոր աւետիս ա-  
ռիր, թէ քու որդւոյդ արքայութիւնը  
կըհրաւիրվիս: Ու հազիւթէ հոգիդ ա-  
ւանդեցիր քու աստուածորդւոյդ ձեռքը,  
փառաւորեալ մարմնովդ մեկտեղ բաղ-  
մութեամբ հրեշտակաց երկինքը վերա-  
փոխեցար:

Խակ ես մեղաւորս քու առջիդ ինկած  
կըխնդրեմ, որ իմ սիրտս ալ վառես,  
որպէս զի բաղձայ արքայութիւնը տես-  
նելու: Դուն աս աշխարքիս մէջ այնչափ  
հոգեոր մխիթարութիւն ունեցար, բայց  
ան ալ քեզի բաւական չէր երենար.  
Խակ ես ամենեին զուրկ ըւլալով հոգեոր  
մխիթարութենէ՝ թէ որ կարելի ըւլար,  
չէի ուղեր մեռնիլ, ու աս աշխարքիս մէջը  
կուզէի յաւիտեան ապրիլ: Դուն ամէն  
ըռպէ կըփափաքէիր, թէ երբ ովիտի

գայ ան ետքի վայրկեանը . իսկ ես ա-  
մենեին և ոչ կուզեմ միտքս բերել ,  
ինչու որ խղճմտանքս մաքուր չէ . ու  
անպատրաստ ըլլալուս չեմ դիտեր՝ թէ  
ինչ պատասխան պիտի տամ դործած-  
ներուս համար :

Քեզի կրդիմեմ այսօր սուրբ Ածա-  
ծին , օգնէ յուսահատելոյս , ու ողորմէ :  
Աստուծմէ ետքը դուն ես իմ յոյսս  
ու փրկիչս . քեզի յանձներեմ հօգւոյս  
փրկութիւնը , ու զքեզ ունիմ ինծի բա-  
րեխօս ու միջնորդ : Աբբայութեան մէջ  
այնչափ շնորհքներու հասար , մինչև  
ած իր ողորմութեան գանձը քեզի տր-  
վաւ . ինծի ալ որ սրտանց քեզ այն-  
չափ կըսիրեմ , աս ուրախական օրս ա-  
ռատութեամբ բաշխէ : Պահէ իս մայր  
ողորմած ամէն փորձանքներէն , սրտիդ  
դութը վրայէս անպակաս ըրէ , ամէն :

Ըստիան :

Այսօր յօւսապատար խնդութեամբ և  
յաւէժարար հնչմամբ . նուագեմք քեզ  
հողեղէնքս ընդ հրաբուն սեռիցն . տօ-

Նախմքելով զյիշատակ կուսի աղախնոյ  
և մօր քոյ . վասն որոյ հրճուղական  
ձայնիւ քեզ երգէ եկեղեցի սուրբ զնոր  
զօրհնաբանութիւն :

Դ առնի ձննդէան իւսուն :

**Բ**ոլոր աշխարհք մեղաց մթութեամբ  
պաշարված խեղճ մնացերէր , դուն մի-  
սյն հիանալի կոյս իրրե ուրախարար  
առաւօտ ծագեցար մարդկային բնու-  
թեանս . ու նախաստեղծին աղամայ  
տրտմական անէծքը՝ քուկին անձառելի  
ծննդեամբդ վերցուցիր , ու մեզի օրհնու-  
թեան աւետիս բերիր : Բացվեցան այ-  
սօր ածային շնորհաց դուռերը , ու ցո-  
ղեցին երկինք այ օրհնութեան ու ո-  
զորմութեան անձրել . ու փշարեր ա-  
նիծեալ երկիր մարդկային՝ բռւսցուց այ-  
սօր անմահութեան տունկը :

**Օ**րհնեալ ես կոյս երջանիկ , որ ամէն  
ստեղծուածոց մէջէն դուն միայն հրա-  
շալի սրբութեամբ առանց մեղքի ծնար :  
**Օ**րհնեալ ես կոյս երջանիկ , որ յառաջ  
քան ծնանիլդ՝ այ մայր ընտրվեցար :

(Օրհնեալ ես կոյս երջանիկ, որ մեզի  
փրկութեան աւետիս պարգևեցիր, ու  
օրհնութեամբ մեղ լեցուցիր։ (Օրհ-  
նեալ ես կոյս երջանիկ, որ քուկին ար-  
ժանաւոր արդեամբ ու խոնարհու-  
թեամբ՝ այսիրտը շարժեցիր, ու սուրբ  
սիրով այս որդին քուկին մաքուր ար-  
դանդդ քաշեցիր։

Ով օրհնեալ կոյս, կաղաչեմ կը-  
պաղատիմ քեղի. տուր ինծի սուրբ ա-  
ւաղանին շնորհքը, որնոր արդէն կոր-  
սրնցուցի, ու մեղաց խաւարը փարատէ  
վրայէս։ Ո՞միթարէ հոգիս ալ՝ որ ա-  
մէն շնորհքէ զոկրված՝ ողորմելութեան  
մէջ ինկերէ, ու քեղի սուրբ Ածածին  
կը իմ։ Քու հրաշափառ ծննդեանըդ  
օրը հոգեոր պարգևներ շնորհէ ինծի,  
որ բարի ապրիմ, ու քեղի միշտ հաւա-  
տարիմ որդի ըլլամ, ամէն։

### Ըստական :

Երգեցէք որդիք սիոնի երգնոր ՚ի ծը-  
նընդեան մօր տեառն. քանզի որ ծնաւ-  
զանժամանակն ՚ի հօրէ ծնեալն այսօր

ծնաւ յամուլ արգանդէ . տուք օրչեսու-  
թիւն տուողին մեզ զմայրն լուսոյ :

'Ե պատիւ անուան Անդիամու :

**Ե**րբոր քու սուրբ անունդ կը յիշեմ ով  
ամենասիրելի Ա'րիամ , բոլօք սիրտս կը-  
բորբոքի սիրովդ , ու հոգիս ծարաւիաբար  
քեզ կրիսնդրէ : Ո՞վ սէր իմ Ա'րիամ ,  
աս արտասուելի աքսորանքիս մէջ քեզ-  
մէ 'ի զատ չունիմ ինձի բարեխօս ու  
պաշտպան . ուրեմն մի զրկեր իս մեղա-  
ւորս մայրական խնամքէդ . ցըցուը իմ  
վրաս ալ քուկին հրաշալի անուանդ  
պտուղը : Ո՞վ մայր իմ Ա'րիամ , գի-  
շեր ցորեկ քու սուրբ անունդ կանչելէն  
չեմ դադրիր . երբոր դժոխքը միտքս  
կուգայ , Ա'րիամ կաղաղակեմ . երբոր  
երկնից արքայութեան փառքը կը մտմը-  
տամ , մեծ փափաքուլ մը Ա'րիամ կը-  
կանչեմ : Տես մայր ողորմութեան , ու  
ողորմէ ինձի , ու փրկէ իս ամէն փոր-  
ձանքներէն . ինչու որ դժւն ևս բոլոր իմ  
յշսս ու ապաւէնս , ու մի միայն օգնա-  
կանս :

Ով գթած, ով բարեգութ, ով  
 քաղցր Արքիամ, շնորհք ըրէ ինձի,  
 որ մեռնելու ատենըս բոլոր սրտանց մե-  
 ծաղոյն ջերմեռանդութեամբ ինձի օդ-  
 նական կանչեմ քու բաղձալի անունդ  
 Արքիամ: Ով Արքիամ, կենացս ետ-  
 քի բոպէն օգնութիւն հասիր ինձի, ու  
 մսիթարէ իս քուկիններկայութեամբ,  
 թէ որ միայն յիշելը քուկին անունդ  
 անչափ քաղցրութեամբ ու սիրով սիրտս  
 կըլեցընէ, հապա ինչ անպատմելի ու-  
 րախութիւն պիտի ըլլայ քեզ տեսնալը  
 ով ցանկալի Արքիամ: Ով սէր իմ  
 Արքիամ, դիշեր ցորեկ սիրտս անհան-  
 դիստէ. մեծապէս քու տեսոյդ կըկա-  
 րոտի. աչքէս թափած արցունքներս քու  
 սիրոյդ համար գութ ձգեն սրտիդ մէջ.  
 ով ողորմած Արքիամ, սուրբ անունդ  
 արդեանցը համար ըլլայ առ իս որդոյդ  
 արքայութիւնը, որ հօն քու փառաւո-  
 րեալ անունդ Արքիամ օրհնեմ ու գո-  
 վեմ, ամէն:

## Ը ՀԱՅՈՒԹԻՒՆ :

Վարդարէից հանդիսարան և զրաւական կենաց մարդկան Վարիամ ածամայր . ընդունարան եօթնարփեան շնորհաց . խարիսխ յուսոյ հաստատութեան զուգաթիւ աւուրց դարուցս անցաւը արաց . օրհնութեամբ երդով եկեղեցիք տիեզերաց այսօր տօնեն զյիշատակ ծննդեան քո 'ի մօրէ :

## 'Ի տօնի սրբոյ խաչին :

## Վ. Ա. Պ. Ը ՀԱՅՈՒԹԻՒՆ :

Օրհնեալ ես ով երկրպագելի խաչափայտ , որ որդին միածին չն անմեղ գառն այ քուկին վրադ պատարագվեցաւ . ու աշխրքիս ամէն մեղաց ծանրութիւնը բոլորավին վերցուց : (Օրհնեալ ես փայտ կենաց և յոյս փրկութեան , որ աշխրքիս ծովուն մէջ եղողները սուրբ արքայութեան ճշմարիտ ու ցանկալի նաւահանգիստը կըհասցընես : Վ. Ա. Պ. Ը ՀԱՅՈՒԹԻՒՆ :

բաւ . բայց դուն նոյն իսկ կեանքը մեզի  
պարգևեցիր : Երջանիկ ես միշտ սուրբ  
խաչ , որ իմ հայ փրկիչս իս սիրելուն  
համար բոլոր արիւնը վրադ թափեց , ո-  
րով ամէն երանութեան արժանի եղար :

Հիմա բազկատարած կաղացեմ քեզի  
ով սուրբ խաչ , օգնական եղիր ինծի ,  
ու զօրացուր տկարութիւնս , որ չար սա-  
տանային փորձանքներուն դէմ դնեմ ,  
ու աշխարքիս զանազան ձախորդութիւն-  
ներուն սիրով տանիմ , ու յաւիտենա-  
կան վարձք ըստանամ : Կառն ողորմած  
հայ , կնքէ վրաս երկինքէն պատուական  
խաչովք , ու օրհնէ մարմնոյս ամէն ըզ-  
գայարանքները , որ չըլայ թէ անոնց-  
մով քեզ վշտացընեմ :

### Ը պատկան :

Ուրբ խաչն օգնական հաւատացելոց  
կանգնեցաւ 'ի յերկրի յաղթող թշնամ-  
ոյն . եկայք ժողովուրդք երկրպագես-  
ցուք :

**Ք**անի անգամ որ տէր իմ՝ աչքըս կը-  
վերցընեմ, սուրբ խաչիդ կընայիմ, կը-  
լսեմ սրտիս մէջ անուշ ձայն մը . թէ  
անչափ սիրեց քեզ ՀՅ, մինչև քու սի-  
րոյդ համար մեռաւ, մի մոռնար բարի  
փրկիչդ :

**Վ**եր, տէր, ինչպէս մոռնամ քուկին  
ըրած բարերարութիւններդ ինծի. սուրբ  
խաչին նայածիս պէս միտքս կուգան բո-  
լոր քաշած չարչարանքներդ, ու սիրտս  
անշիջաննելի սիրով կըբորբոքն : Հաղար  
մանք ու գոհութիւն քեզի, օրհնեալ  
ըլլայ քուկին գթութիւնդ . սուրբ խա-  
չիդ բարեխօսութեամբը իս պահէ ու  
պահպանէ, ու մի մատներ չար թշնամ-  
ւոյն ձեռքը :

**Ե**րկրպագաննեմ սուրբ խաչիդ մար-  
դասէր փրկիչ իմ, ու կըխնդրեմ անոր  
աներեղիթ զօրութիւնը, որ հոգւոյս ու  
մարմնոյս պահապան ըլլայ : Խովանդակ  
յոյսս սուրբ խաչիդ վրայ դրած եմ, դուն  
առողջացուր հոգւոյս հիւանդութիւննե-  
րը : Քեզի կըդիմեմ ով խաչելեալ ՀՅ,

ու խաչիդ ոտքը կրփաթթըլիմ . դուն  
տէր շնորհք տուր ինծի , որ աս աշխրքիս  
մէջ քեզի հետ խաչակցելով՝ անդիի  
աշխարհք ալ արքայութեան մէջ սուր-  
բերուն հետ ուրախակից ըլլամ , ամեն :

### Ը առանձին :

Սաշի քո ՞ թ երկրպագեն արարածք  
ամենայն որ ՚ի փրկութիւն մեզ կանգ-  
նեցաւ . սա եղիցի մեզ պահապան յաղ-  
թող . ապրեցուցանել զմեզ ՚ի պատրա-  
նաց թշնամոյն :

### ՚ Ա դօնի ընծայման :

Փառաւորեալ երջանիկ կոյս , լսէ մե-  
ղաւոր հոգւոյս աղաչանքը . ու ան ան-  
պատմելի սրտիդ մխիթարութեանը հա-  
մար՝ որ քեզ բոլորովին տաճարին մէջ  
այլ ընծայելովդ ունեցար , բաց ինծի շը-  
նորհաց գանձերը , ու մխիթարէ սիրտս :  
Ով ամենասիրելի մայր , դուն ինչպէս  
որ պղտիկուց քեզ այլ ընծայեցիր , ևս  
ալ կրփափագիմ իմ բոլոր մնացած

կեանքս քեզի ընծայել . անանկ որ միտքս  
միշտ քուկին ըրած բարիքներդ յիշէ .  
սիրտս միշտ քեզ սիրէ , ու լեզուս ան-  
դադար քեզ օրհնէ :

Կաղաչեմ ով ողորմած տիրուհի իմ,  
ընդունէ իս անարժանս մայրական սի-  
րով , որ արդէն քեզի որդեգիր եղած  
եմ . ու աս օրըս նորէն իս քեզի կընծայ-  
եմ : ( Օրհնէ մայր սուրբ խեղճ որդիդ ,  
ու աղատէ ամէն փորձանքներէն . հզօր  
պաշտպանութիւնդ վրայէս անպակաս  
ըրէ , ու քուկին քաղցր աչվրներդ իզ-  
մէ մի դարձըներ : Ավ բարեգութ Ան-  
րիամ , բոլոր յոյս դուն ես . քուկին  
դժած ձեռքդ կը յանձնեմ հոգիս , ամէն :

### Ը ՇՐՋԱՆ :

**Ա.** ո քեզ ապաւինիմք սուրբ ածածին .  
բարեխօսեաւ անդադար առ որդիդ քո և  
ած մեր . փրկել զմեղ 'ի փորձութենէ  
և յամենային վտանգից մերոց :

Դ ամսնէ անաբուր յղութեան :


Ով ամենամաքուր կոյս Անրիամ, այն-  
չփ սիրելի եղար այ առջին, որ առանց  
արատի մը սրբութեամբ յղացար, ու  
ամէն շնորհքներով ու մաքրութեամբ  
զարդարվեցար. իբրև գեղեցիկ արու-  
սեակ մը լուսաւոր առաւօտ ծագեցիր մե-  
ջի: Անձապէս կուրախանամ ու կօրհ-  
նեմ քու անարատ յղութիւնդ մայր այ,  
որ ամենասուրբ Արքորդութիւնը իբրև  
նյին տապանը քեզ միայն ազատ պա-  
հեց աս ողորմելի աշխարքիս մեղաց ջըր-  
հեղեղէն. ու նոյն խակ բոլորից տէրը՝ ի  
քեզ բնակելով՝ այ բարկութիւնը ին-  
չցուց, ու մեղաց ջրհեղեղը ցամքեցուց:

Ով գթած կոյս, քուկին սքանչելի  
անարատ յղութեանդ օրը շնորհք մը  
կրինդրեմ քեզմէ մայր ողորմութեան,  
որ մեղքերուս աղտոտութիւնը սրբես,  
ու մաքրութեան շնորհք տաս ինծի, ո-  
րով քեզի ու քու միածնիդ հաճոյ ըլ-  
լամ: Կիտես դուն իմ թշուառութիւն-  
ներս, մեղք յղացայ, մեղօք ծնայ, ու

մեղօք ալ կեանքս անցուցերեմ. դու ա-  
նարաւտ մայր, քուկին գթութիւնդ վրայ-  
էս պակաս մի ըներ, ապա թէ ոչ բռ-  
լորովին կը յուսահատիմ, ու ստոյդ կը-  
կորսըվիմ : Ո՞վ ամենասիրելի Անրիամ,  
սիրտս բոլոր քեզի կուտամ, դուն մաք-  
րէ ամէն արատներէն՝ որ յաւիտեան  
քուկդ ըստայ, ամէն :

### Ը պրախիան :

Անթառամ ծաղիկ անդատապարտ շա-  
ռաւիղ վերաբուսեալ յարմատոյն յես-  
սեայ . զքեզ եսայիաս կանխաւ վերա-  
դոչեաց եօթնարփեան շնորհաց հոգւոյն  
ընդունարան գոլ, ածածին և կոյս զքեզ  
մեծացուցանեմք :



ԱՊՈՔԵՐ

ԼՇԱԾՆԱՅ Եօթը խնդութեանը :

Առաջին խնդութեան :

Ո՞ւծապէս կուրախանամ սուրբ Ա՛ծածին, յիշելով առջի խնդութիւնդ, որ ունեցար ածամայրութեան աւետիս առած ատենդ. ամենակալն ած բոլոր արարածոց մէջէն քեզ միայն իրեն մայր ընտրեց, ու անբաւ չնորհքներով լեցուց, ու սերովքէներէն ու քերովքէներէն աւելի քեզ բարձրացուց։ Անոր համար կաղաչեմ քեզի սուրբ տիրամայր, ուրախացուր այսօր իմ սիրտս ալ մաքրելով խղճմտանքս ամէն ըրածներէս. ու սիրտս բորբոքէ արքայութեան սիրովը, որ աս աշխրքիս ունայնութիւնները մէկդի ձգելով՝ միշտ այ տեսուն փափաքի սիրտս, ամէն։

Ողջին քեզ մարիամ։

ԵՐԵՎԱՆ ԷԿԱՆԱԿԱՆ :

Վեծապէս կուրախանամ սուրբ ԱՌածին, յիշելով ան ծայրագոյն խնդութիւնդ, երբոր երկնի և երկրի արարչին մայր եղար. երկինքը չէր բաւական զինքը տանելու, դուն դիրկդ առիր, ու մայրական խնամով մեծցուցիր: Խնչ մեծ ուրախութիւն էր սրտիդ, որ արքայութեան փառքը ու երկնից ցնծութիւնը միշտ հետդ ունէիր, ու անով կը զմայլէիր: Խոնարհութեամբ ոտքդ ինկած կը խնդրեմ մայր այ, մի զրկեր սիրտահոգեոր ուրախութիւնէ. շնորհք ու բորբոքեալ սէր տուր ինծի, որ սուրբ հաղորդութիւն առած ատենս ճշմարտապէս հար սրտիս մէջը ընդունիմ, ու երկնային ցնծութիւններով լեցվիմ:

Աղօյն քեզ մարիամ:

ԵՐԵՎԱՆ ԷԿԱՆԱԿԱՆ :

Վեծապէս կուրախանամ սուրբ ԱՌածին, յիշելով ան մեծ ցնծութիւնդ, եր-

բոր տեսար ածորդիդ յարութիւն առ  
նելէն ետքը փառաւորեալ ածային լու-  
սով , ու անպատմելի խնդութիւնով լեց-  
վեցաւ սիրտդ : Ուրախ լեր մայր փրկու-  
թեան , որ բոլոր աշխարքիս փրկագործու-  
թեանը պատճառ եղար . ու երկնից դոնե-  
րը մեզի բացիր , որ մեր նախահայրը մե-  
զօք փակեց : Հիմա մասնաւոր շնորհք  
մը տուր ինծի ուլ գթած Անրիամ , որ  
մեռեալ հոգիս կենդանանայ , ու մեղաց  
տրտմութիւնները թող տալով ուրա-  
խութեամբ քեզ օրհնէ , ամէն :

**ՈՂՋԵՅՆ ՔԵՂ ՄԱՐԻԱՄ :**

**Չ Է Հ Ա Ր Ա Խ Ա Յ Ա Մ :**

Վեծապէս կուրախանամ սուրբ Ածա-  
ծին , յիշելով ան մեծ խնդութիւնդ ,  
երբոր քուկին միածին որդիդ քեղ ա-  
ռաւ , ու անթիւ հրեշտակներով սուր-  
բերով երկինք վերացուց : Ով հզօր  
թագուհի , նայէ մէյմը երկինքէն վրաս ,  
ու ասօրվան ունեցած ուրախութեանդ  
ու փառացդ համար բարեխօս եղիր ին-  
ծի , ու մի մոռնար իս ողորմած մայր ,

որ աս արտասուելի սփսորանքիս մէջ  
քուկին տեսութեանդ խիստ կարօտ եմ :  
Աննաւանդ կաղաչեմ քեզի մայր ողոր-  
մութեան , յիշէ աս չորրորդ խնդու-  
թիւնդ , որով սիրտդ յաւիտեանս լեց-  
վեցաւ . ու օդնութիւն հասիր ինծի մեռ-  
նելուս ատենը , ու քուկին ցանկալիներ-  
կայութիւնովդ . ու ըախացուր իմ հոգիս  
ալ , ամէն :

ՈՂՋԵՆ ՔԵԶ ՄԱՐԻԱՄ :

ՀԵԽԵԼՈՎԴ ԽՆԴՐԱՆԱԿԵՆ :

Անձապէս կուրախանամ սուրբ Անձա-  
ծին , յիշելով երկինքը ունեցած ան-  
պատմելի մեծութիւնդ ու խնդութիւնդ ,  
որ որդիդ միածին քեզ իր աջ կողմը  
նստեցուց . ու ամենասուրբ Ազրորդու-  
թիւնը անհասանելի շնորհքներով քեզ  
լեցուց , որ քուկին ճառագայթներովդ  
բոլոր ան երկնային դրախտը կըզարդա-  
րես ու կըպայծառացընես : Ով մայր ,  
երբոր քեզ ասանկ փառաւորեալ կըյի-  
շեմ , սրտիս ուրախութենէն աչքիս ար-  
ցունքները չեմ կընար բոնել : Ով

քաղցր Անարիամ, ողորմէ խեղճութեանս,  
ու իս քովդ առ, լեցուր սիրտս քուկին  
փառքովդ :

Ողջն քեզ մարիամ :

Ա ԷՇԵՐԻՇԴ ԽՆԿԱՆԵՀՆ :

Մեծապէս կուրախանամ սուրբ Անձա-  
ծին, յիշելով ան մեծ խնդութիւնդ,   
որ ունեցար արքայութեան մէջ, երբոր  
հայրն երկնաւոր՝ Արդին միածին՝ և  
սուրբ հոգին քեզ երկնի և երկրի թա-  
գուհի ըրաւ, ու անձառելի փառքով  
անանկ պսակեց՝ որ ամեն հրեշտակները  
ու սուրբերը երանի կուտան քեզի, ու  
միշտ կօրհնեն իրենց արժանաւոր թա-  
գուն, երկինքը կուրախանայ քեզ իրեն  
հետ ունենալուն. Երկրի վրայ մենք ալ  
կուրախանանք յիշելով քուկին փառքիդ  
մեծութիւնը, ու անդադար շնորհակալ  
կրլւանք ու կօրհնենք զած, որ ասանկ  
դերագոյն աստիճան քեզ բարձրացուց:  
Ով մայր ողորմութեան, աս խնդու-  
թեանդ համար շնորհք տուր ամենուն-

ալ, ու իմ խեղճ սիրտս ուրախացուք  
քուկին մայրական գթութեամբ, ամէն:  
Ողջյն քեզ մարիամ:

Եօնելուսուն նորաւելիւն:

Վեծապէս կուրախանամ սուրբ Ածա-  
ծին, յիշելով ան մեծ խնդութիւնդ ու  
իշխանութիւնդ, որ ած բոլորովին քու-  
ձեռքդ յանձնեց իր ողորմութեան ու  
շնորհաց դանձը. որպէս զի առատու-  
թեամբ բաշխես ամէն կարօտներուն:  
Ուրեմն ով գթած մայր, դուն ես մե-  
ղաւորաց յոյսը, խեղճ հոգիներու բա-  
րեխօս, ու անմխիթար վշտացելոց ու-  
րախութիւն: Վեծ ցնծութիւն է քեզի  
ողորմիլը. ու որոնք որ քեզի կապաւի-  
նին, ստոյգ փրկութեան կըհասնին: Ա-  
հա քեզի կըդիմեմ ով դանձապետ  
ածային գթութեան, բոլոր մեղքերուս  
թողութիւն շնորհէ, ու շնորհք տուր  
ինծի, որ հաստատուն յառաջադրութիւն  
դնեմ ասկից ետքը միշտ այ շնորհաց  
մէջ ապրելու, ու քեզի հաւատարիմ  
ծառայ ըլլալու: Կիտեմ մայր ողորմու-

թեան, թէ որչափ պիտի ցնծութիւն ունենայ սիրտդ իս արքոյութեան մէջ տեսած ատենդ . ուրեմն ուրախացուր քու սիրտդ իս փրկութեան հասցընելովդ, ու ուրախացուր իմ սիրտս ալ երկնից փառաց մէջ քեզ տեսնալու արժանի ընելով , ամէն :

Ողջն քեզ մարիամ :

Աղջուածայն արձուա :

Ով ցանկալի սուրբք այ , ով ճշմարիտ որդիք վերին երուսաղեմի , դուք աս աշխրիս մէջ յաղթեցիք չար թշնամին , ու ողորմելի մահկանացու կեանքը երկնից արքոյութեան հետ փոխեցիք , ու Ք. մի ձեր դօրագլխին պէս չարչար վեցաք . բայց հիմա երկնային դրախտին մէջ յաւիտեանս կըվայլէք , ու անդադար հրեշտակաց հետ կօրհնէք ամենասուրբ Երրորդութիւնը :

Ով երջանիկք այ , յիշեցէք իս մեղաւորս ալ , որ աս թշուառ երկրիս վրայ

խեղճ մնացերեմ, ու բարեխօս Եղիք առ  
հայ փրկիչ ինծի համար, ու ամէն շար  
փորձանկքներէն ու մեղաց առիթներէն  
պահելով ձեր սուրբ գնդին մէջ իս խառ-  
նեցէք: Ա՛հ կաղաչեմ, հասնի ձեր ա-  
կանջը ըրած հառաջանկքներս ու խնդրու-  
ածներս, ձեր մաքուր ձեռքովը այ առ-  
ջին հանեցէք իմ սրտիս փափաքը ու  
անարժան ազօթքներս, որ ձեր միջնոր-  
դութեամբը այ ողորմութեանը արժանի  
ըլլամ: Ամէն մէկերնիդ արեգակի պէս  
կըփայլիք արքայութեան մէջ, իս ձեր  
ճառագայթովը լուսաւորեցէք. որ յաւի-  
տեանս յաւիտենից կըփայլէք ան անճառ  
ուրախութիւնը, իմ սրտիս ալ նոյնը  
շնորհեցէք:

Դուն ով սուրբդ սրբոց մայր ողոր-  
մութեան, քեզի կըդիմեմ բոլորով սրբ-  
տիւ. ինչու որ քուկին աղաջանքդ միշտ  
այ ընդունելի է, ու այ գթութեան գան-  
ձը քու ձեռքդ է: Կըկինքը բոլոր սուր-  
բերը երանի կուտան քեզի ու կօրհնեն,  
որ ամէնուն փրկութեան պատճառ ե-  
ղար: Ավ թագուհի ամենայն սրբոց,  
պաշտպան եղիք ինծի, ու մայրական

դութե վրայէս պակաս մի ըներ, օգնէ  
ինծի քուկին շնորհքովդ, ու արժանի  
ըրէ 'ի հանդերձեալն սրբոց հետ քեզ  
փառարանելու, ամեն :

Եղանակ առ սուրբն Հայութ :

Ով երջանիկ ածահայր սուրբ յովսէփ,  
երբոր քուկին փառքդ ու ածահայրու-  
թեան մեծ պատիւդ կը յիշեմ, բոլոր  
սիրտս կը բորբոքի քու սիրովդ, ու կը-  
բաղձամ միշտ քեզ գովել : Երանելի  
էիր երկրի վրայ, ինչու որ զած քեզի  
հնազանդ ունէիր, ու երկնային գանձը  
քեզի յանձնած էր ած : Եւելի երանելի  
էիր մահուանդ ատենը, որ Հար ու  
Ածածինը երկու կողմդ ունէիր, ու ու-  
րախութեամբ Հարին ձեռքը աւանդեցիր  
սուրբ հոգիդ. ու հիմա երկինքը մեծա-  
գոյն փառքով կը ցնծաս Հարին ու սուրբ  
կուսին հետ :

«Քեզի կաղաչեմ ու կը պաղատիմ ով  
հայր սուրբ, բարեխօս եղիր ինծի, ու  
պաշտպանէ իս ամեն վտանգներէն հայ-  
րական իշխանութեամբ : » Գ երմեւանդ

սրտով քեզի կըդիմէ սովեալ հոգիս ,  
 լեցուր իս զանազան շնորհքներով . ու  
 չնէն մաքրութեան շնորհք խնդրէ  
 ինծի համար , որ քեզի պէս սուրբ ու  
 արդար ապրիմ : Կայէ մէյմը երկին-  
 քէն զթած հայր , ու ամենենին իս մի  
 մռոնար . օդնութիւն հասիր ինծի նե-  
 ղութեան ատենը , մանաւանդ ան ետքի  
 ատենը , որ պիտի ամենէն ալ անօդնա-  
 կան մնամ ան հոգեվարութեան մէջ ,  
 ու հոգիս մէծ տադնապ պիտի կրէ այ  
 դատաստանը յիշելով : Դուն ով սուրբդ  
 այ , մի՛ թողուր իս ան ատենը . մխիթարէ  
 հոգիս քուկին ներկայութիւնովդ , որ  
 բարի մահուամբ հոգիս քուկին մաքուր  
 ձեռքդ առանդեմ կանչելով սրտանց  
 Յն , Վարիամ , և սուրբ հայր յովսէի ,  
 զսիրտս և զհոգիս ձեղ յանձն առնեմ :

Աղօնք առ սուրբն Հայուննես Թէրուէն :

Ունծ ջերմեռանդութեամբ սրտի քեզի  
 կըդիմեմով սուրբ յովհաննէս մկրտիչ ,  
 որ իբրև արուսեակ արդարութեան ա-  
 րեգականն Քնի ծագեցար երկրի վրայ .

ու Հնի վրկչին կարապետ եղար, ու ամենուն անոր գալստեան տւետիսը տրվիր։ Անշափ շնորհաց արժանի եղար՝ որ յառաջ քան ծնանիլդ սրբվեցար, ու առանց արատի մը ծնար . Ետքն ալ հրեշտակի պէս անապատի մէջ սրբութեամբ ապրեցար, բոլոր ժողովողեան ապաշխարութիւն կըքարոզէիր։ Ամէնէն աւելի երանութեան արժանի, որ քու ձեռքովդ յորդանան գետին մէջ «Քնը մլլրտեցիր։ Ով սուրբդ այ, քուկին հրաշափառ տօնախմբութեանդ օրը իմ անդեղջ սրտիս դարձ տուր, ու ապաշխարութեան շնորհ պարզեւ, որ բոլոր մեղքերս աղեկ մը խոստովանիմ, ու աստուծմէ թողութիւն առնում։ Քուկին խիստ ճգնութեանդնայելով՝ մէկդի թողում աշխարհային ունայնութիւնները, որոնք որ կանցնին կերթան . ու ասկից ետև ջանամ երկնից արքայութեան համար աշխատիլ, որ յաւիտեանս կըմնայ։ Ով երջանիկդ այ, բարեխօս եղիր ինծի համար առ «Քն», ու մողիս լոյս տուր, որ չար սատանային խարէութիւններուն մւտիկ շընեմ, քու միջնորդութեամբդ

Հալածվին երթան, ու սուրբ հրեշտակ-  
ները իս պահպանեն, ամէն :

Եղանք, ու առաջնորդութեամբ և գողուս :

Ո՞վ երանելի սուրբ առաքեալք ՞Ի՞նի,  
ձեր երկնային վարդապետութեամբը  
բոլոր աշխարհք լուսաւորեցիք, ու ՞Ի՞նի  
սուրբ հաւատքը ամէն երկիր քարողե-  
ցիք, ու ձեր սուրբ արխանիդ թափելով՝  
նմանող եղաք փրկչին չնի : Ո՞վ սուրբ  
առաքեալք այ, երկնքէն լսեցէք մեր  
անարժան աղօթիցը, ու բարեխօս եղիք  
այ : ՞Ի՞ն ձեզի տրվաւ երկնից բանլիքը,  
բացէք մեղի երկնից դռները . ՞Ի՞ն փրո-  
կիչն մեր ձեզի յանձնեց աշխրքիս վրայ  
մեր մեղքերը արձրկելու ու կապելու-  
իշխանութիւնը . անոր համար մենք՝ որ  
ծանր մեղաց կապերու տակ մնացերենք,  
ձեր առջին ինկած կըխնդրենք, որ մեր  
մեղաց ծանրութիւնը թեթեցընէք, դե-  
րութեան կապերը արձրկէք, մեղ ՞Նին  
հետ հաշտեցընէք : Ո՞վ երջանիկ առաք-  
եալք, սուրբ եկեղեցւոյ մշտնջենաւոր  
խաղաղութիւն պարզեցէք . դուք այ-

սօր երկինքէն լոյս մը ծագեցէք ամէն  
հերետիկոսներուն ու հերձուածողնե-  
րուն սիրտը, որ գան միանան 'ի մի հօտ  
և 'ի մի դլուխ եկեղեցւոյ, ինչպէս որ  
փրկիչն մեր աղաւեց իր երկնաւոր հօրը.  
ու միաբան օրհնենք զած'ի յաւիտեան,  
ամէն :

Եղութք առ առընդի Արեդանոս :

**Պ**արծանք սուրբ հաւատոյ, առաջին  
մարտիրոս և վկայ Քանի ով սուրբ ստե-  
փանոս . այսօր սուրբ եկեղեցին ցնծու-  
թեամբ քու յիշատակդ կրկատարէ, որ  
յայտնապէս քարողեցիր Քանի սուրբ հա-  
ւատքը՝ ու պատուական արեամբդ երկնից  
արքայութիւնը դնեցիր : Բացվեցաւ եր-  
կինքը քեզի համար, ու տեսար անհա-  
սանելին մարմնաւոր աչք որդին միածին  
մեծ փառքով նստեալ ընդ աջմէ այ հօր :  
Խնամիներդ քեզ կրչարչարէին, դուն  
Քանին պէս կաղօթէիր անոնց համար .  
անոնք քեզ կրքարկոծէին, դուն ձեռվր-  
ներդ բացած քարկոծողներուն թողու-  
թիւն կրինդրէիր : Ով նահատակ բարի-

արտասուօք կըպաղատիմ քեղի, ինչպէս  
որ առաջին պտուղ եղար եկեղեցւոյն  
Վնի, անանեկ ալ առաջին բարեխօս ե-  
զիր քրիստոնէից համար առ ՀՅ փրկիչ.  
թէ որ քարկոծողներուն համար աղօ-  
թեցիր, հիմա մենք գետինը ինկած կա-  
ղաչենք քեղի, նայէ մեր խեղճութեան,  
երկնային օրհնութիւններ խրկէ մեղի:  
Խնդրէ աստուժմէ, որ սուրբ եկեղեց-  
ւոյ հաստատութիւն տայ, ամէն հոգե-  
ւոր պաշտօնեայները հոգւով սրբով լե-  
ցունէ, ու հաւատացելոց ալ սէր և մի-  
ութիւն պարզեէ, ամէն :

Եղօնք առ սուրբն հայրն Գրէտու:

Ով երանելի սուրբ Գրիդոր, դու  
քուկին անտանելի չարչարանքներովդ  
մեր աղգին լուսաւորիչ եղար, Վնի չար-  
չարանաց պակսութիւնը քու մարմնոյդ  
վրայ կրեցիր, ու Վնի արեան գինը մեղի  
համար շահեցար, ու մեր աղգին հայր ե-  
ղար աս աշխարհքս՝ անչափ բաղմու-  
թիւնը մկրտելով, ու ամէնուն քրիս-  
տոնէական հաւատոյ մասունքը սորովե-

ցընելով : Իսկ անդիի աշխարհք նոյն-  
պէս անդադար աղօթող ու բարեխօս  
ես այ մեր աղգին համար : Հիմա ես ալ  
որ քուկին հոգեոր զաւակդ եմ, կա-  
ղաւեմ քեզի այսօր հայր սուրբ, որ  
քու յիշատակդ կրտօնենք, ինծի համար  
հզօր բարեխօսութիւն ընես այ առջին,  
թէպէտ ես իզմէ արժանիք մը չունիմ  
քեզի որդի սեպվելու :

Դուն անչափ երախտաւոր էիր մեր  
աղգին, որ քեզի զանազան տանջանք-  
ներ տրվողներուն համար աստուծմէ-  
թողութիւն կրխնդրէիր. քուկին համ-  
բերութիւնդ ու անյիշաչարութիւնդ ին-  
ծի օրինակ ըլլան, ու մոքէս վրէժխըն-  
դրութեան հոգին հանեն : Այսօր քու-  
կին միջնորդութեամբդ սուրբդ այ, որ  
այ առջին խիստ զօրաւոր է՝ շնորհք  
խնդրէ ինծի, որ ճշմարիտ քու զաւակդ  
սեպվիմ . ու արքայութեան մէջ քեզի  
պարծանք ըլլամ : Անսնաւորապէս կր-  
խընդրեմ ովլ լուսաւորիչդ հոգւոց, որ  
այ առջեր բարեխօս ու պաշտպան կե-  
նաս մեր աղգին . ու մեզ այ արդար պա-  
տիմներէն խալըսես : Կժամծ հայր օրհ-

ՆԵՂ ԵՐԿԻՆՔԵՆ, ՈՐ ՔԵՂԻ պէս սուրբ  
ու բարեգործ ըլլանկք . ինչպէս որ քու  
աղօթքդ մեղի հաւատոյ լոյսը պարզեց,  
անանկ ալ շնորհէ մեղի հաւատքը կօն-  
դանի պահելու հարկաւոր եղածները .  
այսինքն՝ սէր այ ու ընկերին, ու ամէն  
տեսակ բարեգործութիւնները, ամէն :

ԱՌՈՒՄ ԱՅ ԱՅ-ԷՐԸՆԻ ՀՅԱԼԻՆԻ ՏԵ՛ԿԻ ԴԱ-  
ՅԱԿԱՆԻ ԴԱ :

Այսօր ով ածահաճոյ սուրբդ այ, որ  
քու յիշատակդ կըտօնենկք, քուկին հրա-  
շալի պատկերիդ առջին ինկած կաղա-  
չենք, որ հայրական դթութեամբ աչ-  
վըներդ մեղի դարձընես, ու տեսնաս մեր  
խեղճութիւնը : Վանի որ աս աշխրբիս  
մէջն ենք, ու մեր թշուառ մարմնոյն կը-  
ծառայենք, արժանի ենք՝ որ ած ալ իր  
արդարութեամբը մեղ անդադար պա-  
տուհասէ զանազան հիւանդութիւննե-  
րով՝ մանաւանդ ժանտամահով մեղ  
պատժէ : Դուն միայն հայր սուրբ, քու-  
կին սուրբ աղօթքովդ մեղ խալքսէ, ու  
ածային բարկութիւնը ինջեցուր : Պահէ

մեզ ժանտամահէն , որ չըլայ թէ առանց  
աղէկ պատրաստութեան , ու այ հետ  
հաշտրվելու մեղաց մէջ մեռնինք , ու այ  
դատաստանին պարտաւոր մնանք : (Օրհ-  
նէ քրիստոնեայ ժողովուրդը , որ օրէ  
օր աճին ու բաղմանան . մեր դաշտերուն  
ու ջուրերուն առատութիւն պարգևէ ,  
որպէս զի հաւատացեալները սով ու նե-  
ղութիւն չիբաշեն : Կաղաչնիք քեզի ովլ  
սուրբդ այ , որ մեռնելու ատեննիս մեզ  
անօգնական չիթողուս . քուկին բարե-  
խօսութեամբդ մեզ արժանի ընես ըն-  
դունելու ամենասուրբ հաղորդութիւնը  
ու ուրիշ մահուան թոշակները , որ միսի-  
թարեալ սրտիւ ու սրբութեամբ մեռ-  
նելու արժանի ըլլանք , ամէն :

Ով Երանելիսուրբ հայր անտոն, մարդկային քնութենէս վեր հրաշալիս սրբութեամբ փայլեցար. ու անտանելի ճգնութիւններ քաշեցիր լերանց մեջ. ու եղիպտոսին անապատը գրախտի նման սուրբ ճգնաւորներով ղարդարեցիր, ու

գլուխ ճղնաւորաց կռչվեցար : Ո՞վ սուրբ  
 անտոն , իս մի զբկեր քու պաշտպանու-  
 թենէդ , ու ընդունէ իս քեզի հոգեոր  
 դաւակ . շնորհք ու զօրութիւն խնդրէ  
 աստուծմէ ինծի համար , որ սատանային  
 փորձութիւններուն կարող ըւպամ քա-  
 ջութեամբ միշտ դէմ կենալ , որ իս այ  
 սչքէն հանելու կրծանայ : Տուր ինծի ով  
 երանելի հայր սուրբ ան վառեալ սէրը ,  
 որ ես ալ բորբոքիմ այ սիրովը քեզի  
 պէս , որ ամէն աշխարհային բաները ո-  
 չինչ սեպեցիր . պղտիկուց աշխարհքը  
 թող տրվիր , անապատ դացիր , ու հոն  
 անհամար նեղութիւններուն ու փոր-  
 ձութեանց համբերեցիր : Կաղաչեմ քե-  
 զի՝ խնդրէ ինծի համար ալ ան շնորհքը ,  
 որ գոնէ սիրտս աշխրքիս բաներուն չի-  
 կապեմ . ու սատանային փորձութեանցը  
 դէմ կենամ , ու մարմնոյս ուղածները  
 չիկատարեմ : Պահէ մեղ նաև կրակէն ու  
 ամէն չար պատահմունքներէ , որպէս զի  
 արդելք ըրլան մեր յառաջադիմութեան :  
 Առւրբ անտոն , մեղ բոլոր քեզի կրյանձ-  
 նենք , մեր հոգին ու մարմինը , ու ամէն  
 բաներնիս դուն պաշտպանէ , պահէ , ամէն :

Ավ սիրելի սուրբդ այ, անանկ առաքինութիւններով փայլեցար աշխրքիս մէջ, ու անչափ շնորհքներու արժանի եղար, որ քուկին սրբութեանդ անունը ամէն երկիր տարածվեցաւ : Կաղաչեմ քեզի ջերմեռանդ սրտով ով սուրբ անտոն, մասնաւոր շնորհք մը խնդրէ հանձն ինծի համար, որ գէշ վարքս փոխեմ . ու միայն հոգիս փրկելու ջանամ : Դուն քանի որ կենդանի էիր, սիրտդ այ սիրովը վառված էր, ու միշտ մեղաւորներուն դարձին ծարաւի էիր . հիմա երկինքէն սաւրբդ այ բարեխօս եղիր ինձ մեղաւորիս, ու սրտիս զեղջ տուր : Եմէն մեղքի վտանգներէն իս պահէ, ամէն տեսակ փորձանքներէն իս ազատէ . բանիս գործքիս յաջողութիւն տուր, ամէն տեղ պաշտպան կեցիր ինծի թէ ծովու և թէ ցամաքի մէջ : Խնչպէս որ կենդանութեանս՝ անանկ ալ մահուանս ատենը իս մի թողուր, օգնութիւն հասիր, որ այ շնորհաց մէջ հոգիս աւանդեմ :

Աղջիկ առաջնորդ Անդրեաս :

Երջանիկ ես ով սրբուհիդ քու ազնիւ զաւակովդ, որ առանց արատի մը այս ժանի եղար ծնանելու զկոյսն Անարիամ այ մայրը՝ երկրիս օրհնութիւնը՝ ու երկնից ցնծութիւնը : Արտիդ ան մէծ ու բախութեանը համար՝ որ ունիս արքայութեան, մէջ իրեւ մայր երկնից թագուհւոյն, նայէ մէյմը ինծի մայրական աչօքդ, ու տե՛ս հոգւոյս խեղճութիւնները : Անյր սուրբ, քու առջիդ ինկած լալով կրպաղատիմ, մի թողուր ալ աս ողորմելութեան մէջ, ու քեզ սիրող հոդիս մի երկար ատեն զրկեր շնորհքներէդ : Դառն մաքրէ սիրտս ամէն երկրաւոր ունայնութիւններէն, ու այ սիրովը լեցուր + մոքիա լոյս տուր, որ սատանային խարէութիւններուն շիհետեիմ : Խո քեզի կրյանձնեմ ով սրբուհի, դուն արժանի ըրէ տեսնելու սիրելի զաւակդ ու Քար, ամէն :

Ա. ՊՈՅՏ, առ :

Ո՞վ սուրբ Հարսունք Երկնաւոր փեսային ՚Քնի իմաստուն կուսանք ձեր հաւատոյ ու սրբութեան լուսովը բոլոր հայաստան լուսաւորեցիք . ու ճշմարիտ մայր Եղաք մեղի մլրտութեան սուրբ աւաղանեն մեղ այորդի ծնանելով : ՚Ճեր թափած անմեղ արիւնովը այսիրտը ՚ի գութ շարժեցիք , ու սուրբ լուսաւորչին հետ գործակից Եղաք մեր փրկութեան : Ո՞վ Երանելի կուսանք , սիրտս բոլորովին բորբոքեալ ձեղի կրկարօտի , ու աչվոներս Երկինք վերցուցած ձեղ բարեխօս կրկանչեմ , ձեր սուրբ յիշատակին օրը բացէք ինծի Երկնային շնորհաց գանձերը . վառեցէք սիրտս ածային սիրով , որ բոլոր աշխարհք մէկդի ձգելով՝ միայն այ Հաճոյ ըլլալու ջանամ : ՚Ամէն հաւատացեալներուն Համար բարեխօս Եղիք , որ քրիստոնէաբար ապրին , ու արքայութեան արժանի ըլլան , ամէն :

Առաջին առաջարկած ստուգին :

Ո՞վ փառաւորեալ սուրբդ այ, երկնային փաստաբան ու բարեխօս մեղաւոր հոգւոյս. քեզի կըդիմեմ բոլորով սըրտիւ, ինչու որ դուն ես իմ օգնականս ու պաշտպանս այ առջին, ու քուկին ածահաճոյ աղօթիցդ կըյանձնեմ հոգիս ու մարմինս : Ո՞վ ընտրեալդ այ, կըճանչնաս իմ տկարութիւնս, դիտես իմ կարօտութիւնս, անոր համար իս մի թողուր, ու աղատէ ամէն փորձակըներէն : Թռէ որ ձախորդութիւն մը հանդիպելու ըլլայ ինծի, մօտ եղիր. ամէն գործքիս մէջ դուն եղիր ինծի բարի խորհրդատու. մեղաց առիթներու մէջ գըտնըլու ըլլամ, դուն իս յափշտակէ չարսատանային ձեռքէն : Ո՞վ պաշտպան իմ, դուն ցըցուր ինծի արքայութեան նեղճամբան, ու ձեռքէս բռնելով առաջնորդէ առ ՀՅ փրկիչ մեր, որ հոնշնորհակալ ըլլալով քեզի՝ միատեղ ուրախանակը յաւիտեանս, ամէն :





J. KARLSEN

ԱՊՈԹԱՔ  
ԵՐԵՎԱՆԻ ԽՈՏՍ ՅԵՒԱՅ  
ՎԱՏՈՒԵԿԱՄՈՒՐ :

Եւ իսյան ցաւագէն :

Այս երկնաւոր, նայէ երկինքէն առ  
սուրբ ողջակիզին՝ որ ցաւագին մայրը  
իր մեռեալ մէկհատիկ որդին ձեռվընե-  
րուն վրայ առած քեզի կը մատուցանէ .  
ու ինքն ալ խաչին տակը կենդանւոյն  
զոհ եղերէ, ու անտանելի ցաւերու մէջ  
կայրի կը տոշորի : Ո՞վ անմիսիթար սուրբ  
Ածածին, արիւններու մէջ թաթիրված՝  
ու բոլորովին խոցոտված մարմինը ան-  
նման որդւոյդ գիրկդ առեր՝ մինակուկ  
նստեր կուլաս . ու անհուն ցաւերու ծո-  
վուն մէջ ընկղմերես անմիսիթար : Ո՞ւ  
մը չչի վերքին պատուածներուն կը-  
նայիս, մէյմը ան փշեղէն պսակին աչքդ  
կըդարձընես, ու անոր դոց աշվըները

տեսնալով՝ դռւն ալ սաստիկ ցաւերու  
մէջ մթնցերես։ Վաս մայյր ցաւագին,  
ալ սիրտս չիդիմանար քեզ ասանկ խեղձ  
տեսնալուս. աղբիւրի նման արցունքիդ  
ձայնը հիմա կըլսեմ, որ լալով կըկան-  
չես։ ‘Դարձէք իմ ցաւերուս նայեցէք,  
թէ աշխրքիս մէջ եղած է ցաւ մը իմ  
ցաւերուս նման։ Ով վշտագին սուրբ  
Ածածին, բաց ինծի ալ սրտիդ դառն  
ցաւերը. ու խոցէ սիրտս սրով քու ցա-  
ւոցդ։ Վաելի կընարեմ քեզի հետ լա-  
լը, քան բոլոր աշխրքիս ուրախութիւնը։  
Կուզեմ քու ոտքիդ տակը իմ մեռեալ  
էնիս վրայ լալով մեռնիլ, ու ամենեին  
անկից չիբաժնըվիլ, ամէն։

### Վասնակն ցաւ։

Ով ամենասուրբ տիրամայր, յիշէ ան  
մեծ ցաւդ, որ սիմէռն ծերունիին դու-  
շակութիւնովը սրտիդ մէջ ունեցար.  
թէ պիտոր օր մը դար՝ որ քու սիրելի  
որդիդ չարչարվի ու մեռնի. ու աս իրքեւ  
սուր մը սիրտդ պիտոր անցներ։ Անձ  
խոց եղաւ աս դթած սրտիդ, ու տրտ-

մութեամբ քեզ լեցուց, որ երեսուն ի-  
րեք տարի միշտ կրեցիր : Ա ն ցաւագին  
մայր, ես ալ որչափ սուրեր խօթերեմ  
քուկին սրտիդ, ու մեծագոյն ցաւերու  
պատճառ եղած եմ քեզի դէմ մեղք  
գործելովս : Այս հիմա սրտանց ամէն  
ըրածներուս վրայ կրզզամ, ու կաղա-  
շեմ որ սիրելի որդուոյդ հետ իս հաշ-  
տեցընես . որ հնը ըլլայ ինծի նշան  
կանգնելու, ու յաւիտենական վրկու-  
թեան հասնելու : Աս առջի խոցդ յիշե-  
լով սուրբ տիրամայր, կրխնդրեմ քեզ-  
մե, որ ինծի խոնարհութեան ու համբե-  
րութեան շնորհք տաս, որ ամէն բանի  
մէջ իս այ կամքին համակերպելով՝ քեզի  
նմանօղ ըլլամ, ամէն :

Հայր մեր որ յերկինս :  
Ողջոյն քեզ մարիամ :

ԵՐԻՇՐԴ ԿԱՆ :

|| Վ վտագին սուրբ Ա ծածին, յիշէ  
երկրորդ քաշած ցաւդ, որ հերովդեսին  
հալածումէն վախնալով՝ գիշերանց ելար  
եղիպառս փախար : Խ նշ խեղճ ու ծանր

բանը էր, որ նորածին որդիդ գիրկղ առած սուրբ յովսեփին հետ՝ առանց պատրաստութեան լեռնէ՝ի լեռ ան երկար ճամբան կերթայիր : Ո՞վ տրտմալից կոյս, մեծ եղաւ իրաւցընէ ցաւոցդ դառնութիւնը . բայց երանի թէ, ես ալ նորէն քու սրտիդ տրտմութեան պատճառ չըլլայի ՀՅՌ սրտիս մէջէն հալածելուլ : Ալխոստովանիմ ով սուրբ տիրամայր, որ շատ անդամ հերովդիոսէն վար չեմ մնացեր, չար կիրքերս կատարելով՝ իբրև թէ ՀՅՌին մեռնիլը ուղերեմ : Ո՞վ մայր ցաւադին, շնորհ մը տուր ինձի այսօր, որ ամէն արատներէն մաքրելով սիրտս՝ քեզի ու քու սիրելի որդւոյդ բնակարան մը զարդարեմ, որ իմ սրտիս մէջ մանաք բնակիք՝ի յաւիտեան, ամէն :

• այր մեր որ յերկինս :  
Ողջոյն քեզ մարիամ :

ԵՐԵՐԴ ՍՊԻ :

Ո՞վ տրտմալից մայր, ամէնէն մեծ եղաւաս ցաւդ մայրական սրտիդ . ինչու որ

ուրիշ քաշած կսկիծներուդ ատենը սի-  
 րելի չնդդ քու միակ սրախով մխիթարու-  
 թիւնը միշտ հետդ էր, հիմա ան կոր-  
 սընցընելով՝ գրեթէ ղքեզ ալ դառն ցա-  
 ւերու մէջ կորանցուցիր : Ե՞նչ ցաւագին  
 օրեր եղան քեզի ան իրեք օրը ովլ մայր  
 վշտագին, որ չորս դին ինկած անձկալի  
 զաւակդ կըմինտուէիր, դիշեր ցորեկ ան-  
 մխիթար լալէն չեիր դադրիր : Ետքը  
 տաճարին մէջ դտար, ու ցաւած սրտով  
 բացիր իրեն ներսի խօցդ ովլ որդեակ,  
 առ ի՞նչ բան ըրիր դուն մեզի : Ովլ ցա-  
 ւագնեալ մայր, թող տուր, որ ես կան-  
 չեմ ասանկ չնդին ոտքը ինկած . դուն  
 քիշմը ատեն չնդին տեսութենէն զըկը-  
 վեցար, բայց միշտ սրտիդ մէջ կըկըէիր .  
 իսկ ես մեղանչելով բոլորովին չնը կոր-  
 սընցուցի, ու հոգիս խեղճ մկացերէ :  
 Ե՞ն մայր ողորմութեան, առ երրորդ  
 քաշած ցաւդ այսօր յիշելով կըպաղա-  
 տիմ քեզի, ինծի անանկ շնորհք մը  
 տաս, որ ճշմարտապէս գտնամ իմ չնըս,  
 ու մէյս'ալ չիկորսընցընեմ, ամէն :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ մարիամ :

Առաջնորդ շահ :

Ով մայր ցաւագին, ինչ սոսկալի ցաւեր զգաց մայրական սիրտդ, երբորտեսար սիրելի որդիդ անգութ թշնամեաց ձեռք ինկած, 'ի մահ դատապարտված։ ողջ տեղ մը չէր մնացեր բոլոր մարմնոյն վրայ, գլուխը փշէ պսակ կապած՝ կռնակը մէկ ծանր խաչ բեռնաւորերէին, ու շուվանով կապած քաշկոտելով կրտանէին գողգոթա լեռը խաչելու։ Ծակ որ ուրիշ կանանց սրտերնին շիղիմանալով անոր խեղճ կերպարանքին կուլային կողբային։ արդեօք քուկին խանդակակմ սիրտդ ինչ մահարեր ցաւեր կրեց։ Ես ցաւալից Վարիամ, մեղքերս ալ Հնին մեծ խաչ եղերեն, ու ատ կրսկրծալի չարչարանքներուն պատճառ։ Հիմա աս չորբորդ ցաւդ յիշելով՝ համբերութեան շնորհք կրինգրեմ, որ ես ալ իմ խաչս սիրով դրկեմ, ու Հնին ետևէն երթամ ինչվան գողգոթա լեռը։ այսինքն՝ մինչեւ որ մեռնիմ։ Ով սուրբ տիրամայր, տուր ինծի վիրաւորված սիրտ

մը, որ հետդ ցաւիմ, ու քեղի պէս խաշին տակէն չիհեռանամ, ամէն :

Հայր մեր որ յերկինս :  
Ողջոյն քեզ մարիամ :

Հինգերորդ շաբաթ :

Ավագ մայր լի ամէն ցաւերով, ահա խոցվեցաւ մայրական սիրտդ սիմէռնեան սրով, ու բոլորովին ցաւերու մէջ ընկրղմեցար, երբոր տեսար ածորդիդ խաշին վրայ իրեք անխնայ դամերէն կախված, ու ան կուսածին մարմինը արիւներու մէջ թաթխրված : Կըկնի և երկրի մէջ խաչվեր կեցեր, ու մէկ դութշարժող մը չիկայ . մարդիկ զինքը խաշերեն, հայր ած ալ բոլորովին թող տրվերէ, միայն դուն ով վշտագին սուրբ Վճածին ամէն ցաւերն ալ սրտիդ մէջ ժողվերես, խաչին տակը կեցեր կայրիս կըտուրիս կենդանի : Վ, իս մայր ցաւադին, արել խաւարեցաւ, ու քարերը չիդիմացան . բայց քուկին կենացդ արել ինչպէս չիմթնցաւ, ու մայրենի սիրտդ ինտոր քաշեց ատշափ ցաւերը :

Ով մայր, ոտքդ ինկած կաղաշեմ՝ պատ-  
ռէ իմ քար դարձած սիրտս, ու լեցուր  
դառն ցաւերով, որ ևս պատճառ եղայ  
մահուանը չչին։ Այս մայր, մի գոցեր  
ինծի գեմ սրտիդ գութը, ինչու որ իս  
քեզի յանձնեց որդիդ, ու ցաւերովդ իս  
քեզի որդի ծնար։ Դուն իս պաշտպանէ,  
ու քեզի արժանի որդի ըրէ։

Հայր մեր որ յերկինս։  
Աղջոյն քեզ մարիամ։

### Ա ԵՍՔԵՐԵՎԱՆ ՀՅ-:

Ով մայր ցաւադին, ինչ սաստիկ ցաւ-  
ռնեցար, երբոր մեռեալ որդւսյդ կաղը-  
տէգով զարկին՝ ինչվան սիրտը պատռե-  
ցին։ Թէպէտ չչին սիրտը վիրաւորե-  
ցաւ, այլ ցաւը քու սիրտդ անցաւ։ Ով  
անմիսիթար մայր, նստէ ալ խաչին տակը,  
գիրկդ առ մեռած մարմինը սիրական  
որդւսյդ, գուցէ անով սիրտդ պաղը-  
տըկի, այլ ափսանս, դարձեալ նոր ցա-  
ւերով սիրտդ վիրաւորեցաւ։ Հառաջ  
միայն տեսնելով կրցաւէիր, հիմա ձեռ-  
քով անթիւ վերքերը կըշօշափես, պատ-

ուած սիրտը կըտեսնաս, ու վիրաւոր-  
ված զլուխը ձեռքիդ վրայ գրերես : Եւ-  
կից ալ առելի ինչ կոկիծ ու տանջանք  
կրնար ըլլալ քեզի մայր սուրբ, որ շա-  
րունակ մարտիրոսութիւն քաշես, ու  
կենդանի մնաս : Ով մայր վշտագին,  
մեծապէս կըցաւիմ, որ իմ մեղքերս  
պատճառ եղան քու որդւոյդ մահուանը,  
ու քեզի ասանկ խիստ ցաւեր հասցու-  
ցին . ով տիրամայր իմ, սրտիս արտա-  
սուաց շնորհք մը տուր, որ քու ոտքիդ  
տակը լամ ողբամ, ու արցունքներովս  
ցաւաց սրտիդ մխիթար ըլլամ, որ մեռած  
ատենս դուն ալ իս մխիթարես, ամէն :

Նայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ մարիամ :

Եօնեբոլուտ ցաւ :

Ով ցաւագին մայր, ով կընայ պատմել  
մայրենի սրտիդ ան ետքի քաշած ցաւը,  
երբոր մեռեալ որդիդ զրկէդ առին՝ որ  
սուրբ գերեզմանը դնեն . թէպէտ խիստ  
պատվաւոր եղաւ թաղումը , բայց ան-  
կից բաժնը վիլդ բոլորովին դառնութիւն

էր սրտիդ : Ամէն դիանց ցաւերով լեց-  
 վեցար . ու բոլոր ցաւերուդ անմիսիթար  
 ցաւ եղաւ ան տրտմագին տեսիլը , եր-  
 բոր ետքի անգամ նայեցար սիրական  
 որդւոյդ , ու աչքիդ առջևէն ալ յափր-  
 տակելով՝ գերեղմանին գուռը գոցեցին :  
 Ա յաւագնեալ մայր , ուր է անգին  
 գանձդ , ուր է սրտիդ միսիթարութիւնը .  
 ուր է սիրելի որդիդ . ինտոր բաժնեցիր  
 սիրտդ քեզմէ . տրտմութեամբ գերեղ-  
 մանին մօտ նստեր կուլաս . և ով կրնայ  
 քեղ միսիթարել , որ երկնի և երկրի ցըն-  
 ծութիւնը քեղ անանկ սգոյ մէջ ընկրդ-  
 մերէ : Ով մայր սուրբ , հիմա քու օխ-  
 տը խոցդ առջիդ դնելով՝ ոտքդ ինկած  
 կրխնդրեմ , չնին չարչարանաց ու քու-  
 կին ցաւոցդ համար ողորմիս մեղաւոր  
 հոգւոյս , բոլոր ըրածներուս թողութիւն  
 տաս : չնին մահը սրտիդ մէջը մեծ գութ  
 ձգէ վրաս , ու քուկին ցաւերդ դժոխքէն  
 զիս փրկեն , ու բարեխօս ըլլան ինծի ,  
 որ աս աշխարհս միշտ ցաւերդ յիշելով՝  
 երկինքը քեզի հետ ուրախանամ :

\* այր մեր որ յերկինս :

Ողջն քեղ մարիամ :

Աղօթք Յան հենգ վէրքերուն :

Չակ սպանին մէրացը :

Սոնարհութեամբ գետինը ինկած կը-  
համբուրեմ ոտից սրբազն վէրքը ուլ-  
ողորմած փրկիչ իմ, ու կաղաչեմ քեզի  
որ միջնորդութեամբ սուրբ վէրքիդ ա-  
մէն մեղքերուս թողութիւն տաս, որ  
մինչև հիմա հինգ զգայարանքովս քեզի  
դէմ մեղանչեցի : Ով բարի Յան, աս  
պատուական վիրացդ համար պահէ իս  
ամէն փորձանքներէն չար թշնամոյն,  
որ 'ի քեզ միայն կենդանի ըլլամ :

'Ի պատիւ աս սուրբ վէրքիդ ուլ Յան՝  
կընըմիրեմ քեզի ամէն քաշած վշտերս  
ու նեղութիւններս աս աշխրքիս մէջ :  
Խառնէ տէր իմ աս անարժան ընծառ  
քու դառնխաչիդ ու չարչարանացդ հե-  
տը ու շնորհք տուր ինծի, որ ամէն  
դժբաղդութիւններուն սիրով տանիմ,  
ու իս սուրբ կամացդ յանձնեմ միշտ :

Հայր մեր որ յերկինս :

Ողջոյն քեզ մարիամ :

Ա. Հ Ա Յ Ա Խ Ա Վ Ա Ր Ա Գ Ա Վ :

Ով ամենաքաղցր էս, քու աջ ոտքիդ սրբազն վերքին համար ան ամեն մեղքերուս ներումն շնորհէ, որ իմ գարշելի մտածութիւններովս քեզ վշտացուցի : « Կուն տէր իմ, ցաւագին փշեղէն պսակիդ արդեամբը մարքիս երկնային սուրբ մնածութիւններ տուր, ու հոգւոյն սրբոյ շնորհքովս իս լեցուր . սուրբ աղղեցութիւններդ վրայէս անպակաս ըրէ, որ ասկէց ետքը միայն քեզի հաճոյ ըլլալու ջանամ :

Դ պատիւ աս սուրբ վերքիդ ով փըսկիչ իմ էս մի, կը յառաջաղքեմ իբրև քու ձեռքէդ ընդունիլ ամեն բանը, թէ յաջողութիւն և թէ ձախորդութիւն, թէ բարեկամ և թէ թշնամի : « Կու տէր, քու հայրական նախախնամութեամբ իս հոգաւ, ու մի թողուր՝ որ երբէք քեզմէ բաժնըմիս .

Հայր մեր որ յերկինս :  
Ողջոյն քեզ մարիամ :

‘Հայ յեռքին վերացը:

Ո՞ղջ լեր ուլ վիրաւորեալ ձեռք է Յօհի,  
մեծագոյն փափագով ու սիրով կրհամ-  
բուրեմ, ու քեզ կօրհնեմ: Ա՞նջնոր-  
դութեամբ աս սուրբ վէրքիդ կաղաչեմ  
տէր իմ, որ ալ չըյիշես մեղքերս՝ որ  
չար կիրքերով՝ անժուժկալութեամբս՝  
ու բարկութեամբս հոգիս աղտեղեցի:  
Ո՞վ սիրելի Յօհ, քուկին ամենազօր ձեռ-  
քըդ դիր վրաս, ու իս պահպանէ, որ  
կարող ըլլամ թշնամիներուս ձեռքէն  
խալսոիլ:

Դ պատիւ աս սրբազան վէրքիդ ուլ  
ողորմած Յօհ, սրտանց մեղայ կրգուեմ,  
ու կրզզամ ամէն չար գործքերուս վրայ:  
Դաւն բարերար տէր, քուկին անդին  
արիւնովդ լրվա, ու մաքրէ հոգւոյս աղ-  
տոտութիւնը, որ դատաստանին օրը ո-  
զորմութեանդ արժանի ըլլամ:

Հայր մեր որ յերկինս:

Ոլջոյն քեզ մարիամ:

Ա.Հ. ՅԵՒՏԻՆ ՎԵՐԱԿԱ :

Ո՞վ ամենաբարի ՀՅ, սուրբ ձեռքիդ  
վէրքը ըւլայ ինծի հայելի մը, որուն մէջը  
տեսնամ իմ մեղացս մեծութիւնը ու շա-  
տութիւնը, ու անմիսիթար լամ ու ցա-  
ւիմ : Ե՞ն ողորմած տէր, խառնէ աս  
թափած արցունքներուս հետ կաթիլ  
մը վիրաւորված ձեռքիդ արիւնէն . ու  
ընդունէ աս նուերս քուկին արդարու-  
թեանդ ունեցած անթիւ անհամար  
պարտքերուս տեղը : Օանազան մեղքե-  
րով վիրաւորված հոգիս դուն կենդա-  
նարար վէրքերովդ բժշկէ ու մաքրէ .  
ու զօրութիւն տուր հոգւոյս, որ միայն  
քու սուրբ կամքդ կատարէ :

'Ի պատիւ սրբազան վէրքիդ զթած  
ՀՅ, հաստատէ սրտիս մէջը քուկին սուրբ  
երկիւղդ ու ածային ներկայութիւնդ,  
որ միշտ բարի ապրիմ, ու առաքինու-  
թեանց ետեւէ ըլլամ : Շնորհքալ տուր՝  
որ ամէն գործքս 'ի փառս քո ընեմ :

Նայր մեր որ յերկինս :

Ողջյն քեզ մարիամ :

$\{ \} = \{ \}$ ,  $\{ \} = \{ \}$ .

Այս վիրաւորված կող Հնի, Երբոք  
կըդառնամ քեզի կընայիմ, իմ սիրելի  
փրկչիս կաթողին սիրտը կըտեսնեմ, որ  
բոլորովին ածային գթութիւնով ու սի-  
րով լեցված՝ իմ կորսրված հոգիս կուզէ:

Ով քաղցր սիրտ չնշի, ամենէն աւելի ցաւ եղած են քեզի մեղքերս, ու անտանելի տրտմութեան մէջ ձգերեն։ Խնամիներէդ անդամ մը միայն վիրաւորվեցար. բայց իզմէ բիւր անդամ խոցվեցար։ Առչափ ալ անարժան ըլլամ տէր քուկին շնորհքիդ, միշտ ցաւադին սիրտդ գթութիւն կաղաղակէ. հինգ սուրբ վէրքերդ միջնորդ կըւլան բնծի համար, քաշած ցաւերը ու թափած արիւնները արդարութեանդ առջին կըհանեն։ «Կութ շարժեն քեզ վրաս քուկին սուրբ վէրքերդ. առ իս վիրաւոր սրտիդ մէջ, ու պահէ ամեն թշնամիներէն. թող մի տար ամենեին, որ քեզմէ բաժնըլիմ,

• այլ մեր որ յերկինս :

Ողջն քեզ մարիամ :

لِيَقْرَأُونَهُ وَمَنْ يَعْمَلْ مِثْقَالَ ذَرَّةٍ بَلْ وَمَنْ

Տէր իմ չչն ՚ՔՆ որդի այ կենդանւոյ,  
դուն ձեռվըներդ տարածեցիր խաչին  
վրայ, ու ինծի համար դառն շարշարանք-  
ներ քաշեցիր. կաղաչեմ ու կըպաղատիմ  
քեզի հիմա, օգնութիւն ըրէ ինծի: ՚ՔԵ-  
զի կըդիմեմ տէր իբրև աղքատ մը մ-  
ծատունիդ, ողորմելիս ողորմածիդ, հի-  
ւանդս բժիշկիդ, անօթիս կենաց հացիդ,  
ու ծարաւիս առ աղբիւրդ կենդանու-  
թեան, որ ամենեին չես ցամաքիր,  
իբրև արարած իր արարչին, ու վերջա-  
պէս իբրև խեղճ մեղաւոր մը իր բարե-  
րար փրկչին: Ո՞վ քաղցր չչն, ես ին-  
քիրմէս կըխոստովանիմ քու առջիդ իմ  
ըրած ամեն շարութիւններս: Ե՞նօրէնու-  
թեամբ յղացայ. և 'ի մեղս ծնաւ զիս  
մայր իմ, իսկ դուն իս լրվացիր ու սրբե-  
ցիր. ես դարձեալ մեղանչելով՝ նորէն  
աղտոտեցի քռկին արեամբդ լրվացված  
հոգիս. ու իբրև ապերախտ ու անշնորհք  
մարդու մը պէս՝ քեզմէ այնչափ բարիք-  
ներ ընդունելէն ետքը ելսյ քեզ նորէն  
մեղօքս անարգեցի ու վշտացուցի:

Վ. Ել դու գթած, տէր, ողորմէ անարժան որդւոյդ, որ անշափ ցաւերով ու չարչարանքովդ ծնար ՚ի կեանս : Ո՞յն նայիր մեղքերուս, որով քու բարութիւնդ ստրի տակ առի . այլ յիշէ քու մեծ սէրդ, որով իս ստեղծեցիր : Ենդունելի ըսայ քեզի աս աղաչանքս . տէր իմ ՀՅԱ, գթա վրաս ողորմութեամբդ . ու մի դարձրներ քուկին երեսդ իմ ցաւագնեալ հոգիէս . որովհետեւ ինծի համար չիդարձուցիր սուրբ երեսդ զարնողներէն, ու թքնողներէն :

Դիտեմ տէր՝ որ մեղաւոր եմ, ու մեղօքս բիւր անգամ արժանի եղայ գժոխքին . թէ ես ինծմէն չեմ բաւական յանցանքներուս հատուցումն ընելու, իմ հատուցումը քուկին սուրբ արիւնդէ, ու քաղցր մարդասիրութիւնդ, որ բոլոր աշխարքիս մեղքը քու անմեղուսիդ վրայ կըբառնաս : Դու տէր իմ, մի ինդքեր մեղաւորիս մահը, և մի ու բախանար անոր կորսըվելուն . ինչու որ անոր համար մեռար, որպէս զի մեռածները կենդանացընես : Ո՞վ բարի ՀՅԱ, ով կընայ անյոյս ըսալ ու տարակու-

սիլ քու ողորմութեանդ վրայ , որ մեր  
ապերախտներուս համար մեռար , որպէս  
զի այ հետ դարձեալ հաշտեցընես : Յմէ  
որ առանց իմ աղաչելուս վրաս 'ի գութ  
շարժեցար . որչափ աւելի հիմա , որ մեծ  
կարօտով կրինդրեմ ողորմութիւնդ :

Վիտեմ տէր իմ չչա , որ խիստ ո-  
ղորմած ես . ան դառն ցաւերուն մէջ  
խաչէն կախված թշնամեացդ համար ա-  
ղօթեցիր , դրախտին դուռը աւաղակին  
բացիր , միայն ես պիտի զուրկ մնամ քու  
ողորմութենէդ : Ե իս տէր , խաչիդ ոտ-  
քը ինկած լալով կաղաչեմ , ողորմէ ինծի ,  
ու սուրբ չարչարանքներովդ հոգիս մխի-  
թարէ , ու ընդունէ ան երջանիկ աւա-  
զակին պէս երկնից արքայութիւնը :

Եթէ աետան ներսեսէ :

Աորոգող տիեզերաց՝ որ զգեցուցեր մեզ  
լոյս փառաց , արկար ըղքե 'ի զինուորաց՝  
քշամիթ կարմիր նախատանաց . մերկեա  
յինէն ըղքուրձ մեղաց՝ ըզտրտմագոյն  
արեամբ ներկած . և ըղգեցու զուրախա-  
լին՝ ըզպատմուճանն իմ զառաջին :

Աղքանաւոր թագաւորիդ՝ 'ի ծունքը իշեալ խաղ առնեին, ծածկեալ ըզգլուխրդ կռվեին՝ և եղեղամբք հարկանեին, և զիմ անկեալ մինչ՝ 'ի գետին՝ 'ի հնազանդել կամաց չարին, մի թողուցուս խաղալ սուլին՝ սյլ կանգնեսցես զիս վերըստին :

Պամեալ բոլորը քո մարմին՝ յետ վըճրույ դատաւորին, սաստիկ էառ զհարուած դանին՝ վասըն դանից նախաստեղծին, զիս որ յոտից մինչև ցըգլուխ՝ ցաւօք նեղիմ անհընարին . առողջացն դարձեալ կրկին՝ որպէս շնորհօք աւազանին :

Արրափայլ պճնեւալ զարդուն՝ զօր զգեցուցեր ահարութիւնն . փոխան պըսակ՝ 'ի փշոց եղին՝ մշակք այդւոյն խրայելին . ըզփուշ մեղաց հանցես յինէն՝ զոր յիս եհար իմ թշնամին, և ողջացն զիսայթուած վիրին՝ զի սպիք մեղացըն ջընջեսցին :

Ետուն ըմպել քեղ ըզլեղին՝ և ըզքացախն՝ 'ի ծարաւին . արբեր կամաւզիքաղրասցին՝ ճաշակք պտղոյ դառնադունին . ըզդառնութիւն թունաւորին՝ զոր՝ 'ի մասունս հոգւոյս արկին . հեր-

քեա 'ի բաց հանդերձ սովին՝ և քաղ-  
ցրասցի սէր քո 'ի սմին :

Այտեղնեալ ծառոյ մահաբերին՝ այն  
որ բուսաւ 'ի մէջ գրախտին. փոխան  
բարձեր ըղփայտ խաչին՝ 'ի դողգոթա  
հաներ տեղին. զիմ առ 'ի մէջս անկեալ  
զոդի՝ և ծանրագոյն բարձօղ բեռին.  
բարձ 'ի յուսիդ ըստ ոչխարին՝ հան 'ի  
յերկինս յուխտեալ տեղին :

'Ի յուրբաթու ժամ երրորդին՝ բեե-  
ռեցար տէր 'ի խաչին. լուծեր զյան-  
ցանս նախաստեղծին՝ և կապեցեր ըղ-  
թըշնամին, զիս ամբացո՛ ընդ հովանեաւ  
կենդանարար քո նըշանին. և 'ի ծագելն  
յարևելից լուսաւորեալ լուսով նորին :

Երանեալ աւաղակին՝ բացեր ըդուռն  
աղին գրախտին, ըստ հաւատոյ սրտի  
նորին՝ կատարեցեր ըղինդրելին. տուր  
և ինձ տէր ընդ նըմին՝ լըսել ըղնոյն  
պատասխանին. այսօր ընդ իս իցես յա-  
զին՝ 'ի հայրենիս քո առաջին :

Բարբառելով զէլի էլին՝ հիմունք երկ-  
րի տատանէին. և վարագոյր հին օ-  
րինին՝ վերուստ 'ի վայր պատառէին. արդ  
ընդ վիմացն որ շարժէին՝ շարժեալ զան-

շարժ սիրուս՝ ի բարին . ընդ պատառիլ  
վարագուրին՝ զիմ պատառեա ըզգիր  
պարտին :

Արեգական լոյս քօղ արկեալ՝ խաւա-  
րանայր միջօրէին . և գերեղմանըք բա-  
նային՝ մարմինք սրբոցըն յառնէին . ընդ  
խաւարիլ լուսաւորացն՝ մաքրեա յինէն  
զգործ խաւարին . ընդ մեռելոցն որք յառ-  
նէին՝ կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս :

\* Եօր սիրոյ պատուիրանին՝ գործով  
լցող եղեր բանին , աղօթելով առ հայր  
յերկին՝ թողուլ ըզմեղս որ ՚ի խաչին . ինձ  
որ հոգւովս հաւատացեալ՝ երկրպագեմ  
քեզ միածին . թող ըզլուծումըն հրա-  
մանին՝ մի յիշեսցեն մեղքն առաջին :

Արսեցին սանդարամետք՝ ՚ի յաւան-  
դելն առ հայր զհոգիդ . որ ՚ի դրժոխս  
իջեր ներքին՝ ՚ի բանտ մահու և խաւա-  
րին . կապեալ զիշխանըն մահածին՝ հա-  
ներ զհոգիսն որ ՚ի բանտին , և զիս հան-  
ցես տէր ընդ նոսին՝ բանտէ մեղաց աղ-  
ջամբղջին :

Աղբերացն անապական՝ որ յետ մա-  
հուն անմահարար . բղխեալ ՚ի քէն վր-  
տակ կրկին՝ ՚ի նորոգումըն կողածնին .

բաց ըզբերան իմ յարբուցումըն քո ա-  
րեան կենարարին . լուս դարձեալ յա-  
ւաղանին՝ թէ ոչ շնորհօք այլ արտա-  
սուօք :

Հանմահիդ մեռանելոյ՝ զմեռեալ հո-  
գիս կենդանացո . թազմամը ՚ի նոր գե-  
րեզմանի՝ զթաղեալս ՚ի մեղըս վերածեաւ,  
՚իդրիներքնումն իջանելով՝ ի գրոյ մեղաց  
վերաբերեաւ . ՚ի ստուեր մահու բնակե-  
լով՝ լուսաւորեաւ և զիս հոգւով :

Ոիրտ իմ առ քեզ աղաղակէ՝ բանդ  
որ ընդ հօր ՚ի սկզբանէ . որ կամաւոր  
վասըն մարդկան՝ կրեցեր մարմնով զայս  
ամենայն . ինձ լսելի արա ըղձայն՝ յար-  
քայութեանըդ քո կոչման . ընդ ժողո-  
վոց անդ անդրանկացն՝ օրհնել ըղքեզ  
միշտ յափտեան :

Վ. Պ. Հ. առ Հ. :

**Տ**էր Հ. Վ., որ ինձի համար խաչին  
վրայ մեռար, քու դթած ձեռքդ կրյանձ-  
նեմ հիմա ու մահուանս ժամը իմ խեղճ  
հոգիս : Չիյտեմ տէր, Երբ պիտի իս  
քեզի կանչես, Երբ պիտի աղատես հո-  
գիս առ մահկանացու կենաց, միայն յոյս

ունիմ որ շնորհաց մեջ դտնըլիմ :

**Կ**ըդողամ տէր, երբոր անհամար մեղ-  
քերս միտքս կուգան . քուկին արդար  
դատաստանոդ կըմտածեմ, բայց քուկին  
ողորմութիւնդ անչափ է, անոր համար  
սուրբ վէրքերդ, անզին արիւնդ, պա-  
տուական խաչդ ու մահդ միշտ հոգւոյս  
մխիթար ու օգնական ըլլան : Ո՞վ դթած  
էս, երբոր հոգիս մահուան դուռը կը-  
հանի, ու ամէնէն անօգնական կը մնայ .  
երբոր թշուառ մարմինէս կըբաժնըլի ,  
կաղաչեմ քեզի չիսուս, դուն ընդունէ  
հոգիս, ու թող մի տար որ՝ յաւիտեանս  
կորսըլիմ, որ քու արեամբդ փրկեցիր :

### Առաջնա :

'**Ի** քեզ տէր յուսացայ . մի ամաչեցից  
յաւիտեան :

'**Դ**ու ես պաշտպան իմ տէր . և 'ի ձեռս  
քո յանձն առնեմ զհոգի իմ :

'**Վ**նձն իմ նովաւ կեայ, և զաւակ իմ ծա-  
ռայեսցէ նմա :

'**Ք**եզ սաղմնոս ասոցից ած ապաւէն իմ  
ած ողորմութեան իմոյ :

## Ը արտիան :

Յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ . մի թռ  
ղուր զիս տէր ած իմ : Յոյս իմ 'ի ժա  
մանակի ծերութեան իմոյ , մի թռղուր  
զիս տէր ած իմ : Յոյս իմ 'ի միւսան-  
դամ գալստեանընքո . մի անտես առ-  
ներ զիս :

Եղջեւ բարե հահ ինոդրէլուսուց Ենա-  
նէն :

Ովք քաղցրագութ մայր հնի կոյս Ան-  
րիամ , օգնական ու պաշտպան անձարակ  
մեղաւորներուն լի գթութեամբ և ո-  
ղորմութեամբ . անուշ աչքովդ նայէ ո-  
ղորմելիիս վրայ . հասիր ինծի օգնութիւն՝  
քանի որ մահս չէ եկեր մօտեցեր իմ  
քովս , որ չըլլայ թէ յանկարծակի ու  
առանց պատրաստութեան ելլեմ աշ-  
խրբքէ : Կաղաչեմ քեզ մայր ողորմու-  
թեան՝ հնին քաշած չարչարանքներուն  
ու մահուան սիրոյն համար , պահէ ու  
խնամէ իս , որ հիմակվընէ հեռանամ  
մեղքէ , փախչելով սատանայէն ու իր

ամէն չար գործքէն . ճշմարիտ զղջմամբ՝  
կատարեալ խոստովանութեամբ՝ ու ար-  
ժանաւոր ապաշխարութեամբ հաշտը-  
վիմ ՀՅին հետ : Ողորմէ ինծի երա-  
նուհի մայր այ՝ ան սոսկալի ատենը  
մեռնելուս օրը , երբոր շունչս բըռնըվի ,  
ու լեզուս կապվելով չիկրնամ աղաչել  
քեզի , աչմըներս մթըննան , ու ականջ-  
ներս խուլնան , ան ատենը մի մոռնար  
իս մայր անարատ , այլ միտքդ բեր հի-  
մակվան աղաչանքս որ կընեմ քու մայ-  
րական գթութեանդ . ու հասիր ինծի  
օգնութիւն . որպէս զի խալըսիմ սա-  
տանային փորձանքներէն . ու անուշ մա-  
հուամբ քու ձեռքըդ աւանդելով իմ  
հոգիս , արժանի ըլլամ արքայութեան  
ու մասնակցութեան սիրելի ծառանե-  
րուդ , որ քեզի հետ կըվայլեն զած յա-  
փտեանս յաւիտենից , ամէն :

### Եղջեւք սբուն ՀՅէ :

**S**էր ՀՅ Պ. ով կրնայ պատմել քու  
սրտիդ քաղցրութիւնը ու մեծագոյն սե-  
րը մեր վրայ . որ իբրև ողորմութեան

աղբիւր մը բացիր մեղի սիրտդ . որ ամենք ~  
նիս ալ հոն դիմենք , ու շնորհքներով  
լեցվինք : Ո՞վ քաղցր սիրտ չՅնի , որ-  
շափ ուրախութիւն է քեղի , երբոր աշ-  
խարհասէր սիրտ մը քեղի դարձած կը-  
տեսնես , ու քու սրտիդ ապաւինած :

Ո՞վ ածային սիրտ չՅնի , ծարափ է  
հոգիս քեղի , ու մեծ փափաքով քեղ  
կրինտոէ : Ա առէ , բորբոքէ սիրտս քու-  
կին սուրբ սիրովդ , որ քեզմէ ուրիշը չե-  
սիրէ : Ո՞վ դժած սիրտ փրկչին իմոյ ,  
թէպէտ շատ անգամ քեղ թողուցի ,  
ու գացի աշխարքիս ունայն բաներուն հետ  
սիրտս կապեցի . անս , հիմա մեծ ցաւ է  
ինծի , լալով կրպաղատիմ ով քաղցր  
չՅն , ընդունէ իս նորէն սրտիդ մէջ , ու  
պահէ՝ որ ալ քեզմէ չիհեռանամ : Տես  
տէր , վիրաւորված սիրտդ բացեր ինծի  
կրսպասես , ու անուշ ձայնով իս քեղի  
կրկանչես . մեղօք բեռնաւորված հոգիս  
քուկին սրտիդ մէջ հանգչեցընել կու-  
զես : Ո՞վ ողորմած չՅնիմ , ահա սիրտս  
բոլորովին քեղի կուտամ . առ ու սուրբ  
սրտիդ հետ մէկ ըրէ , որ միշտ 'ի քեղ  
կենդանի ըլլամ , ամէն :

Պատմութեան լուսական :

Ով տէր իմ չյս, քանի որ զգայարանքներս ողջ են, ու միտքս վրաս է, հիմակվընէ հոգիս քեզի կը յանձնեմ. ու ան ատենը ընելու աղաչանքներս սուրբ խաչիդ ոտքը ինկած լալով քեզի կը մատուցանեմ : Արխոստովանիմ տէր, որ մեղաւորեմ, ու շատ անգամ քեզ վշտացուցած եմ . բայց մեծ յոյս ալ ունիմ՝ որ դուն ես իմ գթած փրկիչս, որ իմ փրկութեանս համար խաչին վրայ մեռար :

Երբոր տէր անցած կեանքս կը մտածեմ, շիյտեմ, թէ ինչ երեսով քու առջիդ պիտի երեամ . ու ինչ պատասխան պիտի տամ քեզի : Ո՞չ տէր, գետինը ինկած կաղաչեմ, մի խնդրեր մեղաւորիս մահը, այլ քուկին ողորմութեամբդ ջընջէ ամէն մեղքերս : Անաւանդ օգնէ ինծի ան անմիսիթար ժամը, երբոր մեռելի մը պէս ամէն զգայութիւններս պիտի դադրին . լեզուս դոցված կարող պիտի շրլամ քեզի աղաչել . աչքինե-

ըուս լոյսը պակսելով՝ չիկարենամ պիտոր սուրբ խաչիդ նայիլ : Անտ եղիք ան ատենը բարի չչա, ու քուկին արեամբդ փրկած հոգիս մի տար սատանային ձեռքը : Խրենան քու առջիդ իմ աղօթքներս . երկնցուր վրաս բարերար ձեռքդ, ու վեր հանէ աս ողորմելի աշխրքէս, որ կախվելով խաչէն՝ խոստացար իս քեզի ընդունելու :

Դառն ողորմած տէր, տուր ուրախութիւն աչվըներուս որ չինայիմ դարձեալ իմ մեղքերուս . ազատէ իս քուկին անուանդ փառացը համար : Հըցուր ինծի քու բարութիւնդ որ միշտ բնակիմ քու տանդ մէջ երկնից արքայութիւնը, ու հոն օրհնեմ զքեզ յաւիտեանս, ամեն :

### ԵԱԼ ԴՐԱՅՆ ԱՆ ՀՅԱ :

Ողորմած փրկիչ իմ չչա ՞՛ս, որ քուկին պատուական արիւնովդ իս երկնից արքայութեան որդի զքեցիր, թող մի տար իս, որ աշխրքիս ունայնութեանցը մտիկ ընելով՝ քեզմէ բաժնըլիմ : Հյիշէ տէր իմ ինծի համար քաշած ցաւերդ

ու ըրած հառաջանքներդ ան դառն խաչին վրայ , ու օգնէ ինձի ան ետքի նեղութեան ատենըս . քու սուրբ չարչարանքներդ երկնաւոր հօրդ առջին դնելով՝ մեղքերուս թողութիւն ընդունէ :

Այս տէր իմ , կաղացեմ քեղի լալագին . աս Հն անուշ անունը ըերնիս ետքի խօսքը ըլլայ . քուկին սրբազն մարմինդ խեղճ հոգւոյս կերակուր ըլլայ . քուկին ըրած հառաջանքներդ իմ ետքի ախըս ըլլան . քուկին անուշ նայվածքդ իմ ետքի տեսութիւնս ըլլայ . ու քուկին վիրաւորված ձեռվըներդ ինձի օգնական ըլլան , ու իս յաւիտենական դատապարտութենէ խալըսեն : Ավ բարի Հն , դուն առաջնօրդէ ինձի երկնից արքայութիւնը , ու կենաց ճամբան ցըցուր ինձի . ահա քեղի կուգամ , որ յաւիտեանս քեղի հետ ըլլամ :

Խաչեցեալ տէր իմ , ահա իմ կեանքս ու մահս քեղի կրյանձնեմ , ընկալ զիս , ու օգնութիւնդ վրայէս պակաս մի ըներ : Աղաչեմ քաղցր Հն փրկիչ իմ , մեռած ատենս մսիթարական ձայնդ լսելուարժանի ըրէ : Այսօք ընդ էս էյէս 'էտբանդնեն :

## Առաջնորդութեան :

Լուիցէ քեզ տէր յաւուր անձկութեան.  
օդնական եղիցի քեզ անունն այ  
յակովբայ :

Վուաքեսցէ տէր զօգնութիւն 'ի սրբու-  
թենէ իւրմէ . և 'ի սիոնէ ընկալցի  
զքեզ :

Յիշեսցէ տէր զամենայն պատարագս  
քո , և զուխտս քո ընդունելի ա-  
րասցէ :

Տացէ քեզ տէր ըստ սրտի քում . և  
զամենայն խնդրուածս քո կատա-  
րեսցէ :

Յուսացաւ 'ի տէր՝ և փրկեսցէ զնա . զի  
կամի զնա :

ՎՃ զկեանս իմ պատմեցից քեզ , եղից  
զարտասուս իմ առաջի քո . որպէս  
խոստացար դու ինձ :

Դարձցին թշնամիք իմ յետս իւրեանց .  
յաւուր յորում կարդացից առ  
քեզ :

Ա. Պօլես Հիւանելիքնեպու համար :

Ով գթած և բարեգութ տէր իմ,  
որ քուկին սիրելի որդիքներդ աս աշ-  
խըրքին մէջը փորձելու համար անոնց  
զանազան խաչեր կըխրկես . որպէս զի  
մեր սիրտը աս խարերայ աշխրքիս հետ  
չիկապվի : Ես ալ հիմա , որ այսպիսի  
ծանր հիւանդութեան մէջ կընեղիմ ,  
իմ կամքս քու ամենասուրբ կամացդ  
հետ կըմիաբանեմ . ու սրտանց կը-  
խընդրեմ քեզմէ , որ աս խաչին հետ  
խրկես միանսգամայն համբերութեան շը-  
նորհք ալ , որ քաշած նեղութիւնս  
անհամբերութեամբ անպտուղ չըլսայ :  
Վիտեմ որ աս աշխրքիս մէջ նեղու-  
թիւն ունենալը իրըև թէ նշան մը նէ  
քեզի սիրելի ըլլալու , փրկարար միջոց  
մընէ մեր մեղքերը աս աշխրքիս մէջ քա-  
ւելու . որոնք որ անդիի աշխարհք եր-  
կայն տտեն ծանր ծանր տանջանքով  
հաղիւ պիտի կարող ըլլայինք քաւել :  
Ենոր համար ես ալ կաղազակեմ դա-  
փիթ մարդարէին հետ : Պատրաստ է

սիրտ իմ, ած իմ, պատրաստ է սիրտ  
իմ: Իմ բոլոր յօյսս ու մխիթարու-  
թիւնս ան է, որ քուկին ամենասուրբ  
կամքդ իմ վրաս կատարվի:

Ճշկետ տէր իմ հոգիս յօժար է  
քու ամենաբարի կամքդ փառաւորելու,  
բայց տկար մարմինս կըհամարձակի առ-  
ջեղ քուկին միածնիդ աղօթքը քեզի  
կրկնելու, որնոր գեթսեմանի պարտէզը  
արեան քրտինք թափելով ըրաւ: Այը  
երկնաւոր, կուզես նէ՝ անցնի իղմէ աս-  
բաժակը: Կուզես նէ՝ ողորմէ չիդիմա-  
նալու ցաւերուս, դադքեցուր սաստիկ  
կոկիծը: Ենչու որ շատ դիւրին բան մը  
նէ քեզի իմ հիւանդութիւնս առողջա-  
ցընել: Բայց չըլլայ թէ իմ կամքս ը-  
նես, հապա ինչ որ է քու կամքդ՝ ան  
ըւայ, որ ինծի ալ միանդամայն ստու-  
գիւ օգտակար է: Դուն աղեկ գիտես որն  
է ինծի ու յաւիտենական փրկութեանս  
օգտակարը: Իմ մտածածս ու ուզածս  
շատ հեղ թէ հոգւոյս՝ և թէ մարմնոյս  
վեասակար է: Ենոր համար ով արա-  
րիչ իմ բազմագութ, ես կըհեազանդիմ  
բոլորովին քուկին կամացդ: ու կաղա-

չեմ, որ առելի իս աշխարքիս մէջ պատժես զանազան հիւանդութեամբ ու ուրիշ խաչերով, քան թէ հոս տեղո խնայելով՝ անդիի աշխարհը արդարութեամբ իս դատես:

### Առաջնորդ :

Ողորմեան ինձ տէր, զի հիւանդ եմ ես. բժշկեան զանձն իմ, զի խռովեցան ուկերք իմ:

Թոյիլ արա ինձ զի հանգեայց . մինչեւ երթեալ իցեմ. ուստի ոչ գտանիցիմ:

Դու ես համբերութիւն իմ տէր՝ տէր յոյս իմ 'ի մանկութենէ իմմէ:

### Ըստովան :

Ես ասացի տէր ողորմեան հոգւոյ իմոյ բաղմամեղի. որ ընակեալու ես 'ի յերկինս և յանմարմնոց փառարանիս. յիս մարդասիրեան բաղմադութ փրկիւ և փարատեցող զցաւո անձին իմոյ:

ԱՅՈՒՍ ՚Ե ՊՐԻՄԱԿ ՀՅՈՒԱՆԴԻՆ ՚Ե ԽԱՐԱԿ ԱՐԴԻ  
ՇՆԴ ՔՅՌԵ :

ՈՎ անուշ փրկիչս, որ ձիթենեաց լեռան վրայ հոգեվարի քրտինք քրտնեցար, ինծի ալ ողորմէ. ու ինչպէս որ քեզի համար երկինքէն հրեշտակ ինչեցուցիր քեզ զօրացունելու համար. անանկ ինծի ալ վերէն երկինքէն զօրութիւն ու մխիթարութիւն խրկէ, որ աս նեղութեան կարող ըլլամ դիմանալ, ու իս քուամենասուրբ կամացդ յանձնեմ:

ՈՎ փրկիչ իմ ՔՅՆ, դիտեմ, որ աս արտաքին մարմնական նեղութիւնները ներքին իմ հոգիս մաքրելու համար կը խըրկես. պատրաստ եմ յօժար սրտով քու սիրոյդ համար աս նեղութիւնը տանելու: Ո՞իսյն ինծի դիմանալու ուժ տուր, որ աս հիւանդութիւնս ՚ի փառաքո քաշեմ, ու արքայութեանդ արժանի ըլլամ:

ԱՐԴՈՀԱՆԱՄ քեզմէ մարդասէր ՔՅՆ, որ ինծի յանկարծական մահ չիխրկեցիր. հապա անանկ հիւանդութիւն մը տրվիր, որ պատրաստութիւն տեսնալու ա-

տե՛ն ունեցայ : Ը նորհակալ կըլլամ մեծապէս , ու կընուիրեմ քեզի բոլոր քաշածներս . ու կաղաչեմ՝ որ ջնջես իմ ամէն չար գործքերս , որնոր ածային աշացդ հաճոյ չէ , ու հօդիս քու անգին արդեամբդ զարդարես :

Արգոհանամ քեզմէ ով փրկիչ իմ ,  
որ իս արժանի ըրիր հիւանդութեան  
ցաւեր քաշելով քեզի նմանելու : Դուն  
անմեղ գառն էիր , ու քեզի պէտք ե-  
ղաւ՝ որ առաջ չարչարվիս , ու այնպէս  
արքայութիւն մտնաս . իսկ ես՝ որ մե-  
ղաւոր եմ , ու զած շատ հեղ բարկա-  
ցոցերեմ , ինչպէս առանց նեղութիւն  
մը քաշելու երկնից արքայութիւն կըր-  
նամ մտնալ .

Տէր իմ , քուկին բարութիւնդ յա-  
փառեանս կօրհնեմ . ինչու որ պղտիկու-  
թենէս սկսեալ այնչափ բարիք ընդու-  
նած եմ քու բարերար ձեռքէդ . հիմա  
սու հիւանդութեան ցաւերուս համար  
ինչպէս կընամ տրտունջ ունենալ :  
Քուկին ձեռքէդ կելլէ հիւանդութիւնը  
ու առողջութիւնը . դուն տրվիր , ու դուն  
տոիր . քու կամքդ օրհնեալ ըստյ :

Աւժ տուր ինծի տէր իմ, աս դժուարին ու դառն ատենս, զօրացուր հաւատքս, յոյսս, ու սէրս. ինչու որ որշափ ցաւերս կըսաստկանան, այնչափ ալ ուժս կըպակսի: Ով արարիչ իմ, քու ստեղծուածդ երեսէ մի ձգեր, ինչու որ դուն ես մինակ իմ զօրութիւնս ու մխիթարութիւնս.

Եաց ինծի տէր իմ, քուկին դառն չարչարանաց և մահուան դանձը, որ անով հոգիս մխիթարութիւն դտնէ. արժանի ըրէ իս ապաշխարութեան շնորհքին, որ հոգւոյս արատները մաքրրվին, ու արժանապէս ընդունիմ վերջին թոշակը, քու ամենասուրբ մարմինդ ու արիւնդ: Պուկին սուրբ ներկայութիւնդ իմ հոգւոյս ամեն թշնամիները փախցընէ, ու անոնց փորձութիւնները՝ որ սաստիկ իս կըսարչարեն՝ բոլորովին վրայէս փարատէ:

Ով քաղցր հՅ, զօրացուր իմ անկատար սէրս, որպէս զի թէ առողջութեան՝ ու թէ հիւանդութեան ատենը միշտ քեզ ամեն բանէն աւելի սիրեմ, ինչու որ դուն ես մինակ սիրոյ արժանի,

ու գուն իս սիրելէդ մարդ եղար, ու խաշին վրայ մեռար : Ասէ հիմակվան իմ սրտիս հառաջանքը, ու իս աս ետքի դառն ատենս թող մի տար :

Ով հինգ վերք չնի մահացելոյ, թափեցէք ձեր փրկարար արիւնը իմ հոգւոյս ու իմ հինգ զգայարանացս վրայ, որ անով կատարելապէս մաքրրվիմ ու զօրանամ . ու անոր ուժովը աս ետքի պատերազմիս ատենը թշնամիներուս յաղթեմ, ու յաղթութեան պսակը այ ձեռքէն առնում, ամէն :

Եղօն, հոգէ ձևանելու համար :

**S**էր Յն, տես, որ կենացս իրիկունը մօտ է, մեր քովը կեցիր ով լոյս տիեզերաց, որ կենդանի ճառագայթ ես հօրն յաւիտենականի . վշտացածներուն միսիթարութիւն, մահուան մօտիկ եղողներուն զօրութիւն, ու մեղաւորներուն փրկիչ :

«**Օ**ագէ մոքիս մէջ շնորհաց լոյսը, ու հոգւոյն սրբոյ հրովը սիրտս վառէ: Ալհրաժարիմ ամէն չար խորհուրդնեւ-

բէն, ամէն մեղքերէն, ու ամէն բանէն,  
որնոր քուկին հաճութեանդ դէմ է :

Խօսդ մի տար փրկիչ իմ, լոյս իմ,  
և զօրութիւն իմ, որ սատանայական  
փորձութիւնները ու մութ և յուպա-  
հատական խորհուրդները իմ մողիս  
մէջ տեղ ընեն, ու իս շփոթութեան  
մէջ ձգեն աս վերջին ու գժուարին ա-  
տենս . Հոգիս որնոր քու պատուական  
արեանդ գինն է՝ յաւիտենական կորըս-  
տեան վտանգի մէջ իյնայ :

Ով մահկանացու մարմին, գիտեմ  
որ հող պիտի դառնաս, ուսկից որ  
ստեղծվեցար . գիտեմ որ փրկիչս կեն-  
դանի է, ու ետքի յարութեան օրը իս  
պիտի դարձեալ յարուցանէ : Ան ատեն  
պիտի աս մարմինս իմ ածս ու արարիչս  
տեսնէ :

Ան իմ, քուկի է իմ հոգիս, քեղի  
կենդանի է յաւիտեան . քուկին մա-  
հաբեր վէրքերդ իմ հոգիս զօրացընէ,  
քուկին ամենազօր կարողութիւնդ անոր  
հովանի ըստայ, որպէս զի աս ետքի գժուա-  
րին պատերազմի ատենս չար թշնամ-  
ոյն խարէութենէ ապահով ըստայ, ու ա-

նոր բոլոր ճիգը պարապ հանեւ քուկին  
ամենայաղթ ու ամենազօր սուրբ խաչիդ  
օգնականութեամբը :

Ով խաչեցեալ փրկիչ իմ , քուկին  
շխպատմիմելու քաշած ցաւերուդ հա-  
մար՝ որնոր զգացիր , երբոր սուրբ հո-  
գիդ անմեղ մարմինէդ բաժնը վեցաւ նէ ,  
աղատէ իս աս սահաթս ամեն պատիժ-  
ներէն ու տանջանկներէն , որոնց որիմ  
մեղացս համար արժանի եմ :

Ով քաղցր փրկիչ իմ , ան սիրոյն  
համար , որնոր պատճառ եղաւ քեզի  
բոլոր չարչարանացդ ատեն այնչափ  
սաստիկ կակիծներ քաշելու , արձրկէ իս  
մարմնոյս կապէն . ընդունէ իմ հոգիս ,  
ու երկնային ուրախութիւնը մտցուր :  
Իսաց յաւիտենական կենաց դռները , որ-  
պէս զի սուրբերուն հետ միշտ արժանի  
ըլլամ ուրախանալ :

Ես կըբաղձամ հոգիս աւանդել , ին-  
չու որ ատ է քու ամենասուրբ կամքդ :  
Կըբաղձամ աշխարքէս ելլել , որպէս զի  
կարող չըլլամ ալ քեզ մեղօք վշտացը-  
նել , ու միշտ հարկաւ քեզ սիրեմ :  
Ե՞րբ պիտի ըլլայ , որ քեզ իմ արարիչս

երեսանց տեսնելու ու սիրելու արժանի  
պիտի ըլլամ :

Վարդ արձակեած զծառայ քո 'ի խա-  
ղաղութիւն , և մի մտաներ 'ի դատաս-  
տան ընդ ծառայի քում : Հայ փրկիչ  
աշխարհի , ողօրմէ ինծի , ու իս ալ հոն  
տար , ուր դուն առաջուց գացիր մեզի  
տեղ պատրաստելու համար , ու խոս-  
տացար որ գարձեալ կուգաս մեղ տա-  
նելու համար :

'Կ ձեռս քո աւանդեմ զհողի իմ :  
Ուկալէտ անարժան եմ քու ածային  
դէմքդ տեսնելու , բայց յոյս ունիմ որ  
քուկին անսահման ողօրմութիւնդ ինծի  
կատարեալ թողութիւն պիտի տայ : Ա-  
ղօրմէ ինծի ով Հայ , ու զօրութիւն տօւր  
ինծի , որ կարող ըլլամ մինչեւ ետքի  
շունչիս տուրեառութեան ատենը՝ քու  
սուրբ քաղցր անունդ յիշել , ամեն :

Այսուհետեւ :

ՎԵՐՁԵԳԱՆ անձն իմ 'ի հող , տէր կեցո՞  
զիս ըստ բանիի քում :

Վարի տէր ած իմ, բարձր եղիցի ձե ո՞ն  
քո, և մի մոռանար զտնանկս :

Տեսանես դու զնա, 'ի սրտմտութիւնս  
հայիս . մատնել զնոսա 'ի ձեռու  
քո, 'ի քեզ թողեալ է աղքատն,  
և որրոյն դուես օգնական :

Հիշեա տէր զգթութիւնս քո՝ և զողոր-  
մութիւնս քո՝ որ ենն յաւիտենից:

Օմեղս մանկութեան և զանգիտութեան  
իմոյ մի յիշեր . այլ յիշեա զիս  
տէր ըստ ողորմութեան քում,  
վասն քաղցրութեան քո, զի քաղցր  
և ուղիղ ես տէր :

Վհա չափով եղեր զաւուրս իմ, և կար  
զօրութեան իմոյ որպէս ոչինչ է  
առաջի իմ, սակայն ամենեին ըն-  
դունայն է ամենայն մարդ մսեղի:  
Պանդուխտ եմ ես առաջի քո, նրժ-  
դեհ և անցաւոր որպէս ամենայն  
հարք իմ :

Ձմոյլ արա ինձ, զի հանգեայց, մինչեւ  
երթեալ իցեմ, ուստի ոչ ես գտա-  
նիցիմ :

Եկղութիւնք սրտի իմոյ բազում եղեն  
յոյժ. և 'ի վշտաց իմոյ հան զիս :

Խակ արդ՝ ովլ է համբերութիւն իմ,  
թէ ոչ դու տէր. կամ կար զօրու-  
թեան իմոյ՝ թէ ոչ 'ի քէն:  
• Ես այեաց առ իս, և ողորմեա ինձ. զի  
միամօր և աղքատ եմ ես:  
• Դարձ անձն իմ 'ի հանգիստ քո. զի  
տէր օգնեաց քեղ:  
• Դու ես պաշտպան իմ տէր. և 'ի ձեռս  
քո յանձն առնեմ զհոգի իմ:

### Շ պըական:

Ժամանակ դարձի իմոյ եհաս 'ի յերկիր.  
արդ տէր ընկալ զծառայս քո. և հոգի  
քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր  
ուղիղ: Խոստովանող հոգիս. որ ելից  
զունայնութեան ընթացս աշխարհի. արդ  
տէր ընկալ զծառայս քո. և հոգի քո բարի  
առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ:  
'Ի վերջնումն աւուր՝ յորժամ առնես  
զայցելութիւն քոյոց սիրողաց. յայն-  
ժամ խնայեա 'ի ծառայս քո. և հոգի  
քո բարի առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր  
ուղիղ:

## ՎԱԼ ԱԿՈՂՆ :

Ով ՀՅ ՔՅ, որ մեր փրկութեան համար խաչին վրայ կախվեցար, ու ան ետքի հոգէվարքութեան ատենդ ցաւազին սրտով երկնաւոր հօրդ աղաղակեցիր. ահա մենք ալ գետինը ինկած լալով քեզի կըկանչենք ով գթած ՀՅ, ողորմէաս հոգւոյս, որ քեզի գալ կըփափազի : Ո՞հ յիշեր տէր մարդկային տկարութեամբ ըրած մեղքերը, այլ յիշէ քուկին անհռւն գթութիւնդ, ամենասուրբ կոյս Ածածնայ ու սրբոց բարեխօսութիւնը ասոր համար : Եայէ տէր իր թափած արցունքներուն, տես իր սրտին դղջումը . խրկէ երկինքէն սուրբ հրեշտակները, որ զինքը զօրացընեն, ու հոգին առնուն արքայութիւն տանին : Ոված իմ ողորմութեան, մի դատեր ասոր հոգին քուկին արդարութեամբդ. այլ գթութեամբդ քաւէ, ու շնորհաց արժանի ըրէ, ամէն :

Վ. ՊՈՅՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԳՐԻԿԵՐԱՆ :

Ով ած ողորմութեան , և տէր կենդանեաց և մեռելոց , կաղաչեմ քեզի պաղատելով , քուկին արարչական սիրով ողորմէ մեր ննջեցելոց : Քիշէ տէր , որ դուն անբաւ գթութեամբդ ստեղծեցիր , ու միածին որդւոյդ դառն չարչանքներովը ու մահուամբը փրկեցիր , ու արքայութեանդ ժառանդ ըրիր . բաց հիմա անոնց ողորմութեանդ դուռը , ու աղատէ ան սոսկալի տանջանքներէն , որ իրենց մեղացը համար արժանաւորեցան :

Լսէ ողորմած տէր , անոնց ողորմուկ ձայնը , որ գիշեր ցորեկ անմիսիթար քեզի կաղաղակեն , առ Քնին արիւնէն կաթիլմը , ու խառնէ անոնց թափած արցունքներուն հետ , որ ածային արդարութեանըդ բաւական հատուցում ըլլայ :

Ով փրկիչ իմ Քնի , քուկին սրտիդ մեծագոյն տրտմութեանը համար՝ որ գեթսեմանի պարտեզին մեջ քաշեցիր , աղատէ քաւարանի մեջ եղած հողիները : Ով փրկիչ իմ Քնի , քուկին խիստ

ձաղանացդ, վշեղէն պսակիդ, ու ցաւագիննախատանացդ համար ազատէ մեր ծնողաց, եղբարց, ու բարեկամաց հոգիները: Ո՞վ փրկիչ իմ քն, քուկին սրբազան վէրքերուդ, ու թափած անդին արեանդ համար ազատէ քաւարանէն ամէն ննջեցեալները, մանաւանդ անյիշատակ հոգիները. որ մեծապէս օգնութեան կարօտ են: «Դժած քն, զուն ամէնուն ալ յաւիտենական հանդիստ պարգևէ», ու բարեխօսութեամբ դժած մօրդ քու սուրբ տեսութեանդ արժանի ըրէ, որ քեզ սրբոց հետ միշտ փառաւորեն, ամէն:

### Ը ուստիան:

Ա. Հեղ խորհուրդ քահանային բաղկատարած կայր ՚ի բեմին առաջի սուրբ սեղանոյն. հուր շիջանի խաւար մերժի. տրտմեալ հոգիքն ուրախանան. զի թղողութիւն մեղաց լինի. ողորմած տէր ողորմեալ հոգւոցըն մեր ննջեցելոց:

Աղջուական պահելու:

Ով հայր գթութեան և ած ողորմութեան, նայէ խեղճութեանս, ու լսէ սըրտիս հեծութիւնները. աչվըներս քեզի կըվերցընեմ, ինչու որ քեզմէ 'ի զատմէկէմը միսիթարութիւն չունիմ: 'Եղութիւնները չորս դիս առերեն, դու ես տէր իմ միակ յօյսս. քաշած նեղութիւններս քեզի յայտնի են, ու մինակ քու ձեռքդ կրնայ աս վէրքը բժշկել: 'Դուն աղէկ գիտես տէր՝ իմ սիրտս, ու կրտեսնաս տկարութիւնս. անոր համարես ալ ամենասիրելի որդւոյդ հետ կաղաւեմ քեզի. Հայր, անցաւ զբաժական պայտինեն. Բայց ոչ որդես ես իշխմ, այւ որդես դու:

Բայց թէ որ տէր իմ ուզես վրաս նեղութիւն խաւրել, ինչ կարող եմ քեզի դէմ գանգատ ընել, որովհետեւ մեղանչելուս համար գժոխքի արժանի էի: Արչափ որ վիշտ տաս ինծի տէր ասախըքիս մէջ, ամէննալ քիչ են, մանաւանդ չնորհք են. ինչու որ անով ըրած-

ներուս ներում կը շնորհես, ու պատիժ ները կը քաւես : (Ծրհնեալ ըլլաս ովք բարեգութ ած իմ, որ աս նեղութիւնը ինձի խրկեցիր . շնորհակալ կը լւամ ու երկիրապատանեմ քուկին մարդասիրութեանդ՝ ածային խնամոցդ . ու աս անմիսիթար սիրտս քու ձեռքդ կը յանձնեմ : Ով ողորմած տէր, ուժ տուր ինձի, որ սիրով համբերեմ : Քնին չիպատմրվելու չարչարանքները օրինակ ըլլան ինձի . ու աս քաշած պզտի նեղութիւնս ալ անոր չարչարանքներուն հետ քեզի կը նուիրեմ, որ քեզի հաճոյ ու ընդունելի ըլլան, ամեն :

### Առաջնա :

Ած ած իմ, նայեա առ իս . ընդէր թողեր զիս . հեռի եղէ 'ի փրկութենէ իմմէ, վասն բանից յանցանաց իմոց : Ե քեզ անկայ ես յարգանդի, յորով վայնի մօր իմոյ . դու ես ած իմ : Ա՞ն 'ի բացեայ առնիր յինէն . զի նեղութիւնք մերձեալ են . և ոչ ոք է որ օգնէ ինձ :

Այնուև յԵրբ տէր մոռանաս զիս խսպատ.  
մինչև յԵրբ դարձուցանես զերեսս  
քո յինէն :

Օսրթիր և հայեաց տէր յիրաւունս  
իմ, ած իմ և տէր իմ 'ի դատաս-  
տանս իմ . և իրաւ արա ինձ ըստ  
արդարութեան քում տէր ած իմ:

Այս ուրախ եղիցին յիս թշնամիք իմ,  
և մի ասասցեն 'ի սիրտս իւրեանց,  
թէ վաշ վաշ անձանց մերոց զիընկ-  
լուղաք զնա :

Ենդէր տէր կացեր 'ի հեռաստանէ, ան-  
տես արարեր 'ի դէպ նեղութեան  
ժամանակի :

\*Եղութիւնք սրտի իմոյ բազում եղեն  
յոյժ . և 'ի վշտաց իմոց հան զիս :

Ողորմեա ինձ տէր, զի առ քեզ աղա-  
ղակեցի. զօրհանապազ ուրախ արա  
զանձն ծառայի քո, զի առ քեզ  
տէր համբարձի զանքն իմ :

Օի դու տէր քաղցր և ուղիղ ես . բա-  
զումողորմ առ ամենեսեան, որք  
կարգան առ քեզ :

ՅԵՒԼՈՒՅՈ

Ա Պ Օ Թ Ի Ց

8.900

# ՄԵՂԹԵՆՔ

ԵՌ ՍՈՒՐԲ ԿՈՅԱԿ :

**Ո**ղջեր թաղուհի՝ մայր ողորմութեան,  
կեանք, քաղցրութիւն, և յօյս մեր, ողջ  
լեր. առ քեզ գոչեմք պատորեալ որ-  
դիքս եւայի, առ քեզ հառաջեմք հե-  
ծելով և ողբալով յայսմ արտասուաց  
վայրի. արդ՝ ով բարեխօս մեր դարձո  
առ մեզ զաշս ողորմութեան քոյ. և  
զի՞ս զօրհնեալ պտուղն որովայնի քո՝  
յետ այսր պատորանաց ցոյց մեզ, ով  
դթած, ով բարեգութ, ով քաղցր կոյս  
Արքիամ : Աղաջեա վասն մեր սուրբ  
ածածին, զի արժանի լիցուք խոստմանցն  
մինի . ամէն :

**Ա**նկանիմք առաջի քո ածածին, և ա-  
ղաջեմք զանարատ զկոյսդ : Աարեխօսեա  
վասն անձանց մերոց, և աղաջեա զմիա-  
ծին որդիդ : Փրկել զմեզ 'ի փորձու-  
թենէ, և յամենայն վտանգից մերոց :

**Բ**նդ հովանեաւ պաշտպանութեան քո  
ապաւինիմք սուրբ Ածածին . զաղաչանս  
մեր մի անտես առներ ՚ի կարիս մեր .  
այլ փրկեա զմեզ յամենայն վտանգից՝  
փառաւորեալ և օրհնեալ միշտ կոյս :

Բարձր բանաւոր առ առ Ածածին :

**Տ**էր ողորմեաց .

**Վ**ա ողորմեաց .

**Տ**էր ողորմեաց .

**Վ**ա լուր մեզ .

**Վ**ա անսաւ մեզ .

Հայր երկնաւոր ած՝ ողորմեաց մեզ .

Որդի փրկիչ աշխարհի ած՝ ողորմեաց մեզ .

Հոգիու սուրբ ած՝ ողորմեաց մեզ .

Սի Երրորդութիւն մի ած՝ ողորմեաց մեզ .

Սրբուհի Ամարիամ՝ աղօթեա վասն մեր .

Սուրբ ածածին աղօ .

Սուրբ կոյս կուսանաց աղօ .

Ամայր Վահի աղօ .

Ամայր ածային շնորհաց աղօ .

Ամայր մաքուր աղօ .

Ամայր սուրբ աղօ .

Ամայր անարիատ աղօ .

Ապյր	անրիծ	աղօ .
Ապյր	սիրելի	աղօ .
Ապյր	սքանչելի	աղօ .
Ապյր	արարշին	աղօ .
Ապյր	փրկչին	աղօ .
Կոյս	իմաստուն	աղօ .
Կոյս	յարդոյ	աղօ .
Կոյս	քարոզելի	աղօ .
Կոյս	հզօր	աղօ .
Կոյս	դժաճ	աղօ .
Կոյս	հաւատարիմ	աղօ .
Հայելի	արդարութեան	աղօ .
Վթոռ	իմաստութեան	աղօ .
Պատճառ	մերոյ խնդութեան	աղօ .
Վնօթ	հոգևոր ական	աղօ .
Վնօթ	պատուելի	աղօ .
Վնօթ	ընտիր ածպաշտութեան	աղօ .
Վարդ	խորհրդական	աղօ .
Վշտարակ	դաւթեան	աղօ .
Վշտարակ	փղոսկրեաց	աղօ .
Տուն	ուկեղէն	աղօ .
Տապանակ	ուխտի	աղօ .
Դռւն	երկնից	աղօ .
Վստղ	առաւօտեան	աղօ .
Վռողջութիւն	հիւանդաց	աղօ .

Ապաստան մեղաւորաց աղօ .  
 Ո՞սիթարիչ վշտացելոց աղօ .  
 ( զնական քրիստոնէից աղօ .  
 Յժագուհի հրեշտակաց աղօ .  
 Յժագուհի նահապետաց աղօ .  
 Յժագուհի մարդարէից աղօ .  
 Յժագուհի առաքելոց աղօ .  
 Յժագուհի մարտիրոսաց աղօ .  
 Յժագուհի խոստովանողաց աղօ .  
 Յժագուհի կուսանաց աղօ .  
 Յժագուհի ամենայն սրբոց աղօ .  
 Պահպանիչ որդեգրաց աղօ .  
 Գառն այ, որ բառնաս զմեղս աշխարհի, խնայեա՞ի մեղ տէր .  
 Գառն այ, որ բառնաս զմեղս աշխարհի, անսամ մեղ տէր .  
 Գառն այ, որ բառնաս զմեղս աշխարհի, ողորմեաց մեղ .  
 Հս լուր մեղ, Բա անսամ մեղ :

### Ա. Պ. Ե. :

Ա. Տ. անձառելի ողորմութեան, որ ոչ  
 միայն մարդ, այլև որդի մարդու լինել  
 հաճեցար. և ծնանելով՝ ի կուսէ զմայր

՚ի յերկրի ստացար, որ զած ունեիր  
հայր ՚ի յերկինս . տօւր մեղ աղաչեմք՝  
զյիշատակ նորա յօժարութեամբ կա-  
տարել, զմայրութիւն նորա գերագոյն  
յարգանօք պատուել, գերազանցագոյն  
վսեմութեան նորա զմեղ խոնարհու-  
թեամբ հպատակել, որ զքեղ հոգւով  
սրբով յղացաւ . զքեղ կուսութեամբ  
ծնաւ . և զքեղ ՚ի յերկրի ինքեան հնա-  
զանդ կալաւ՝ զտէրդ մեր ՀՅ ՚Բ.Ա : Որ  
կենդանի եւ և թագաւորես ընդ հօր և  
ընդ սրբոյ հոգւոյն ՚ի յաւիտեանս :

Ե՞ղանակ է առաջին համարուց ըստ  
'կ' թա՞ պար արարելու և ամեն ներկայի  
հայոց կուլունքին :

Հաւատով խոստովանիմ , և երկիր-  
պագանեմ ,քեզ հայր և որդի և սուրբ  
Հոգի ,անեղ՝ և անմահ ընութիւն . ա-  
րարիչ հրեշտակաց . և մարդկան , և ա-  
մենայն եղելոց ,ողորմեա քո արարածոց :

Հաւատով խոստովանիմ, և երկիր-պագանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սուրբ երրորդութիւն՝ և մի-

ածութիւն . արարիչ լուսոյ՝ և հալածիչ  
խաւարի . հալածեաւ 'ի հոգւոյ իմմէ զիսա-  
ւար մեղաց՝ և անդիտութեան , և լու-  
սաւորեաւ զմիտս իմ 'ի ժամուս յայսմիկ՝  
աղօթել քեզ 'ի հաճոյս , և ընդունիլ  
'ի քէն զիսնդրուածս իմ . և ողորմեաւ ինձ  
բազմամեղիս :

**Հ**այր երկնաւոր՝ ած ճշմարիտ , որ  
առաքեցեր զորդիդ քո սիրելի 'ի խնդիր  
մոլորեալ ոչխարին , մեղայ յերկինս՝ և  
առաջի քո . ընկալ զիս որպէս զանառակ  
որդին՝ և զգեցն ինձ զպատմուճանն զա-  
ռաջին՝ զոր մերկացայ մեղօք . և ողոր-  
մեաւ քո արարածոց , և ինձ բազմամեղիս :

**Ա**րդի այ՝ ած ճշմարիտ , որ խոնար-  
հեցար 'ի հայրական ծոցոյ , և առեր  
մարմին 'ի սրբոյ կուսէն մարիամնայ , վասն  
մերոյ փրկութեան . խաչեցար՝ և թա-  
ղեցար՝ և յարեար 'ի մեռելոց՝ և համ-  
բարձար առ հայր , մեղայ յերկինս՝ և  
առաջի քո . յիշեաւ զիս որպէս զաւա-  
զակն՝ յորժամ գաս աղքայութեամբ  
քով . և ողորմեաւ

**Հ**ոգի այ՝ ած ճշմարիտ , որ իջեր 'ի  
յորդանան , և 'ի վերնատունն , և լու-

սաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւագանին . մեղայ յերկինս՝ և առաջի քո . մաքրեաւ զիս վերստին ածային հրով քո՝ որպէս հըեղէն լեզուօք զառաքեալսն . և ողորմեաւ :

**Անեղ** բնութիւն , մեղայ քեղ մտօք իմովք՝ հոգւով և մարմնով իմով . մի յիշեր զմեղս իմ զառաջինս վասն անուանդ քում սրբոյ . և ողորմեաւ :

**Տեսօղ** ամենայնի՝ մեղայ քեղ խորհրդութունիւ և գործով . ջնջեաւ զձեռագիր յանցանաց իմոց . և դրեաւ զանուն իմ 'ի դպրութեան կենաց , և ողորմեաւ :

**Իննօղ** գաղտնեաց , մեղայ քեղ՝ կամաւ և ակամայ , զիտութեամբ և անգիտութեամբ . թողութիւն շնորհեաւ մեղաւորիս , զի 'ի ծննդենէ աւաղանին մինչև ցայսօր՝ մեղուցեալ եմ առաջի ածութեանդ քո զգայարանօք իմովք , և ամենայն անդամօք մարմնոյս . և ողոր :

**Ամենախնամ** տէր՝ զիր պահապան աշաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ ևս հայիլ յարատ . և ականջաց իմոց՝ ոչ ախորժել լսել զբանս շարութեան . և

բերանոյ իմոյ՝ ոչ խօսիլ զստութիւն, և սրտի իմոյ՝ ոչ խորհիլ զշարութիւն, և ձեռաց իմոց՝ ոչ գործել զանիրաւութիւն. և ոտից իմոց՝ ոչ գնալ 'ի ճանապարհս անօրէնութեան, այլ ուղղեաւ զշարժումն սոցա լինիլ ըստ պատուիրանաց քոց յամենայնի, և ողոր:

**Նուր կենդանի ՞Վ.ս,** զհուր սիրոյ քո, զոր արկեր յերկիր, բորբոքեաւ յանձն իմ, զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ, և սրբեսցէ զիսիղձ մտաց իմոց, և մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, և վառեսցէ զայս գիտութեան քո 'ի սրտի իմում, և ողորմեաւ:

Խմաստութիւն հօր ՞Յ.ս, տուր ինձ զիմաստութիւն զբարիս խորհիլ՝ և խօսիլ՝ և գործել առաջի քո յամենայն ժամ, 'ի շար խորհրդոց՝ 'ի բանից՝ և 'ի գործոց փրկեաւ զիս, և ողորմեաւ:

**Կամեցօղ բարեաց՝ տէր կամարար՝ մի թողուր զիս 'ի կամս անձին իմոյ գնալ.** այլ առաջնորդեաւ ինձ լինիլ միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց, և ողորմեաւ:

**Վքքայ երկնաւոր՝ տուր ինձ զարքայութիւն քո, զոր խոստացար սիրելեաց**

քոց . և զօրացո՞ դսիրտ իմ ատել դմեղս .  
և սիրել զքեղ միայն , և առնել զկամն  
քո . և ողորմեաւ :

Խոնամօղ արարածոց՝ պահեանշանաւ  
խաչի քո՝ զհոգի , և զմարմին իմ՝ ի պատ-  
րանաց մեղաց՝ ՚ի փորձութեանց դիւաց՝  
և ՚ի մարդոց անիրաւաց՝ և յամենայն  
վտանգից հոգւոյ՝ և մարմնոյ . և ողոր-  
մեաւ :

Պահապան ամենայնի ՚Քա՞ աջ քո  
հովանի լիցի՝ ՚ի վերայ իմ . ՚ի տուէ և ՚ի  
գիշերի , ՚ի նստիլ ՚ի տան՝ և ՚ի գնալ ՚ի  
ճանապարհ , ՚ի ննջել՝ և ՚ի յառնել .  
զի մի երբէք սասանեցայց . և ողորմեաւ :  
Ած իմ , որ բանաս զձեռն քոյ , և լր-  
նուս զամենայն արարածս ողորմութեամբ  
քով . քեղ յանձն առնեմ զանձն իմ .  
դուհոգա , և պատրաստեաւ զպէտս հոգ-  
ւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչեւ  
յաւիտեան . և ողորմեաւ :

՚Կարձուցիւ մոլորելոց՝ դարձո՞ զիս ՚ի  
չար սովորութեանց իմոց ՚ի բարի սովո-  
րութիւն . և ըւեռեւա ՚ի հոգի իմ զսոս-  
կալի օր մահոն , և զերկիւղ գեհենոյն , և  
զսէր արքայութեանն , զի զղացացց ՚ի

մեղաց, և գործեցից զարդարութիւն. և  
ողորմեաւ:

Վ. զբիւր անմահութեան՝ աղբերացո՛ի  
սրտէ իմմէ զարտասուս ապաշխարու-  
թեան, որպէս պոռնկին. զի լուացից  
զմեղս անձին իմոյ՝ յառաջ քան զելա-  
նելն իմ յաշխարհէս. և ողորմեաւ:

Պարդեիչ ողորմութեան՝ պարզեեամ  
ինձ ուղղափառ հաւատով՝ և բարի գոր-  
ծով՝ և սուրբ մարմնոյ և արեան քո հա-  
ղորդութեամբ գալ առ քեզ. և ողոր:

Ի արերար տէր՝ հրեշտակի բարւոյ  
յանձն արասցես զիս, քաղցրութեամբ  
աւանդել զհոգի իմ, և անխռով ան-  
ցուցանել ընդ չարութիւն այսոցն, որք  
են 'ի ներքոյ երկնից. և ողորմեաւ:

Ե շյս ճշմարիտ Ք.՝ արժանաւորեաւը զ-  
հոգի իմ ուրախութեամբ տեսանել զւոյս  
փառաց քոց 'ի կոչման աւուրն. և հանգ-  
չիլ լուսով բարեաց՝ յօթեվանս արդա-  
րոց՝ մինչև յօր մեծի գալստեան քո. և ողո:

Դ ատաւոր արդար՝ յորժամ գաս փա-  
ռօք հօր դատել զկենդանիս և զմեռեալո.  
մի մտաներ 'ի դատաստան ընդ ծառայիս  
քո, այլ փրկեաւ զիս 'ի յաւիտենական

հրոյն . և լսելի արա ինձ զերանաւէտ կո-  
չումն արդարոց յերկնից արքայութիւնդ .  
և ողորմեաւ :

Վ. մենողօրմ տէր՝ ողորմեաւ ամենայն  
հաւատացելոց՝ ի քեզ . իմոց և օտարաց,  
ծանօթից՝ և անծանօթից , կենդանեաց  
և մեռելոց . շնորհեաւ և թշնամեաց իմոց  
և ատելեաց զմողութիւնոր առ իս յան-  
ցանաց . և գարձո՞ զնոսա ՚ի չարեացն ,  
զոր ունին վասն իմ , զի ողորմութեան  
քում արժանի եղիցին . և ողորմեաւ :

Փառաւորեալ տէր՝ ընկած զաղաչանս  
ծառայիս քո՝ և կատարեա՞ի բարի զիսնդ-  
րուածս իմ , բարեխօսութեամբ սրբուհ-  
ւոյ ածածնին , և յովհաննու մկրտչին ,  
և սրբոյն ստեփաննոսի նախավկային , և  
սրբոյն գրիգորի մերոյ լուսաւորչին , և  
սրբոց առաքելոցն՝ և մարգարէից՝ և  
վարդապետաց՝ և մարտիրոսաց՝ և սրբոց  
հայրապետաց՝ և ճղնաւորաց՝ և կուսա-  
նաց , և ամենայն սրբոց քոց , երկնաւո-  
րաց . և երկրաւորաց և քեզ փառք և  
երկրպագութիւն անբաժանելի սուրբ  
երրորդութեանդ յաւիտեանս յաւիտե-  
նից . ամեն :

Եղանակ առ այս գործութեան համար է ի այս առ այս լուծավեան :

Աւ արդ ՚ի վերայ սյաբանեաց յուսա-  
հատութեանց և աչարկու սրտարեկու-  
թեանց, պակուցանողական սաստկու-  
թեանց, ածային բարկութեանց, տադ-  
նապեալ հոգւով թախծութեան իս-  
պառ, աղաշեմ զքեզ սուրբ ածածին.  
Հըեշտակ ՚ի մարդկանէ, մարմնատեսիլ  
քերովքէ, երկնաւոր արքայուհի, ան-  
խառն իրրե զօդ, մաքուր որպէս լոյս,  
անշաղախ ըստ նմանութեան պատկերի  
արուսեկին բարձրութեան, գերաղանց  
քան զբնակութիւն անկոխելին սրբու-  
թեանց, երանաւոր խոստմանն տեղի,  
եղեմ շնչական, ծառ կենացն անմահից  
բոցեղէն սրովին պարունակեալ, ՚ի բարձ-  
րեալն հօրէ զօրացեալ և հովանացեալ,  
հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և  
մաքրագործեալ, բնակութեամբ որդւոյն  
յարդարեալ և տաղաւարեալ. միա-  
ծինն հօր և քեզ անդրանիկ, որդի քո  
ծննդեամբ և տէր արարչութեամբ. ընդ  
անաղտ մաքրութեանդ և անբիծ բարի,

ընդ անարատ սրբութեանդ և խնամակալ բարեխօս : Ենկամ զմաղթանս այսր աղերսանաց քում դաւանողիս , և մատու ընծայեա ընդ նմին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներբողի՝ի քոյդ պաղատանս . Հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց , տունկդ կենաց պաղոյն օրհնութեան . զի՝ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ , և 'ի մաքրական քո ծնելութիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ , կեցից Քնի որդւոյ քո և տեառն :

(Օժանդակեա թեւոցդ աղօթիւք, խոստովանեալ մայրդ կենդանեաց , և յելիցն իմ յերկրէս հովտէ , առանց լլկանաց հետեւել 'ի կեանս օթեանացդ պատրաստութեան . զի թեթեասցի կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ : Երասցես տօն ինձ բերկրութեան զօրն իմ տագնապի , ողջացուցիչ երկանցն Եւայի . բարեխօսեա խնդրեա աղաչեա , զի ըստ անձառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ զընդունելութիւն : Երտասուօք օգնեա

վտանգեցելոյս, գովեալդ ՚ի կանայս. ծունը խռնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնողդ այ. ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս, տաճար երկնային՝ փառաւորեա զորդիդ քո ՚ի քեզ՝ ածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղախին այ և մայր. բարձրացի պատիւքո ինեւ և ցուցցի փրկութիւն իմ քեւ:

Եթէ զիս գտցես՝ տիրամայր, թէ ինձ ողորմեսցիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ յայ, թէ յիս ցուցցես զգթածութիւն՝ լուծիչդ անիծից, թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ, թէ ՚ի խռովութեանցս յուղմանց փոխեսցես զիս՝ խաղաղարակ, թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գովեալ, թէ՝ վասն իմ մտցես ՚ի հանդէս՝ մահունահանջիչ, թէ զդառնութիւնս իմ ա-

նուշեսցես՝ քաղցրութիւն, թէ զբա-  
 ժանման իմ խտրոց քակտեսցես՝ հաշ-  
 տութիւն, թէ զանմաքրութիւնս իմ  
 բարձցես՝ եղծման ընդուանիչ, թէ զմատ-  
 նեալս մահու փրկեսցես՝ կենդանի լոյս,  
 թէ զլալեացս ձայն հատցես՝ բերկրու-  
 թիւն, թէ զխորտակեալս կազդուրես-  
 ցես՝ դեղ կենաց, թէ 'ի կործանեալս  
 յիս ակնարկեսցես՝ հոգելից, թէ ողոր-  
 մութեամբ ինձ պատահեսցես՝ կտակ  
 նուիրեալ : (Օրհնեալ միայն 'ի շրթունս  
 ամբիծս լեզուաց երջանկաց, ահա կտ-  
 թիլ մի կաթին քումդ կուօռութեան  
 յանձն իմ անձրեեալ՝ կենաց ինձ զորէ,  
 մայրդ բարձրելոյ տեառն չչնի. արար-  
 չին երկնի, և բնաւին երկրի, զոր ան-  
 ձառապէս ծնար բովանդակ մարմնովն,  
 և համայն ածութեամբն, որ փառաւո-  
 րեալ է ընդ հօր, և հոգւոյն սրբոյ էու-  
 թեամբ, և անքննութեամբ մերոյին  
 ընութեամբս միացելով, յամենայն և  
 յամենայնում, մի յերրորդութենէն.  
 Նմա փառք յաւիտենից յաւիտեանս  
 ամէն :

Արքայն նելունու լամբանուացայ առվելս հապ-  
ւանաց խօսք ընդ Հայ:

**Ա**յլ դու նայեա ամենակարող տէր իմ  
ՀՅ, յաթոռոյ փառացդ՝ և շնորհաց,  
տալով անարժան քո ծառայիս զան-  
խութ միտս՝ 'ի յոյս հանգերձեալ քո  
յուսոյդ: Տես տէր թէ որքան վտան-  
գիմք յաղցաւոր կենացս կրից'ի զանաղան  
հողմոց բքաբեր շնչմանց երեքալեանն  
խռովութեամբ, թշուառացեալ մտացս  
երեեալ: Չունիմ տէր, պտուղ դոր-  
ծոց քեղ նուեր հաշտութեամբ, քանզի  
դոր ունել կարծէի՝ մաշեալ պակասեաց՝  
'ի քում ահաւորութեանդ եկեալ զի-  
տութիւն: Եւ ես մերե՝ և թափուր, կի-  
սամեռ՝ և ոգեկործան միայն զմարդասի-  
րութեան ոտիցդ կախիմ, բուռն հա-  
րեալ զդմանէ, և ոչ երբեք զթողուլն  
ախորժեմ: Հան զիս 'ի չարս շաւղաց.  
զորս բերանով իմով աղարտեմ: Եւ  
ուսու ինձ զճանապարհս քո ուղիղս, ո-  
րում կամօք սրտիս վկայեմ: Անկայ 'ի  
մահիճս մեղաց, և ես ինձէն զգարշու-

թիւն մեղացս բողոքեմ : Տուր զբժշկու-  
թիւն ախտացեալ հոգւոյս , որ առողջա-  
ցուցանել զայլս խարեմ : Օռխատս հո-  
ծեալս բանի յեկեղեցիդ անդրանկաց ա-  
ռաջի ամենայն երկիւղածաց քոց նուի-  
րեմ : Կիրիցեն տնանկք , և յագեսցին  
'ի սմանէ , և օրհնեսցեն զքեզ , որ զտէրդ  
խնդրեն : Օաղօտացեալ քո լոյս բարե-  
կամացն քոց ցուցանեմ . յիշեսցեն սո-  
վու , և դարձցին առ տէրդ՝ որք 'ի ծա-  
դաց երկրէ քումդ դիտութեան փափա-  
դին : Վեզ փառք՝ պարծանք և զրաւ-  
աշխարհի՝ 'ի յերկինս փառաւորեալ ,  
յաւիտեանս յաւիտենից :

Այլ աղօլք հոգին նելսեան :

Այլ շուրջ պատեալ 'ի տարակուսա-  
նացս յամենայն կողմանց սրտիւ շաղա-  
խեալքս , և ունկնդրութեան կարօ-  
տեալքս՝ նայիմք առ քեզ փորձ տկար  
բնութեանս քահանայապետդ չըս : Ովկ  
որ վասն մեր մեղս եղեր , զի մէք լիցուք  
վասն քո արդարութիւն : Ովկ որ վասն  
մեր երկրաւոր եղեր , զի մէք լիցուք

վասն քո երկնաւորք : Ո՞վ որ վասն մեր  
 հաց եղեր , զի մեք 'ի ճաշակելն զքեզ՝  
 սրբեսցուք : Տուր զպարարեալ վշտօք  
 մարմին քո՝ ամենայն սրտի սրբարար  
 կերակուր : Անտոռուակեան զարեան քոյ  
 վտակ անմեղ կայլակեալ՝ որդւոց մարդ-  
 կան անմեղութեան զմայլումն : 'Զգեա  
 զփրկական քո զխաչք զօղելոցս 'ի ծով  
 աշխարհիս առ քեզ վերածիչ : Կարօ-  
 տացաք շնորհի՝ սփուեա : Լքալք 'ի դոր-  
 ծոց՝ քաւեա : Խարխափեմք զխաւար՝  
 ճառագայթեա : Կործանեցաք 'ի հաւա-  
 տոց՝ հաստատեա : 'Դու ես յոյս . դու  
 ես լոյս . դու ես կեանք . դու ես քա-  
 ւութիւն . դու ինքն և անմահութիւն :  
 'Քեզ սպասեն յեցեալքս 'ի շնորհս քո :  
 'Ի քէն կարօտին առնուլ փրկութիւն  
 խառնեալքս 'ի մարմինդ քո : Օքեզ  
 ունինքաւիչ քահանայ՝ զնեալ արեամբ  
 հօտս քո : Հայեաց յամենեսեան : Արփ-  
 ռեան զտարակուսանս մեր քոյին վաս-  
 տակովքդ : Հանդարտեցու զխոռովու-  
 թիւնս մեր՝ քոյին խաղաղութեամբդ :  
 Հանդու զաշխատանս մեր 'ի քոյ օթե-  
 վանադ , ուր դու զնացեր ով տէր . և

խոստացար : Արժանացո՞ղքոյս՝ փառաւ-  
որել զքեզ այդր ընդհօր, և ընդ սուրբ  
հոգւոյդ յաւիտեանս . ամէն :

Վ. Դ. Նորին հայրապետի առ իտշելուն  
ՀՅ :

Ա. Քեզ ակնարկեմ, աղքիւր ջրոյ կեն-  
դանւոյ, և աղաղակեմ, թէ ընդէր է  
ինձ սրբութեան ծարաւիլ, երբ դու ես  
իմ սրբութիւն . կամ ընդէր փափաղիմ  
մարբութեան, մինչ դու ես իմ մար-  
բութիւն : Վ. յառւհետեւ ուսեալ, եթէ  
դու ես իմաստութիւն՝ մեզ յայ տուեալ  
արդարութիւն, և սրբութիւն, առ քեզ  
ծարաւիմ, քեզ փափաղիմ, քեզ տըռ-  
փամ, տուր իմ ծարաւեալ ոգւոյս զքեզ  
զովացումն՝ աղքիւր ջրոյ կենդանւոյ խա-  
ղաղացելոյ՝ ի կեանսդ յաւիտենից : «Օ»  
բաւիմ ըմպել՝ ի կրկին վտակաց կողիդ,  
որով և սրբեալ սիրով քո զմայլիմ :  
«Քաղցնում ուտել զմարմինդ, որով  
կենդանացեալ անմահ ես լինիմ : Փա-  
փաղիմ ողջագուրել զխոցուած ձեռացդ,  
որով հասեալ առ քեզ պսակիմ : Տըռ-

փամ ակնարկել զդէմսդ, որոյ ապտակաւն 'ի վիրաց իմոց բժշկիմ : Ա աղվաղակի լուր ինձ տէր, զի նուաղեաց յինէն հոգի իմ : « Եռաղեցաւ հոգի իմ 'ի քո անճառդ սիրոյ : Տոչորեցայ յառքեղ տռփանացդ՝ ով վասն իմ խաչեալ : Խալկացայ, յորժամ առ քեղ ակնարկեմ» ով վասն իմ ապտակեալ : Եւ աղաղակեմ, ցոյց ինձ զդէմս քո . լսեցն ինձ զբարբառ քո, զի ձայն քո քաղցրէ, և դէմք քո դեղեցիկ : Երբ եկից՝ երևեցայց քեղ : Աքդ՝ լուր ինձ, և արքեցն զիս վաղվաղակի քո դիտութեամբդ և սիրով . զի և յինէն, որ հաւատամ 'ի քեղ, բղխեցեն աղբիւրք ջրոց կենդանութեան :

« Եւ հոգեաւ լիւան հաւատամ :

Ես հաստատուն կը հաւտամ, ինչու որ ած որ է անսխալ ճշմարտութիւն՝ ասանկ յայտնեց սուրբ կաթուղիկէ եկեղեցւոյն, ու անով մեղի ալ կըսորվեցընէ . թէ ած մէկ է, ու երեք հաւասար՝ բայց զանազանեալ անձն ունի, որ

կըկոչվին հայր, որդի, ու հոգին սուրբ :  
 Եւ թէ որդին ած մարդ եղաւ հօգւոյն  
 սրբոյ զօրութեամբը մարմին ու հոգի  
 առաւ ամենամաքուր կօյս մարիամու ար-  
 դանդին մէջ . և թէ մեղի համար խա-  
 չին վրայ մեռաւ . յարեաւ ու երկինքը  
 վերացաւ , ուսկից որ պիտի դայ աշ-  
 խըսքիս վերջը , թէ մեռեալները ու թէ  
 կենդանիները դատելու համար . որ ար-  
 դարներուն յաւիտենական արքայու-  
 թիւն տայ , ու մեղաւորներուն դժոխք :  
 Անոր համար կըհաւտամ ամէն բանին ,  
 որնոր նոյն սուրբ եկեղեցին կըհաւտայ  
 ու կըսորմեցընէ :

\* Ե, Ե Հ Յ Ճ Ա Ն Ա Խ Ե Ւ Յ Յ :

Ով ած իմ , որովհետեւ ամենակարող  
 ես , անչափ բարի ու ողորմած , կըյու-  
 սամ որ տեառն մերոյ և փրկչին ՀՅԻ  
 ՎՅԻ չարչարանաց արդեամբը իս յա-  
 ւիտենական կենաց արժանի կընես , ինչ-  
 պէս որ խոստացար դուն ամէնուն ալ ,  
 որոնք որ բարեպաշտութեամբ քրիստո-  
 նէարար կտալին . որ ես ալ քու օգնա-

կանութեամբդ առաջադրեմ նոյնը կա-  
տարելու :

\* Ա, ԵՐԴԻ ՃՈՒՆԿԻ ԱՀՅՈՒ :

Ո՞վ ած իմ, որովհետեւ գերագոյն ու-  
բոլորովին բարի ես, կըսիրեմ քեզ բո-  
լոր սրտանց ամէն բանէն վեր, ու պատ-  
րաստ եմ ամէն բանը կորսրնցընելու,  
քան թէ քեզ վշտացնել. ու քու սի-  
րոյդ համար կուզեմ սիրել նաև ընկերս  
իմ անձինս պէս :

\* Ա, ԵՐԴԻ ՃՈՒՆԿԻ ԱՀՅՈՒ :

Ո՞վ ած իմ, որովհետեւ ծայրագոյն բա-  
րի ես, անոր համար ամէն բանէն վեր  
քեզ կըսիրեմ, կըզդամ ու կըցաւիմ  
ճշմարտապէս քեզ վշտացընելուս, ու  
հաստատուն կըցառաջադրեմ քուկին  
սուրբ շնորհօքդ ասկից ետքը ալ չիմե-  
ղանչել, ու մասնաւորաբար մեղաց պատ-  
ճառներէն փախչիլ :

# ՅԵՐԱԿԱ ՎԻՇՎՈՒՅՑ :


Ա. Պատմական անդադինեան է-	
լուս ապահովաբան:	1
Ա. Պատմական շնորհավայրեան:	3
Խ. Եկեղեցական ապահովաբան:	12
Հ. Համապատասխան օրգանական համար ապահովաբան:	18
Հ. Համապատասխան ապահովաբան՝ ի պատճեն իրավունքին:	40
Ա. Պատմական արքայականացին:	57
Ա. Պատմական համապատասխան համար:	86
Պատմականացին լինեած լինացած լինեած:	89
Ա. Պատմական հեղաշրջութեան համար:	96
Ա. Պատմական կառավարութեան լինեած:	105
Խ. Օրեան ապահովաբան ապահովաբանացին համար կառավարութեան կառավարութեան կառավարութեան կառավարութեան:	109
Պատմականացին լինեած ապահովաբան:	144
Ա. Պատմական շնորհավայրեան համար կառավարութեան կառավարութեան է պահ:	155
Ա. Պատմական այլապատճենացած շնորհավայրեան Պ. թի:	175
Ա. Պատմական ապահովաբանացին պահեց:	
Խ. Պահեց ձևականացին Պ. թի:	179
Ե. Պահեց պահեց:	181

՚Ի ասոնք ամենամասնակարգը լեռնան օյնի :	184
՚Ի ասոնք յայտնաբերելեան :	186
՚Ի ասոնք Ակրպութեան :	188
՚Ի ասոնք ամենամասնակարգը :	190
Եղանակ ՚Ե Բեգ պահան :	
Եղանակ Եկեղեցին :	193
Երիշրտ Եկեղեցին :	198
Երրորդ Եկեղեցին :	203
Չորրորդ Եկեղեցին :	208
Հինգերորդ Եկեղեցին :	213
Վիշորորդ Եկեղեցին :	217
Ռուսականակարգ :	222
Եղանակ Երիշրտակնեն :	224
Եղանակ Երեխակնեն :	228
Եղանակ Հրամակնեն :	233
Եղանակ Հինգերակնեն :	238
Եղանակ Շրջակնեն :	242
Եղանակ շաբաթ :	247
՚Ի ասոնք պատինին : Եղանակ օր :	252
Երիշրտ օր :	254
Երրորդ օր :	258
՚Ի ասոնք առելական :	260
՚Ի ասոնք համբաւական :	262
՚Ի ասոնք հագուժական : Եղանակ օր :	265
Երիշրտ օր :	267

Դ աօնի այցելութեան :	269
Դ աօնի քարտահանին : Ա սազէն օր :	271
Լ ընկորդ օր :	273
Դ աօնի մշտականան : Ա սազէն օր :	275
Լ ընկորդ օր :	277
Դ աօնի ձնագիտան իսակին :	280
Դ պատիւ անսան Ա ազիտան :	282
Դ աօնի իսակին : Ա սազէն օր :	284
Լ ընկորդ օր :	286
Դ աօնի ընծայաբան :	287
Դ աօնի անապատ ցուլութեան :	289
Ա զօլք աշամայու և օլու ինապատել :	291
Ա զօլք ամենայն սընս :	297
Ա զօլք առ սուրբն Ք յանեհ :	299
Ա զօլք առ սուրբն Ք յանեհն մինս :	300
Ա զօլք առ աբն Պ իշտրու և Պ օղու :	302
Ա զօլք առ սուրբն Ա յունիան :	303
Ա զօլք առ սուրբն Հ այրն Կ րիժու :	304
Ա զօլք առ սուրբն Ք յանեհ Տ օքայ :	306
Ա զօլք առ սուրբն Ա նաբան մգնութաբ :	307
Ա զօլք առ աբն Ա նաբան արտասացն :	309
Ա զօլք առ սուրբն Ա նաբ :	310
Ա զօլք առ աբն Ա նաբ և Կ այրեան :	311
Ա զօլք առ պաշտոնական սուրբն :	312

Ա. Պատմ. .... Եօվին Խոսյա պատմութեան :	313
Ա. Պատմ. Քանի հինգ վկրութեան :	323
Ա. Պատմ. .... Խոշոշութեան Պատմ. :	328
Ա. Պատմ. Արտիի Քանի :	337
Գլուխացած լեռնա բանաւոն :	339
Ա. Պատմ. Հիշանդանելուս համար :	343
Ա. Պատմ. Հոգեւութեան համար :	349
Ա. Պատմ. Վաստական հոգեւութեան :	356
Ա. Պատմ. Խեղաւութեան ապենը :	358
Ըստեւած աղջկեա :	
Ո. Պատմ. Առաքութեա :	363
Տեր առքեալու :	364
Համապատասխան իսպանական :	367
Ա. Պատմ. Աբու Ֆարիզ նորելիութեա .... սուրբ Անդաման :	374
Աբույն Խեղաւութեան պատմութեան աղջկեա :	378
Ա. Պատմ. Խեղաւութեան Համապատասխան, յանուայ, աչքոյ, և պատմութեան :	382







in  
the book

